

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**YEREVAN STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**  
**ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА**  
**ФИЛОЛОГИЯ**  
**JOURNAL OF YEREVAN UNIVERSITY**  
**PHILOLOGY**

**ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ**  
«Արեղյանական ընթերցումներ» միջազգային  
գիտաժողովի նյութեր՝ նվիրված ակադեմիկոս Մանուկ Արեղյանի  
ծննդյան 160-ամյակին (5 նոյեմբերի, 2025 թ.)  
*ՀԱՏՈՐ 5 № 1(6)*

**СПЕЦИАЛЬНЫЙ ВЫПУСК**  
Материалы международной конференции  
«Абегиановские чтения» посвященной 160-летию со дня рождения  
академика Манука Абегиана (5 ноября 2025 г.)  
*ТОМ № 1(6)*

**SPECIAL ISSUE**  
Materials of the International Conference “Abeghyan Readings”,  
dedicated to the 160<sup>th</sup> anniversary of the birth of Academician  
Manuk Abeghyan (November 5, 2025)  
*VOL. № 1(6)*

**2026**

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի

Журнал «Вестник Ереванского университета. Филология» выходит три раза в год. Издаётся с 2010 года.

Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"

Three issues of "Journal of Yerevan University. Philology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009

## ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՂՀՈՒՐԴ – РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ – EDITORIAL BOARD

**Գլխավոր խմբագիր՝**

**Главный редактор:**

**Editor-in-chief:**

**Ավետիսյան Լևոն** (բ.գ.թ., դոց.,  
*L.avetisyan@ysu.am*)

**Аветисян Левон** (к.фил.н., доц.)

**Avetisyan Levon** (Ph.D. in Philology,  
Associate Professor)

**Ավետիսյան Զուրիկ** (բ.գ.թ.,

պրոֆ., *yurietisyan@ysu.am*)

**Аветисян Юрий** (д.фил.н., проф.)

**Avetisyan Yuri** (Sc.D. in Philology,  
Professor)

**Գասպարյան Սեդա** (բ.գ.թ., պրոֆ., ԳԱԱ

թղթակից անդամ, *sedagasparyan@ysu.am*)

**Гаспарян Седда** (д.фил.н., проф., член.кор.  
НАН РА)

**Gasparyan Seda** (Sc.D. in Philology,  
Professor, NAS RA Corresponding Member)

**Զեփիեան Պօղոս-Լեւոն** (պ.գ.թ., ԳԱԱ

արտասահմանյան թղթակից

անդամ, պրոֆ., *Բտալիա,*

*zkybhs@gmail.com*)

**Зекьян Погос-Левон** (д.ист.н., иностран-  
ный член НАН РА, проф., Италия)

**Zekiyan Poghos-Levon** (Sc.D. in History,  
NAS RA Foreign member, Professor, Italy)

**Վատկայան Վիկտոր** (բ.գ.թ., պրոֆ.,  
*viktorkatvalyan@mail.ru*)

**Катвалян Виктор** (д.фил.н., проф.)

**Katvalyan Victor** (Sc.D. in Philology,  
Professor)

**Շախապետյան Շուշան** (բ.գ.թ., ԱՄՆ,  
*shushankarapetian@gmail.com*)

**Карапетян Шушан** (к.фил.н., США)

**Карпетыан Shushan** (Ph.D. in Philology, USA)

**Սամբելյան Վարդան** (պ.գ.թ., ԱՄՆ,  
*varny1@yahoo.com*)

**Մատեոսյան Վարդան** (к.ист.н., США)

**Matteosyan Vardan** (Ph.D. in History, USA)

**Սարտիրոսյան Հրաչ** (բ.գ.թ., Նիդերլանդ-  
ներ, *hrchmartirosyan@gmail.com*)

**Мартиросян Грач** (к.фил.н., Нидерланды)

**Martirosyan Hrach** (Ph.D. in Philology,  
Netherlands)

**Չոլաքյան Հակոբ** (պ.գ.թ., Միջին,  
*hagopcholakian@hotmail.com*)

**Чолакян Агоп** (д.ист.н., Сирия)

**Cholakyuan Hakob** (Sc.D. in History, Syria)

**Պետրոսյան Դավիթ** (բ.գ.թ., պրոֆ.,  
*davidpetrosyan@ysu.am*)

**Петросян Давид** (д.фил.н., проф.)

**Petrosyan David** (Sc.D. in Philology,  
Professor)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

ՄԱՆՈՒԿ ԱԲԵԴՅԱՆ – 160

МАНУКА АБЕГЯН – 160

MANUK ABEGHYAN – 160

ԵՊՀ ռեկտոր **Հովհաննես Հովհաննիսյանի** բացման խոսքը..... 6  
Вступительная речь ректора ЕГУ **Оганнеса Оганнисяна**  
Opening speech of YSU Rector **Hovhannes Hovhannisyan**

**Պրիա Մարայան** – Ս. Աբեդյանի ատենախոսությունը հայ ժողովրդական  
հավատալիքների մասին և նրանց արտացոլումը հայկական առած-  
ասացվածքներում (ողջույնի խոսք) ..... 7  
**Дора Сакаян** – Диссертация М. Абегайна об армянских народных верованиях  
и их отражении в армянских пословицах (вступительная речь)  
**Dora Sakayan** – M. Abeghyan's Dissertation on Armenian Folk Beliefs and their  
Reflection in Armenian Proverbs (Opening Speech)

**Մենա Արաջյան** – Դերանվան արեդյանական ըմբռնումը ..... 12  
**Анна Абаджян** – Концепция местоимений М. Абегайна  
**Anna Abajyan** – The Perception of the Pronoun by M. Abeghyan

**Աշոտ Գալստյան** – Մանուկ Աբեդյանի բնորդը հուշագրության մեջ..... 19  
**Ашот Галстян** – Портрет Манука Абегайна в мемуарах  
**Ashot Galstyan** – Manuk Abeghyan - the prototype in memoirs

**Դավիթ Գյուլզատյան** – Մանուկ Աբեդյանի լեզվաբանական հայեցա-  
կարգը՝ մերօրյա հայկաբանության նորոգման առիավատյա ..... 29  
**Давит Гюлзатян** – Лингвистическая концепция Манука Абегайна как гарант  
обновления современного арменоведения  
**Davit Gyulzatyun** – Manuk Abeghian's Linguistic Conception as a Guarantee of  
the Renewal of Modern Armenian Studies

**Նարինե Դիլբարյան** – Հին հայերենի բայական կառույցերի դասա-  
կարգումը Մանուկ Աբեդյանի աշխատանքներում..... 43  
**Нарине Дилбарян** – Классификация древнеармянских глагольных структур  
в трудах Манука Абегайна  
**Narine Dilbaryan** – Classification of Old Armenian Verb Structures in the Works  
of Manuk Abeghyan

*Աեղիտա Ղորոխանյան* – Բանահյուսական ժանրերը Մանուկ Աբեղյանի ու Շումիտասի կազմած «Հազար ու մի խաղ» ժողովածուում ..... 56

*Аэлита Долуханян* – Фольклорные жанры в сборнике «Тысяча и одна песнь», составленном Мануком Абегианом и Комитасом

*Aelita Dolukhanyan* – Folk Genres in the Collection "A Thousand and One Songs," Compiled by Manuk Abeghyan and Komitas

*Հովհաննես Զարարյան* – Հայերենի գոյականի հոլովման համակարգի նկարագրության կաղապարների տիպաբանական և գույադրական քննություն ..... 65

*Оганес Закарян* – Типологическое и сопоставительное исследование моделей, описывающих систему склонения существительных армянского языка

*Hovhannes Zakaryan* – Typological and Contrastive Study of Models Describing the Noun Declension System of Armenian Language

*Ալինա Ղարիբյան* – Իսմիլի կերպարի առասպելաբանական հիմքերը «Սասնա ծռեր» էպոսում ..... 86

*Алина Гарибян* – Мифологическая основа образа Исмиль в эпосе «Сасна црер»

*Alina Gharibyan* – The Mythological Basis of the Character of Ismil in the Epic "Sasna Tsrer"

*Հայկանուշ Մեսրոպյան, Սասուն Համբարձումյան* – Մ. Աբեղյանի գրի առած «Դավիթ և Մհեր» էպոսապատումի բարբառային արժեքը ..... 98

*Айкануш Месропян, Сасун Амбарцумян* – Диалектологическая ценность варианта армянского эпоса «Давид и Мгер», написанной М. Абегианом

*Haykanush Mesropyan, Sasun Hambartsumyan* – Dialectological Value of the Version of the Armenian Epic “David And Mher”, Written by M. Abeghyan

*Վարսիկ Ներսիսյան* – Բառակազմության տեսական հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի և Հրաչյա Աճառյանի աշխատություններում... 115

*Варсик Нерсисян* – Исследование теоретических вопросов словообразования в трудах Манука Абегиана и Грачья Ачаряна

*Varsik Nersisyan* – Research on Theoretical Issues of Word Formation in the Works of Manuk Abeghyan and Hrachya Acharyan

*Թերեզա Շահվերդյան* – Դերբայները՝ ըստ Մանուկ Աբեղյանի «Գրաբարի քերականության» ..... 128

*Тереза Шахвердян* – Причастия в «Грамматике грабара» Манука Абегиана

*Tereza Shahverdyan* – The Participles in Manuk Abeghyan's “Grammar of Grabar”

**Նորայր Պողոսյան** – Գրական հայերենի ճյուղերի մերձեցման խնդիրը.  
Մանուկ Աբեղյանի տեսակետն ու արդի որոշ դրսևորումներ..... 148

**Норайр Погосян** – Проблема сближения ветвей литературного армянского  
языка: Подход Манука Абегамяна и некоторые современные проявления

**Norayr Poghosyan** – The Rapprochement of Literary Armenian Varieties:  
Manuk Abeghian’s Approach and Contemporary Manifestations

**Հենրիետա Սուքիասյան** – Աբեղյանի լեզվաբանական ժառանգության  
գիտական ուսումնասիրությունը..... 159

**Генриетта Сукиасян** – Научное исследование лингвистического наследия  
Абегамяна

**Henrietta Sukiasyan** – The Scholarly Study of Abeghyan’s Linguistic Legacy

**ԵՊՀ ՌԵԿՏՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ  
ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔԸ**

Հարգելի՛ բարեկամներ:

Ողջունում եմ ականավոր հայագետ, լեզվաբան, գրականագետ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի ծննդյան 160-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

Խորաթափանց քննական մտքով, երկայայ տրամաբանական դատողությունների հզոր ուժով, բազմաբեղուն աշխատասիրությամբ օժտված գիտնականը, իր ուսումնասիրությունների նյութը դարձնելով հայոց լեզուն, առավելապես գրական հայերենը, հայ հին ու միջին դարերի մատենագրությունը, հայ ժողովրդական բանահյուսությունը, ստեղծել է մեծարժեք աշխատություններ, որոնք ընդմիջտ մտել են հայագիտության ոսկե ֆոնդը:

Մ. Աբեղյանը հայ գիտական քերականության հիմնադիրն է: Նրա լեզվաբանական աշխատությունները մնայուն ու կոթողային գործեր են: Մեծատաղանդ հայագետը նաև հմուտ բառարանագիր է ու գրաբարագետ: Նա է արևելահայերենի արդի ուղղագրության հիմնադիրը: Նույնքան արժեքավոր են Մ. Աբեղյանի գրականագիտական հետազոտությունները: Հայագիտության վիթխարի կադնին, ինչպես անվանել է նրան ակադեմիկոս Արամ Ղանալանյանը, անուրանալի ավանդ ունի հայ ժողովրդական բանահյուսության, հայկական տաղաչափության ուսումնասիրության բնագավառներում ևս:

Մեզ համար առանձնահատուկ է մեծ հայագետի դերը նաև որպես համալսարանական:

Մ. Աբեղյանը Երևանի պետական համալսարանի, ինչպես և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադիր գիտնականներից է: Երկար տարիներ զբաղվելով մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ՝ նա կրթել է բանասերների բազում սերունդներ: Մ. Աբեղյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական –մանկավարժի վիթխարի դերն ու վաստակը նաև համալսարանական գիտության զարգացման բնագավառում:

«Աբեղյանական ընթերցումներ-5» միջազգային այս գիտաժողովը, որ կազմակերպել է հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնը, ինքնին բարձրագույն գնահատանքի, արժևորման ու մեծարանքի յուրահատուկ առիավատյա է՝ ուղղված մեծն Մանուկ Աբեղյանին:

**Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾ-ԱՄԱՑՎԱԾՔՆԵՐՈՒՄ  
(Ողջույնի խոսք)**

**ԴՈՐԱ ՄԱՔԱՅԱՆ՝**

*ՄաքԳիլ (McGill) համալսարան (Կանադա)*

Ուրախ եմ, որ այսօր ինձ առիթ է տրված հեռավոր Կանադայից հարգանքի խոսքս ուղղելու մեծանուն հայագետ, ակադեմիկոս Մանուկ Աբեղյանին: Միշտ հիացած եմ եղել նրա հայագիտական տեսություններով ու լեզվաբանական վերլուծություններով, և նրա «Հայոց լեզվի տեսություն» գիրքը միշտ սեղանիս վրա է եղել: Բոլոր մնացած հայագետներից նրան տված իմ նախապատվությունը պատահական չէ: Մեր մեջ կա մի մտերմություն, որը գուցե բխում է և մեր ստացած կրթության ընդհանրությունից. նա նույնպես ամենից առաջ գերմանագետ է: Սովորելով գերմանական համալսարաններում (Ենա, Լայպցիգ և Բեռլին (1893-1895))՝ նա քաջ տիրապետել է գերմաներենին և ուսումնասիրել տասնիններորդ դարում Գերմանիայում մեծ զարգացում ապրած հնդեվրոպական լեզուների վերաբերյալ գերմաներենով հրապարակված լեզվափիլիսոփայական հարուստ գրականությունը և խորապես ազդվել է դրանից: Նրա ծննդից կես դար անց լեզվաբանական իմ կրթությունը ես նույնպես այդ նույն ակունքներից եմ ստացել: Ծանոթանալով տարբեր ժողովուրդների առասպելաբանությանը և նրանց հին հավատալիքների վերաբերյալ ուսումնասիրություններին՝ Աբեղյանը Ենայի համալսարանում ձեռնամուխ է եղել այդ պակասը հայ գրականության մեջ լրացնելու գործին: 1890-ական թվականների վերջերին նա անբասիր գերմաներենով գրել է հայ ժողովրդական հավատալիքներին նվիրված «Der armenische Volksglaube» վերնագրով իր հայտնի ատենախոսությունը, որը 1899-ին բարերար Ալեքսանդր Մանթաշյանի մեկենասությամբ որպես գիրք լույս է տեսել Լայպցիգ քաղաքում: Որպեսզի այդ կարևոր աշխատությունը հայ ընթերցողին հասներ, այն նախ պետք է իմ ձեռքով անցներ: Ուղիղ հիսուն տարի առաջ էր՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը ինձ հանձնարարեց գերմաներենով գրված այդ գործի հայերեն թարգմանությունը (այդ տարիներին Հայաստանում գերմաներենից որևէ լուրջ թարգմանության համար Դորա Մաքայանին էին դիմում), և ես սիրով կատարեցի այդ աշխատանքը: Այստեղ մեկ ան-

\* Հայագետ, թարգմանիչ, լեզվաբան, ԵՊՀ պատվավոր դոկտոր, ՄաքԳիլ (McGill) համալսարանի պրոֆեսոր (Կանադա)

զամ ևս ուզում եմ երախտագիտությունս հայտնել երջանկահիշատակ պրոֆեսոր Երվանդ Տեր-Մինասյանին՝ իմ ամենագետ ու շատ սիրելի ուսուցչին, որ ինձ մեծապես օգնել է լուծելու այդ գործին վերաբերող մատենագիտական բազմաթիվ հարցեր:

Այսօր մենք կարող ենք տոնել Աբեղյանի ատենախոսության հայերեն թարգմանության գոյության կես դարը: Այն լույս է տեսել 1975-ին Մանուկ Աբեղյանի երկերի յոթերորդ (է) հատորում: Ուրախալի է, որ նույն է հատորի հավելվածում բերված է նաև այդ ատենախոսության գերմաներեն տարբերակը կամ բնօրինակը: Աբեղյանն իր աշխատության մեջ հենվում է հայոց բանահյուսությունից զանազան նմուշների վրա՝ աղոթքներ, երգեր, զրույցներ, հանելուկներ և առասպելներ, որոնք հայ ժողովրդի առօրյայում հատուկ առիթներով են գործածվում: Զարմանալիորեն հեղինակը հայ առած-ասացվածքներից ընդամենը երկու-երեք օրինակ է բերում. կարծես մեծ լեզվաբանը այդ կարևոր գործն ինձ էր վերապահել: Միրով եմ զբաղվել հայ առածանու մեջ ժողովրդական հավատալիքների արտացոլման հարցով, սակայն առաջին անգամն է, որ առիթ ունեմ դրա մասին բանախոսելու հայերենով: Դասախոսել կամ գրել եմ դրա մասին տարբեր լեզուներով և օտար առածագետներին այդ նյութով հմայել: Հիշենք, օրինակ, այն հաջողությունը, որ է «Folk beliefs in Armenian proverbs» («Ժողովրդական հավատալիքները հայկական առածների մեջ») ելույթս, որ տեղի ունեցավ 1993-ին Լոնդոնի համալսարանում և նույն վերնագրով հոդվածս, որ լույս է տեսել 1997-ին հոդվածների շքեղ հավաքածուում:

Աբեղյանը հայ ժողովրդական հավատալիքների մեջ ամենից առաջ կարևորում է քրիստոնեական բաղադրիչը, այնուամենայնիվ Աբեղյանի ատենախոսության բովանդակությունը կազմում է հայ ժողովրդական հավատքի հեթանոսական կողմը, որը ներկայանում է որպես ստորին կարգի մի դիցաբանություն, ինչպիսին ունեն գրեթե բոլոր ժողովուրդները: Ատենախոսության մեջ առանձին ենթաբաժիններով և հարուստ օրինակներով քննարկվում են առասպելաբանության մեջ հանդես եկող հավատքի ամենատարբեր պատկերացումները: Ելույթիս ժամանակը, ավիտոս, սահմանափակ է, և ես այստեղ իմ հավաքագրած առած-ասացվածքների օրինակներից ընթերցելու եմ միայն երկու խումբ՝ նախ՝ քրիստոնեական բովանդակության ասացվածքներից մի քանիսը և ապա՝ հեթանոսական բնույթ ունեցող, ճակատագրի պաշտամունքին նվիրված առածները: Այսօր չեմ հասցնելու ընթերցել հավատալիքների հետևյալ թեմաները ամփոփող ասացվածքների մի քանի այլ խումբ, որն այստեղ է, սակայն ժամանակս չի ներելու ընթերցելու.

- հոգիների հավատքը և մեռելների պաշտամունքը (շատ հետաքրքրական մի բաժին է սա),
- լույսի ու խավարի հակադրությունը,
- կրակի պաշտամունքը, այսինքն՝ օջախի և թոնիրի պաշտամունքը,
- ապա՝ չար աչքը և չար լեզուն՝ անեծք և օրհնանք:

Մկսենք հայկական ասացվածքների օրինակներից, որոնք ամփոփում են ամենից առաջ քրիստոնեական տարրը: Հայկական ասացվածքները հիմնված են քրիստոնեության շատ խոր արմատների վրա, փառաբանում են Աստծո և նրա որդու հանդեպ հավատքը: Ժողովրդական ասացվածքը երկար կյանք է խոստանում նրանց, ովքեր ունեն քրիստոնեական հավատք, և ժողովուրդն ասում է. *Հավատք ունիս, շատ կապրիս*: Ապա ժողովուրդը պնդում է, որ հավատքը պետք է սրտից բխի և լինի անկեղծ. *Հավատքն իրմե պետք է, վրան քավածը հավատք չէ*: Աստվածաշունչը սովորեցնում է. *Մի՛ հապաղիր կարոտյալին բարություն անել, երբ քո ձեռքը կարող է օգնել նրան*, և կարծես արձագանքելով Աստվածաշնչին՝ ասացվածքներն ասում են. *Լավություն արա, ջուրը գցի, ձուկը չիմանա, Աստված կիմանա*, ըստ որում՝ *Ողորմությունն էնպես տուր, որ շապիկդ էլ չիմանա*:

Հայկական ասացվածքները մերժում են ազգի մոտեցումը և կոչ են անում բարություն անել նույնիսկ չարիքների դեպքում, քանի որ մենք պետք է ներենք, ինչպես Աստված է ներում, և ժողովուրդն ասում է. *Լավությունին՝ լավություն ամեն մարդու բանն ա, վատությունին՝ լավություն մարդ մարդու բանն ա*: Ասացվածքները հիշեցնում են, որ Աստված հսկում է մարդկանց ոչ միայն գործերը, այլև սրտի թելադրած մտքերը. *Մըներ անօրեն, կը գտնաս երկնավորեն*, քանզի *Մարդ մարդի խոսքին մտիկ կտա, Աստված՝ սրտի*:

Առած-ասացվածքները անընդհատ հիշեցնում են մեզ կյանքի ունայնության մասին. *Աշխարհը լուսամուտ ա, ամեն եկող մտիկ կտա ու կերթա*: «Հոգևոր հարստությունը գերազանցում է նյութական ունեցվածքին».- ասում է ժողովուրդը, և ասացվածքը թելադրում է. «*Լավ է մարմնավոր աղքատ, քան հոգևոր*»: Մեփականության սերը վերջին հաշվով անօգուտ է, քանի որ այս նյութական աշխարհում որևէ բան չկա, որ մեկին պատկանի: *Աշխարհքը ոչ որի չի մնացել*, - ասում է առածը, - *Աշխարհքը Սողոմոն իմաստունին էլ չի մնացել*, և ապա՝ հարցականը. *Աշխարհքն ո՞ւմ է մնացել, որ քեզ մնա*: Առած-ասացվածքները խորհրդանշում են բացարձակ հավատքն Աստծո ու նրա որդու հանդեպ. *Քրիստոսին աչքով չտեսան, սրտով ճանչցան*:

Հեթանոսական բաղադրիչին վերաբերող առածների խմբից մի քիչ մանրամասն այստեղ խոսելու եմ ճակատագրի պաշտամունքի մասին: Մարդկանց ճակատագրին վերաբերող հայկական ասացվածքներն անթիվ են: Իրանական ժողովրդական հավատալիքների ազդեցության ներքո հայ ժողովուրդը մարդու ճակատագիրը կապում է աստղագարդ երկնքի հետ. *Երկնքում գտնվող աստղերը նման են կանթեղների, որոնք այրվում են առանց ձեթի, Երբ երկնակամարը պտտվում է, աստղերը անընդհատ շարժման մեջ են, ծագում են և մայր մտնում, Աշխարհը անիվ է, այն պտտվում է*: Հաճախ այդ *անիվը* կամ *չարխը* (պարս.) օգտագործվում է որպես *բախտի անիվ*: Հայ ժողովուրդն ասում է. *Բախտին անիվը միշտ կդառնա* կամ ավելի հին՝ *Աշխարհքս չարի է, պտույտ է գալիս*: Աստղեր կան, որ լավն են, աստղեր էլ կան՝ վատ, ամեն մարդ ծնվում

է մեկ աստղի տակ. եթե աստղը լավն է, նա բախտավոր կլինի, եթե ոչ՝ անբախտ: Առածն ասում է. *Որին աստղը շիրին է, որին քոռ կամ Աստղով եղար, լեռ քարի վրա էլ էրթաս՝ կկանաս:* Ճակատագիրը, սակայն, շատ ավելի բարդ է, քան այս օրինակներն են ցույց տալիս: «Երկնքի շարժումը ո՛չ ավելին է, ո՛չ էլ պակաս, քան ժամանակի շարժումը».- գրում է Աբեղյանը: Հայ ժողովրդական հավատալիքներում ժամանակը ամենագոր է և որոշիչ. *Ամեն բան վախտին կնայի, վախտն ըսկի բանի չի նայի*, կամ *Մարդս ժամանակին է մնում, ժամանակը մարդուս չի մնում*. համապատասխանաբար, որոշ ասացվածքներ մեզ խորհուրդ են տալիս գործել ժամանակին՝ ճիշտ պահին: Ճակատագրերը կարող են փոխվել դեպի լավը կամ վատը, դժբախտները կարող են հույս դնել ավելի լավ բախտի վրա, նույն կերպ բախտավոր աստղը կարող է ընկնել և կործանվել. *Ում բախտը ծովեց, նրա ձին ախտում էշ կդառնա*: Այնուամենայնիվ, որոշ ասացվածքներ մերժում են ճակատագրի պաշտամունքը և ընդգծում, որ ամեն մարդ իր սեփական ճակատագրի տերն է. *Մարդ ինչ որ իր ձեռով կանի, աշխարհ չի անի*: Այս ցինիզմը կարող է հասնել մինչև հետևյալ ասացվածքը. *Գնա ծովն ընկիր. ճակտիս գիրն անանկ է ըսե*:

Հայերեն *բախտ* բառը պարսկերենից փոխառված բառ է և ասացվածքներում նաև հանդիպում է իր հոմանիշներով՝ *Ֆալաք* և *թալեհ*. սրանք նույնպես փոխառված բառեր են պարսկերենից և կապվում են *չարիս*, *երկնային անիվի* հետ: *Ֆալաք*, *թալեհ* և *չարիս* բառերը հաճախ հանդիպում են հայկական առած-ասացվածքների մեջ. հայը կարող է ասել. *Ո՛չ Ֆալաքին վստահի, ո՛չ քու մային հուսացի, էն թալե հն ունինք, որ վագող ջրին երթանք, կկտրի*: Մինչդեռ ճակատագիրը կամ բախտը կապված է երկնքի հետ, *բախտի անիվ* հասկացողությունը բավականին երկրային է: Աբեղյանը հաղորդում է, որ բախտի անիվը կանգնած է Վան քաղաքում գտնվող մի քարանձավում, որը լի է ամեն ինչով, որ կարելի է պատկերացնել՝ թանկարժեք իրերով: Միայն մեկ բույսով և տարվա մեջ միայն մեկ գիշեր՝ Քրիստոսի համբարձման գիշերը, այս քարանձավի դուռը բացվում է, և գանձը կարող է վերցնել ամեն մարդ, ով բախտ է ունեցել հասնել այդ վայրը: Պահը պետք է օգտագործել, կամ, ինչպես ասում է ասացվածքը, *Ֆալաքը ժամանակին պետք է բռնես*: Ի վերջո, ամեն ինչ կյանքում կատարվում է տարբայնորեն, և ժողովուրդը շատ սրամտորեն ասում է. *Նայած մարդի, նայած վախտի, նայած բախտի*:

Մարդկային ճակատագրի վերաբերյալ մեկ այլ ժողովրդական համոզմունք կապված է հայկական բանահյուսության մեջ հաճախակի հանդիպող կերպարի՝ գրողի հետ: Երբ մարդ ծնվում է, հրեշտակը երկնքից իջնում է երկիր՝ նրա ճակատին փորագրելու համար. այստեղից էլ ծագում է *ճակատագիր* հայերեն եզրույթը, որը ծագում է *ճակատ* և *գիր* բառերից: Նման գրության բախտորոշ կամ վճռական լինելը զգացվում է մի շարք ասացվածքներում: Սեփական ճակատագրի ընդունումը արտահայտվում է հետևյալ կերպ. *Ինչ որ գրած է, դրած է*, կամ *ճակատի գրածը չի ջնջվի*, մեկ այլ, ավելի վճռորոշ տարբերակ է. *Մորեն*

*ծնվեցավ, գրվեցավ ճակատին:* Բացի *գրող* բառի սկզբնական իմաստից՝ կանան մահվան հրեշտակի մեկնաբանությունը, որը նույնացվում է Գաբրիել հրեշտակապետի հետ, որին հաճախ անվանում են *հոգեհան:* Հայերը հավատում են, որ այս երկրի վրա մի պահ նրանք բոլորը պետք է հանդիպեն Աստծո պատգամաբերին, մահվան հրեշտակին կամ գրողին, որը մարդուս հոգին դուրս չի քաշում միանգամից, այլ աստիճանաբար: Միայն մայրն է, որ կարող է հաղթանակ տանել գրողի նկատմամբ, և հայկական առածը ասում է. *Բերողը կհաղթե գրողին* (բերողը, այսինքն՝ մայրը):

Այս ասացվածքներում մենք տեսնում ենք կյանքի գերակայությունը մահվան նկատմամբ: Այս երկու կերպարների՝ *բերողի*՝ այսինքն՝ մոր՝ ծննդաբերության խորհրդանիշի, և *գրողի*՝ քայքայման, կործանման խորհրդանիշի, պայքարի միջոցով մշտապես օգտագործելու պատճառով *գրող* բառը վերածվել է ինչ-որ անորոշ նսեմացնողի. դա կարող է լինել որևէ տհաճ մարդ կամ ուժ, դև, այլ (առասպելական չար ոգի), գայլ, սատանա կամ արյունաբեռն որևէ գազան: Առած-ասացվածքները զգուշացնում են, որ դժբախտություն կպատահի նրանց, ովքեր կհանդիպեն գրողին. *Գել ու գրող, վայ մեկիդ է տեր:*

Անվերջ է հայկական առածանու իմաստությունը, բայց ես չեմ կարող այստեղ շարունակել: Այսօրվա համար այսքանը, սիրելիներ րս, հուսամ, որ բերածս օրինակների մեծ մասը ծանոթ կամ հասկանալի էր ունկնդիրներին և համոզեց նրանց, որ հայկական առած-ասացվածքների գանձարանը գուցե ավելի, քան հայկական բանահյուսության մյուս ժանրերինը, պահպանում է հայ ժողովրդական հավատալիքների ամենահին համոզմունքները և, հետևաբար, կարող է լույս սփռել հայկական աշխարհայացքի վրա: Եկե՛ք սիրենք և փայփայենք քիչ խոսքով շատ բան արտահայտող խոսքի մեր իմաստուն պատարիկները, եկե՛ք տեր կանգնենք դրանց: Շնորհակալ եմ ուշադրության համար:

## ԴԵՐԱՆՎԱՆ ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

ԱՆՆԱ ԱԲԱՋՅԱՆ   
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում քննության են առնվում Մանուկ Աբեղյանի՝ խոսքի մասերի դասակարգմանը, «խոսք» եզրույթի կիրառությանը, դերանունների խոսքիմասային պատկանելությանը և իմաստային յուրահատկություններին առնչվող հարցեր: Քերականագիտության մեջ տարածված է այն տեսակետը, որ Մ. Աբեղյանի՝ խոսքի մասերի դասակարգման հիմքում ընկած է գլխավորապես իմաստային-շարահյուսական սկզբունքը, որտեղ գերակշռողը շարահյուսականն է: Մակայն դերանունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շարահյուսականից առավել կարևորվում է այս խմբի բառերի ունեցած յուրահատուկ իմաստային հատկանիշը՝ այն, որ նրանք ոչ թե անվանում, այլ փոխարինում են արդեն անվանված առարկան կամ հատկանիշը:

Մ. Աբեղյանը չի կաշկանդվում և չի առաջնորդվում լեզվում արդեն գոյություն ունեցող խոսքիմասային դասակարգմամբ, այլ հետևելով եվրոպական և ռուսական լեզվաբանական մտքին՝ իր դասակարգման հիմքում դնում է հենց հայերենին բնորոշ հատկանիշների ուսումնասիրության և անկախ դասակարգում անելու սկզբունքը: Արդյունքում, թեև դերանունը՝ որպես ինքնուրույն խոսքի մաս (բառերի տեսակ), չի ընդունվում Մ. Աբեղյանի կողմից, այնուամենայնիվ նա անվանում և ընդունում է անձնական, ցուցական, հարցական, փոխադարձ, հարաբերական, անորոշ, ստացական դերանունների գոյությունը հայերենում՝ որպես գոյական, ածական կամ մակբայ խոսքի մասերի առանձին ենթատեսակներ:

**Բանալի բառեր** – *դերանուն, խոսքի մաս, բառերի տեսակ, շարահյուսական հատկանիշ, իմաստագործառական հատկանիշ, նախադասություն, ստացական դերանուն*

Համաշխարհային լեզվաբանության մեջ կան այնպիսի հարցեր, որոնց պատասխանների որոնումները սկսվել են հեռավոր անցյալում, շարունակվում են ներկայում և վստահաբար չեն անհետանալու նաև ապագայում: Այդպիսի հավերժ թեմաներից մեկը լեզվաբանների, քերականագետների համար խոսքի

\* **Աննա Աբաջյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

**Анна Абаджян** – доктор филологических наук, профессор, заведующая кафедрой истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Anna Abajyan** – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ [abajyan.anna@ysu.am](mailto:abajyan.anna@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-3728-0862>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 02.02.2026

Գրախոսվել է՝ 09.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

մասերի դասակարգումն է և դերանունների տեղը խոսքի մասերի համակարգում: Դերանունները՝ որպես առանձին բառախումբ, համընդհանուր են աշխարհի բոլոր լեզուների համար, այսինքն՝ բոլոր լեզուներն իրենց բառապաշարում, խոսքի մասերի համակարգում կարիք ունեն ունենալու այնպիսի միավորներ, որոնք չունեն անվանողական արժեք, այլ որևէ առարկա կամ հատկանիշ ցուցադրելու ընդհանուր իմաստ և իրադրային, փոփոխական բնույթ: Այդպիսով դերանուններին բնորոշ ընդհանուր իմաստային հատկանիշը նրանց ամենուր դարձնում է կարգ խախտողներ, ստիպում է հատուկ իրենց համար լրացուցիչ ենթակարգեր և ենթատեսակներ սահմանել: Այս ամենի պատճառը ոչ միայն դերանունների իմաստային առանձնահատկությունն է, այլև նրանց հնությունը, տարբեր ժամանակներում դրսևորման յուրահատկությունները: Մույն հոդվածում անդրադարձել ենք նախ այն հարցին, թե ինչն է ընկած Մ. Աբեդյանի խոսքի մասերի, հատկապես դերանվան բնութագրման և դասակարգման հիմքում, ապա թե ինչ սկզբունքով են Մ. Աբեդյանի կողմից դերանվան տարբեր տեսակները բաշխվում հայերենի խոսքի մասերի համակարգում:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին խոսքի մասերի դասակարգման գործընթացը ավանդական ձևաբանական-տրամաբանական մոդելից վերափոխվեց ավելի իմաստագործառական մոդելի: Գլխավոր միտումն այն էր, որ շեշտվում էր, որ յուրաքանչյուր լեզու անհատապես պետք է ձևավորի իր քերականական կարգերը, հետևաբար նաև խոսքի մասերը: Այս սկզբունքի վրա մեծապես ազդեց Վիլհելմ ֆոն Հումբոլդտի այն տեսակետը, որ ներքին ձևը (քերականություն, իմաստային կողմ) և արտաքին ձևը (հնչյունական ձևավորում) պետք է տարանջատվեն, և առավել կարևորվի յուրաքանչյուր լեզվի ներքին ձևը<sup>1</sup>: Իսկ ռուս լեզվաբան Լ. Շչերբան կողմ էր լեզուների ուսումնասիրությանը «իրենց սեփական տերմիններով, առանց ավանդական քերականության պրիզմայի»<sup>2</sup>: Նա ռուսերենի քերականության ուսումնասիրության մեջ ներմուծեց մի շարք նոր կարգեր, որոնցից կարևորներից է վիճակի կարգը: Ուստի եթե ավանդական քերականության մեջ, հետևելով դեռևս Դ. Թրակացուն, դերանունները ինքնուրույն խոսքի մաս էին, ապա 19-րդ դարավերջին, 20-րդ դարասկզբին դերանունները սկսեցին դիտարկվել որպես ոչ ինքնուրույն խոսքի մաս: Դասակարգման հիմքում իմաստագործառական հատկանիշն էր. դերանունները դիտարկվում էին որպես առարկաներին կամ հատկանիշներին փոխարինող բառեր: Այսպիսով՝ 20-րդ դարասկզբին քերականագիտությունը մասնավորապես բնութագրվում է լատիներենի կարգերից հեռանալու և յուրաքանչյուր լեզվի քե-

<sup>1</sup> Ste u Гумбольдт В., Избранные труды по языкознанию, М., 1984, էջ 113-114:

<sup>2</sup> Щерба Л., О частях речи в русском языке. М., 1928, с. 69. Լ. Շչերբայի այս հոդվածը համարվում է ռուսական և ընդհանուր լեզվաբանության դասական աշխատություններից: Այն ներկայացնում է խոսքի մասերի ավանդական դասակարգման արմատական վերանայում և հիմք է հանդիսանում ժամանակակից նկարագրական քերականության համար: Մ. Աբեդյանը «Հայոց լեզվի տեսություն» աշխատությունը գրելիս (1931 թ.) հաստատապես ծանոթ է եղել այս հոդվածին:

րականական եզակի համակարգի նկարագրության սկզբունքով: Դա լեզվաբաններին մղում էր մտածելու, որ բառերի դասերը համընդհանուր չեն, և սահմանելու նոր դասեր, որոնք ավելի լավ էին նկարագրում իրենց լեզուները: Հենց այս համատեքստում պետք է հասկանալ Մ. Աբեղյանի հետևյալ միտքը. «Պետք է, կարծում ենք, մեր քերականությունը կազմել մեր լեզվի համեմատ և ոչ թե ընդօրինակություն անել օտար լեզուների քերականությունների, որոնց բոլորի համար, ինչպես մի գերմանացի լեզվաբան գրում է, լատիներեն լեզուն Պրոկրուստեսի անկողինն է եղել, որի վրա նոր լեզուների քերականությունները չափելով ծայրատել են կամ բռնի կերպով քաշքշել երկարացրել»<sup>3</sup>:

Ինչպես նշում է Հ. Բարսեղյանը, Մ. Աբեղյանին քաջ ծանոթ էին և՛ Յ. Գրիմմի, և՛ Վ. Հումբոլդտի, և՛ Ֆ. Բուսլանի դրույթները<sup>4</sup>: Հենց Բուսլանի՝ բառի երկակի քննությունը՝ բառիմաստային և բառաքերականական, ընկավ Մ. Աբեղյանի խոսքի մասերի տեսության հիմքում: Նախքան խոսքի մասերի դասակարգմանը անդրադառնալը կարևոր է տարբերակել Մ. Աբեղյանի կիրառած երկու եզրույթ՝ բառերի տեսակ և խոսքի մաս: Առաջինը Մ. Աբեղյանը կիրառում է բառերի իմաստային բնութագրման համար, երկրորդը՝ շարահյուսական: Վերջինում է, որ «խոսք» եզրույթը հավասարվում է «նախադասություն» եզրույթին: Ինչպե՞ս է «խոսքը» կիրառվում «նախադասություն» իմաստով: Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում *խոսք* բառի «խոսելու ունակություն», «մտքերը բառերով արտահայտելու կարողություն», «լեզվի իրական դրսևորում՝ որպես հաղորդակցման միջոց», «շարադրանք, գրվածք» իմաստների կողքին 6-րդ իմաստով նշվում է խոսքը՝ որպես հենց «նախադասություն, արտահայտություն», իսկ 21-րդ իմաստով ամբողջությամբ հղում է կատարվում «նախադասություն» բառին՝ «որպես քերականական ձևավորումով առարկայի ստորոգումը ներկայացնող բառ կամ բառերի կապակցություն, որն արտահայտում է ինչպես օբյեկտիվ իրականությունը, այնպես էլ խոսողի վերաբերմունքը այդ իրականության նկատմամբ»<sup>5</sup>: Այսինքն «նախադասություն» բառի լիարժեք իմաստը ամբողջությամբ վերագրվում է նաև «խոսք» բառին: Մ. Աբեղյանը, «խոսք» ասելով, հասկանում է հենց նախադասություն, իսկ «խոսքի մաս» ասելով՝ նախադասության անդամ: Նա «Աշխարհաբարի շարահյուսություն» գրքում կիրառում է «խոսքեր կամ նախադասություններ» բառակապակցությունը: Գրում է. «Խոսքերը կամ նախադասությունները, նայելով լրացումներին, սովորաբար բաժանվում են ամենից առաջ երկու տեսակի՝ համառոտ և ընդարձակ խոսքեր»<sup>6</sup>: Պարզ է, որ *խոսք* բառը կիրառվում է հենց նախադասություն բառի փոխարեն: Հետագայում բերված օրինակները՝ համառոտ խոսք, ընդարձակ խոսք, դրական և բացասական խոսքեր, հաստատական և հարցական խոսքեր, պարզ և բարդ խոսքեր և այլն, բոլորն էլ վերաբերում են հենց նախադասությանը: Նշենք, որ այսօր

<sup>3</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Եր., 2016, էջ 598:

<sup>4</sup> Տե՛ս Բարսեղյան Հ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980, էջ 163-164:

<sup>5</sup> Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 597:

<sup>6</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 453-455:

«ուղղակի և անուղղակի խոսք» արտահայտության մեջ *խոսք* բառը հանդես է գալիս հենց նախադասություն իմաստով: Հավելենք, որ «խոսք» բառը նախադասություն իմաստն ունի նաև ռուսերենում<sup>7</sup>:

Մ. Աբեղյանը իմացաբանական տիրույթում հավասար հարթության վրա է քննում առարկան և նրա հատկանիշը, այսինքն՝ գոյականը և բայը, ածականը: «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ նյութական կամ իրական նշանակություն ունեցող բառերի երեք մեծ խումբ է թվարկում՝ առաջին տեղում նշելով գոյականը, այնուհետև ածականը, հետո նոր բայը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե նախապատվությունը տալիս է առարկա ցույց տվող բառերին՝ գոյականներին, սակայն իրականում հավասար հարթության մեջ է դիտում առարկան ու նրա հատկանիշը և մտածական-իմացաբանական, մեր մտքում ստեղծված մտապատկերների, դրանցով արտահայտված բառերի անվանումների միջև հետաքրքիր փիլիսոփայական կապեր դիտարկելով՝ նշում է, որ այդ պահին խոսելուց է կախված՝ որն ենք մենք առավել կարևորում: Օրինակը բերելով «կայծակ» և «փայլատակել» բառերի վրա՝ նշում է, որ եթե մենք կարևորում ենք ամպրոպի ժամանակ օդի մեջ երևացող լուսեղեն գիծը, ապա այն պատկերում ենք իբրև առարկա՝ կայծակ, իսկ եթե կարևորում ենք իբրև այդ առարկայի հատկանիշ-գործողություն, ապա անվանում ենք «փայլատակում է» բառով<sup>8</sup>: Այստեղ կարևոր է նկատել, որ երեք մեծ խումբ է հիշատակվում՝ գոյական, ածական և բայ:

Մ. Աբեղյանը խոսքի մասերը ձևակերպում է որպես բառեր, որոնք ունեն նյութական նշանակություն, մեծ մասամբ նաև ձևական նշանակություն: Դրանցից կազմվում է խոսքը, ուստի դրանք կոչվում են խոսքի մասեր<sup>9</sup>: Այստեղ դիտարկում է բայը, գոյականը, ածականը և մակբայը: Նկատենք, որ նույն աշխատության սկզբում մակբայը չէր հիշատակվում: Հավելենք նաև, որ ճիշտ ինչպես Շչերբան ռուսերենի համար, Մ. Աբեղյանն էլ հայերենում դժվարությամբ է մակբայը առանձին տեսակ համարում, և ճիշտ Շչերբայի նման նրան էլ դա կատարել «ստիպում են» մակբայակերտ ածանցները (ռուսերենում դա -o-ն է՝ *xopom-o*, *бьютр-o*, իսկ հայերենում՝ -որեն, -աբար և այլն):

Ինչպես նշել ենք «Դերանվան արբահամյանական ըմբռումը» հոդվածում, Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի քերականություն» և «Հայոց լեզվի տեսություն» աշխատություններում կատարում է խոսքի մասերի իմաստաբանական-շարահյուսական դասակարգում և դերանունը բաշխում է հարաբերակից համապատասխան խոսքի մասերի մեջ<sup>10</sup>: «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ բայից բացի, գոյականը, ածականը և մակբայը առանձնացվում են որ-

<sup>7</sup> Ст' у Толковий словарь Ушакова, М., 1939, h. 3, էջ 677:

<sup>8</sup> Ст' у **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 25-26:

<sup>9</sup> Ст' у նույն տեղը, էջ 105-107:

<sup>10</sup> Այդ մասին տե՛ս **Աբաջյան Ա.**, Դերանվան արբահամյանական ըմբռումը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Vol.16, N 3(48), 2025, էջ 90:

պես ինքնուրույն անուններ, իսկ նրանց ենթատեսակներ են համարվում թվականը, դերբայը և դերանունը: Գոյականի ներսում առանձնացնում է անուն (բուն գոյականները, թվականները (ըստ Մ. Աբեղյանի՝ տասնյակ, հիսնյակ), դերբայները (անորոշը)) և դերանուն (անձնական, մասամբ ցուցական, հարցական, հարաբերական) հակադրությունը: Նույն սկզբունքով ածականի ներսում առանձնացնում է անուն (բուն ածականները, քանակական և դասական թվականները և ենթակայական, հարակատար դերբայները) և դերանուն-ածական (ցուցական դերանունները): Մակբայի ներսում առանձնացնում է անուն (բուն մակբայները՝ ազատորեն, քաջաբար, թվականները (երկիցս, երիցս), համակատար դերբայը) և դերանուն-մակբայ կամ դերանվանական մակբայ՝ աստ, անդ, ուր, այստեղ և այլն<sup>11</sup>: Մի կողմից՝ թվականը (թվի և համարքի գաղափարով), դերբայը (բայիմաստով՝ առանց դեմքի) և դերանունը (ոչ հաստատուն նշանակությամբ) միավորվում են որպես գոյականի, ածականի և մակբայի երկրորդական տեսակներ, մյուս կողմից՝ տարանջատվում են իմաստային առումով, որովհետև թվականը և դերբայը ունեն անփոփոխ, հաստատուն նշանակություն, դրանով էլ մտնում են անուն տեսակի մեջ, իսկ դերանունը հաստատուն նշանակություն չունի, հետևաբար մնում է որպես առանձին, ինքնուրույն ենթատեսակ:

Աբեղյանին ժամանակակից և նրան հաջորդած եվրոպացի և ռուս քերականագետներին, ըստ դերանունների դասակարգման իրենց մոտեցման, կարելի է բաժանել երեք խմբի.

1. Քերականագետներ, որոնք դերանունը համարում են առանձին խոսքի մաս (Բլումֆիլդ, Եսպերսեն, Լոմոնոսով):

2. Քերականագետներ, որոնք մերժում են դերանունների գոյությունը՝ որպես առանձին խոսքի մաս (Վանդրիես, Պոտերնյա, Ակսակով):

3. Քերականագետներ, որոնք դերանունները մասամբ են համարում խոսքի մաս, մասամբ էլ տարաբաշխում են այլ խոսքի մասերի մեջ (Վինոգրադով, Կոիլով և այլք):

Բոլոր դեպքերում դերանունները համարելով խոսքի մասերի առանձին ենթախումբ՝ Մ. Աբեղյանը չի մերժում և ամեն անգամ շեշտադրում է դերանունների արտահայտած՝ մյուսներից տարբերվող իմաստը, այնպիսի իմաստը, որը որևէ այլ խոսքի մաս չունի: Հենց դրա համար էլ, եթե թվականն ու դերբայը նույն հարթության վրա են դիտարկվում անուն (գոյական, ածական, մակբայ) խոսքի մասերի հետ, դերանունը հակադրվում է դրանց՝ որպես առանձին ենթատեսակ: Շարահյուսական գործառույթի գերակայությունը երևում է հենց դերանունների՝ ինքնուրույն խոսքի մաս չհամարելու փաստում, քանի որ եթե

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 316:

իմաստային առումով դերանունները ներկայացնում են բոլորովին ինքնուրույն խումբ, ապա շարահյուսական տիրույթում նրանք տարրալուծվում են մյուս խոսքի մասերի մեջ:

Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի քերականություն», «Հայոց լեզվի տեսություն», «Գրաբարի քերականություն» և այլ աշխատություններում կիրառում է դերանունների հետևյալ տեսակային անվանումները՝ անձնական, ցուցական, անորոշ, հարցական, փոխադարձ, հարաբերական (շաղկապական), ստացական: Ե՛վ գրաբարի, և՛ աշխարհաբարի համար Մ. Աբեղյանն ընդունում է ստացական դերանունների գոյությունը՝ դրանք անվանելով մերթ ստացական դերանուններ, մերթ ստացական ածականներ<sup>12</sup>: Աշխարհաբարի համար դրանք համարում է սովորական ածականների նման գոյականներին նախորդող և անփոփոխ մնացող բառեր: Նա կարծում է, որ դրանք ոչ թե անձնական դերանվան սեռական հոլովաձևերն են, այլ ստացական դերանուններ: Իսկ որպես անձնական դերանունների հոլովաձևեր ընդունում է միայն *ինձ, քեզ, մեզ, ձեզ, իրեն* ձևերը՝ դրանք համարելով սեռական-տրական հոլովների ձևերի նույնացման օրինակ: Գիտնականը նշում է, որ այստեղ ինքը հետևում է Ս. Պալասանյանի և Ա. Այտընյանի օրինակին, որոնք **իմ տեսածը, մեր բնակած տունը, քո գոված աշակերտները, իմ տեսած անտառը** օրինակներում դրանք համարում են ստացական դերանուններ<sup>13</sup>: Այսպիսով՝ Մ. Աբեղյանը նույնպես ընդունում է ստացական դերանունների գոյությունը աշխարհաբարում, բայց նշում է նաև, որ աշխարհաբարում դրանք դրվում են նախադաս, կիրառվում են անփոփոխ, քանի որ համաձայնությունը չէ նրանց և գոյականի կապակցման եղանակը:

### Եզրակացություն

Ըստ Մ. Աբեղյանի՝ դերանունները բառեր են, որոնք չունեն անփոփոխ բառային իմաստ, այլ ամեն անգամ նշանակում են որևէ առարկա կամ հատկանիշ՝ կախված իրադրությունից:

Մ. Աբեղյանի և Լ. Շչերբայի խոսքի մասերի դասակարգման համակարգում կան հստակ նմանություններ: Ե՛վ Մ. Աբեղյանը, և՛ Լ. Շչերբան դերանունները առանձին խոսքի մաս չեն համարում: Լ. Շչերբան նշում է, որ դերանունը իմաստային-գործառական խումբ է, այլ ոչ թե քերականական կարգ, և ճիշտ ինչպես Մ. Աբեղյանը, դերանունները տարաբաժանում է հիմնական խոսքի մասերի միջև: Սակայն ի տարբերություն Շչերբայի, որի դասակարգման հիմքում ձևաբանական հատկանիշն է, Մ. Աբեղյանի դասակարգման հիմքում գերակշռում է իմաստային-շարահյուսական հատկանիշը:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 584-585:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 586:

Խոսքի մասերի դասակարգման մեջ շարահյուսական հատկանշի կարևորությամբ շատ հաճախ միննույն բառը շարահյուսական տարբեր պաշտոնների պատճառով իբրև տարբեր բառեր է ընկալվում: Օրինակ **ինչ** բառը մերթ դիտվում է որպես հարցական անուն, մերթ անորոշ անուն (երբ գործածվում է որպես ենթակա կամ խնդիր), մերթ ածական անուն կամ մականուն (որպես որոշիչ կիրառվելիս):

Նույնիսկ երբ Մ. Աբեղյանը առանձին խոսքի մաս չի համարում դերանունը, այնուամենայնիվ կիրառում է *անձնական, ցուցական, հարցական, անորոշ* դերանուն եզրույթները, ինչը հասկանալի է դարձնում, որ նա, ինչպես նախորդ քերականները, ընդունում է դերանվան գոյությունը՝ որպես առանձին բառերի տեսակ, լեզվական համակարգի առանձնահատուկ միավոր:

Մակայն պետք է նշենք, որ բառերի շարահյուսական դասակարգման հիմքում անխուսափելի է բառերի ունեցած բառային նշանակությունները անտեսելը, ինչպես նաև հենց շարահյուսական կիրառությունները հիմք են դառնում ձևաբանական տարաբնույթ փոփոխությունների: Ուստի կարևոր է բառերի խոսքիմասային դասակարգման հիմքում դնել և՛ իմաստային, և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական իմաստագործառական հատկանիշները:

**АННА АБАДЖЯН – Концепция местоимений М. Абегаына.** – В статье рассматриваются вопросы, связанные с классификацией частей речи М. Абегаына, применение термина «часть речи», принадлежность местоимений к определенным частям речи и их семантические особенности в армянском языке. В армянском языкознании широко распространено мнение, что в основе классификации частей речи М. Абегаына лежит синтаксический принцип, но изучение местоимений показывает, что параллельно с синтаксическим принципом учитывается и уникальная семантическая особенность слов этой группы: они не называют, а заменяют уже названный объект или признаки этих объектов.

Уже существующие в армянской грамматике традиционные классификации частей речи для М. Абегаына не были догмой, он, следуя европейской и русской лингвистической традиции, основывает свою новую независимую классификацию на принципе изучения особенностей, характерных для армянского языка. В результате, хотя М. Абегаына не признает местоимение самостоятельной частью речи (типом слова), тем не менее, он признает существование в армянском языке личных, указательных, вопросительных, взаимных, относительных, неопределенных, притяжательных местоимений как отдельных подтипов существительных, прилагательных и наречий.

**Ключевые слова:** местоимение, часть речи, тип слова, синтаксическая особенность, семантико-функциональная особенность, предложение, притяжательное местоимение

**ANNA ABAJYAN – The Perception of the Pronoun by M. Abeghyan.** – The article examines M. Abeghyan’s classification of parts of speech, his use of the term *խոսք* (“word/speech”), and issues related to the part-of-speech status of pronouns, as well as their semantic characteristics. In traditional grammar, it is generally accepted that Manouk Abeghyan’s classification of parts of

speech is based primarily on syntactic principles. However, an analysis of pronouns reveals that, alongside syntactic criteria, Abeghyan also takes into account a distinctive semantic-functional feature of these words—namely, that they do not name objects or qualities directly but substitute for entities or features that have already been named.

Rather than adhering to the established part-of-speech classifications of his time, Manuk Abeghyan follows European and Russian linguistic traditions, placing at the core of his system principles that reflect the specific characteristics of the Armenian language and aiming to construct an independent classification.

As a result, the pronoun is not recognized by Manouk Abeghyan as an independent part of speech (or type of word). Nevertheless, he acknowledges and describes the existence of personal, demonstrative, interrogative, reciprocal, relative, indefinite, and possessive pronouns in Armenian, treating them as distinct subtypes of nouns, adjectives, or adverbs.

**Key words:** *pronoun, part of speech, type of words, syntactic feature, semantic-functional feature, sentence, possessive pronoun*

### Գրականության ցանկ

- Աբաջյան Ա., Դերանվան արբանաբանական ըմբռնումը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Vol.16, N 3(48), 2025: [Abajyan A., Deranvan abrahanyakan ěmbĕrnumĕ, «Banber Yerevani hamalsarani. Banasirut'yun», Vol.16, N 3(48), 2025]:
- Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Եր., 2016: [Abegyan M., Erker, h. Z, Er., 2016]:
- Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976: [Aġayan Ē., Ardi hayereni bac' atrakan baġaran, Er., 1976]:
- Բարսեղյան Հ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980: [Barseġyan H., Hayereni xoski maseri usmunġĕ, Er., 1980]:
- Гумбольдт В., Избранные труды по языкознанию. М., 1984. [Gumbol'dt V., Izbrannye trudy po yazykoznaniiyu. M., 1984]:
- Толковый словарь Ушакова, М., 1939. Т. 3. [Tolkovyy slovar' Ushakova, M., 1939. T. 3]:
- Щерба Л., О частях речи в русском языке. М., 1928. [Shcherba L., O chastyakh rechi v russkom yazyke. M., 1928]:

## ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ ԲՆՈՐԴԸ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ 

### Հայկական պետական մանկավարժական համալսարան

Հայտնի է, որ հուշագրությունը (ֆրանս. memoires), ըստ հեղինակի հայեցողության, անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողությունն է, որ ունի ժանրային առանձնահատկություն առաջին հերթին գրավոր խոսքի դրսևորման առումով: Այդ ժանրը հանդես է բերում տեսակային բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրություն, մեծ մարդկանց զավակների, հարազատների պատմածներ, նամակներ և այլն: Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել Մանուկ Աբեղյանին նվիրված հուշագրության լեզվական համապատկերը, բնորդի դիմանկարի կերտման սկզբունքները:

Ուսումնասիրել ենք այդ ստեղծագործություններն իրենց լեզվական բնութագրիչներով, վեր հանել բնագրերի կառուցման հիմնական սկզբունքները՝ բացահայտելով հեղինակների լեզվաոճական անհատական հատկանիշները:

**Բանալի բառեր** – *Մանուկ Աբեղյան, հուշագրություն, ժանր, դիմանկար, բնավորության գիծ, սուբյեկտիվ դիրքորոշում, լեզվաոճական հիմք, հիշողության շարադրանք*

### Ներածություն

Լեզվաբանական գրականության մեջ հուշագրական արձակի որոշ տեսակների երբեմն անվանում են լեզվաբանական անձնաբանություն: Այստեղ հեղինակ-անհատը դիտվում է սոցիալական և անհատական գծերի համադրությամբ մի անհատականություն, որը լիովին կարող է երևալ սեփական նախաձեռնությամբ ստեղծված երկում, իսկ երկը պետք է ունենա անցյալի հիշողության հստակ ու ճշգրիտ հիմքեր: Դժվար չէ նկատել, որ գեղարվեստական վա-

**Մշտտ Գալստյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

**Ашот Галстян** – доктор филологических наук, профессор, декан филологического факультета АГПУ им. Х. Абовяна

**Ashot Galstyan** – Doctor of Philological Sciences, Professor, Dean of the Faculty of Philology of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan

Էլ. փոստ՝ [galstyanashot42@aspu.am](mailto:galstyanashot42@aspu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0001-9506-8611>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 03.02.2026

Գրախոսվել է՝ 11.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

վերագրության կառուցվածքային տիրույթում մենք գործ ունենք լեզվակիր անհատի հետ, որը գոյություն ունի լեզվական տարածություններում: Ըստ փիլիսոփայական բնորոշման՝ բառերի գործածման նորմերը, լեզվական սովորույթները կարող են որոշել հեղինակին<sup>1</sup>:

Վավերագրության հեղինակի հիշողության մեջ առավելաբար պահպանվում են տեղեկությունները, տպավորությունները, որոնք ներգործում են նրա զգայարանների վրա:

Զգալի չափով տեղ հատկացնելով ինքնակենսագրական տարրին՝ հուշագրության հեղինակն ինքն է որոշում ստեղծագործության լեզվական արտահայտչաձևը, գույները, հիմնարար գծերը:

Մանուկ Աբեղյանի մասին հուշագրական էջեր շատ են հյուսվել (Ավ. Բահակյան, Վ. Թոթովենց, Դ. Դեմիրճյան, Հ. Ղանալանյան, Ռ. Զարյան, Հ. Աբեղյան և այլք), որոնց հեղինակները գեղարվեստական իմաստով կերպար չեն ստեղծում, բայց կերտում են դիմանկարներ, որոնք տարբեր երևույթների, իրողությունների կենդանի կրողներ են: Այս դեպքում հուշագրության հեղինակը «ոչ թե մտահղացած տիպերի հետ գործ ունի, այլ իր ծանոթ մարդկանց ու դեմքերի հետ, որոնց շրջապատում նա ապրել է և անցկացրել իր կյանքի օրերը»<sup>2</sup>:

Տեղին է հիշատակել Ավ. Բահակյանի բնորոշումը. «Մանուկ Աբեղյանը հայկական ավանդությունների մարմնացումն էր, գիտնական բառիս ամենախորին իմաստով, անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր, լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ: Սկզբունքի մարդ, մեր ապառաժների պես կայուն, մտքի ու կամքի, աշխատանքի ու գործի հսկա. պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ... Իր մոնումենտալ երկերով կառուցեց իր հավերժական արձանը մեր կուլտուրայի և մեր սրտերի մեջ»<sup>3</sup>:

Այստեղ կարևորվում է հեղինակային ոճը՝ որպես տեսածի և ապրածի անմիջական նկարագրություն:

### Մ. Աբեղյան բնորդի դիմանկարը

Հուշագրության տողերի միջից վեր է հանում Մանուկ Աբեղյանի դիմանկարը՝ բարի ժպիտը դեմքին թոռնուհուն հեքիաթ պատմելիս, սենյակում կամ պատշգամբում լուռ, մտախոհ շրջելիս, գրասեղանի մոտ աշխատելիս և այլն:

Հայտնի է, որ հուշագրության լեզվատիրույթում դիմանկարն անընդհատ փոփոխվող վիճակների ամբողջություն է՝ կառուցված հեղինակային խոսքի բազմազան շերտերից: Մանուկ Աբեղյան բնորդի *դիմանկարը* գեղարվեստական վավերագրության հեղինակները կերտում են նուրբ դիտողականությամբ և յուրահատուկ մեթոդով: Ինչպես հայտնի է, «հերոսների (տվյալ դեպքում

<sup>1</sup> Տե՛ս **Բրուսյան Գ.** (1972), Փիլիսոփայություն և լեզու, Եր., «Հայաստան» հրատ., էջ 90:

<sup>2</sup> **Белинский В.** (1948): Избранные сочинения. М. // Художественная литература, с. 595.

<sup>3</sup> **Բահակյան Ավ.** (1977): Երկերի ժողովածու, հ. 5, Եր., «Սովետ. գրող» հրատ., էջ 124:

բնորոշների-Ա.Գ.) անհատականացումը... սկսվում է նրանց արտաքինի նկարագրությամբ, երբ հեղինակը, օգտագործելով յուրաքանչյուր հերոսի համար յուրահատուկ մակդիրներ ու համեմատություններ, ստեղծում է նրանց դիմանկարը և ապա դրան համապատասխան բացահայտում նրանց ներքինը, որի հետ և կապվում են այդ հերոսների վարքագիծը, հոգեբանությունը և հետագա գործողությունները»<sup>4</sup>:

Գեղարվեստական վավերագրության ժանրում դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերևս հուշագրի առաջին տպավորությունն է Մանուկ Աբեղյան բնորոշից. «Ես առաջին անգամ էի լինում նրա տանը» (ԶՌ, 282):

Այս առումով նկատելի են ուշագրավ փաստեր. հուշագիրների մեծ մասը իբրև սկիզբ արձանագրում է բնորոշի հետ առաջին հանդիպումը, ինչը, որպես կարգ, անմոռանալի տպավորություն է թողնում<sup>5</sup>: Հեղինակների հիշողության հոսքերում Աբեղյանը նախևառաջ ուրվագծվում է իր արտաքին նկարագրով: «Աբեղյանին առաջին անգամ ի մոտո ծանոթացա եղբորս՝ Արամի տանը... Արտաքինն իսկ այդ պատկառելի գիտնականի պարզ կացուցանում էր, որ անկոտրում կամքի տեր, սկզբունքային մարդ էր» (ՀՂ, 17):

Կառուցվածքային նույն սկզբունքն առկա է նաև Ռ. Զարյանի հուշերում: «Աբեղյանն էր նստած սենյակում՝ ակնոցն աչքերին, մոայլատես, ու ինձ թվաց՝ մի փոքր էլ բարկացած» (ԶՌ, էջ 282):

Հուշերում նկարագրական խոսքը հեղինակները հյուսում են՝ կիրառելով լեզվառճական այնպիսի հաստուկ հնարներ, որոնք ձևավորում են հուշագրական տեքստի դիմապատկերային միջուկը: Այս տեսանկյունից կարող ենք առանձնացնել կառուցվածքային միավորներ, բառաշերտեր, որոնք ընդգծում են՝ ա. բնորոշի արտաքին հատկանիշները, բ. գործողություններն ու արարքները, գ. ուղղակի կամ անուղղակի խոսքը և այլն:

Հեղինակները կերպարագծում են բնորոշի դիմանկարը՝ արտաքին բարեմասնությունների հաշվառումով՝ երբեմն առանձնացնելով նրա աչքերը, դեմքը, այտերը, ժպիտը, հայացքը, ձայնը, քայլը և այլն. «Այլևս նրա դեմքը չուներ մի փոքր առաջվա մոայլությունը: Ժպտում էր: Իսկ նա ժպտում էր մաքուր, անմեղ, անքեն» (ԶՌ, 288):

Նկատելի են նաև ազգային խորհրդանիշների հետ զուգահեռականության

<sup>4</sup> Եզեկյան Լ. (1975): Ընթացիկ ստեղծագործությունների լեզուն և ոճը (ըստ պատմավեպերի նյութերի), Եր., էջ 106:

<sup>5</sup> Ա. Մատուկյանը «Հին երագներ, հին ճամբաներ» հուշագրության մեջ հետևյալ կերպ է բանաձևում առաջին հանդիպման տպավորությունը. «Առաջին հանդիպումը կը նմանի նկարիչի մը առաջին գիծերուն: Գոյները, երանգները, արտայայտութեան նրբութիւնները եւ յատկանշական բոլոր մանրամասնութիւնները կու գան յետոյ, ամբողջացնելու համար դէմք մը, բայց հիմնականը, էականը՝ մատիտի առաջին հարուածներն են, որով կ'ուրուագծուի պատկերը» (ՕԱՀԵՆՃ, 56):

որոշ տարրեր, որոնք գալիս են հեղինակի «համակրանքից»: Հասմիկ Աբեղյանը գրում է. «Մասիսի վեհության, մեծության մեջ ես տեսնում էի իմ լավ, իմ բարի պապիկին: Նա մնաց իմ կյանքի Մասիս սարը» (ԱՀ, էջ 86):

Դիմանկարներից շատերում գծագրվում է բնորդի դիմապատկերը (պորտրե՝ մարդու պատկերը ուսից վերև). «Միջահասակ, հաղթամարմին. հաստատուն ուսերի վրա կրում էր իմաստուն գլուխը: Լայներես, օվալաձև դեմքով, հռոմեական էր հիշեցնում համառ ծնոտը, իսկ արքենի ճակատը պատած էր խոր ակռաված կնճիռներով...» (ՂՀ, 17):

Ինչպես նկատելի է, դիմանկարներն ամբողջանում են ոչ միայն գոյականական միավորներով՝ *դեմք, ճակատ, հոնք, բեղ, ծնոտ, շրթունք, աչք*, այլև բնութագրող ածականներով և բայերով՝ *խոժոռադեմ, անհեղասաստ, ուսուցանող, մարդ-Մասիս, աշխատանքի հսկա, ժլատ՝* բառ ու բանի օգտագործման մեջ, *խոնարհարար բարևող* և այլն:

Ածական անունը՝ որպես հատկանշային հասկացություն արտահայտող բառերի կարգ, իր գնահատողական դերով այստեղ ունի ոճական բազմապիսի դրսևորում: Ավելորդ չենք համարում ընդգծել, որ դիմանկարի ձևավորման գործում բացառիկ արժեք են ստանում այնպիսի ածականները, որոնց ուղղակի և փոխաբերական իմաստով կիրառություններն ամբողջացնում են Աբեղյան բնորդի արտաքին և ներքին հատկանիշները՝ *հմուտ, վարժ, լավատեղյակ, սրտաբաց, հայրենասեր* և այլն:

Երբեմն հեղինակային նկարագրություններն ընդգրկում են ավելի լայն շրջանակ՝ բացահայտելով բնորդի հուզաշխարհը. «Գնացել էի Աբեղյանի մոտ: Ձեռքին Երևանում լույս տեսնող ռուսական թերթն էր՝ «Կոմունիստը»: Աչքիս վրդովված էր երևում: Այն է՝ ուզում էի հարցնել, թե ի՞նչ է պատահել, ինքը բացվեց» (ՁՌ, 294): Կամ՝ «Երբեք այդպիսի զվարթ տրամադրությամբ չէի տեսել Աբեղյանին: Ծիծաղում էր, կատակում: Արեց մի պատմություն, որն ընդհատվում էր հանկարծ, որովհետև չէր կարողանում զպել ծիծաղը» (ՁՌ, 295):

Գեղարվեստավերագրական պատումի շրթային ձուլվող դիմանկարներն ամբողջանում են մի քանի եղանակով՝

ա) բնորդի կեցվածքով, շարժուձևով, աչքի զարնող այլ պարագաներով. «Այսօրվա պես հիշում եմ կերպարանքը» (ՀՄ, 9):

բ) հերոսների ներքին հատկանիշներով, բնավորության գծերով. «Նա կորովապիճը և սկզբունքային մարդ էր՝ իր անհողորդող համոզմունքներով. բացառիկ ճշտապահ և պարտաճանաչ: Գործի մեջ պահանջկոտ, օրինակելի իր կենցաղում» (ՁՄ, 114):

գ) մարդու հոգեկան գործընթացների տարաբնույթ դրսևորումներով. «Պարտավոր ենք անպայման հավատալ, որ նա թե թե՛ ման է եկել Մովսես Խորենացու հետ, վիճել, հակաճառել նրան, և թերևս Խորենացուն երբեմն դեմ է տվել պատին իր երկայթյա տրամաբանությամբ և քաշվելով իր խուցը՝ գրի է առել

*մտքերը երկաթագրերով...*» (ԱՀ, 318-319): Եվ պատահական չէ, որ շրջասա-  
բար Մանուկ Աբեղյանին անվանել են *Մեր Խորենացին*, որն ունի ոճական հա-  
զեցվածություն:

Ուշագրավ է, որ դիմանկարները հաճախ հյուսվում են համեմատության  
տարբեր հիմքով:

ա) Բնորոշը համեմատվում է մեկ այլ անձի հետ. հետաքրքրական է Ա. Ղա-  
նալանյանի բնութագրությունը. «Աբեղյանը նույն դերն է կատարել հայագի-  
տության մեջ, ինչ դեր որ կատարել են Կոմիտասը՝ երաժշտության և Թուման-  
յանը՝ գրականության մեջ» (ԳԹ, 1964, հմ. 39):

բ) Բնորոշը համեմատվում է բնության տարերային ուժերի, կենդանական  
աշխարհի տարբեր արարածների հետ՝ հայագիտության վիթխարի կաղնի (Ա-  
րամ Ղանալանյան), հաղթ կաղնի (Մարգիս Հարությունյան): Կամ՝ «Աբեղյանի  
հայացքում իմ պատասխանը ալիք առաջացրեց, ինչպես ժայռաբեկորը ծովում  
սուզվելիս: Իսկ երբ ծովը հանդարտվեց, նա ասաց.

-Վաղը կգաս դպրոց» (ԳԹ, 2009, հմ. 42):

Նշելի է, որ հուշագրական պատումի տարածությունը և ժամանակը միշտ  
էլ հարաբերակցվում է մարդուն՝ ներկայացնելով նրան հուշագրության տար-  
բեր իրավիճակներում: Հետաքրքրական է, որ հեղինակները բնորոշին ներկա-  
յացնում են տարբեր վայրերում: Օրինակ՝ հուշերում Աբեղյանին տեսնում ենք  
Էջմիածնում, Լայպցիգի, Բեռլինի, Փարիզի համալսարաններում, Պետհրա-  
տում և այլուր: Գործողությունները հաջորդում են միմյանց, որոնց կենտրո-  
նում Աբեղյանն է, և որոնք դառնում են գիտնականի դիմանկարի ձևավորման  
էստարթերը: Կարևոր է, թե հուշագիրը ե՛րբ և որտե՛ղ է հանդիպում բնորոշին:  
Այս դեպքում տարածաժամանակային ընդգծումը նորովի է բացահայտում  
մարդ, ուսանող, գիտնական Մ. Աբեղյանին:

Մ. Աբեղյանի դիմանկարը հուշագիրները ուրվագծել են նաև այլ բնորոշնե-  
րին նվիրված հուշերում: Օրինակ՝ Ե. Չարենցին նվիրված հուշապատումում  
Ռ. Զարյանը գրում է. «Կանգնած էր Մանուկ Աբեղյանը, ինչպես մի խոժոռ ճայ-  
ռաբեկոր, դեմքը խիստ էր, ոնց որ միշտ, և դժվար էր հասկանալ, թե այդ պահին  
ինչ էր մտքինը» (ԶՌ, 104): Կամ մեկ այլ բնորոշի՝ Փ. Թերլեմեզյանին նվիրված  
հուշերում կարդում ենք. «Այստեղ էր Փանոս Թերլեմեզյանը, որը, հակառակ  
Աբեղյանին, չէր կարողանում լուռ ու անխոս մնալ, և այդ օրը նրա ձեռքն ավելի  
էր դողում» (ԶՌ, 104-105):

### **Հուշագրության ժանրի այլ հատկանիշներ**

Հարկ է շեշտել, որ գեղարվեստական վավերագրության հեղինակը վերջ-  
նարդյունքում ենթակայական (սուբյեկտիվ) դիրքորոշում կարող է ունենալ:  
Վերջիվերջո գեղարվեստական վավերագրությունը կյանքի լուսանկարչական  
ճշգրտությամբ չի ներկայացվում: Ինչպես նշում է Ա. Շիրվանզադեն, չկան և

չեն կարող լինել ֆոտոգրաֆիական ճշտություն ունեցող պատկերներ ներկայացնող ստեղծագործություններ<sup>6</sup>: Այս տեսակետից լիովին ընդունելի է Վիլյամ Մարոյանի դիտարկումը. «Հիշողությունը երևակայություն է: Որովհետև ինչ որ հիշում ես, նման չէ ճշգրտորեն քո տեսածին, և քանի որ քո տեսածը տարբեր է, քո հիշողությունը մի աստիճանն է երևակայության: Իսկ երևակայությունը վերհիշած իրականն է»<sup>7</sup>:

Հուշագրողը երևույթներին նայում է անձնական կյանքի պատուհանից: Նա չի կարող բնագրում ընդգրկել իրադարձությունների և երևույթների բազմահանգույց շղթաներ: Կարևոր է, թե հեղինակը իրականության ո՞ր կողմն է նկատում, ինչպե՞ս է մշակում եղած փաստերը և ինչպե՞ս է գնահատում արժեքների բազմակերպությունը՝ հիմք ընդունելով սեփական աշխարհայացքը և համոզմունքների ներդաշնակությունը:

Հուշագրության մեջ լեզվական դրսևորում է ստանում հեղինակի և՛ մտածական, և՛ հուզական աշխարհը: Հեղինակները հաճախ ներկայացնում են հոգեվիճակներ, երբ հիշողության շարադրանքը դժվարությամբ է կառուցվում հստակ չհիշվելու պատճառով: Նման մտքերի կարելի է հանդիպել Մ. Աբեղյանին նվիրված հուշագրության մեջ. «Հիմա չեմ հիշում, թե ինչու խոսք բացվեց այն մասին, թե հեղինակն ում պետք է գիրք նվիրի» (ՋՌ, 1, 287):

Տարբեր են հուշագրության ժամանակային սահմանները. հուշագիրը գրուցում է ապագայի իր ընթերցողի հետ՝ ի տարբերություն նամականու, որի հեղինակը գրուցում է ներկայում, իսկ օրագրողի գրառումների հասցեատերը հենց ինքն է թե՛ ներկայում, թե՛ ապագայում և թե՛ նույնիսկ անցյալում:

Մ. Աբեղյանին նվիրված հուշագրական երկերն իրենց ժանրային կանոնիկ սահմաններով հանդերձ աչքի են ընկնում նաև միջժանրային դրսևորումներով, բնագրերի գեղարվեստական, վավերագրական, գիտական, մտածական, մեկնողական շերտերի համադրմամբ:

Կարծում ենք՝ շատ ուսանելի բան կա հուշագրողի՝ մարդուն ճանաչելու և ուսումնասիրելու մեթոդի մեջ: Գեղարվեստական վավերագրության հեղինակների՝ Մանուկ Աբեղյանի դիմանկարի կերտման հոսքերում նկատելի են և՛ բնորդի համառոտ կենսապատումի, և՛ անձնական կյանքի փաստերի, տարբեր հանդիպումների դրվագների մանրամասներ, նույնիսկ Աբեղյանի խոսքի լեզվական իրողությունների դիտարկումներ, որոնք ամբողջացնում են նրա ընդհանուր դիմանկարը:

### Եզրակացություն

Հուշագրությունը անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողությունն է: Մանուկ Աբեղյանի մասին հուշագրական է-

<sup>6</sup> Տե՛ս Բաֆֆին ժամանակակիցների հուշերում (1986): Եր., ՀՄՄՀ ԳՍ հրատ., էջ 228:

<sup>7</sup> Մարոյան Վ. (1991): Ընտիր երկեր 4 հատորով, հ. 4, Եր., «Նաիրի» հրատ., էջ 396:

ջեր շատ են գրվել, որոնց տողերի միջից հառնում է մեծ գիտնականի դիմանկարը, որն անընդհատ փոփոխվող վիճակների ամբողջություն է: Այս ժանրում դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերևս հուշագրի առաջին տպավորությունն է: Հեղինակները կերպարագծում են բնորդի դիմանկարը արտաքին բարեմասնությունների հաշվառումով:

Բնորդի դիմանկարն ամբողջանում է մի քանի եղանակով՝ բնավորության գծերով, կեցվածքով, շարժումներով, ներքին հասկանիշներով, հոգեկան գործընթացների դրսևորումներով, որոնք հյուսվում են լեզվառձական տարբեր հիմքերով: Հուշագրության հեղինակը, սակայն, վերջնարդյունքում սուբյեկտիվ դիրքորոշում կարող է ունենալ: Հաճախ հիշողության շարադրանքը դժվարությամբ է կառուցվում հստակ չհիշվելու պատճառով:

**АШОТ ГАЛСТЯН – *Портрет Манука Абебяна в мемуарах.*** – Мемуары (фр. memoires) – это воспоминания об интересных событиях и лицах прошлого. О Мануке Абебяне написано немало мемуарных страниц, из строк которых вырисовывается портрет великого ученого, который представляет собой совокупность постоянно меняющихся состояний. В этом жанре портрет человека формируется по нескольким принципам, существенным из которых, пожалуй, является первое впечатление мемуариста. Авторы мемуаров создают портрет человека, описывая его внешние черты, иногда выделяя глаза, лицо, щеки, улыбку, взгляд, голос и т. д. Портрет героя мемуаров дополняется несколькими компонентами – черты характера, осанка, манера двигаться, внутренние качества, проявления психологических процессов – которые сплетаются на разных лингвостилистических основах. Однако автор мемуаров может в конечном итоге занимать субъективную позицию. Зачастую повествование бывает сложно построить из-за отсутствия четких воспоминаний.

**Ключевые слова:** *Манук Абебян, мемуары, жанр, портрет, черта характера, субъективная позиция, лингвостилистическая основа, изложение воспоминаний*

**ASHOT GALSTYAN – *Manuk Abeghyan - the prototype in memoirs.*** – Memoir (French: *mémoires*) is the recollection of past events and personalities of interest. Many memorial pages have been written about Manuk Abeghyan, through the lines of which emerges the portrait of the great scientist, which is a collection of constantly changing states. In this genre, the portrait is completed by several principles, the most essential of which is perhaps the memoirist's first impression. The authors portray the prototype's portrait by accounting for external features, sometimes highlighting his eyes, face, cheeks, smile, gaze, voice, and so on. The prototype's portrait is completed in several ways: by character traits, posture, mannerisms, inner qualities, and manifestations of mental processes, which are woven together with different stylistic-linguistic foundations. The author of the memoir, however, may ultimately have a subjective viewpoint. Often, the narrative of memory is constructed with difficulty due to a lack of clear recollection.

**Key words:** *Manuk Abeghyan, memoir, genre, portrait, character trait, subjective viewpoint, stylistic-linguistic foundation, narrative of memory*

### **Գրականության ցանկ**

- Եզեկյան Լ. (1975), Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը (ըստ պատմավեպերի նյութերի), 228 էջ: [Yezeqyan L. (1975), Raffu steghsagortsutyunneri lezun ev vochy (yst patmaveperi nyuteri), 228 ej].
- Բրուտյան Գ. (1972), Փիլիսոփայություն և լեզու, 540 էջ: [Brutyan G. (1972), Pilisopajutjun ev lezu, 540 ej].
- Բասիակյան Ա. (1977), Երկերի ժողովածու, հ. 5, 436 էջ: [Isahakyan A. (1977), Erkeri zoghovatsu, h. 5. 436 ej].
- Սարոյան Վ. (1991), Ընտիր երկեր 4 հատորով, հ. 4, 432 էջ: [Saroyan V. (1991), Yntir erker 4 hatorov, h. 4, 432 ej].
- Բաֆֆին ժամանակակիցների հուշերում, 358 էջ: [Raffin zhamanakacicneri husherum, 1986, 358 ej].
- Белинский В. (1948). Избранные сочинения. М., 396 стр. [Belinskij V. (1948). Izbrannyye sochineniya, Moskva, , 396 str.].

### **Համառոտագրություններ**

- ԱՀ - Արեղյան Հ., Օրերս ինձ հետ են, Եր., 2014, 470 էջ:
- ԳԹ - «Գրական թերթ»
- ԶՌ - Զարյան Ռ., Հուշապատում, Գիրք 1, Եր., 1975, 536 էջ:
- ԶՍ - Զորյան Ս., Հուշերի գիրք, Եր., 1991, 336 էջ:
- ԾԱՀԵՆՃ - Ծառուկյան Ա., Հին երագներ, նոր ճամբաներ, Պէրյութ, 1960, 334 էջ:
- ՂՀ - Ղանալանյան Հ., Հուշ-դիմանկարներ, Անմարելի անուններ, Եր., 1987, 168 էջ:
- ՍՀ - «Սովետական Հայաստան», հմ. 120, 1965:

## ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ՝ ՄԵՐՕՐՅԱ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՌՀԱՎԱՏՉՅԱ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼԶՅԱՆ՝   
*Վանաձորի պետական համալսարան*

Մանուկ Աբեղյանն առաջինն էր, որ արևելահայերենի գիտական տեսությունը շարադրեց՝ հիմնվելով մեր լեզվի իրական կառուցվածքի վրա:

Ժամանակի թռուրտով պայմանավորված՝ հետին պլան էին մղվում հատկապես Արևմուտքում կրթություն ստացած անձինք և հենց այդ անձանց հանգամանքով պայմանավորված՝ նրանց ստեղծած գիտական արժեքավոր արտադրանքը: Ինչ խոսք, հետաբեղյանական ժամանակներում եղել են արդի հայերենին վերաբերող արժեքավոր և ուշագրավ հետազոտություններ, սակայն հարկ է արձանագրել, որ այդ շրջանը հայերենագիտության զգալի ասարք է, որովհետև Մ. Աբեղյանի՝ մեր լեզվի բնույթին հարազատ շարահյուսությունից, որն իր տրամաբանականությամբ ու հիմնարարությամբ այսօր էլ մրցակցելի է արևմտյան դպրոցների հետ, հետագա լեզվաբանները հրաժարվեցին և մեծ չափով ռուսերենի քերականության վրա ձևեցին արևելահայերենի քերականությունը:

Վերանայելու անհրաժեշտություն կա և՛ հնչաբանական, և՛ ձևաբանական բազմաթիվ հարցեր, որոնք հետաբեղյանական շրջանում տարբեր պատճառներով խոտոր գնահատումների են արժանացել:

Ասվածը չի նշանակում, թե անթույլատրելի են Մ. Աբեղյան գիտնականի տեսակետների վիճարկումները: Բնավ: Պարզապես այն արժեքավորությունը, որ Մ. Աբեղյանով է ստեղծվել հայ լեզվաբանության մեջ, արժանին էլ պետք է հատուցել՝ վերականգնելով մեր լեզվի էությունից բխող այն դրույթները, որոնք բացահայտել է գիտնականը:

Մ. Աբեղյանի տեսությունը հետաքրքիր է և կարևոր իր ներուժությամբ: Այն ստեղծագործելու հնարավորություն տվող հայեցակարգ է, և սույն հետազոտության մեջ նման մի փորձ է արված՝ վերահաստատելու արեղյանական ուսմունքի մի քանի էական դրույթներ արդի լեզվաբանության նորագույն մեթոդաբանությամբ, այդ թվում՝ նշանագիտական հայեցակերպով:

\* **Դավիթ Գյուլզատյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ՎՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ

**Давит Гюльзатян** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка и литературы Ванадзорского государственного университета

**Davit Gyulzatyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor, Chair of Armenian Language and Literature, Vanadzor State University

Էլ. փոստ՝ [davitgiulzadyan@gmail.com](mailto:davitgiulzadyan@gmail.com) ORCID ID: <https://orcid.org/0009-0001-3350-5844>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 02.02.2026

Գրախոսվել է՝ 16.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

**Քանալի բառեր** – ստորոգելի, ստորոգյալ, ստորոգիչ, գերակա, ենթակա, նշան, նշանակյալ, նշանակիչ

### Ներածություն

Մանուկ Աբեղյանը հայ բանասիրության այն դասականն է, որ իր գիտական արտադրանքով ոչ թե խոր հետք է թողել գիտությունների այդ ընդգրկուն համակարգի վրա, այլ լայն հուն է բացել նույն բանասիրության առնվազն երեք գիտակարգի՝ գրականագիտության, բանագիտության և լեզվաբանության մեջ:

Հարմար առիթ է նկատել տալու համար, որ Մանուկ Աբեղյանը լեզվաբանության մեջ բնավ երիտքերականական դպրոցի ներկայացուցիչ չէ (մի իրողություն, որ թմբկահարվում է տեղի-անտեղի՝ առանց հիմնավորման), այլ հոգեբանական, և դա ակներև է նրա «Հայոց լեզվի տեսության» թե՛ ներածության մարդկային լեզվին վերաբերող գնահատումներից, թե՛ աշխատության հիմնամասում հայերենի տարբեր իրակությունները բնութագրելիս:

Պարտ է մեզ նկատել, որ ինչպես Արսեն Այտընյանը՝ արևմտահայերենի, Մ. Աբեղյանն էլ, լինելով արևելահայերենի կառուցվածքի առաջին գիտական հետազոտություն կատարողը, այդ կառուցվածքը մատուցեց հենց մե՛ր լեզվի հորինվածքին հար և հարազատ, որը, սակայն, անտես առնվե՞ց՝ ժամանակի գոեհկությամբ ու քաղաքական բրտությամբ պայմանավորված, և այժմ, ուզենք թե՛ չուզենք, պարտավոր ենք արձանագրել, որ ստեղծագործում ենք հետաբեղյանական ռուսաբան քերականության տիրապետության շրջանում՝ թոթափել չկարողանալով նրա ազդեցությունը, այնինչ մեկ դարից ավել է, ինչ հրապարակված է գիտնականի «Աշխարհաբարի շարահյուսությունը», որը մրցակցելի է մինչև իսկ մերօրյա արևմտյան լեզվաբանության շարահյուսական տեսությունների հետ: Իսկ մենք մեր գիտական գանձը «դուրիս» ենք դրել և հաշտ ու համակերպված դեգերում ենք օտար ավերում...

Առեղծվածային մի բան կա մարդկային բնույթի մեջ: Խուզարկուները հանցակազմ փնտրելիս որպես կանոն հանցանքի գործիքն առավել դժվարությամբ են հայտնաբերում դրա՝ ամենից ակնհայտ տեղում լինելիս: Նման բան կա նաև գիտությունների մեջ: Ամենից դժվարությամբ բացահայտվում են ամենապարզ իրողությունները, ապա և նույն դժվարությամբ են մարսվում այդ իրողությունների շատ պարզ նկարագրությունները: Այդպես է նաև Մ. Աբեղյանի լեզվաբանական տեսության պարագայում: Իր պարզությամբ զուլալ տեսություն է Մ. Աբեղյանի կերտած քերականությունը: Ո՛վ գիտե, գուցե այդ զուլալության բերած պայծառությունն է շլացնում մեր ուղեղը, որ մինչև մերօրյա տնականություն թույլ չի տալիս յուրացնել իրական գնահատումները, համակերպվել այդ իրականությանը...

Ստորև **նպատակ** ունենք վերաբժնորելու մեր լեզուն խորքից գնահատող արեղյանական հայեցակերպերը՝ **խնդիր** դնելով վերահաստատել դրանք նաև արդի լեզվաբանության ու լեզվանշանագիտության մեթոդաբանությամբ:

**Մ. Արեղյանի քերականական հայեցակարգի ուրվագիծը**

Լեզվաբանի գիտական հայեցակարգն ըմբռնելու համար պետք է մի կողմ թողնենք արդի հայերենի տեսության՝ համալսարաններում ձեռք բերած մեր իմացության պաշարը: Մասնավորապես *խոսքի մաս* ասվածը Մ. Արեղյանի հայեցակարգում զուտ շարահյուսական հասկացություն է, և այդ մասին հստակ իրազեկում է լեզվաբանը: «Խոսք» ասելով՝ նա նկատի ունի նախադասությունը, և խոսքի մասն էլ այլ բան չէ, եթե ոչ նախադասության անդամ. «Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված մտածությունն է...»<sup>1</sup>: «Բայն և լրացական բառերը, որոնցից կազմվում է խոսքը, կոչվում են խոսքի մասեր կամ նախադասության անդամներ»<sup>2</sup>: Ծավալուն նկարագրությունից խուսափելու համար Մ. Արեղյանի խմբավորած բառերը ներկայացնենք աղյուսակով<sup>3</sup>:

**Բառախմբերը՝ ըստ Մ. Արեղյանի**

Զգացմունք ցույց տվող բառեր	Գաղափար կամ պատկերացում ցույց տվող բառեր					
	Խոսք կազմող բառեր	Լրացական բառեր			Կապակցական բառեր կամ խոսքի մասնիկներ	
ձայնարկու- թյուն կամ միջարկություն	Խոսք կազմող բառեր	բայ	գոյական	ածական	լուծական	կոմի շարհաս
			Խոսքի մասեր			

Մեկ այլ տեղ՝ աշխատության սկզբնահատվածում, Մ. Արեղյանը տեղեկացնում է, որ կարելի է նաև մեկ խմբով տալ հատկանիշ ցույց տվող մակադրական բառերը՝ ածականն ու մակբայը՝ հատուկ շեշտելով, որ առաջինը՝ առարկայի (գոյականի), երկրորդը՝ հատկանիշի (գործողության՝ բայի, և ածականի ու մակբայի) հատկանիշ է ցույց տալիս<sup>4</sup>: Եվ այսպես՝ խոսքի մասերը (= նախա-

<sup>1</sup> **Արեղյան Մ.** (1965): Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք» հրատ., էջ 359:

<sup>2</sup> Անդ, էջ 365:

<sup>3</sup> Այս աղյուսակը վերցրել ենք «Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ» ուսումնական ձեռնարկից (տե՛ս **Գյուլզատյան Դ.** (2016): Երևան, «Գլոբալ համալսարան», էջ 31):

<sup>4</sup> Տե՛ս **Արեղյան Մ.** (1965), էջ 129:

դասության անդամները) չորսն են՝ 1) **բայը** («բայ» ասելով՝ բացառապես դիմավոր ձևերը նկատի ուներ), որ ինքնին նախադասություն է, 2) **գոյականը** (ա. անուն գոյական, բ. թվական գոյական, գ. դերբայ գոյական, դ. դերանուն գոյական), 3) **ածականը** (ա. անուն ածական, բ. թվական ածական, գ. դերբայ ածական, դ. դերանուն ածական), 4) **մակբայը** (ա. անվանական մակբայ (*ազատորեն, քաջորեն*), բ. թվական մակբայ (*երկիցս*), գ. դերբայական մակբայ (*գրելիս*), դ. դերանվանական մակբայ): Արդ՝ այս չորս խմբի բառերն են նախադասության անդամները՝ տարբեր պաշտոններում դրսևորվող: Հենց սա՛ է երկար ժամանակ անըմբռնելի մնացել Մ. Աբեղյանի քննադատների համար: Այն, ինչ Մ. Աբեղյանի համար նշանակյալ էր, հետաբեղյանական լեզվաբանները նշանակիչ են դարձրել, և հակառակը: Այսպես՝ այսօրվա լեզվանշանագիտական ըմբռնմամբ՝ շարահյուսական նշան են կազմում գոյականն ու ենթական, գոյականն ու խնդիրը և այլն, և գոյականն արտահայտվում է ենթակայի, խնդրի և այլ պաշտոններում, ասել է՝ **գոյական + խնդիր, գոյական + ենթակա** նշանների մեջ գոյականը նշանակյալն է, ենթական ու խնդիրը՝ նշանակիչները, քանի որ ենթական, խնդիրը կլն գոյականի արտահայտության տեսակներն են: Հետաբեղյանական շրջանում հակառակ պատկերն է, որովհետև ասվում է, թե ենթական արտահայտվում է գոյականով, դերանվամբ կլն:

Գալով բային՝ հիշենք, որ միայն դիմավոր ձևերն էին բայ Մ. Աբեղյանի համար, և այստեղ ևս տարօրինակ բան չկա: Չէ՞ որ հետաբեղյանական լեզվաբանները «դերանուն» ասելով ո՛չ գոյական են հասկանում, ո՛չ ածական: Իսկ ահա Մ. Աբեղյանը միասնականորեն ինչպես դերանուն գոյական, դերանուն ածական, դերանուն մակբայ է տարբերակում, այդպես էլ տարբերակում է դերբայ գոյական, դերբայ ածական, դերբայ մակբայ: Ուստի բայը (վերստին հիշենք՝ մերօրյա ընկալմամբ՝ դիմավոր բայը) ինքնին խոսք է՝ նախադասություն, հենց դրանով էլ միակ գլխավոր անդամն է: Ասվածի լավագույն ապացույցը հենց Մ. Աբեղյանն է տալիս. «Եվ մինչդեռ բոլոր լրացումները կարող են երկրորդական նախադասությամբ փոխարինվել, բայը երբեք չի կարող մի երկրորդական նախադասությամբ արտահայտվել, որովհետև բայը քերականորեն միշտ ամենագլխավորն է: Բայը.... ինքը խոսքն է ամենապարզ ձևով....»<sup>5</sup>:

Մ. Աբեղյանի տեսությունից կարևոր է հիշել ստորոգյալի նրա ըմբռնումը: «Ստորոգյալ» ասելով՝ նա նկատի չուներ այն, ինչ հասկանում են այսօր, այլ բայ-ստորոգյալի՝ միայն բայիմաստին վերաբերող հատվածը: «Ստորոգյալ»-ը նա գործածում է բառի ստուգաբանական իմաստով, այն է՝ ստորոգված, վերագրված: «Երկինքը կապույտ է» նախադասության մեջ ստորոգյալը միայն «կապույտ» բաղադրիչն է՝ որպես ենթակային վերագրյալ հատկանիշ: Բայը «է» հանգույցն է: Ահա այս երկուսը՝ «կապույտ»-ը և «է»-ն, միասին կազմում են բայ-ստորոգյալ՝ որպես գլխավոր անդամ: Բայ-ստորոգյալի բայական հատվածը՝

<sup>5</sup> **Աբեղյան Մ.** (1985): Երկեր, հատոր Ը, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1985, էջ 604:

հատկանիշը, ստորոգող երրորդ դիմանիշ է-ն՝ հենց այդ դեմքով, արդե՛ն ենթակա է, և «երկինք» բառը նշված դեմքի բացահայտիչն է՝ այդ իսկ դեմքի լրացումը: Հետևաբար, բառով արտահայտված ենթական (*երկինքը*) բայ-ստորոգյալի լրացումն է:

Հպանցիկ անդրադառնալով հոլովների տեսությանը (սա դատելու ծավալուն նյութ է)՝ ստիպված ենք այն ամփոփել մեկ հայտարարությամբ: Նրա իրական հետևորդն այս հարցում ոչ թե հինգ, այլ վեց հոլով ընդունող է. Ադայանն է, որը հետևել է ոչ թե Մ. Աբեղյանի առանձնացրած հոլովների թվին, այլ նրա տեսական սկզբունքին, այսինքն՝ գոյականական և դերանվանական հարացույցների համաչափությանը: Խնդիրը մեկնելի և լուծելի է նշանի ոչ թե հարթաչափական, այլ տարածաչափական մեկնակետով:

Կարծում ենք՝ պարտադիր է վերականգնել արևելահայերենի համար Մ. Աբեղյանի տարբերակած երկբարբառները՝ հրաժարվելով «երկինյուն» տարտամ հասկացությունից և անվանումից, մանավանդ որ վերջինս ներառում է ոչ միայն [յ = ի] ձայնավոր հնչյունի և մեկ այլ ձայնավորի միասնական արտասանություն, որը հենց երկբարբառն է, այլ նաև [յ = յ] բաղաձայնի և ձայնավորի համակցություն: Ակնհայտ է, որ այս դեպքում ոչ թե հնչաբանական, այլ գրաբանական «սկզբունքով» են առաջնորդվում մասնագետները՝ հիմք ընդունելով «յ» գրանշանի և որևէ ձայնավորանիշի տառակցությունը, որը պարզապես գուրկ է հնչաբանական արժեքից: Այսպես՝ «յուրաքանչյուր» բառի սկզբում ունենք [յ] բաղաձայնի և [ու] ձայնավորի կապակցություն, մինչդեռ բառամիջում՝ [չ] բաղաձայնի հաջորդող դիրքում, ունենք [յու] երկբարբառը: Այդպես նաև «կյանք», «կայք» բառերում ունենք [յա] և [այ] երկբարբառները, իսկ «կայան» բառում՝ [յ] բաղաձայնի և [ա] ձայնավորի կապակցություն: Եվ անհասկանալիորեն թե՛ բաղաձայնի և ձայնավորի կապակցությունը, թե՛ երկբարբառը համարում են «երկինյուն». Սա «... անանկ բանի մը կնմաներ, որուն նմանը չ'կա»<sup>6</sup>...

### **Խորքային ու մակերեսայինը: Հայերենի ստորոգակազմը՝ լեզվի թեքական կառուցատիպի ապացույց**

Այն, որ բայն ինքնին նախադասություն է, դրանով էլ միակ գլխավոր անդամը պիտի լինի նախադասության մյուս անդամների հարաբերությամբ: Այս իրողությունը, բացի Մ. Աբեղյանի անառարկելի փաստարկումից, պայմանավորված «բայ-ստորոգյալ երկրորդական նախադասության» գոյության անհնարինությամբ և ենթակա երկրորդական նախադասության գոյությամբ, որը, եթե երկրորդական նախադասության արտահայտվածությամբ ստորադաս է գլխավոր նախադասության բայ-ստորոգյալին, չի կարող ստորադաս չլինել իր փոխակերպված դերբայական դարձվածով, ընդհանուր լեզվաբանության մեջ

<sup>6</sup> **Պարոնյան Հ.**, Մեծապատիվ մուրացկաններ: [http://abrahamyan-tatev.blogspot.com/2018/11/blog-post\\_64.html](http://abrahamyan-tatev.blogspot.com/2018/11/blog-post_64.html) (հասանելի էր 20 հունվարի, 2026):

հայտնի է նաև այլ հիմնավորումներով, որոնցից է Ֆերդինանդ դը Մույուրի աշակերտ Շառլ Բալլիի ուշագրավ նկատումը, թե կամայական քերականական հարաբերության հիմքում կա է բայը<sup>7</sup>: Շ. Բալլիի այս դրույթը հասկանալի լինելու համար բերենք այսպիսի օրինակ հայերենից.

Դռնակ < փոքր դուռ < (այն, որ) դուռը փոքր է:

Եթե «Դուռը փոքր է» նախադասությունից հանենք է-ն, կփլուզվի նախադասության շենքը: «Շենքի» ենթակառուցվածքում էլ է քողարկված այդ է-ն, այլապես չէինք ունենա «փոքր տուն» բառակապակցություն: Նույն է-ն քողարկված է նաև «դռնակ» բառում, այլապես այդպիսի բառ չէինք ունենա, ինչպես որ չունենք, ասենք, \*սեղանակ, \*գրքակ, \*նիհարակ բառեր, որովհետև դրանցում չկա հիշատակված քողարկումը, մինչդեռ ունենք սեղանիկ, գրքույկ, նիհարույկ բառեր՝ վերի հիմնավորմամբ: Եվ հենց այդ հիմնավորմամբ էլ Շ. Բալլիի համոզմամբ ևս նախադասությունը մեկ գլխավոր անդամ ունի, որն է բայը<sup>8</sup>:

Ընդհանուր լեզվաբանության մեջ այս կամ այն իրակության բացահայտ արտահայտվածությունը խոսքում անվանում են մակերեսային կառուցվածք, իսկ թաքուցյալ և բացահայտելի դրսևորումը՝ խորքային կառուցվածք: Թեև Մ. Աբեղյանն այդ տերմինները չի գործածում, բայց նրա տեսության մեջ գործությամբ առկա է խորքային վերլուծություն: Վերը բերվեց բաղադրյալ բայ-ստորոգյալի օրինակ (*կապույտ է*), որտեղ է-ն դեմքն է՝ որպես ենթակա, *կապույտը* ստորոգյալն է՝ որպես բայիմաստի կրող: Ահա, խորքային քննությամբ Մ. Աբեղյանն ապացուցում է, որ պարզ բայ-ստորոգյալի մեջ ևս, անկախ դրանց կազմությունից, քողարկված ձևով կան նույն բաղադրիչները: Բաղադրյալ ժամանակների մեջ համեմատաբար հեշտ է դրանք բացորոշելը: Այսպես՝ *գնում եմ* բայաձևի շարահյուսական փոխակերպն է *գնացող եմ*, որտեղ *եմ*-ը հատկանիշը ստորոգող դեմքն է, *գնացող*-ը (հետևաբար և բաղադրյալ ժամանակի մեջ՝ *գնում*-ը)՝ բայիմաստը կրող ստորոգյալը՝ ստորոգվող հատկանիշը: Նշանակում է «գնում եմ» բայաձևի մեջ ևս սերտաճած ձևով առկա են այս բաղադրիչները: Առավել սերտաճած են դրանք պարզ բայաձևերի մեջ, օրինակ՝ *գրեմ*, որտեղ ստորոգյալի հատվածը բայիմաստը կրող բայահիմքն է՝ *գր-*, *եմ*-ը դիմացույցը՝ ստորոգող բայը<sup>9</sup>:

Թե՛ հին, թե՛ ներկայիս հայերենի կառուցվածքի վերաբերյալ չափազանց շահեկան իրազեկում է տալիս Մ. Աբեղյանը՝ հղում անելով օտար լեզվաբանների դրույթներին առ այն, թե հայերենը ևս լատիներենի և հունարենի նման *թեքական* լեզուներին հատուկ համադրականություն ունի ստորոգական դրսևորումներում, որովհետև, ի տարբերություն թեքական համարված ռուսե-

<sup>7</sup> Տե՛ս **Բալլի Մ.** (1955). *Общая лингвистика и вопросы французского языка*, Москва, «Иностранная литература», էջ 120:

<sup>8</sup> Տե՛ս անդ:

<sup>9</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.** (1965), էջ 369:

րենի, հայերենի բայը ևս, առանց դերանվանական ենթակաների մասնակցության, դյուրությամբ խոնարհվում է: Մա կարևորում ենք նրա համար, որ, չզհետեւ ինչու, արդի հայերենի կառուցատիպը որոշելիս մասնագետները հիմնվում են սոսկ գոյականի հոլովման համակարգի վրա՝ եզրակացնելով, թե մեր լեզուն կցական է: Ի դեպ, նույնիսկ միայն գոյականի հոլովման համակարգում ժամանակակից հայերենը ոչ թե կցական է, այլ թեքակցական, ընդ որում՝ գոնե արևելահայերենում իշխողը թեքական կառուցատիպն է:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Մ. Աբեղյանից հետո ֆրանսիացի լեզվաբան Լյուսիեն Տենիերը ճիշտ արեղյանական սկզբունքով է խմբավորել խոսքի մասերը և նույն սկզբունքով էլ նախադասության միակ գլխավոր անդամ է համարել բայը<sup>10</sup>: Պետք է ենթադրել, որ այդ սկզբունքին նրան ծանոթացրել է Անտուան Մեյեն, որի ասպիրանտն էր Լ. Տենիերը, իսկ Ա. Մեյեն ոչ միայն քաջատեղյակ էր Մ. Աբեղյանի տեսությանը, այլև երկու դրվատական գրախոսությունն ունի նրա «Աշխարհաբարի շարահյուսության» մասին<sup>11</sup>: Խոսքն այստեղ բնավ հնարավոր գրագողությանը չի վերաբերում: Չկա և չէր կարող նման բան լինել Լ. Տենիերի պարագայում, որովհետև եթե անգամ Մ. Աբեղյանի տեսության հիմքով է նրա ստեղծածը, նախ՝ դրան առարկայորեն ծանոթ չէր (չզհետեր հայերեն), ապա՝ այդ ենթադրյալ հիմքը ստեղծագործական յուրացմամբ է զարգացրել, և հետո՝ Լ. Տենիերը նորարար էր նաև շարահյուսական այլ իրողություններ գնահատելիս և բազմաթիվ բացահայտումներ է արել, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը:

Հայ իրականության մեջ Մ. Աբեղյանի շարահյուսական տեսության հետևորդներ են և այն ստեղծագործաբար յուրացրել են Է. Աթայանը<sup>12</sup> և Է. Ավետյանը<sup>13</sup>:

Է. Ադայանը, անդրադառնալով Մ. Աբեղյանի տեսությանը, անհասկանալի մեկնաբանություն է տալիս. «Մ. Աբեղյանը ենթական բայի լրացում չի համարում, այլ առանձին բառով .... արտահայտվող ենթական է համարել բայական դեմքի .... լրացումը»<sup>14</sup>: Այն, որ առանձին բառ-ենթական բայական դեմքի լրացում՝ բացահայտիչ է համարում Մ. Աբեղյանը, իսկություն է: Բայց իրականում ենթական հենց բայի (բայ-ստորոգյալի) լրացում է համարում, որը հստակ ձևակերպված է նրա տեսության մեջ. «.... Երբ ասվում է՝ Տիգրանն այսօր դպրոցում տեսավ Արտաշեսին,– Տիգրանն, այսօր, դպրոցում, Արտաշեսին բառերը

<sup>10</sup> Տե՛ս Թենբեր Լ. (1988). Основы структурного синтаксиса, М: «Прогресс», էջք 117-145:

<sup>11</sup> Տե՛ս Մեյե Անտուան (1978): Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., Եր. հմա. հրատ., էջք 614-615:

<sup>12</sup> Տե՛ս Աթայան Է. (1967): Լեզվի շարահյուսական մակարդակի տարրական միավորը և նրա ձևաբանական արտահայտությունը // ԲԵՇ, № 2, էջ 130: Աթայան Է. (1968): Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, «Митк», 1968, էջք 124-208:

<sup>13</sup> Տե՛ս Ավետյան Է. (1989). Семиотика и лингвистика, Ереван, Изд-во Ер. ун., էջք 179-226:

<sup>14</sup> Ադայան Է. (1987): Նախադասություն և ասություն // ԲԵՇ, № 1, էջ 133:

դրվելով **տեսավ** բայի վրա՝ լրացնում, պարզում են նրա ակնարկած նշանակությունները... Դրանք տեսավ **բայի լրացումներն են**»<sup>15</sup> (ընդգծումները հեղինակինն են): Է. Աղայանի ուսումնասիրության մեջ մեզ համար կարևորն այն է, որ նա զարգացրել է Մ. Աբեղյանի՝ ենթակայի՝ բառով արտահայտված լինել-չլինելով պայմանավորված մեկնությունը, որի վրա հիմնվելով՝ ստորոգյալները (ըստ Աբեղյանի՝ բայ-ստորոգյալները) բաժանում է երկու խմբի՝ ներառյալ ենթակայով ստորոգյալ, արտածյալ ենթակայով ստորոգյալ: 1-ին և 2-րդ դեմքի դերանուններով չարտահայտվելու դեպքում ունենում ենք ներառյալ ենթակայներով ստորոգյալներ, որովհետև բայի այդ նույն դեմքերից երևում է գործողություն կատարողը, իսկ դրանց արտահայտված լինելու դեպքում ունենում ենք հավելադիր ենթակայներով ստորոգյալներ: Մինչդեռ 3-րդ դեմքի դերանուն ենթակա այն դեպքում է գործածվում, երբ այն փոխարինում է որևէ գոյականի: Այդ դեպքում ունենում ենք բացահայտիչ ենթակա: Բացահայտիչ ենթակա կարող են ձևավորել նաև 1-ին և 2-րդ դեմքերի իմաստներ արտահայտող դիմորոշ հոդերով գոյական ենթակայները (*ծանաս, վեհո* ևլն): Այսպիսով՝ արտածյալ ենթակայները կա մ հավելադրություն են, կա մ բացահայտիչ: Թեև առարկելի է Է. Աղայանի՝ ենթակայի գլխավոր անդամ լինելու դրույթը՝ այն էլ Մ. Աբեղյանին վկայակոչելով, սակայն նրա՝ ենթակայի տեսակային խմբավորումը Մ. Աբեղյանի հայեցակարգից է բխում և այն առավելությունն ունի, որ 1-ին և 2-րդ դեմքի ենթակայների ոչ բառային կիրառությունը զեղչում չի համարում: Հայերենի, լատիներենի և հունարենի համար դա ներառյալ ենթակայի ստուգություն է:

**Մանուկ Աբեղյանի հայեցակարգը ստեղծագործական դռներ բանալու տեսություն է**

Այսօր սովորական է հնչում այն ձևակերպումը, թե լեզուն արտալեզվական իրականության արտացոլումն է: Իսկ ո՞րն է այն սահմանակետը, որը հնարավորություն է տալիս անցնելու արտաքին իրականությունից դեպի հայելային իրականություն, կամ ո՞րն է այդ երկու իրականությունների հանգակետը: Նյութական աշխարհի վերացարկման տեղորոշումը հավանաբար ուղեղի խոսողության և հիշողության կենտրոնների միջակայքում է՝ եղածը մտքում պահելու և հարկ եղած դեպքում պահուստից արտարկումներ անելու հնարավորությամբ: Իսկ պահուստում, տվյալ դեպքում՝ լեզվական համակարգի վերնլորտում, համակ լեզվականությունն իրենում պարփակած գերխիտ Է-ն է (Est)՝ որպես առարկայահատկանշային սերտաձածություն: Սա արիստոտելյան **անշարժ սկզբնաշարժիչն**<sup>16</sup> է, որի անշարժությունից սերում է լեզվախոսքային շարժումը՝ հասնելով մինչև խոսքավարտ, ասել է՝ դարձ դեպի սկզբնական շարժարար անշարժություն: Դատողության կազմը քննելիս վրիպում է հան-

<sup>15</sup> Աբեղյան Մ. (1965), էջ 363:

<sup>16</sup> St u **Аристотель** (1976). Сочинения в четырех томах. Том 1, М., «Мысль», էջр 302, 309-314:

ճարեղ գերմանացին՝ անշարժ սկզբնաշարժիչի դեր վերապահելով սուբյեկտին<sup>17</sup>: Այնինչ ո՛չ սուբյեկտը, ո՛չ պրեդիկատը, ո՛չ նույնիսկ քերականական բայ-ստորոգյալը, որ նախադասության միակ գլխավոր անդամն է, չեն կարող անշարժ լինել: Դրանց գործառուժը դատողության և նախադասության մեջ հենց ակնառու շարժումն է, որ կա: Սկզբնաշարժիչի թույլ հուշը կա միայն ստորոգող բայի՝ Է-ի, որպես անշարժի շարժվող հարաբերակցի վրա: Իսկ սուբյեկտի և քերականական ենթակայի վրա այդ հուշն էլ չկա: «Լեզվական համակարգ» արտահայտությունը պատահականորեն չգործածեցինք: Այն աթայանական գոյամակարդակներից<sup>18</sup> մեկի՝ տրամաբանականի անվանումն է: Համակարգի բովում կոփվում է ասելիքը, որի վերնուղորտից ազդարկվում է (ազդանշաններով) խոսքային հնարավոր հրահանգը: Լեզվական համակարգը մենք պատկերացնում ենք որպես իրարահաջորդ երեք ոլորտների ուղղաձիգ բաղկացություն: Խոսքիրադրության մեջ ասելիքի պատրաստվելիս համակարգի միջնուղորտում անշարժ Է-ն երկփեղկվում է ստորոգելիների, որոնց ուղեկցել է սկսում անշարժ Է-ի շարժական նմանակը: Խոսքը պիտի կառուցվի՝ «ինչ-որ բան ինչ-որ բան է» կադապարով: Թե այդ բաներից՝ ստորոգելիներից՝ հնարավոր ստորոգյալներից, ո՞րը կարտահայտվի խոսքում հենց որպես ստորոգյալ, արդեն խոսքիրադրության թելադրանքով և Է-ի շարժական նմանակով որոշվում է համակարգի ներքնուղորտում, այսինքն՝ ստորոգելիներից մեկը ստորոգյալ է դառնում, մյուսը շարունակում է պահպանել ստորոգելիությունը: Ներքնուղորտում կադապարի որոշվածությունից հետո ակնթարթորեն հյուսվում է հնչաշղթան: Կայծակնորեն կյանքի կոչվող այս գործընթացի սեղմ տևականության ողջ հատույթում անշարժ Է-ի նմանակը՝ որպես ներկայացուցիչ, միշտ մնում է մյուս երկու բաղադրիչից վեր՝ կարգավորելու դրանց հարաբերությունը, որն է ստորոգումը: Առարկայացնենք ասվածը: Դիցուք ասելիքը վերաբերելու է ծաղկի կապտությանը: Խոսքիրադրության զույգ հնարավորություն է տրված. կա մ ծաղիկն է կապույտ լինելու, կա մ կապույտն է ծաղիկ լինելու: Եթե (ուղեղի և հոգու թելադրանքով) որոշվում է, որ ծաղիկն է կապույտը, կազմվում է համապատասխան արտահայտություն՝ «Ծաղիկը կապույտ է», որտեղ «կապույտ»-ը ստորոգյալն է, «ծաղիկը»՝ ստորոգելին՝ հնարավոր ստորոգյալը: Խոսքիրադրային հակառակ որոշմաբ սրանք տեղերը փոխում են՝ «Կապույտը ծաղիկն է», որտեղ «ծաղիկը» ստորոգյալն է, «կապույտը»-ը՝ ստորոգելին: Երկու դեպքում էլ ասվածը դրոշմվում է «է» բայով, սրանով է վերագրվում-ստորոգվում հատկանիշը ստորոգելիին՝ ենթակային, ուստի հատկանիշ-ստորոգյալը ենթակա-ստորոգելիին վերագրող բայը **ստորոգիչն** է: Ու-

<sup>17</sup> Տե՛ս **Гегель Г.В.Ф.** (2000). Феноменология духа. «Наука», М., էջ 17:

<sup>18</sup> Տե՛ս **Աթայան Է.** (1988): Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը // ԲԵՇ, № 2, էջ 41:

նեցանք զուտ կառուցվածքային եռանդամություն, որտեղ գերադասը ստորոգիչն է, իսկ ստորոգյալն ու ստորոգելին նույնաստորադաս անդամներ են, որովհետև փոխատեղելի են: Կառուցվածքային եռանդամությունը ծառայում է ասելիքը ըմբռնելուն, ուստի այն բեկվում է տրամաբանական երկանդամության: Հասկանալի է, որ երկանդամներից գլխավորը կլինի նա, որի կազմում անշարժ **Է**-ի շարժական նմանակն է: Այսինքն՝ «Ծաղիկը կապույտ է» կառուցվածքի մեջ գլխավորը «կապույտ է» բաղադրիչն է, որին ենթակա է «ծաղիկը», «Կապույտը ծաղիկն է» կառուցվածքում գլխավորը «ծաղիկն է» բաղադրիչն է, որին ենթակա է «կապույտ»-ը: Ինչպես տեսնում ենք, ստորոգելին **ենթակա** է բայ-ստորոգյալին, բայ-ստորոգյալի **ենթական** է, **ենթակա** է ստորոգյալ դառնալու, նրա հետ փոխատեղվելու: Մտորոգական կառուցվածքի իրական ըմբռնումը հնարավորություն է տալիս շարունակելու բաղադրիչների վերանվանումները: Ինչ խոսք, տերմինաբանական փոփոխությունները խրախուսելի չեն, սակայն էթե նպաստում են հասկացությունների ճշգրիտ ձևակերպմանն ու ըմբռնմանը, նույնիսկ անհրաժեշտ են: Այսպես՝ քանի որ արդեն փաստ է ենթակայի՝ բայ-ստորոգյալի նկատմամբ ստորադաս դիրքավորումը (դա նաև՝ «ենթակա» անվանումն է հուշում), համաչափության սկզբունքով բայ-ստորոգյալը վերանվանում ենք **գերակա**: Ըստ այդմ՝ նախադասության միջուկը՝ որպես գլխավոր անդամ, գերական է, որի առաջնային լրացումը ենթական է: Գերական բացահայտ կամ քողարկված ձևով բաղադրյալ կազմություն ունի: Բաղադրյալ կազմությունը քողարկված է զուտ դիմավոր բայով արտահայտված գերակայի դեպքում, դրա համար այն կոչվում է պարզ գերակա:

Մտորոգական կառուցվածքի առեղծվածներից մեկը բայի դեմքի՝ որպես ենթակայի գործոնն է: Մի կողմից՝ ասում ենք, որ ենթական բայի (գերակայի) լրացումն է, մյուս կողմից՝ փաստում, որ ստորոգիչը՝ իր դեմքով, հենց ենթական է: Քանի որ բայի դեմքով է ապահովվում նրա գերադասությունը, իսկ դեմքը ինքը ենթական է, ուրեմն պիտի որ ենթական լիներ գերադաս դիրքում: Սակայն իրողությունն այն է, որ իր դեմքը բային տրամադրելով՝ նշույթավոր ենթական համեստորեն հետ է քաշվում՝ ստանձնելով սոսկ նրա բացահայտչի պաշտոնը և հնարավորություն տալով բային կարգավորելու նախադասության միջանդամային հարաբերությունները: Դրա ապացույցներից մեկը կա գրաբարի բաղադրյալ ժամանակային ձևերում: *Տեսեալ է իմ / քն / նորա* խոնարհված ձևերում բայի դիմավորությունը թեև հաստատված է «է» օժանդակ բայով, բայց այն ոչ թե 3-րդ, այլ չեզոք դեմք է, իսկ ենթակայական դեմքերն արտահայտված են անձնական դերանուններով: Անհրաժեշտ է այդ դերանուն-դեմք-ենթականների թեքված դրսևորումը, այլապես բայի դիմավորությունը կձևավորվեր ոչ թե ընդհանուր չեզոք բայով, այլ յուրաքանչյուր դեմքի համար կունենար բայական վերջավորություններ՝ ավելորդ դարձնելով դերանունների պարտադիր առկայությունը խոնարհվելիս: Իսկ վերը բերած ներկա վաղակատար-հարակատարի ձևերում դերանուններն արդեն հավելադրություն չեն,

քանի որ լեզվական «սարքավորանքը»՝ նշակարգը (կողը), գործի դնող լեզվի ներքին ձևը գտել է իրությունները հավասարակշռելու գաղտնիքը՝ հնարավորություն տալով չեզոք դեմքի հետ հարաբերվելու դերանվան թեք ձևերին, ըստ որում ո՛չ պատահական թեքություններով, այլ մի կողմից՝ ուղղականին առավել մերձ, մյուս կողմից՝ դրանցով հոլովատիպերի բեռնվածություն կրող **սեռականի** թեքություններով, այսինքն՝ այնպիսիներով, որոնցով կամ որոնցից սերելու հնարավորություն կա:

Քանի որ գերական (բայ-ստորոգյալը) նախադասության միջուկն է, ուստի նրան անմիջականորեն լրացնող անդամների լրացումները Մ. Աբեղյանը համարում է կողմնակի անդամներ, և սա միանգամայն տրամաբանական մոտեցում է: Սակայն հետաբեղյանական լեզվաբաններն այս մի բանն էլ են աղավաղել՝ Մ. Աբեղյանի արձանագրած կողմնակի լրացումներից միայն դերբայական դարձվածի կազմում եղած լրացումների համար պահելով այդ անվանումը:

Կարծում ենք՝ կարիք կա վերանայելու նաև ստորոգման սահմանումը: Տարածված կարծիքի համաձայն՝ ստորոգումը հատկանիշի վերագրումն է ենթակային՝ առարկային: Կարծես թե մեր օրինակում էլ այդպես էր, այսինքն՝ «կապույտ» հատկանիշը վերագրված է «ծաղիկ» առարկային: Առերևույթ է այդպես: «Է» բայը, հաստատելով իրողությունը, հավասարություն է ապահովում բաղադրիչների միջև, նա հարաբերություններ կարգավորող **հավասարության նշան** է: Սակայն հավասարություն չի կարող լինել առարկայի և հատկանիշի միջև: Առեղծվածին օգնության է գալիս լեզուն ինքը: Ծաղիկ գույնը պարզելու համար հարց ենք տալիս՝ *ծաղիկն ի՞նչ է*: Սա առարկայական հարց է: Անգամ հատկանշային հարցը առարկայացված ենք տալիս որոշիչ հողի օգնությամբ՝ *ծաղիկն ինչպիսի՞ն է*: Սրանից հետևում է, որ ստորոգումը զուտ հատկանիշի վերագրում չէ: Ստորոգյալի մեջ ննջած է առարկան: Ստորոգյալի մեջ կա խորքային փոխանունություն, ասել է՝

Ծաղիկը կապույտ է = Ծաղիկը կապույտ ծաղիկ է:

Արդ՝ **ստորոգումը առարկայացված հատկանիշի վերագրումն է ենթակային կամ հատկանիշի վերագրումն է ենթակային առարկայնաբար**:

Մնաց ստորոգման բաղադրիչների հարաբերությունն իմաստավորել նշանագիտորեն: Ստորոգման վերնոլորտային, միջնոլորտային և ներքնոլորտային բաղկացությունը ստորոգական գերնշանի նշանակյալների ու նշանակիչների աստիճանակարգություն է ստեղծում: Վերնոլորտում ունենք նշանակյալի և նշանակչի սերտաճածություն, որի՝ միջնոլորտում դրսևորվող տրոհմամբ պայմանավորված՝ վերնոլորտի գերնշանը նշանակյալի է փոխարկվում միջնոլորտում երկփեղկված ստորոգակազմի հարաբերությամբ՝ միջնոլորտի ստորոգական բաղադրությունը վերածելով նշանակչի, քանի որ միջնոլորտը մակերեսային արտահայտությունն է վերնոլորտի բովանդակային հնարավորության: Սակայն այդ արտահայտությունը պայմանական է, քանի դեռ չունի

իրական դրսևորում: Մենք խոսում ենք ոչ թե ստորոգելիներով, այլ ստորոգելի և ստորոգյալ միավորների ստորոգչային համակցությամբ: Հետևաբար միջնորտի ստորոգակազմն էլ իր հերթին նշանակյալ է ներքնոլորտի ստորոգակազմի նկատմամբ, որտեղ որոշարկված է ստորոգման կառուցվածքային եռանդամությունը: Այդ որոշարկումը լեզվական գոյամակարդակների հարաբերության տեսանկյունից իր տեղորոշումն ունի լեզվական համակարգի և լեզվախոսքային շարակարգի հանգակետում, որի եռանդամ որոշարկվածությունը շարունակում է հնարավորություն մնալ արտահայտվելիք խոսքի համար, ուստի ներքնոլորտի ստորոգական նշանը գծակարգային գոյամակարդակի նշանակյալն է, որի նշանակիչը կառուցվածքային եռանդամությունը տրամաբանական երկանդամության բեկված խոսքային (= գծակարգում արդեն արտահայտված) ստորոգումն է՝ սերված լեզվական համակարգի և լեզվախոսքային շարակարգի՝ միջնշանային հարաբերություններով պայմանավորված հնարավորությունների շղթայով:

### Եզրակացություն

1. Բարոյական պարտավորվածություն է ծանրացած մեր հոգուն, և պատասխանատվություն ենք կրում այն ամենի համար, ինչ բիրտ ժամանակների պարտադրանքով մեզսից շատ առաջ է տեղի ունեցել Մանուկ Աբեղյանի և նրա անձով պայմանավորված՝ հայ լեզվաբանության նկատմամբ:

2. Բնավ հակված չենք մտածելու, թե Մ. Աբեղյանին հաջորդած լեզվաբանները նշանակալից ներդրում չունեն հայոց լեզվի տեսական պրպտումներում: Պարզապես հարմար առիթ էր սա՝ հայացքների հոգեհարազատությամբ թելադրված մեր ստեղծագործական դարձը դեպի արեղյանական ուսմունք գուրդդելու գիտական բարոյականության խնդիրներին:

3. Վերոշարադրյալի հիման վրա հարկ է վերականգնել մեր լեզվի իրական հորինվածքին ներդաշնակ արեղյանական հայեցակարգի ընդունելի դրույթները:

**ДАВИТ ГЮЛЗАТЯН – Лингвистическая концепция Манука Абеяна как гарант обновления современного арменоведения.** – Лингвистическое учение Манука Абеяна имеет важное и актуальное значение не только потому, что он впервые точно выявил истинную структуру армянского языка, но и потому, что сделал это с такой виртуозностью, что его подход представляет интерес с точки зрения общей лингвистики. Он был одним из первых, кто доказал, что предложение имеет не два, а один главный член — глагол-сказуемое, одним из дополнений которого является подлежащее.

Опираясь на теорию М. Абеяна, мы попытались раскрыть сущность предикативной структуры. С чисто структурной точки зрения, различаются три компонента предикации: *предикатор*, *предикат* и *потенциальный предикат – подлежащее*. В этой триаде главным компонентом выступает *предикатор*. Подлежащее и предикат являются взаимозаменяемыми членами (например: *цветок синий – синий – (это) цветок*. Здесь наблюдается равноценное соотношение.

Для целей коммуникации данная структурная триада преобразуется в логическую двучленность: с одной стороны – возможный предикат-подлежащее, с другой – предикат и

предикатор вместе. Очевидно, что главным компонентом является тот, в составе которого находится предикатор. Если предикатор объединяется с подлежащим, то подлежащее становится предикатом, а предикатор, объединяясь с настоящим предикатом, обеспечивает функцию главного члена предложения.

**Ключевые слова:** *сказуемое, предикатив, предикатор, главный член, подлежащее, знак, означаемое, означающее*

**DAVIT GYULZATYAN – Manuk Abeghian’s Linguistic Conception as a Guarantee of the Renewal of Modern Armenian Studies.** – Manuk Abeghian’s linguistic doctrine is important and relevant not only because he was the first to accurately reveal the real structure of the Armenian language, but also because he did so with such mastery that his approach is of great interest from the perspective of general linguistics. He was among the first to substantiate that a sentence has not two but one principal member — the verb-predicate, of which the subject is one of the complements.

Based on M. Abeghian’s theory, we have attempted to reveal the essence of the predicative structure. From a purely structural point of view, we have three components of predication: the *predicator*, the *predicate*, and the *potential predicate* – the *subject*. Among this triad, the main component is the *predicator*. The subject and predicate are interchangeable members (for example: *the flower is blue – blue is the flower*). Here we observe a symmetrical (equipollent) relationship. For communicative purposes, this structural triad transforms into a logical duality: on one side stands the possible predicate-subject, and on the other side – the predicate and predicator together. Naturally, the principal component is the one containing the predicator. If the predicator forms a unity with the subject, then the subject becomes the former predicate, while the predicator, uniting with the current predicate, secures the role of the main member of the sentence.

**Key words:** *predicate, predicative, predicator, principal member, subject, sign, signified, signifier*

### Գրականության ցանկ

- Աբեղյան Մ. (1965): Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք» հրատ., 700 էջ: [Abelyan M. (1965), *Hayoc’ lezvi tesowt’yown*, Yerevan, «Mitek’» hrat., 700].
- Աբեղյան Մ. (1985): Երկեր, հատոր Ը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 672 էջ: [Abelyan M. (1985), *Manowk Abeghyan, Yerker, hatōr 8* (8), Yerevan, HSSH GA hrat., 672].
- Աթայան Է. (1967): Լեզվի շարահյուսական մակարդակի տարրական միավորը և նրա ձևաբանական արտահայտությունը // ԲԵՀ, № 2, էջք 125-138: [At’ayan E. (1967), *Lezvi sarahyowsakan makardaki tarrakan miavorə ev nra jevabanakan artahaytowt’yownə* // BYEH, № 2, ejk’ 125-138].
- Աթայան Է. (1988): Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը // ԲԵՀ, № 2, էջք 37-45: [At’ayan E. (1988), *Lezowneri jevabanakan tipabanowt’yan arakan ev «anhatakan lezvakan» jevi bac’ahaytman xndirə* // BYEH, № 2, ejk’37-45].
- Աղայան Է. (1987): Նախադասություն և ասություն // ԲԵՀ, № 1, էջք 121-138: [Aghayan E. (1987), *Naxadasowt’yown ev asowt’yown* // BYEH, № 1, ejk’ 121-138].
- Գյուլզատյան Դ. (2016): Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Գլոբալ համալսարան», 314 էջ: [Gyulzatyanyan D. (2016), *Grakan arevelahayereni k’erakanowt’yan himownk’ner, oswowmnakan jernark*, Yerevan, «Global hamalsaran», 314].

- Մէլէ Անտուան (1978): Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, Եր. հվլ. հրատ., 824 էջ: [Meye Antowan (1978), Hayagitakan owsowmnasirowt'yowunner, Yerevan, EPH hrat., 824].
- Պարոնյան Հ., Մեծապատիվ մուրացկաններ: [http://abrahamyan-tatev.blogspot.com/2018/11/blog-post\\_64.html](http://abrahamyan-tatev.blogspot.com/2018/11/blog-post_64.html) (հասանելի էր 20 հունվարի, 2026): [Paronyan H.: Mecapativ mowrac'kanner: [http://abrahamyan-tatev.blogspot.com/2018/11/blog-post\\_64.html](http://abrahamyan-tatev.blogspot.com/2018/11/blog-post_64.html)]:
- Аветян Э. (1989): Семиотика и лингвистика. Ереван, изд-во Ер. ун., 288 стр. [Avetyan E. (1989), Semiotika I lingvistika, Yerevan, izd-vo Er. Un., 288].
- Аристотель (1976): Сочинения в четырёх томах, том 1, М., «Мысль», 552 стр. [Aristotel (1976), Sochineniya v cheteryox tomax, tom 1, Moskva., «Misl», 552].
- Атаян Э. (1968): Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, «Митк», 280 стр. [Atayan E. (1968), Predmet I osnovnie ponyatiya strukturalnogo sintaxisa, Yerevan, «Mitk», 280].
- Балли Ш. (1955): Общая лингвистика и вопросы французского языка, Москва, «Иностранная литература», 416 стр. [Balli Sh. (1955), Obshaya lingvistika I voprosi fratsuzskogo yazika, Moskva, «Inostrannaya literatura», 416].
- Гегель Г.В.Ф.(2000): Феноменология духа, «Наука», Москва, 496 стр. [Gegel G. V. F. (2000), Fenomenologia dukha, «Nauka», Moskva, 496].
- Теньер Л. (1988): Основы структурного синтаксиса, Москва, «Прогресс», 656 стр. [Tenier L. (1988), Osnovi struktturnogo sintaxisa, Moskva, «Progress», 656].

## ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ   
*Երևանի պետական համալսարան*

Մանուկ Աբեղյանի լեզվաբանական հետազոտությունների հիմքում միշտ եղել է տարածամանակյա նկարագրության սկզբունքը, ուստի հայերենի քերականագիտական համակարգի ուսումնասիրությունը նա սկսել է հին հայերենից՝ բացահայտելով հին և նոր հայերենների՝ գրաբարի և աշխարհաբարի ընդհանրություններն ու զարգացման տարբերությունները: Հատկապես արժեքավոր է հին և նոր հայերենների բայական համակարգերի ուսումնասիրությունը, որը բնորոշվում է իր ժամանակի համար նորարարական մոտեցումներով: Հին հայերենի բայական կարգերը Մանուկ Աբեղյանն ուսումնասիրել է հիմնվելով 5-րդ դարի դասական մատենագրության սկզբնաղբյուրների, հատկապես «Թարգմանությունների թագուհի» համարվող Աստվածաշունչ մատյանի գրաբար փոխադրության լեզվական հարուստ նյութերի վրա: Բայերի անդեմ և դիմավոր ձևերի քննությունը լեզվաբանը կատարել է համակարգային՝ ցույց տալով հին հայերենի հիմնական դերբայների անորոշի և անցյալի ստորոգումային կիրառությունները: Գրաբարի անորոշ և անցյալ դերբայները շատ անգամ խոնարհված բայերի արժեք ունենին՝ իմաստային հարուստ բազմազանությամբ, ստանում էին ոչ թե ուղղական, այլ սեռական, տրական կամ հայցական հոլովներով ենթականեր՝ արտահայտելով եղանակաժամանակային, կերպասեռային տարբեր բովանդակություն:

Մ.Աբեղյանը կարևոր ցայտօր արդիական դիտարկումներ է կատարել հին հայերենում բայի կերպի կարգի դրսևորումների վերաբերյալ, ներգործական - կրավորական կառույցների կազմության առանձնահատկությունների մասին: Քերականագիտական իր պնդումները մեծ լեզվաբանը մշտապես հիմնավորում էր գրաբարյան սկզբնաղբյուրներից բերված բազմաթիվ գործնական օրինակներով:

**Բանալի բառեր** – բայ խոսքի մաս, դերբայներ, դիմավոր ձևեր, բայահիմքեր, բայի խոսքակազմիչ դեր, խոնարհման համակարգ, ուղղական հոլովով ենթակա, թեք հոլովներով ենթակա

\* **Նարինե Դիլբարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

**Нарине Дилбарян** – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Narine Dilbaryan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ [narine.dilbaryan@ysu.am](mailto:narine.dilbaryan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-1212-0029>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 06.02.2026

Գրախոսվել է՝ 09.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

Մանուկ Աբեղյանը հայ քերականագիտության մեջ հայտնի է իր նորարարական ինքնատիպ մոտեցումներով, որոնք վերանայում էին խոսքի մասերի ավանդական տեսությունը՝ բացահայտելով քերականական միավորների ձևի ու բովանդակության դրսևորումները տարածամանակյա կտրվածքով: Մեծ գիտնականը հին հայերենի քաջահմուտ ուսումնասիրող էր. գրաբարի քերականությանը վերաբերող նրա դասագրքերն առ այսօր հույժ կիրառական են, որովհետև յուրաքանչյուր խոսքի մաս մանրակրկիտ բնութագրվում է և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական, և՛ բառակազմական մակարդակներում: Հատկապես կարևոր են հին հայերենում բայական ձևերի դասակարգմանն ու բնութագրությանը վերաբերող աբեղյանական մոտեցումները, որովհետև բայը խոսքակազմիչ հիմնարար միավոր է: Ընդ որում պետք է ընդգծել, որ հին հայերենում ստորոգումային արժեք ունեին ոչ միայն բայի դիմավոր ձևերը, այլև անդեմ, այսինքն՝ գրաբարի դերբայները՝ ի մասնավորի անորոշ և անցյալ խոնարհված բայերի արժեք ունեին՝ իմաստային հարուստ բազմազանությամբ, ստանում էին թեք հոլովով ենթականեր՝ արտահայտելով եղանակաժամանակային, կերպասեռային տարբեր բովանդակություն:

Մեր այս հետազոտության մեջ ի մի ենք բերել հին հայերենի բայական կառույցների քերականական յուրահատկություններին վերաբերող մոտեցումները, որոնք Մանուկ Աբեղյանը շարադրել է «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ: Առաջին տպագրությունը 1907 թվականին էր, 1936 թվականին լույս է տեսնում այս դասագրքի արդեն վերանայված և առավել ընդարձակ տարբերակը: Ինչպես Աբեղյանն է նշում, առաջին դասագիրքը նախատեսված էր միջնակարգ դպրոցների ավարտական դասարանների համար, իսկ վերամշակված և ընդարձակված հրատարակությունը՝ բարձրագույն դպրոցների ուսանողների և առհասարակ նրանց համար, որոնք հետամուտ են մեր հին լեզուն ուսումնասիրելու<sup>1</sup>:

Պետք է նշել, որ հին հայերենի բայական կառույցները Մանուկ Աբեղյանը քննում է արդի արևելահայերենի համարժեք ձևերի հետ միասին՝ դրանք գուգադրահամեմատական վերլուծության ենթարկելով: Իր տեսական եզրակացությունները լեզվաբանն ամրակայում է գրաբարյան բնագրային հարուստ օրինակներով, որոնց կողքին բերում է արևելահայերեն փոխադրության հնարավոր տարբերակները: Նման մոտեցումը գիտական և ուսուցողական տեսանկյուններից խիստ շահեկան է դարձնում գիտնականի աշխատանքը: Հին հայերենի քերականության վերականգնման համար Աբեղյանը հիմնականում դասական գրաբարի սկզբնաղբյուրներից է օգտվում՝ ոսկեդարի թարգմանական գրականության մարգարիտ՝ Աստվածաշունչ մատյանից, հատկապես Նոր Կտակարանից, ինչպես նաև նշանավոր մատենագիրների երկերից՝ Եզնիկ, Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշե, Մովսես Խորենացի:

<sup>1</sup> Տե՛ս **Աբեղյան Մանուկ**, Երկեր, Զ, Եր., 1974, էջ 710:

### Դերբայները և բայական հիմքերը հին հայերենում

Եթե ավանդական քերականություններում ձևաբանության բաժինը սկսվում էր գոյական խոսքի մասից, ապա Աբեղյանի դասագրքում առաջինը բայն է: Բայական կառույցների դասակարգման հիմնական ելակետը, Աբեղյանի համոզմամբ, բայի բունն է, ներկայիս եզրույթով՝ ներկայի և կատարյալի բայահիմքը: Այսինքն՝ բայերը դասակարգվում են ըստ իրենց արտահայտած կերպի:

Ներկայի հիմքում կարող են հանդես գալ գրաբարյան կերպածանցները՝ *-ան*, *-են*-, *-չ*-, *-նչ*-, *-անչ*-, *-աչ*-, պատճառական *-ուցան*- ածանցը և բազմապատկական՝ *-ատ*-, *-ոտ*-, *-տ* - ածանցները: Կատարյալի հիմքը նկարագրելիս լեզվաբանը փորձում է ուղղակի զուգահեռականություն ապահովել հին և նոր հայերենների համար, ուստի առանձնացնում է ցոյական հիմքերը՝ *ոյց*, *աց*, *էաց*, և պարզ արմատական, *ի* թույլ բաղադրիչով հիմքեր Աբեղյանը չի տարբերակում. ներգործակերպ և կրավորակերպ վերջավորությունների հետ մեկտեղ նա առանձնացնում է խոնարհման նոր խառը տիպ, որտեղ կրավորական վերջավորություններին սկզբից հավելում է՝ *է*, այն *ի* թույլ բաղադրիչի հնչունափոխական տարբերակն է՝ *-եայ*, *-եար*, *եաւ*, *-եաք*, *եայք*, *-եան*, իսկ երկրորդ ապառնու եզակի երկրորդ դեմքից հետո արդեն *ի*՝ *-եայց*, *-իցես*, *-իցէ*, *-իցուք*, *-իջիք*, *-իցեն*: Լեզվաբանի համոզմամբ, այս կերպ ավելի դյուրին է գրաբարի ուսուցումը: Հետագայում աբեղյանական այս սկզբունքը կկիրառեն Հ. Ավետիսյանը և Ռ. Ղազարյանն իրենց «Գրաբարի Ձեռնարկում»<sup>2</sup>:

Ձևաբանությունը բացվում է բային վերաբերող հատվածով և քննության սկզբում անորոշ դերբայն է: Լեզվաբանն արձանագրում է, որ հին հայերենում անորոշ դերբայն ունի չորս լծորդություն՝ *-ալ*, *-ել*, *-իլ*, *-ուլ*, և միայն մեկ բայ *-ուլ*՝ *գոլ*: Բերված օրինակներում *ի* լծորդության բայերի անորոշ տարբերակը ավանդական սկզբունքով չի նշվում *ել*, կողքի փակագծում *իմ*, այլ անմիջաբար *իլ*-ով բերվում է *ուսանիլ* բայի օրինակը: Սա առաջին տարբերություններից է, որովհետև քերականները մինչև այժմ ավանդույթի ուժով *ի* լծորդության բայերի անորոշի ձևերը չեն ներկայացնում *-իլ* վերջով: Հետագա շարադրանքում հեղինակը նշում է. «Ի լծորդն անորոշ դերբայի մեջ սովորաբար փոխվում է *է* լծորդի, օրինակ՝ *խօսիլ*, *ուսանիլ*, *փախչիլ* ձևերի փոխարեն գործածվում են՝ *խօսել*, *ուսանել*, *փախչել*: Այս պատճառով բայերն անվանելու համար առնվում են սահմանական ներկայի եզակի առաջին դեմքերը, օրինակ՝ *խաղամ*, *գրեմ*, *ուսանիմ*, *հեղում*»<sup>3</sup>:

Ծանոթագրության մեջ մանրատառ բացատրվում է, որ հին հայերենի *ուլ* լծորդության բոլոր բայերը աշխարհաբարում վերածվել են *-ել* -ի՝ *արգելուլ* –

<sup>2</sup> Հմմտ. Ավետիսյան Հ. Մ., Ղազարյան Ռ. Մ., Գրաբարի ձեռնարկ, էջ 26-30:

<sup>3</sup> Աբեղյան Մանուկ, Երկեր, 2, Գրաբարի քերականություն, էջ, 718:

**արգելել, կիզուլ-կիզել:** Ի լծորդության համար այս անցումը չի նշվում, քանի որ 20-րդ դարի սկզբին դեռևս *ի* լծորդությունը վերջնականապես չէր ջնջվել:

Անորոշից **-ng** վերջավորության հավելումով կազմվում է ապառնի դերբայը. *ի* լծորդն այս դեպքում դառնում է *ե, ու լծորդն ընկնում*, ինչպես օրինակ՝ *գրել-գրելոց, խօսիլ-խոսելոց, հեղուլ-հեղոց*: Դերբայները նկարագրելիս Աբեղյանը շեշտադրում է նրանց խոսքիմասային արժեքները: Այսպես՝ ապառնի դերբայը հազվադեպ միայն կարող է գործածվել իբրև ածական, որպես կանոն՝ այն **եւ** բայի հետ բաղադրյալ ժամանակներ է կազմում: Աբեղյանը բերում է նաև անանցողական բայերի ապառնի դերբայի գոյականական կիրառության ուշագրավ դեպքեր՝ *Լեալք եւ լինելոցք = եղածները և լինելիքները: Ջգալոցսն պատմեցէ = Գալիքները կպատմի*: Այսպիսով՝ ապառնին հիմնականում ձևաբայ է, հազվադեպ՝ բայածական կամ բայանուն գոյական:

Անցյալ դերբայի կազմության անդրադառնալիս Աբեղյանը 5 կետով մանրամասն բացատրում է, թե տարբեր լծորդությունների պարզ կամ ածանցավոր բայերը որ հիմքերից կարող են **-եալ** վերջավորությամբ անցյալ դերբայ կազմել: Ե և *ի* լծորդության պարզ բայերի պարագայում բոլոր քերականները նշում են, թե դրանց անցյալ դերբայները կարող են կազմվել թե՛ ներկայի, թե՛ կատարյալի հիմքերից: Աբեղյանը հատուկ շեշտում է, որ այս պարագայում **եալ-եցեալ** ձևերի գուգադրության մեջ **-եցեալ**-ով անցյալ դերբայները հիմնականում կրավորականի իմաստ են արտահայտում, ինչպես՝ *գրեալ, գրեցեալ = գրած, գրված*: Ի լծորդության **չիւ-նում** փոխանցման բայերի անցյալ դերբայը նույնանում է դրանց հիմքից կազմված պատճառական բայերի կամ այդ բայերի կրկնակ ձևերի անցյալ դերբայի հետ, որի պատճառով առաջանում է երկիմաստություն. **թոուցեալ, ուոուցեալ, փախուցեալ** ձևերը նշանակում էին թե՛ **թոցրած, ուոեցրած, փախցրած**, թե՛ **թոած, ուոած, փախած**:

Անցյալ դերբայների շարահյուսական կիրառությունները հին հայերենում շատ ավելի հարուստ են և բազմազան: Այն ուներ հարակատարի իմաստ՝ **-ած, -ացած**՝ ածականական և գոյականական կիրառություններով, այսինքն՝ անուն խոսքի մաս էր, բայց նաև բայական կիրառություն ուներ ներկայիս վաղակատարի իմաստով՝ **-ել, -ացել**. այս դեպքերում արդեն ձևաբայ էր, որը գործածվում էր **եւ, կամ** բայերի հետ բաղադրյալ ժամանակներ կազմելիս: Առանձին ուշադրության է արժանի անցյալ դերբայի հետևյալ կիրառությունը. նույն կամ տարբեր ենթակա ու ժամանակ ունեցող երկու, երեք բայերից առաջինը սովորաբար դրվում էր անցյալ դերբայով, իսկ ենթական այս պարագայում դառնում էր սեռական հոլովով խնդիր: Նման շարահյուսական կառույցները հին հայերենից նոր հայերենի փոխադրելիս պետք է անցյալ դերբայը դարձնել դիմավոր բայ ուղղական հոլովով ենթակայի հետ, երբեմն էլ փոխակերպել անորոշ դերբայի գործիական հոլովով: Ինչպես օրինակ՝ «...*եւ քաջին Սմբատայ զհետ*

մտեալ» = «քաջ Մմբատը հետապնդեց կամ հետապնդելով», կամ «յարուցեալ զնացես» = «պիտի վեր կենաս, զնաս»<sup>4</sup>:

Այս կիրառությունը ցույց է տալիս, որ հին հայերենում անցյալ դերբայն ինքնին առանց որևէ դիմավոր բայի արտահայտում էր ստորոգում: Արեղյանը նշյալ կառույցները մանրամասն քննարկում է, բայց հետագա շրջանի քերականները հիմնականում շրջանցում էին այս յուրահատկությունը բավարարվելով կարճատև նշումով, թե անցյալ դերբայի հետ սեռական հոլովով խնդիր ունեցող շարահյուսական կառույցները պետք է արդի հայերենում փոխարկել դիմավոր բայով և ուղղական ենթակայով: Հավելենք նաև, որ *անցյալ դերբայ+եմ* շարահյուսական կառույցներում ևս ենթական կարող էր դրվել սեռական հոլովով: Մերոք Ղազարյանը, իր հեղինակած «Գրաբարի դասագրքում» զարգացնելով արեղյանական մոտեցումը, ուշագրավ պնդում է կատարում՝ նշելով. «Եթե բաղադրյալ ստորոգյալը ներգործական իմաստ ունի, ենթական սովորաբար դրվում է սեռական հոլովով, ինչպես՝ *տեսեալ է իմ (ես տեսել եմ) տեսեալ էր աշակերտաց (աշակերտները տեսել են)* և այլն»<sup>5</sup>: Բաղադրյալ ժամանակներին վերաբերող հատվածում մենք վերստին կանդաղառնանք այս խնդրին, որի հանդեպ Արեղյանի մոտեցումը հույժ բնութագրական է:

Գրաբարի վերջին՝ 4-րդ դերբայը ենթակայականն է, որն ուներ՝ *-աւղ, -ող* վերջավորությունները: Այս դերբայը հին և նոր հայերեններում նույն կազմությունն ունի: Ենթակայական դերբայը, որպես կանոն, բայերի ներկայի հիմքից է կազմվում, միայն *-անեմ, -անիմ* և մի քանի *-եմ, -իմ* պարզ բայերի դեպքում հնարավոր է երկձևություն, այսինքն՝ *-աւղ, -ող* վերջավորությունը կարող է դրվել նաև կատարյալի հիմքի վրա՝ *տեսանող - տեսող, հասանող - հատող, հարկանող - հարող, ծնանող - ծնող, ուսանող - ուսող, դարձուցանող - դարձուցող, կամող - կամեցող, երգող - երգեցող, ասող - ասացող*: Արեղյանն այս շարքում հիշատակում է նաև *ա լծորդության մի շարք պարզ բայեր՝ որսող - որսացող, յուսող - յուսացող, մուրող - մուրացող, հոգող - հոգացող*: Լեզվաբանի դիտարկմամբ, ներկայի հիմքից կազմվող ձևերը սովորաբար իբրև գոյական են գործածվում<sup>6</sup>: Պետք է հավելել, որ արդի արևելահայերենում ենթակայականի կատարյալի հիմքից կազմված որոշ գրաբարյան ձևեր պահպանվել են բառաբարդումներում՝ *երգեցող - երգեցողություն, կամեցող - կամեցողություն, հայեցող - հայեցողություն*, իսկ տարբեր հիմքերից կազմված ենթակայականի որոշ ձևեր էլ արդի հայերենում վերածվել են մաքուր գոյականների՝ *ծնող, ուսանող, ասացող*:

Բացի *-աւղ, -ող* վերջավորությունից՝ ենթակայականի իմաստ հին հայերենում կարող էին արտահայտել *-իչ* ածանցով բայական ածականները՝ *տուիչ,*

<sup>4</sup> Արեղյան Մանուկ, Գրաբարի քերականություն, էջ 720-723:

<sup>5</sup> Ղազարյան Ս., Գրաբարի դասագիրք, Եր., 1951, էջ 67:

<sup>6</sup> Տե՛ս Արեղյան Մանուկ, նշվ. աշխ., էջ 723:

առաքիչ, փառաւորիչ, անորոշ դերբայից -ի, հոգնակիում -իք ածանցով բայական ածականները սիրելի, լսելի, երեւելի, տեսանելիք, լսելիք: Վերջիններս, ըստ Աբեղյանի, ունեն երեք իմաստ. ա) այն, ինչ արժանի է սիրելու/ սիրվելու, բ) ինչ որ պետք է սիրել և գ) սիրող, լսող, փառավորող:

Ենթակայականի իմաստ էր արտահայտում նաև **որ** հարաբերականով երկրորդական նախադասությունը, որտեղ բայի վրա վերջից դրվում էր **և** հոդը: Այսպես՝ փոխանակ ասելու *զքեզ տեսանողն, ասողն, պատմողն*, կիրառում էին *որ տեսանէ զքեզ, որ ասէն, որ պատմէն* երկրորդական նախադասությունները:

Դերբայների քննության արեղյանական սկզբունքն ընդհանրացնելով՝ պետք է նշենք, որ լեզվաբանն առաջնային է համարում կազմության և ձևաբանական բնութագրիչների հետ մեկտեղ մանրամասն վերլուծել դերբայների շարահյուսական կիրառությունները՝ բացահայտելով դրանց արդի արևելահայերեն համարժեքները: Աբեղյանի այս մոտեցումը երբեմն բացատրվում է զուտ ուսուցողական նպատակներով, ավելի որոշակի դպրոցներում և բուհերում գրաբարից արևելահայերեն թարգմանական հմտությունների զարգացման առումով<sup>7</sup>: Մակայն մենք համոզված ենք, որ այս պարագայում վճռորոշ է լեզվի քննության տարածամանակյա սկզբունքի գերակայությունը. Աբեղյանը լեզուն համարում էր ամբողջական համակարգ, որի առանձին շրջափուլերի միջև համակարգային սերտ կապ կա, ուստի յուրաքանչյուր ելակետային ձևաբանական միավոր պետք է քննարկվի իր ներկա պահի համարժեք կազմության հետ համեմատության մեջ, որպեսզի հնարավորինս ամբողջական բացահայտվեն պատմական զարգացման ընթացքում նրա կրած փոփոխությունները, դրանց պատճառները:

### **Խոնարհման համակարգը հին հայերենում**

«Խոնարհում» կոչվող բաժնում Աբեղյանն արդեն ներկայացնում է գրաբարի բայերի եղանակաժամանակային ձևերը, դրանց բաշխումը, կիրառությունները՝ դարձյալ արդի արևելահայերենի հետ շաղկապված, այսինքն՝ զուգադրա-համեմատական սկզբունքով: Խոնարհման համակարգում բայի դիմավոր ձևերի դասակարգման ընթացքում ավելի հստակ է երևան գալիս Աբեղյանի ինքնուրույնությունը և ավանդական քերականների մոտեցումների հանդեպ ունեցած տարբերությունը: Հասկապես կարևոր նորույթ էր Աբեղյանի կողմից բայի կերպի կարգի տարբերակումը նախ՝ գրաբարում, ապա՝ արդի արևելահայերենում: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը. «Մ. Աբեղյանի բերած էական նորություններից մեկն էլ կերպի գաղափարի տարբերումն էր՝ այդ բառի ինքնօրինակ, միայն հայերենի առանձնահատկություններից ելնող գործածությամբ, այդ գա-

<sup>7</sup> Տե՛ս **Յուզբաշյան Անահիտ**, Գրաբարի բայական համակարգը ըստ Մ. Աբեղյանի / Հուշարձան Մանուկ Աբեղյանի, Եր., 2023, էջ 205:

ղափարին նա հասել է դերբայական ձևերի քննության հիման վրա՝ տարբերելով կատարվող, կատարված ու կատարելի կերպերը և դրանցով կազմված ժամանակները հակադրելով ոչ դերբայական ձևերով կազմված ժամանակներին՝ որպես պարզ կերպերի»<sup>8</sup>: Լեզվաբանը կերպի արտահայտության հիմնական միջոց է համարում բայի բունը՝ ներկայի և կատարյալի հիմքերը, որոնց կազմության մեջ վճռորոշ էին կերպածանցների առկայությունը կամ բացակայությունը, այսպես՝ ներկայի հիմքում, որպես կանոն, վկայված են *ան, են, ն, չ, նչ, աչ, անչ* ածանցները, իսկ կատարյալի հիմքում դրանք ընկնում են, կատարյալ կերպի ցուցիչ է դառնում *-g* ձևությամբ, որը գուգակցվում է *ա, է, ու* լծորդների հետ՝ կազմելով *աց, էաց/եց/, ոյց/ույց* բաղադրյալ ձևությոները: Յ-ը ձևային առանձին, առանց լծորդների գրաբարում արտահայտում է ապառնիություն:

Մահմանական եղանակի բայաձևերի մեջ նա չի առանձնացնում ապառնին, այլ այն տեղափոխում է ստորադասական եղանակի կազմի մեջ՝ կերպի հիմնավոր հիմունքով. առաջին ապառնին ներկայի հիմքից է կազմվում, ուստի անկատար ապառնի է, իսկ երկրորդ ապառնին կատարյալի հիմքից կազմվող ժամանակ է, ուստի կատարյալ ապառնի է: Մահմանականում տարբերակում է երեք ժամանակ՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ: Բսկ ստորադասական եղանակի կազմում արդեն երկու ապառնի ժամանակաձև է՝ առաջին և երկրորդ: Արեղյանին նախորդող և հաջորդող շատ քերականներ առաջին ապառնին ներառում էին սահմանական եղանակի մեջ, որպեսզի այս եղանակն ունենար երեք ժամանակներն էլ՝ ներկա, անկատար և կատարյալ անցյալ, անկատար ապառնի: Ստորադասականն ունենում էր մի եղանակ՝ կատարյալ կերպի ապառնի երկրորդը: Սակայն Արեղյանը միավորում է երկու ապառնիները՝ կերպային նշյալ հակադրությամբ՝ առաջին ապառնին անկատար կերպի, երկրորդ ապառնին կատարյալ կերպի:

Յուրահատուկ է հրամայական եղանակի արեղյանական ըմբռնումը. հին հայերենում նա հրամայական եղանակի մեջ տարբերում է երեք ժամանակ՝ ներկա, որը բուն հրամայականն է, ապա առաջին և երկրորդ ապառնի հրամայականներ, վերջինս ավանդաբար հորդորական կոչվող ձևն է<sup>9</sup>: Լեզվաբանը ներմուծում է անկատար կերպի ապառնի հրամայականը, որը կազմվում էր ներկայի հիմքից *-այջիր, այջիք, -իջիր, -իջիք* վերջավորություններով, *ու* լծորդության բայերի անկատար ապառնի հրամայականի ձևեր Արեղյանը չի բերում, քանի որ գրաբարյան մատենագրության մեջ նման կառույցներ վկայված չեն: Այս նորագյուտ առաջին ապառնու հրամայականի համար լեզվաբանը բերում է հետևյալ օրինակները. *ա* լծորդության համար՝ *աղայջի ը, աղայջի ք, ք*, *ե* լծորդության համար՝ *սիրիջի ը, սիրիջի ք, ք*, *ի* լծորդության համար՝ *խօսիջի ը, խօսիջի ք, ու* լծորդությունը, ինչպես նշեցինք, չունի հրամայականի

<sup>8</sup> **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը/ Արդի հայերենի ժամանակների համակարգը, Բեյրութ, 2000, էջ 75-76:

<sup>9</sup> Տե՛ս **Արեղյան Մանուկ**, Գրաբարի քերականություն, էջ 724:

առաջին ապառնին: Արեղյանի այս նորարարությանը հետագայում հետևում է Վ. Համբարձումյանը, որը գրաբարի քերականության մեջ առանձնացնում է հրամայական անկատար ապառնի և հրամայական կատարյալ ապառնի<sup>10</sup>: Ըստ էության կարող ենք եզրակացնել, որ հիմնականում թարգմանական գրականության հնագույն նմուշներում, Աստվածաշնչի գրաբար թարգմանության մեջ, Դավիթ Անհաղթի երկերում հանդիպող անկատար ապառնու հրամայականի ձևերը կա՛մ հունարենի ազդեցությամբ են ձևավորվել, կա՛մ էլ նախագրաբարյան շրջանում առկա կազմություններ էին, որոնք դասական գրաբարում արդեն կենսունակ չէին: Վերջին վարկածն առավել հավանական ենք համարում:

Ուշագրավ է նաև կրավորական սեռի դրսևորման արեղյանական մեկնաբանությունը: Նա նշում է. «Գրաբարում առանձին կրավորական բայեր չկան, ինչպես աշխարհաբարում, այլ կա միայն կրավորական խոնարհում, որը կազմվում է լծորդի կամ կատարյալի բների շրջումով»<sup>11</sup>: Այսինքն՝ սեռի փոփոխության համար կիրառում է «շրջում» եզրույթը: Կրավորականության ցուցիչը ի լծորդն էր. **ե** լծորդ ունեցող բայերի **ե/է** ձայնավորը վերջին վանկերում փոխվում է **ի** լծորդի՝ բային հաղորդելով կրավորական իմաստ, գործիքնակ՝ **աղայցեմ, մերկանայցեմ, սիրեմ, սիրիցեմ, մի՛ սիրեր, մի՛ սիրեք** ձևերը ներգործական սեռի իմաստ են արտահայտում, իսկ **աղայցիմ, մերկանայցիմ, սիրիմ, սիրիցիմ, մի՛ սիրիր, մի՛ սիրիք** կառույցները կրավորական իմաստ ունեն: Կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում ներգործաձև խոնարհման անցողական բայերը, փոխելով խոնարհման տիպը, կրավորական վերջավորություններով արտահայտում են կրավորական իմաստ: Այսպես՝ **աղացի, սիրեցի, մատուցի, օծի, հեղի** ձևերը կրավորական իմաստ արտահայտելու համար ստանում են **այ** վերջավորությունը՝ փոխակերպվելով **աղացայ, սիրեցայ, մատուցայ, օծայ, հեղայ** ձևերի, համապատասխանաբար և մյուս դեմքերը խոնարհվում են կրավորակերպ վերջավորություններով:

Արեղյանն ընդգծում է, որ հին հայերենում կան ներգործական բայեր և ժամանակներ, որոնք խոնարհման այս շրջումը չեն կրում. «Այլ անփոփոխ միևնույն ձևով մնալով՝ գործ են ածվում **հասարակ իմաստով** (= ընդհանուր իմաստով), այսինքն՝ թե՛ իբրև ներգործական և թե՛ իբրև կրավորական. մտքից և կիրառությունից միայն պիտի հասկացվի դրանց ներգործական կամ կրավորական լինելը»<sup>12</sup>: Այսպես՝ **սկսանիմ, գողանամ, հեղում** բայերը կարող են նշանակել թե՛ **սկսել, գողանալ, թափել** և թե՛ **սկսվել, գողացվել, թափվել**: Ի լծորդ ունեցող անցողական բայերը լեզվաբանը կոչում է **հասարակ բայեր**, որովհետև թե՛ ներկայի, թե՛ անցյալի բների բոլոր ժամանակները «հասարակ ի-

<sup>10</sup> Տե՛ս Համբարձումյան Վ. Չ., Գրաբարի ձևաբանություն, Եր., 2018, էջ 209-211, 230-232:

<sup>11</sup> Արեղյան Մանուկ, նշվ. աշխ., էջ 733:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 734:

մաստ» ունեն՝ «հասարակ» եզրույթն այս պարագայում նշանակում է ընդհանուր: Նշենք, որ «հասարակ» եզրույթը կիրառել է Արսեն Այտընյանը, որն իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» աշխատության «Համառոտ տեսություն գրաբար հայերեն լեզուի» հավելվածում միննույն ձևով և՛ ներգործական, և՛ կրավորական սեռերի իմաստն արտահայտող բայերը կոչում է հասարակ՝ հետևելով անցյալի քերականների ավանդույթին<sup>13</sup>:

Անկանոն բայերը Աբեղյանը բաժանում է ութ խմբի՝ այս պարագայում ևս հակադրվելով կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում շեղումներ ունեցող բայերի ավանդական երկաստիճան դասակարգմանը՝ ա նույնարմատ անկանոն բայեր և բ տարարմատ: Այս մանրատումը նա կատարում է՝ փորձելով փոքր խմբերի մեջ միավորել նմանատիպ վերջավորություններ ունեցող և հիմքի կամ խոնարհման տիպերի որևէ անկանոնություն ցուցաբերող բայերը, անգամ նրանք, որոնք կանոնավոր ձևերի հետ մեկտեղ հետդասական շրջանում տարբեր հեղինակների երկերում վկայված են զարտուղի գուգահեռ ձևերով, բայց այս միավորում - համախմբումից նյութն ուսուցողական տեսանկյունից առավել հասկանալի չի դառնում: Դեռ Արսեն Այտընյանն էր նշում, որ բայական մանր զարտուղություններն ավելի նպատակահարմար է քննել առանձին՝ չխառնելով դրանք համակարգային շեղումներ ունեցող բայերի հետ<sup>14</sup>: Այս պատճառով էլ հետագայի բոլոր գրաբարագետներն իրենց դասագրքերում չեն կիրառում արեղյանական դասակարգումը: Այսպես՝ նա լինիմ բայը համարում է պակասավոր, որը չունի կատարյալի բնից կազմվող ձևեր, դրանք կարող են լրացվել եղանիմ բայի կատարյալի ձևերով: Ավանդաբար լինիմ բայը համարվում է երկարմատ, և այս ըմբռնումը հաստատվում, ամրակայվում է հետագայի բոլոր գրաբարի քերականություններում:

Բաղադրյալ ժամանակների նկարագրության ընթացքում Մ. Աբեղյանը նորարարություններ գրեթե չի ներմուծում՝ ներկայացնելով *անցյալ դերբայ+են*, *անցյալ դերբայ+լինիմ*, կատարյալի բնում՝ *անցյալ դերբայ+եղանիմ* կառույցների հարացույցները՝ ընդգծելով, որ անցողական բայերի դեպքում այս կառույցները կարող են թե՛ ներգործական, թե՛ կրավորական իմաստ ունենալ: Ասվածը նա հաստատում է բնութագրական օրինակներով. «Թողեալ լիցին (= ներվի) մեղք քո: Ի բարույ արարչէ արարեալ է (= ստեղծված է): Չաշխարհն յինքեանս գրաւեալ էին (= գրավել էին)»<sup>15</sup>: Առանձին բացատրվում են անցյալ դերբայի հետ *են* և *լինիմ* բայերի բոլոր դեմքերի փոխարեն այդ բայերի եզակի երրորդ

<sup>13</sup> Տե՛ս Այտընյան Արսեն, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Եր., 1987, էջ 462-463:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 457-459:

<sup>15</sup> Աբեղյան Մանուկ, Գրաբարի քերականություն, էջ 743:

դեմքի գործածության դեպքերը, երբ ուղղական հոլովով ենթակային փոխարինում էր սեռական խնդիրը: Արեղյանի գնահատմամբ, սրանք քերականորեն անենթակա խոսքեր են, օրինակ՝ *տեսեալ եմ, տեսեալ ես, տեսեալ է, տեսեալ եմք, տեսեալ էք, տեսեալ են, տեսեալ է արքայ* ձևերի փոխարեն գրաբարյան մատենագրության մեջ կարող են գործածվել *տեսեալ է իմ, տեսեալ է քո, տեսեալ է նորա* կամ *իւր, տեսեալ է մեր, տեսեալ է ձեր, տեսեալ նոցա, տեսեալ է արքայի* կառույցները: «Ձպայն իսկ իմ՝ աչօք տեսեալ է: Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր: Ձոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի»: Անցողական բայերի նման կառույցները կրավորական իմաստ ունենալ չեն կարող, այսպես՝ *տեսեալ էր քո* կամ *ածեալ լինէր քո* նշանակում է միայն՝ *դու տեսել էիր* կամ *դու բերած լինեիր*:

Ակնհայտ է, որ թեք հոլովով ենթակաների գոյությունը հայերենում Արեղյանը փորձում է բացատրել անգամ հին հայերենի պարագայում՝ դրանք համարելով քերականորեն անենթակա կառույցներ: Այնինչ այլ քերականների կողմից դրանք համարվում են թեք հոլովով դրված ենթակայով նախադասություններ: Սեռական կամ տրական հոլովով դրված ենթակաները Արեղյանը կոչում էր ենթակայական սեռական, սեռականով խնդիր, տրականով խնդիր:

### Բայական ժամանակների շարահյուսական յուրահատուկ կիրառությունները

«Ժամանակների գործածությունը» բաժնում Արեղյանը շատ կարևոր դասակարգումներ է կատարում՝ առանձնացնելով հին հայերենի բայական տարբեր եղանակաժամանակային ձևերի կիրառության առանձնահատկությունները արդի արևելահայերենի համեմատությամբ: Այսպես՝ գրաբարի սահմանական անցյալ անկատարը հաճախ գործածվում է իբրև **պատմական ժամանակ**, որն աշխարհաբարում համապատասխանում է կա՛մ սահմանական ներկային, կա՛մ անցյալ կատարյալին: Այսպես՝ Իբրև զայն **լսէր** (= լսեց կամ լսում է), Պարթևն, զերդումն ուխտին **յիշէր** (= հիշեց կամ հիշում է):

Առավել հետաքրքիր է ստորադասական ապառնի Ա և ապառնի Բ ժամանակների բովանդակության բնութագրումը. Արեղյանը նշում է, որ ապառնի Ա-ն անկատար, տևական բնավորություն ունի՝ աշխարհաբարի կատարվող կերպին, սահմանական ներկային համապատասխան, իսկ երկրորդը՝ կատարյալ, ոչ տևական՝ աշխարհաբարի պարզ կերպին՝ անցյալ կատարյալին կամ ըղձական ներկային համապատասխան: Օրինակ՝ *Յորժամ քաղաք եւ գեւորք աւերեսցին, եւ անդ դեւք բնակիցեն* (= բնակվելիս լինեն): Սակայն ինքն էլ անմիջապես ստիպված է լինում արձանագրել, որ «ապառնի ժամանակների այս տարբեր նշանակությունները հնագույն մատենագիրների մեջ անգամ արդեն շփոթված

են, և դրանք հաճախ նույն նշանակությունն ու գործածությունն ունին»<sup>16</sup>: Այսինքն՝ ըստ հիմքերի կերպային հակադրության սկզբունքը հին հայերենում, ավելի որոշակի 5-րդ դարում չէր գործում:

Ուշագրավ է, որ առանց դիմավոր բայի, միայն անցյալ դերբայով կազմված նախադասությունները, որոնք հին հայերենում բավական տարածված են, Աբեղյանը փորձում է մեկնաբանել որպես զեղչված ստորոգյալով նախադասություններ: Բայց ինչպես արդեն նշել ենք, գրաբարում անորոշ, հատկապես նաև անցյալ դերբայներն ազատորեն կարողանում էին ստորոգում արտահայտել առանց դիմավոր բայերի, այսինքն՝ ինքնուրույն խոսքակազմիչ դեր կատարել: Ի վերջո գրաբարագետը ստիպված է լինում արձանագրել. «Այս օժանդակ բայը, ավելի **լիներ** ձևով չի դրվում հաճախ, և այդ դեպքում **անցյալ դերբայով միայն կազմվում են խոսքեր**, օրինակ՝ *Իբրեւ իրքն հոչակեցան գնոցանէն, ապա աւուրս երկուս ասպատակ արարեալ, տուեալ (= տուեալ լիներ) պահել զգնոսա: Եւ եղեալ որոտումն յերկնից սաստիկ անհնարին, զի ահաբեկեալ զամենայն ամբոխն: Բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր եւ փոխեալ անոր զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն ի կոռցն, զոր ոչ աւգուտ իւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն»<sup>17</sup>:*

Այսպիսով նշենք, որ թեև Աբեղյանի բայակենտրոն համակարգում ավանդական կարծրատիպով ստորոգում պետք է արտահայտեին միայն դիմավոր բայերը, և նրանց ենթական պետք է դրված լիներ ուղղական հոլովով, սակայն հին հայերենում բնագրային հարուստ վկայությունների հիման վրա Աբեղյանն արձանագրում է, որ նախադասություններ կարող են կազմվել նաև միայն դերբայներով, իսկ նրանց ենթական կարող է ազատորեն արտահայտվել սեռական, հայցական կամ տրական հոլովներով, և սա գրաբարի կարևորագույն տարբերակիչ առանձնահատկություններից է: Այսինքն՝ լեզվաբանը հաղթահարում է դիմավոր և անդեմ բայեր հակադրության կարծրատիպը՝ ցույց տալով, որ հին հայերենում այս հակադրությունն այնքան հստակ և կտրուկ չէր, ինչպես արդի հայերենում, հին հայերենի դերբայները՝ անորոշն ու անցյալը, ստորոգումային հատկանիշ ունեին, և դա արտահայտվում էր ինքնին, ոչ թե **լինիմ, եմ, կամ** բայերի զեղչումով: Հետևաբար դերբայները կազմում էին ոչ թե անենթակա նախադասություններ, այլ թեք հոլովներով դրված ենթականերով ստորոգումային կառույցներ: «Նախադասություն» եզրույթի փոխարեն քերականագետը հաճախ կիրառում է «խոսք» եզրույթը:

### Եզրակացություն

Հին հայերենի բայական համակարգի նկարագրության ընթացքում Մանուկ Աբեղյանը նորարարական մոտեցումներ է ցուցաբերում, որոնցից հատկապես

<sup>16</sup> Աբեղյան Մանուկ, Գրաբարի քերականություն, էջ 747:

<sup>17</sup> Նույն տեղում էջ 752:

կարևոր են կերպի կարգի տարբերակումը՝ հայերենի առանձնահատկություններից բխող կիրառություններով, որոնք արտահայտվում էին դերբայական բաղադրյալ ժամանակաձևերով, ինչպես նաև ներկայի և կատարյալի բայական հիմքերից կազմվող պարզ ժամանակներով: Նա առանձնացնում է կատարվող, կատարված ու կատարելի կերպերը և դրանցով կազմված բաղադրյալ ժամանակները հակադրում ոչ դերբայական ձևերով կազմված ժամանակներին՝ որպես պարզ կերպերի:

Մահմանական եղանակի բայաձևերի մեջ նա չի առանձնացնում ապառնի ժամանակ, այլ այն տեղափոխում է ստորադասական եղանակի կազմի մեջ՝ համաձայն երկանդամ կերպային հակադրության. առաջին ապառնին ներկայի հիմքից է կազմվում, ուստի անկատար ապառնի է, իսկ երկրորդ ապառնին կատարյալի հիմքից կազմվող ժամանակ է, ուստի կատարյալ ապառնի է: Մահմանականում տարբերակում է երեք ժամանակ՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ: Իսկ ստորադասական եղանակի կազմում արդեն երկու ապառնի ժամանակաձև է՝ առաջին և երկրորդ:

Նորարարական է հրամայական եղանակի արեղյանական ըմբռնումը. հին հայերենում նա հրամայական եղանակի մեջ տարբերում է երեք ժամանակ՝ ներկա, որը բուն հրամայականն է, ապա՝ առաջին և երկրորդ ապառնի հրամայականներ, այսինքն՝ հորդորական կատարյալ ապառնի հրամայականի հետ մեկտեղ տարբերում է անկատար ապառնի հրամայականի ձևեր երեք լծորդությունների համար՝ *ա, է, ի*: Լեզվաբանը ներմուծում է անկատար կերպի ապառնի հրամայականի տեսակը, որը կազմվում էր ներկայի հիմքից *-այջիր, -այջիք, -իջիր, -իջիք* վերջավորություններով, *ու* լծորդության բայերի համար անկատար ապառնի հրամայականի ձևեր Աբեղյանը չի առանձնացնում, որովհետև դասական և հետդասական մատենագրության մեջ նման կառույցներ վկայված չեն: Հիմնականում թարգմանական գրականության երկերում, Աստվածաշունչ մատյանի գրաբար թարգմանության մեջ, Դավիթ Անհաղթի երկերում առկա անկատար ապառնի հրամայականի ձևերը կարող են դիտվել իբրև դիպվածային կազմություններ՝ բնագրի լեզվով պայմանավորված, կամ էլ նախագրաբարյան շրջանից ժառանգված կառույցներ, որոնք գրաբարի դասական շրջանում համագործածական չէին: Այս ձևերի բարբառային ծագումը ևս բացառելի չէ:

Չին հայերենի բնագրային հարուստ վկայությունների հիման վրա Աբեղյանը եզրակացնում է, որ հնարավոր է նախադասությունների կամ իր եզրույթով խոսքերի կազմություն նաև գուտ դերբայ - ստորոգյալի միջոցով, և սա գրաբարի տարբերակիչ յուրահատկություններից է: Նա ամրագրում է հին հայերենի անորոշ և հատկապես անցյալ դերբայների ստորոգումային ներուժը՝ ցույց տալով նրանց ենթակաների արտահայտության բնորոշ ձևը՝ դրվել թեք հոլովներով՝ մեծ մասամբ սեռական, որոշ դեպքերում՝ տրական կամ հայցական:

**НАРИНЕ ДИЛБАРЯН – Классификация древнеармянских глагольных структур в трудах Манука Абегиана.** – Лингвистические исследования Манука Абегиана всегда основывались на принципе диахронического описания, поэтому изучение грамматической системы армянского языка он начал с древнеармянского языка, выявляя общие черты и системные различия древнеармянского и новоармянского языков – грабара и ашхарабара. Особую ценность представляет изучение глагольных систем древнеармянского и новоармянского языков, которое характеризуется новаторскими для своего времени подходами. Манук Абегиан исследовал особенности глаголов древнеармянского языка, опираясь на богатый языковой материал классических рукописных источников V века, в частности, на библейские тексты, считающиеся «царицей переводов» древнеармянского языка. Известный лингвист детально описывает безличные и личные формы глаголов древнеармянского языка. Он выявляет, что инфинитив и прошедшие причастия грабара часто имеют роль и функцию спрягаемых глаголов, они выражают предикацию, отличаются богатым семантическим разнообразием, становятся сказуемым, а их подлежащие выражаются в косвенных падежах – в родительном, дательном или винительном. Это важная характерная особенность древнеармянского языка.

М. Абегиан сделал принципиальные актуальные и по сей день наблюдения о проявлениях категории глагольного вида в древнеармянском языке, об особенностях построения непрерывно-пассивных структур. Признанный лингвист всегда подкреплял свои теоретические грамматические выводы и классификации многочисленными практическими примерами из древних литературных источников.

**Ключевые слова:** *глагольная часть речи, вид, причастия, инфинитив, предикация, система спряжения, прямое подлежащее, косвенное подлежащее*

**NARINE DILBARYAN – Classification of Old Armenian Verb Structures in the Works of Manuk Abeghyan.** – Manuk Abeghyan's linguistic research has always been based on the principle of diachronic description. Therefore, he began his study of the grammatical system of the Armenian language with Old Armenian, identifying the common features and systemic differences between Old Armenian and Modern Armenian, including grabar and ashkharabar. Of particular value is his study of the verb systems of Old Armenian and Modern Armenian, characterized by approaches that were innovative for their time. Manuk Abeghyan examined the characteristics of Old Armenian verbs, drawing on the rich linguistic material of classical manuscript sources from the 5th century, particularly the Bible, considered the "queen of translations" of Old Armenian. The renowned linguist provides a detailed description of the impersonal and personal forms of Old Armenian verbs. He reveals that the infinitive and past participle of Grabar often perform the role and function of conjugated verbs. They express predication, are distinguished by rich semantic diversity, become predicates, and their subjects are expressed in oblique cases: genitive, dative, or accusative. This is an important characteristic of the Old Armenian language.

M. Abeghyan made fundamental, still relevant, observations on the manifestations of verb aspect in Old Armenian and on the construction of intransitive passive structures. The famous linguist always supported his theoretical grammatical conclusions and classifications with numerous practical examples from ancient literary sources.

**Key words:** *verb part of speech, aspect, participles, infinitive, predication, conjugation system, direct subject, indirect subject*

**Գրականության ցանկ**

- Աբեղյան Մանուկ, Երկեր, Զ, Գրաբարի քերականություն, Եր., 1974, էջ 710 - 756: [Abegyan Manuk, Erker, Z, Grabari k'erakanut'yun, Er., 1974, էջ 71-756]:
- Այտընյան Արսեն, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 462-463: [Ayt'ënyan Arsen, K'nnakan k'erakanut'yun ashkharhabar kam ardi hayeren lezvi, Er., 1987, էջ 462-463]:
- Ավետիսյան Հ. Մ., Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1951, էջ 26-30: [Avetisyan H., Gazaryan R., Grabari dzernark, Er., 1951, էջ 26-30]:
- Համբարձումյան Վ.Գ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2018, էջ 209-211, 230-232: [Hambardzumyan V.G., Grabari dzernark, Er., 2018, էջ 209-211, 230-232]:
- Ղազարյան Ս., Գրաբարի դասագիրք, Եր., 1951, էջ 67: [Ghazaryan S., Grabari dasagirq, Er., 1951, էջ 67]:
- Յուզբաշյան Ա., Գրաբարի բայական համակարգը ըստ Մ. Աբեղյանի, Հուշարձան Մանուկ Աբեղյանի, Եր., 2023, էջ 205: [Yuzbashyan A., Grabari bayakan hamakargë ëst M. Abeghyani, Hushardzan Manuk Abeghyani, Er., 2023, էջ 205]:
- Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը/ Արդի հայերենի ժամանակների համակարգը, Բեյրութ, 2000, էջ 75-76: [Jahukyan G., Hayoc lezvi tesutyan yev patmutyan himnaharcԼery/ Ardi hayereni zhamanakneri hamakargë, Beyrut, 2000, էջ 75-76]:

## ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ՈՒ ԿՈՄԻՏԱՍԻ ԿԱԶՄԱԾ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ 

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան*

Մանուկ Աբեղյանը շարունակել է այն կարևոր գործը, որը նոր հիմքերի վրա դրեց հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: Ժողովրդական երգարանը եկող սերունդներին հանձնելու կարևոր գործում նա մեծապես օգնել է հանճարեղ Կոմիտասին՝ Գևորգյան ճեմարանում միասին աշխատելու տարիներին:

Աբեղյանն առաջնակարգ բանագետ էր. նա ծանոթ էր համաշխարհային բանահյուսության կարևոր գործերին ու հմտորեն որոշում էր, թե ինչը պետք է գրառել, և ինչ բառաթերքով մատուցել եկող սերունդներին: Նա ապահովում էր ժողովրդական գեղարվեստական մտածողության փոխանցումը՝ դրան նվիրելով ոչ միայն բնագրային մեծարժեք հրապարակումներ, այլև տեսական ու գիտական հիմնավորումներ: Մ. Աբեղյանի և Կոմիտասի կազմած «Հազար ու մի խաղ» երգարանը հայ մշակույթի մնայուն կոթողներից է:

**Բանալի բառեր** – Մ. Աբեղյան, Կոմիտաս, ժողովրդական երգարան, վիպական տաղ, սիրո երգ, պանդխտի երգ, շինական

### Ներածություն

Էջմիածնի Գևորգյան ճեմարանում աշխատելու տարիներին համագործակցում են հայ ժողովրդի երկու նվիրյալ զավակներ՝ հանճարեղ Կոմիտասը և անգուգական բանագետ Մանուկ Աբեղյանը: Այդ համագործակցության խոսուն փաստերից մեկը 1905 թվականին Վաղարշապատում լույս տեսած «Հազար ու մի խաղ» ժողովածուն է: Նրանք եռանդուն շարունակում էին հայ բանագիտությ-

**Սեփոս Դոլուխանյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

**Аэлита Долуханян** – доктор филологических наук, профессор, член-корреспондент НАН РА, заведующая кафедрой древней и средневековой армянской литературы и методики ее преподавания в АСПУ им. Х. Абовяна

**Aelita Dolukhanyan** – Doctor of Philological Sciences, Professor, Corresponding Member of the NAS RA, Head of the Department of Armenian Ancient and Medieval Literature and Its Teaching Methods at the Kh. Abovyan ASPU

Էլ. փոստ՝ [aelita.dolukhanyan@gmail.com](mailto:aelita.dolukhanyan@gmail.com) ORCID ID: <https://orcid.org/0000-0001-9526-9464>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 02.02.2026

Գրախոսվել է՝ 06.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

յան հիացմունքի արժանի երախտավոր Գարեգին Սրվանձտյանցի գործը: Վերջինս «Մասնա ծոեր» էպոսի առաջին գրառման առաջաբանում հայ մշակույթի նվիրյալներին պատգամում էր, որ իր օրինակով «աշխատասիրեն ձեռք բերել, ի լույս ածել այսպիսի գրվածքները»<sup>1</sup>: Կոմիտասն ու Մանուկ Աբեղյանն իրենց աշակերտներին բաժանում էին թերթիկներ, որպեսզի ամռան արձակուրդների ժամանակ նրանք իրենց բնակության վայրերից գրառեն բանահյուսական գործեր ու հանձնեն իրենց: Հետո նրանք շանադիր ընտրություն էին կատարում: Ահա այդպես էլ ծնվել է «Հազար ու մի խաղ» ժողովածուն:

Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը Էջմիածնում ծանոթացել է Կոմիտասի հետ, հիացել նրա անձնավորությամբ և վերջինիս մասին թողել է եզակի հուշեր: Հուշերում պատմվում է, թե ինչպես էր գրառում Կոմիտասը բանահյուսական գոհարները<sup>2</sup>:

«Հազար ու մի խաղ» ժողովածուի վերաբերյալ բացառիկ տեղեկություններ է հաղորդում Մ. Աբեղյանը իր «Ժողովրդական երգարան և «Հազար ու մի խաղ»» հոդվածում<sup>3</sup>: Այստեղ Աբեղյանը պատասխանում է 1903-ին «Մուրճ» ամսագրում տպագրված Կոմիտասի մշակած ժողովրդական երգերը քննադատող մի հոդվածի: Աբեղյանը գրում է. «Մատենախոսը շատ անորոշ ու տարտամ գաղափար ունի հայ ժողովրդական երգերի մասին և չի հասկացել, թե մեր խմբագրած երգարանը ինչ է»<sup>4</sup>:

Աբեղյանին ու Կոմիտասին քննադատողը պահանջում է. «Ի սեր ազգրաբարական գիտության ձեռքի տակ եղած նյութերը տվեք առանց սրբագրության, այնպես, ինչպես որ կան. նրանք առանց սրբագրության էլ շատ զեղեցիկ են»<sup>5</sup>:

Աբեղյանը այս դիտողության հետ բուրբուրվին համաձայն չէ, որովհետև ժողովրդական երգիչները երբեմն երգը ներկայացնում են աղճատված ձևով, մինչդեռ երգարան կազմողը այն փոխանցում է գալիք սերունդներին. «Երգարանը պետք է կրթիչ լինի: Այս նպատակի համար պետք է ուրեմն խմբագրելով ազնվացնել երգերը»<sup>6</sup>:

Աբեղյանը իրավացիորեն պնդում է, թե կոպիտ զգացումները, գռեհիկ մտքերն ու արտահայտությունները չպետք է տեղ գտնեն երգարանի մեջ<sup>7</sup>: Նա բերում է մի քանի ոչ պատշաճ օրինակներ, որոնք դուրս են մնացել երգարանից: Համեմատվել են նույն երգի տարբերակներ, ու երգարանի մեջ դրվել են հայերեն բառերով երգերը: Օրինակ, սալդաթ գնացիրը դարձել է զինվոր գնացիր<sup>8</sup>:

<sup>1</sup> Սրվանձտյանց Գ., (1978), Երկեր, հ.1, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., էջ 86:

<sup>2</sup> Տե՛ս Դոլուխանյան Ա., (2011), Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Եր., «Զանգակ-97» հրատ., էջ 126:

<sup>3</sup> Տե՛ս Աբեղյան Մ., (1975), Երկեր, հ. Է, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., էջ 419:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 406:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 409:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 410:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 411:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 415:

Աբեղյանը փաստերով ապացուցում է, թե ժողովրդական երգարան կազմելը տարբերակների համեմատական տանջալից աշխատանք է:

### «Հազար ու մի խաղ» ժողովածուի ժանրերը

Աբեղյանի ու Կոմիտասի կազմած ժողովածուն ունի ժանրային հարուստ բազմազանություն: Վիպական տաղեր, սիրո երգեր, սիրո խաղիկներ, աշխատանքային երգեր, պանդխտության մեղեդիներ, կատակերգեր, հարսանյաց երգեր, անտունիներ, մանկական խաղերգեր:

Անշուշտ չպետք է մոռանալ, որ Կոմիտասի շնորհիվ այդ երգերի մի մասը ստացել են միջազգային ճանաչում և մինչև հիմա հնչում են աշխարհի տարբեր բեմերից<sup>9</sup>: Այդ երգերի մասին Կոմիտասը զեկուցումներ է կարդացել արտասահմանում<sup>10</sup>:

«Հազար ու մի խաղ» ժողովածուն որպես գիրք վերահրատարակվել է մի քանի անգամ: 1969-ին Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առիթով, տպագրել է կոմիտասագետ Ռ.Աթայանը՝ կցելով խիստ սեղմ, սակայն պերճախոս «Երկու խոսք», որն ավարտվում է հետևյալ եզրահանգմամբ. «Այս «խաղերն» անբաժանելի են Կոմիտասի ողջ երգային ստեղծագործությունից, որն ինքնին մի աննման կոթող է հոգու հարստության և արիության տեր ժողովրդին, նրա ֆիզիկական և հոգևոր տուկունությանը, ազատասիրական ոգուն և պայծառ վերածննդին»<sup>11</sup>:

2015-ին «Հազար ու մի խաղ» ժողովածուն Արթուր Շահնազարյանի վերակազմությամբ լույս է տեսել «Հայկական ազգային երաժշտական գանձարան» մատենաշարով: Այն ամբողջովին նորոգված է, և հայերեն բնագիրը դրված է նաև լատինատառ, որպեսզի օտարները երգեն հայերեն: Բերենք օրինակ.

հայերեն՝	Չինար ես, կեռանա լ մի, Մեր դրոնեն հեռանա լ մի, Յա ր, քո Աստված կըսիրես, Հեռու ես, մոռանա լ մի:
լատինատառ՝	Chinar es, kerranal mi, Mer d'ornen herranal mi, Yar, ko Astvats k'osires, Herru es, morranal mi <sup>12</sup> :

Պատմական բնույթի վիպական տաղ է «Մոկաց Միրզան», որը գրառել են Սարգիս Հայկունին, Կոմիտասը, Հովսեփ Օրբելին<sup>13</sup>: Ցարդ պահպանված է Կո-

<sup>9</sup> Տե՛ս **Asatryan A.G.** (2003). Ohannes Tchekidjyan, Life and Carrier, Antares, Yer., էջ 39-44:

<sup>10</sup> Տե՛ս **Թերլեմեզյան Ռ.** (1992): Կոմիտաս, Եր., ՀՀ ԳԱ հրատ., էջ 135:

<sup>11</sup> «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան: Խմբագրեցին Կոմիտաս և Մ. Աբեղյան (1969): Եր., ՀՀ Կենտկոմի հրատ., էջ 5:

<sup>12</sup> «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգերի ժողովածու (2015): Երևան, «Զանգակ-97», էջ 31:

<sup>13</sup> Տե՛ս **Դուրխանյան Ա.** (2008): Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., «Զանգակ-97» հրատ., էջ 117:

միտասի այդ տաղի կատարման ձայնագրությունը: Տաղը ժամանակային որոշակիություն չունի. այն պատկերում է Արևմտահայաստանի վերջին ազնվական տների ոչնչացումը թուրք փաշաների կողմից: Թուրք Կոլոտ փաշան իր մոտ է կանչում Մոկաց Միրզային ու հյուրասիրության ժամանակ թունավորում նրան: Տաղն ունի հետևյալ պերճախոս կրկնակը.

Հազա ր ափսոս Մոկաց Միրզեն,  
Բեմուրադ կեներ Կոլոտ փաշեն<sup>14</sup>:

Հայ միջնադարյան վիպական տաղերից հեղինակները ժողովածուում զետեղել են նաև «Կարոս խաչը»:

Այս վիպական տաղը ևս պատմական, ճանաչողական արժեք ունի: Դրանում ներկայացվում է, թե ինչպես մահմեդական քրդերը կողոպտում էին հայկական եկեղեցիներում եղած թանկարժեք պաշտամունքային առարկաները: Ժողովրդի երազանքով թանկարժեք խաչին տիրանալ փորձող քուրդ պարոնը պատժվում է: Կարոս խաչը, որը պատրաստել էին հովիվները սովորական փայտից, հրաշքով դառնում է արծաթից ու ոսկուց: Այն գիշերը լույս է տալիս, իսկ ցերեկը դառնում է ամպհովանի:

Խաչի հրաշագործ լինելը հայտնի է դառնում քուրդ պարոնին, ու նա իր մարդկանց ուղարկում է խաչը բերելու: Վիպական տաղում պատկերված է հայ հոգևորականների նվիրվածությունը ազգային սրբություններին: Քուրդ պարոնի մարդիկ չեն կարողանում տանել խաչը, նրանք անգոր էին, խաչը տանելու են գալիս գորքով, սակայն խաչը հաղթում է նրանց: Վերջում քուրդ պարոնի բերդը ավերվում է, և մատնիչ հայ զգիրը՝ պատժվում: Վիպական տաղը բացատրում է, որ իսկական հավատը կարող է հաղթել չար ուժերին<sup>15</sup>:

Հայտնի է, որ Կոմիտասին խիստ քննադատել են եկեղեցու սաներին սիրո խաղեր սովորեցնելու համար: Նման մտածողները չեն հասկացել, ինչպես բացատրում է Մ. Աբեղյանը, այդօրինակ մտտեցումն ամրացրել է ժողովուրդ ու եկեղեցի կապը: Այդպես էին մտածում նաև Եվրոպայի Բարձր վերածնության շրջանի նկարիչներն ու քանդակագործները, որոնք Մարիամին՝ Հիսուսի մորը, ներկայացնում էին որպես չքնաղ իրական կին, լանջաբաց ու շքեղ արտաքինով:

Կոմիտասն աշխարհին ապացուցեց, որ հայերն ունեն իրենց ազգային թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ երգերը, ու դրանք փոխառություններ չեն հարևան ժողովուրդներից<sup>16</sup>:

«Հազար ու մի խաղ» ժողովածուում զետեղված սիրո երգերն այնքան կատարյալ են, որ հուզել ու կհուզեն մարդուն: Դրա վառ ապացույցը «Ես սարեն կուզայի» սկսվածքով երգն է: Մերը սկզբում եղել է փոխադարձ.

<sup>14</sup> «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան: Խմբագրեցին Կոմիտաս և Մ. Աբեղյան, (1969), էջ 51:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 201-206:

<sup>16</sup> Կոմիտաս (1942): Հողվածներ և ուսումնասիրություններ: Հավաքեց Ռ. Թերլենեզյան, Եր., Պետհրատ., էջ 50:

Ես մի չոր ծառ էի,  
Դու գարնան արև,  
Քո սիրով ծաղկեցավ  
Իմ ճյուղն ու տերև<sup>17</sup>:

Սակայն փոխադարձ ու ջերմ սերը չի ունենում սպասված ավարտը.

Թե ինձ չէիր առնի,  
Ինչո՞ւ սիրեցիր,  
Մի բուռ կըրակ եղար,  
Սիրտըս էրեցիր<sup>18</sup>:

Հունական դիցաբանության մեջ հայտնի Օրփեոսի և Էվրիդիկեի սիրավեպում էլ Օրփեոսի նվագից ու սիրո երգից չոր ծառերը տերև են արձակում: Մա փոխադարձ սիրո հզորության խորհրդանիշն է:

Անմահան երգեր են ձոնված գեղեցիկ անուններ ունեցող աղջիկներին՝ Մոնային, Նագանուն, Շողերին:

Սիրո սպասումը, հանդիպման քաղցրությունը, սերը կորցնելու տագնապը ամենատարբեր գեղարվեստական դրսևորումներով հանդես են գալիս ժողովածուում գետեղված երգերում: Աշունը, տերևաթափը համահունչ են ջահել աղջկա սիրո կորստին.

Աշունն եկավ սարիցը,  
Տերևը թափեց ծառիցը,  
Շողոն դարդով լըցվել ա,-  
Հեռացել ա յարիցը<sup>19</sup>:

Ժողովրդական բանահյուսության մեջ սերն առկա է և՛ աշխատանքային երգերում, և՛ Վարդավառի խանդավառ գեղգեղանքում:

Վարդավառը երիտասարդ աղջիկների սիրելի տոնն էր, որի ժամանակ հանված գուշակ իրը որոշում էր նրանց հետագա բախտը.

Վարդավառը գալիս ա,  
Ծաղիկը ցնծալիս ա,  
Ա՛յ գյուղում կանչող աղջիկ,  
Ձենըդ ծըվլալիս ա<sup>20</sup>:

Վարդավառի ու սիրո միահյուսված երգը բանահյուսական, ազգագրական ճանաչողական մեծ արժեք ունի: Այդ երգի ընթացքում երիտասարդ չամուսնացած աղջիկները նազանքով պարում են՝ տոչորելով սիրահարված տղաների սրտերը.

-Կանաչ տեղը՝ բաղում եմ,  
Պարի միջին խաղում եմ,

<sup>17</sup> «Հագար ու մի խաղ», ժողովրդական երգարան (1969), էջ 33:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 40:

Կաքավի պես սորալով,-  
Տըղաներին դադում եմ<sup>21</sup>:

Ովքեր վայրի բնության մեջ կաքավ են տեսել, զգացել են, թե որքան գեղեցիկ են նրանք քայլում և որքան անսպասելի անհետանում են, երբ մարդկանց են տեսնում:

Միրո երգերի մեջ կան նաև զուգերգեր, երբ աղջիկն ու տղան փոխադարձ սիրուց երջանիկ խոսում են իրենց թանկ զգացմունքների մասին: «Հաբրբան» երգը տարիներ շարունակ գեղեցիկ կատարում էին հայ երգի անմնացորդ նվիրյալներ Լուսինե Ջաքարյանն ու Խորեն Պալյանը: Երգում տղան տագնապում է, թե կարող է իր սերը երջանիկ ավարտ չունենա, ու սպառնում է Աստծու անունից.

Միրել եմ, սերն երեսին,  
Անթառամ թերն երեսին,  
Ով իմ սիրածն ինձ չի տա,  
Աստծու կերն երեսին<sup>22</sup>:

Ժողովածուում մեծ թիվ են կազմում հարսանեկան երգերը: Հատկապես շատ են փեսային ուղղված գովերգերը:

Հարսանեկան երգերը մտնում են ժողովրդական կենցաղային-ծիսական քնարերգության մեջ: Դրանք կան բոլոր ժողովուրդների մոտ, որոնց միջոցով կարևորվել է ընտանիքի դերը սովյալ ժողովրդի ու մարդկային հասարակության համար: Հարսանիքը իսկական տոն է եղել. բոլորը շքեղ հագնվել են, և հատկապես գեղեցիկ զուգվել են հարսն ու փեսան<sup>23</sup>:

Փեսային կոչել են թագավոր, և հարսանեկան երգում հարց է տրվում, թե ինչ ծաղիկ է նա ուզում, որ բերեն իր համար: Եվ սկսում են թվարկել զանազան հոտավետ ծաղիկների անուններ՝ ռեհան, շուշան, նարգիզ, կակաչ, ոսկեծաղիկ և այլն: Մեկ ուրիշ հարսանեկան երգում փեսային արդեն առաջարկում են հայկական կենցաղում շատ օգտագործվող պտղատու ծառեր՝ ծիրանի ծառ, իսնձորի, պնդուկի, ընկույզի ծառեր և խաղողի թուփ.

Թագավո՛ր, ինչ բերեմ քեզ նրման,-  
Քո կանաչ արև քեզ նրման,  
Ծիրանի ծառ, որ կրծաղկեր,  
Ծաղկեք դուք էլ էնոր նրման<sup>24</sup>:

Ժողովածուում տեղ են գտել նաև աշխատանքային երգերը: Այդ երգերում շինականը ջանադիր աշխատում է, հանգստանում բնության գրկում, վայելում բնության պատճառած հոգեկան հաճույքը: Խաղաղ և անուշ գիշեր է, երկնքում

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>23</sup> Տե՛ս Կրավցով **Н.Н.**, **Лазутин С.Г.** (1983). Русское народное творчество, М., «Высшая школа», էջ 56:

<sup>24</sup> «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան (1969), էջ 114:

լուսինն է, հովիվը սրինգ է նվագում, ծովից փչում է զեփյուռը, դաշտերը, ձորերը քուն են մտել, լավում է միայն ջրերի գլվլոցը, հավքերը նույնպես քնել են, և լավում է սոխակի դայլայր միայն, որն արբել է վարդի անուշ հոտով: Գեղագիտական մեծագույն հաճույք կա այս երգում, իսկական հովվերգություն: Մեկ ուրիշ աշխատանքային երգում կինը սիրելի գութանավարին հաց է տանում ու երգում է.

Գութանը հաց էմ բերում,  
Բերանը բաց էմ բերում,  
Տե՛ս, քեզ որքան էմ սիրում,-  
Ձուկը տապակած էմ բերում<sup>25</sup>:

Այսօր էլ առանց հուզմունքի հնարավոր չէ լսել «Գութանի երգը», որում երևում է աշխատանքային այդ գործիքի կարևորությունը հայ շինականի կյանքում: Ե՛վ երգի բառերը, և՛ կոմիտասյան երաժշտությունը ներկայացնում են աշխատավոր մարդու կենսասիրությունը, որն անպայման կապված է գութանի և այն առաջ տանող եզան հետ: Գյուղացին բացատրում է, որ հողի ակոսի մեջ ընկած սերմը սուրբ է, խնդրում է Աստծուն՝ մի սերմից հազարն աճեն, չէ՞ որ ինքը կատարում է Աստծու պատվերը:

Ժողովածուում տեղ են գտել նաև պանդխտության երգեր, որոնք աչքի են ընկնում հայրենաբաղձությամբ ու խոր թախիծով: Այդ երգերում հերոս է դառնում կռունկ թռչունը, որը զրկված է հայրենիքից.

-Կռո՛ւնկ, հուստ կուգաս:  
-Բաղդատա չուլեն:  
-Խաբրիկ մը չունիս  
Իմ հորեն, մորեն:  
-Քու հերն է մեռի,  
Քու մեր շըվարի,  
Առի ուր ձեթկիկ,  
Ձագեր, ձըվարի<sup>26</sup>:

Ժողովրդական երգարանում կան նաև մանկական խաղերգեր և կատակերգեր:

Մանկական խաղերգ է «Աղվես գնաց, մտավ ջաղաց» հյուսվածքը:

Աղվեսը պտտվում է գյուղի շուրջը, մտնում է ջրաղաց, ուտում է հավերին, սակայն նա շատ խորամանկ է, և նրան անհնար է բռնել.

Աղվես կերավ գեղի հավեր,  
Փարվեզ տըվավ վերի կալեր:  
Հարա՛յ աղվես...<sup>27</sup>:

Ազգագրական ու բանահյուսական ուշագրավ հյուսվածք է «Գնացեք, տե՛սեք՝ ով է կերել այգին» սկսվածքովը: Սա ուրախ կատակերգ է, որում երևում է

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 89:

գյուղական միջավայրը: Գյուղացու համար սիրելի տոներ են բարիկենդանը և զատիկը: Դրանց ընթացքում շինականները հանգստանում են առօրյա հոգսերից ու անկեղծ զվարճանում:

Գյուղացուն վնասներ են պատճառում գայլն ու մուկը, այծը, որն ուտում է այգու բույսերը, ժանգը, որը քայքայում է գյուղատնտեսական գործիքները: Կատակերգում թվարկվում են դրանք, և դրանց հակադրվում են սիրելի տոները՝ բարիկենդանն ու զատիկը, որոնք շեշտվում են նոր տների կրկնակներում:

Հայտնի է, եթե յուրի կարասը մտնում է մուկը, ապա այն ուտելու համար այլևս պիտանի չէ.

Գնացե՛ք, տեսե՛ք, ո՞վ է կերել յուրը:–  
 Գնացին, տեսան՝ մուկն է կերել յուրը:  
 Մուկն ու յուրը,  
 Յուրըն ու ժանգը,  
 Ժանգըն ու սուրը,  
 Սուրըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Այծըն ու այգին,–  
 Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ<sup>28</sup>:

Այս կատակերգը հավասարապես ազգագրական և բանահյուսական արժեք ունի. «Ազգագրության հետ սերտ ծանոթությունը պարտադիր է ֆոլկլորով լրջորեն զբաղվողի համար, քանի որ այն օգնում է ճիշտ հասկանալ մի այնպիսի բարդ երևույթ, ինչպիսին է ֆոլկլորը»<sup>29</sup>:

**АЭЛИТА ДОЛУХАНИЯН – Фольклорные жанры в сборнике «Тысяча и одна песнь», составленном Мануком Абегианом и Комитасом.**– Манук Абегиан продолжил важное дело, начатое великим просветителем Хачатуром Абовяном в период совместной работы с гениальным Комитасом в семинарии Геворкян, что во многом содействовало в вопросе передачи будущим поколениям народных песен.

М.Абегиан был выдающимся фольклористом: он прекрасно знал значимые произведения мирового фольклора и умело выбирал материалы, которые следовало записать и в каком именно лексическом варианте передать грядущим поколениям. Тем самым Абегиан способствовал преемственности народного художественного мышления, чему были посвящены не только являющие собой огромную ценность публикации оригиналов, но и теоретические и научные обоснования.

Составленный М.Абегианом и Комитасом песенник «Тысяча и одна песнь» является одним из памятников армянской культуры, имеющих непреходящую ценность.

**Ключевые слова:** М. Абегиан, Комитас, народный песенник, эпическая песнь, любовные песни, песни странника, крестьянин

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>29</sup> **Փահլևանյան Ա.**, (2018), Հայ երաժշտական ֆոլկլորագիտության արդի խնդիրները, Եր., «Ամրոց գրուպ» հրատ., էջ 28:

**AELITA DOLUKHANYAN – Folk Genres in the Collection "A Thousand and One Songs," Compiled by Manuk Abeghyan and Komitas.**– Manuk Abeghyan continued the important work begun by the great educator Khachatur Abovyan during his collaboration with the brilliant Komitas at the Gevorkian Seminary, which greatly contributed to the transmission of folk songs to future generations.

M. Abeghyan was an outstanding folklorist: he was perfectly familiar with significant works of world folklore and skillfully selected the materials that should be recorded and the precise lexical variant in which they should be transmitted to succeeding generations. Thus, Abeghyan promoted the continuity of folk artistic thought, a cause to which were devoted not only the immensely valuable publications of the originals but also the theoretical and scientific justifications.

The songbook "A Thousand and One Songs," compiled by M. Abeghyan and Komitas, is one of the monuments of Armenian culture, possessing enduring value.

**Key words:** *M. Abeghyan, Komitas, folk songbook, epic song, love songs, traveler's songs, peasant*

### Գրականության ցանկ

- «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարան, Խմբագրեցին Կոմիտասս և Մ.Աբեղյան, ՀՀ կենտրոնի հրատ., Երևան, 1969, 134 էջ [“Hazar u mi khagh”, Joghovrdakan ergaran, Khmbagretsins Komitas ev M.Abeghyan, HH Kentkomi hrat., Yerevan, 1969, 134p.]
- «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգերի ժողովածու, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2015, 213 էջ [“Hazar u mi khagh”, Joghovrdakan ergeri joghovatsu, “Zangak-97” hrat., Yerevan, 2015, 213p.]
- Asatryan A.G., Ohannes Tchekidjian: Life and Career, Antares, Yerevan, 2023, 487p. [Asatryan A.G., Ohannes Tchekidjian: Life and Career, Antares, Yerevan, 2023, 487p.]
- Кравцов Н.Н., Лазутин С.Г., Русское устное народное творчество, Изд. “Высшая школа”, Москва, 1983, 446с. [Kravtsov N.N., Lazutin S.G., Russkoe ustnoe narodnoe tvorchestvo, Izd. “Visshaya shkola”, Moskva, 1983, 446p.]
- Աբեղյան Մ., Երկեր, Է, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, 603 էջ [Abeghyan M., Erker, HSSH GAhrat., Yerevan, 1975, 603p.]
- Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանասիրություն, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2008, 226 էջ [Dolukhanyan A., Hay joghovrdakan banahyusutyun, “Zangak-97” Yerevan, 2008, 226p.]
- Դոլուխանյան Ա., Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2011, 222 էջ [Dolukhanyan A., Frederik Maklerժ hayaget, “Zangak-97”, Yerevan, 2011, 222p.]
- Թերլեմեզյան Ռ., Կոմիտասս, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1992, 146 էջ [Terlemezyan R., Komitas, HH GA hrat., Yerevan, 1992, 146p.]
- Կոմիտասս, Հոգևածներ և ուսումնասիրություններ, Հավաքեց Ռ.Թերլեմեզյան, Պետական հրատ., Երևան, 1942, 199 էջ [Komitas, Hodvatsner ev usumnasirutyunner, havakets R.Terlemezyan, Petakan hrat., Yerevan, 1941, 199p.]
- Սրվանձտյանց Գ., Երկեր, հ.1, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, 667 էջ [Srvanztyan G., Erker, h.1, HSSH hrat., Yerevan, 1978, 667p.]
- Փահլևանյան Ա., Հայ երաժշտական ֆոլկլորագիտության արդի խնդիրները, «Ամրոց գրուպ» հրատ., Երևան, 2018, 175 էջ [Pahlevanyan R., Hay erajstakan pholkboragitakan ardi khndirnerժ, Amrots grup. hrat., Yerevan, 2018, 175p.]

## ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԲԱՐՅԱՆ   
«Տաթև» գիտակրթական համալիր

Սույն հոդվածում տիպաբանորեն գնահատված ու համեմատված են արդի գրական արևելահայերենի գոյականի հոլովման համակարգի գիտական նկարագրության հինգհոլովական և յոթհոլովական կաղապարները, և փաստերով ու տրամաբանական վերլուծությամբ ցույց է տրված առաջինի ակնհայտ առավելությունները, ինչպես նաև երկրորդի բազում թերությունները: Այդ կաղապարները նաև զուգադրված են գրաբարի յոթհոլովական կաղապարի հետ, և ցույց է տրված, որ աշխարհաբարի նկարագրության յոթհոլովական կաղապարը գրաբարի, ինչպես նաև լատիներենի ու մասամբ ռուսերենի կաղապարների արհեստական, բռնի հարմարեցումն է, մինչդեռ հինգհոլովական կաղապարը անկախ է այլ լեզվական համակարգերի կաղապարներից և համարժեքորեն է արտացոլում արդի գրական արևելահայերենի գոյականի հոլովման համակարգը:

Եզրակացությունն այն է, որ անհրաժեշտ է կրթական համակարգում իսպառ հրաժարվել յոթհոլովական կաղապարից և վերականգնել հինգհոլովական կաղապարը արդի գրական արևելահայերենի համար:

Խնդիրն արդիական է ու հրատապ, քանի որ յոթհոլովական կաղապարը ոչ միայն հակագիտական է, այլև հարկադրում է խախտել մանկավարժական մի շարք սկզբունքներ ու պահանջներ:

Այս խնդիրը հայագիտության մեջ նոր չէ: Սակայն սույն վերլուծությունը կատարված է նորովի, գիտական վերլուծության տիպաբանական և կաղապարման եղանակներով, մի շարք նոր փաստարկների ներգրավմամբ:

**Բանալի բառեր** – գոյականի հոլովման համակարգ, գիտական կաղապար, հինգ հոլովի տեսություն, յոթ հոլովի տեսություն, հայցական հոլով, ուղիղ խնդիր, սեռական հոլով, տրական հոլով

\* **Հովհաննես Զաքարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, «Տաթև» գիտակրթական համալիր, լեզվաբանության բաժանմունքի ղեկավար

**Оганес Закарян** – кандидат филологических наук, доцент, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса «Тате́в»

**Hovhannes Zakaryan** – Candidate of Philological Sciences, Associate Professor, Head of the Linguistic Department of "Tatev" Center of Research and Education

Էլ. փոստ՝ [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com). ORCID ID: <https://orcid.org/0009-0000-8168-7622>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 02.02.2026

Գրախոսվել է՝ 09.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

## Ներածություն

Գրական աշխարհաբարի գիտական ուսումնասիրության և դասավանդման առաջին փորձերից սկսած՝ ծագել է հոլովման համակարգի գիտական կադապարման և կրթական համակարգում նպատակահարմար կիրառման խնդիրը: Գրական արևելահայերենի համար առաջարկվել են տարբեր կադապարներ, որոնցից առավել տարածվածն են հինգհոլովական<sup>1</sup> և յոթհոլովական<sup>2</sup> կադապարները: Ծագել են բանավեճեր դրանց առավելությունների ու թերությունների վերաբերյալ, երբեմն խնդիրը քաղաքականացվել է, մինչև անզամ բռնություններ, գաղափարախոսական ճնշումներ, վարչական լծակներ ու խարդավանքներ են գործադրվել հոգուտ յոթհոլովական կադապարի, որն այսօր կիրառվում է դպրոցական համակարգում: Ուստի կարիք կա այդ խնդրի նորովի արծարման:

<sup>1</sup> Հինգհոլովական կադապարը ներկայացնող առաջին աշխատությունն է՝ **Շրյոդեր Յ.** (1711): Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ: Հետագա աշխատություններից հատկանշական են՝ **Աբեդյան Մ.** (1906): Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ; **Աբեդեան Մ.** (1908): Աշխարհաբարի հոլովները, Վաղարշապատ; **Աբեդյան Մ.** (1909): Հայցական հոլովը մեր աշխարհաբարում, Վաղարշապատ; **Աբեդյան Մ.** (1985): Մի քանի քերականական խնդիրների մասին, Երկեր, հ. Ը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 578-580; **Պապոյան Ա.** (1964): Տեղաշարժեր հայերենի հոլովման հարացույցում // Պատմաբանասիրական հանդես, հմ. 4, էջ 61-80; **Շարաբխանյան Պ., Պիվազյան Է.** (1967): Արդի հայերենի հոլովների մասին // Պատմաբանասիրական հանդես, հմ. 4, էջ 115-134; **Բարսեղյան Հ.** (1967): Մանուկ Աբեդյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Եր., «Հայաստան»; **Զառուկյան Գ.** (1967): Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Եր.; **Իշխանյան Ռ.** (1971): Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Եր., Եր. հմլս. հրատ.; **Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.** (1974): Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.; **Ասատրյան Մ.** (1983): Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Եր., Եր. հմլս. հրատ.; **Աղայան Է., Բարսեղյան Հ.** (1994): Հայոց լեզու (դասագիրք V-VI դասարանների համար), Եր., «Լույս», **Աբաջյան Ա.** (2006): *Հայերենի հոլովական համակարգի ըմբռումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ*, Եր., ԵՊՀ հրատ.: Վերջին տասնամյակի հրապարակումներից են՝ **Ավետիսյան Յու., Զաբարյան Հ.** (2015): Ձևաբանություն, Եր., «Զանգակ-97»; **Ավետիսյան Յու.** (2024), Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Եր., «Զանգակ-97»:

<sup>2</sup> Յոթհոլովական կադապարը ներկայացնող հրապարակված առաջին աշխատությունն է՝ **Պապասանեան Մտ.** (1870): Ընդհանուր տեսություն արևելեան նոր գրաուր լեզուի հայոց, Թիֆլիս: Հետագա աշխատություններից հատկանշական են՝ **Մայխասեանց Մտ.** (1910): Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ, // «Նոր դպրոց», հմ. 1, էջ 44-51, Թիֆլիս; **Մայխասեանց Մտ.** (1909): Դարձեալ հայցական հոլովը // «Նոր դպրոց», հմ. 11, էջ 29-38; հմ. 12, էջ 46-62, Թիֆլիս; **Սևակ Գ.** (1955): Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., Եր. հմլս. հրատ.; **Ղարիբյան Ա.** (1960): Հայոց լեզու (դասագիրք միջնակարգ դպրոցի V-VII դասարանների համար), Եր., Հայպետուսմանկիրատ; **Մարգարյան Ալ.** (2000): Հայերենի հոլովները, Եր., ԵՊՀ հրատ.; **Խղաբոյան Ֆ.** (2006): Հայոց լեզու (դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար), Եր., «Զանգակ-97»: Վերջին տասնամյակի հրապարակումներից են՝ **Ներսիսյան Բ., Սահակյան Կ.** (2017): Յոթ հոլովի տեսությունը հիմնավորելու նոր մեթոդ // «Վեմ համահայկական հանդես», հմ. 3 (59), էջ 106-117; **Մեյրիխանյան Փ.** (2023): Հայոց լեզու (դասագիրք 7-րդ դասարանի համար), Եր., «Աստղիկ գրատուն»:

Մույն ուսումնասիրությունը տիպաբանական և անդրկադապարման եղանակներով կատարված մի նոր փորձ է՝ բացահայտելու յոթհոլովական կադապարի թերությունները և հինգհոլովական կադապարի առավելությունները թե՛ գիտական, թե՛ մանկավարժական տեսանկյուններից: Համակարգված են եղած փաստարկները, բերված են նոր փաստարկներ: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է մտցված հոլովների շուրջ բանավեճի չորրորդ փուլի պատմությունը<sup>3</sup>:

### Հետազոտության ընթացքը և արդյունքները

Լեզվաբանության առաջնային խնդիրը լեզվի կառուցվածքն ու գործառույթը համարժեքորեն ու ճշգրիտ նկարագրելն ու ձևայնացնելն է: Այդ նպատակով ստեղծվում են տեսություններ ու կադապարներ, որոնք տարբեր հաջողությամբ են արտացոլում ուսումնասիրվող բնօրինակի՝ տվյալ տեսակետից էական հատկությունները: Այդ հաջողվածության աստիճանը անդրկադապարման եղանակով գնահատելու չափանիշեր կան, ըստ որոնց՝ հետազոտվող առարկայի նկարագրության կադապարներից նախընտրելի է այն, որը՝

1. առավել համարժեքորեն է ներկայացնում իր ուսումնասիրության առարկան,
2. առավել պարզ է ու համառոտ,
3. առավել հետևողական է ու սպառիչ,
4. առավել անհակասական է ու հիմնավորված,
5. ունի բացատրական և կանխատեսող առավել մեծ ներուժ:

Այս չափանիշերի հիման վրա ստորև կգնահատենք արդի հայերենի հոլովական համակարգի նկարագրության կադապարները:

Ձևաբանությունը ուսմունք է քերականական **ձևերի** մասին, որոնք իմաստավորվում են կապակցությունների (վերջին հաշվով խոսքի) մեջ: Այդ իմաստավորման կանոններն ու օրինաչափություններն ուսումնասիրում է շարահյուսությունը՝ **կապակցությունների** մասին ուսմունքը<sup>4</sup>: Ձևաբանությունը որոշակի հատկանիշերով (ըստ քերականական կարգերի) դասակարգում է բառաձևերը **հարացույցների** տեսքով, իսկ շարահյուսությունը դասակարգում է բառաձևերի կապակցությունները **շարակարգերի** տեսքով: Հարացույցը ներկայացնում է այն ձևերը, որոնք իմաստավորվում են շարակարգում: Այսպիսով քերականական երկդիտվածք (երկպլան) միավորների **արտահայտության** դիտվածքով (ձևով, բառաձևերով) զբաղվում է ձևաբանությունը, **բովանդակության** դիտվածքով (նշանակություններով, պաշտոններով, դերերով, գործառույթներով)՝ շարահյուսությունը: Հենց սրանով էլ ձևաբանությունն ու շարահյուսությունը սահմանազատվում են միմյանցից և փոխլրացնում իրար ու միավորվում (համադրվում) քերականության մեջ:

<sup>3</sup> Առաջին երեք փուլերի նկարագրությունը տե՛ս **Աբացյան Ա.** (2006), նշվ. աշխ., էջ 290-360:

<sup>4</sup> Տե՛ս նաև **Աբեղյան Մ.** (1974): Երկեր, հ. 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 571:

Տրամաբանական է ենթադրել, որ երբ պայմանավորվում ենք ձևերը նշանակություններից առանձին ուսումնասիրել և ըստ քերականական կարգերի՝ խմբավորված դասակարգել, ապա այդ խմբավորումների (հարացույցների) մեջ

- չպետք է ձևեր բացակայեն (այնպիսի ձևեր, որոնք հանդիպում են շարակարգում),
- չպետք է կրկնվող ձևեր լինեն (անկախ գործառույթից),
- չպետք է անփոփոխակային<sup>5</sup> երկակի ձևավորումներ լինեն,
- չպետք է տարբեր հարացույցների պատկանող ձևերի բաղադրյալ համակցություններ լինեն:

Այլապես խախտված կլինեն տրամաբանությունը և գիտական սկզբունքները:

Հայերենում գոյականը (կամ գոյականաբար առնված բառը) հոլովական հարացույցում ունի 5 ձև (ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական, ներգոյական), թվային (թվակազմության) հարացույցում՝ 2 ձև (եզակի, հոգնակի), առման (առկայացման) հարացույցում՝ 2 ձև (անորոշ, որոշյալ), դիմային (դիմորոշության) հարացույցում՝ 3 ձև (առաջին, երկրորդ, երրորդ դեմք), ստացականության հարացույցում՝ 3 ձև (խոսողին, խոսակցին, երրորդ անձին պատկանող)<sup>6</sup>:

Կարելի է ասել՝ անվանական թեքման համակարգի առանցքը անվանական բառաձևերի, մասնավորապես հոլովաձևերի, թվարտահայտման, առկայացման, դիմորոշության և ստացականության ձևերի համակցված հարացույցն է: Որպես ձևաբանական կաղապարի՝ այդ հարացույցի (ինչպես և բայաձևերի հարացույցի) միավորները պետք է առանձնանան և միմյանց հակադրվեն նախ և առաջ իրենց **ձևերով**<sup>7</sup>: Հակառակ դեպքում դա կլինի կեղծ, արատավոր հարացույց, ձևաբանության ու շարահյուսության անտրամաբանական խառնուրդ-շիլաշփոթ:

Այդ բառաձևերից յուրաքանչյուրը կարող է ունենալ մեկ կամ ավելի շարահյուսական գործառույթ: Այդ գործառույթներն արտացոլվում են շարահյուսական պաշտոնների հարացույցում, որով ներկայացվում է, թե որ պաշտոնը

<sup>5</sup> Անփոփոխակը քերականական տվյալ կարգի որևէ եզրի դիրքային ու ազատ փոփոխակների ամբողջությունն է: Օրինակ՝ սեռական-տրական հոլովը անփոփոխակ է, որի դիրքային փոփոխակները (տարբերակներն) են հոլովման տիպերը (**ի, ու, վա, ան, ոչ** և այլն), իսկ ազատ փոփոխակները (տարբերակներն) են հոլովական ու հիմքային (այդ թվում՝ հնչյունափոխական) զուգաձևերը (*սկեսորոջ/սկեսուրի, ամառվա/ամռան, կամրջի/կամուրջի, էշի/իշի, բուխ/բլի* և այլն):

<sup>6</sup> Քերականական կարգը արտահայտության դիտվածքում իրարից տարբերվող և բովանդակության դիտվածքում որոշակի հատկանիշով միմյանց հակադրվող երկու կամ ավելի քերականական միավորների խմբերն են (տե՛ս նաև **Ջահուկյան Գ.** (1969): Հայոց լեզվի քարագսում ու կառուցվածքը, Եր., «Միտք», էջ 116-120):

<sup>7</sup> Դեռ Մ. Աբեղյանն է նշել. «Ի՞նչ է **հոլով** ասածը, եթե ոչ հոլովելի բառերի զանազան **ձևերը** (Form)», որ «ցույց են տալիս զանազան կախման հարաբերություններ» (**Աբեղյան Մ.** (2016): Երկեր, հ. Զ., Ե., էջ 571): «Հոլովը ձևի վրա է հիմնված. չկա առանձին ձև, չկա և առանձին հոլով» (էջ 645-646):

ինչ բառաձևերով է արտահայտվում: Որպես շարահյուսական կադապարի՝ այս հարացույցի միավորները պետք է առանձնանան և միմյանց հակադրվեն իրենց քերականական **խմաստներով**:

Այսպիսով թեքվող խոսքի մասերի բառաձևերի և շարահյուսական պաշտոնների հարացույցները փոխկապակցված են, լրացնում են միմյանց՝ կազմելով քերականական համակարգի միջուկը:

Արդի գրական արևելահայերենի թվակազմության, առկայացման, դիմորոշության և ստացականության հարացույցների առնչությամբ էական տարակարծություններ ու վեճեր չկան: Մինչդեռ լուրջ տարակարծություններ կան հոլովական հարացույցի առնչությամբ:

Արդի գրական արևելահայերենի հոլովական համակարգի նկարագրության կադապարներից ամենատարածվածը, իրար հետ մրցակցողը և իրար հակադրվողը երկուսն են՝ հինգհոլովական և յոթհոլովական:

Տիպաբանական առումով սրանցից առաջինը գուտ ձևաբանական է, քանի որ ստեղծվել է որպես հայերենի ձևաբանության մի բաղադրիչ: Երկրորդը նույնպես ներկայացվում է որպես ձևաբանական կադապար, սակայն ըստ էության ավելի շատ շարահյուսական է, քան ձևաբանական: Դրանում խառնված են վերոհիշյալ ձևաբանական և շարահյուսական հարացույցները:

Խնդիրն այն է, որ հինգհոլովական համակարգի կառուցման գործում առաջնային են հարացույցային ձևերը, իսկ դրանց գործառնություն ու իմաստները երկրորդային, հավելյալ չափանիշեր են: Մինչդեռ յոթհոլովական համակարգի կառուցման գործում առաջնային են մերթ իմաստները, մասնավորապես շարահյուսական պաշտոնները (ուղղական, սեռական, տրական, հայցական հոլովների համար), մերթ ձևերը (բացառական, գործիական, ներգոյական հոլովների համար)<sup>8</sup>, և այս անհետևողականության պատճառով այդ հարացույցն ունի հետևյալ թերություններն ու հակասությունները:

Ա. Յոթհոլովական հարացույցում կան միավորներ, որոնք միմյանցից չեն տարբերվում, չեն հակադրվում իրենց ձևով: Փաստորեն **հոլովաձևով նույնական** են սեռականը, տրականը և մասամբ հայցականը (անձի առման դեպքում), ուղղականն ու մասամբ հայցականը (իրի առման դեպքում): Այսինքն՝ այս չորս հոլովները փաստորեն չունեն իրենց առանձնահատուկ ձևերը, որոնցով կարողանային հակադրվել միմյանց: Եվ դա այն դեպքում, երբ հենց իրենք՝ յոթհոլովականներն ասում են, որ գոյականի՝ վերջավորություններ ստանալով կամ այլ կերպ «փոփոխությունը կոչվում է հոլովում», և «բառի հոլովման յուրաքանչյուր ձև կոչվում է հոլով»<sup>9</sup>: Այս ճիշտ հայտարարությանը հակասում է այն հանգամանքը, որ յոթհոլովական հարացույցի առաջին չորս հոլովները

<sup>8</sup> Տե՛ս, օրինակ, **Սևակ Գ.** (1955), նշվ. աշխ., էջ 264:

<sup>9</sup> **Ղարիբյան Ա.** (1960): Հայոց լեզու (դասագիրք V-VII դասարանների համար), Հայպետուսմանկիբատ, էջ 100:

միմյանց հակադրվում են ոչ թե ձևով, այլ իմաստով: Այս հանգամանքը հակասում է ձևաբանական հարացույցի կառուցման սկզբունքին: Հետևաբար 7 հոլովի հարացույցը հակասական է և արատավոր: 5 հոլովի հարացույցը զերծ է այս արատից:

Բ. Յոթհոլովական համակարգում բոլոր, նույնիսկ յուրահատուկ ձևով առանձնացող հոլովների համար (բացառական, գործիական, ներգոյական) սահմանված են այսպես կոչված **հիմնական կամ բնորոշ իմաստներ** (հոլովական իմաստներ), որոնք հաճախ կամայական են ու ինքնանպատակ: Օրինակ՝ ներգոյականի համար որպես սահմանում նշվում է. «Ներգոյական հոլովը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կամ որի ներսում կատարվում է գործողությունը»<sup>10</sup>: Բայց սահմանումից դուրս պարզվում է, որ «ներգոյական հոլովը ցույց է տալիս նաև այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կամ երբ կատարվում է գործողությունը»<sup>11</sup>: Չկա գիտական չափանիշ՝ որոշելու համար, թե այս երկու գործառնություններից որն է «հիմնական»: Մանավանդ որ գործողության տեղ և ժամանակ «ցույց են տալիս» նաև այլ հոլովներ: Նույնիսկ ուղղական հոլովի համար չի կարելի պնդել, թե «ցույց է տալիս մի բան անող կամ լինող առարկան»<sup>12</sup>: «Գարենը խնձոր է ուտում» նախադասության մեջ **Գարենը** մի բան անողն է (ուտողը), իսկ **խնձոր**-ը՝ մի բան լինողը (ուտվողը): Ըստ սահմանման՝ երկուսն էլ ուղղական հոլովով են (մանավանդ որ ուղիղ ձևով են), բայց համարվում է, որ **խնձոր**-ը հայցական հոլով է՝ ելնելով պաշտոնից (իմաստից): «Բողարը շուն է» նախադասությունը չունի տվյալ դեպքում ո՛չ «մի բան անող», ո՛չ էլ «մի բան լինող» առարկա, բայց երկու բառ ուղղական հոլովով են: Հակասություններ բացահայտող նման վերլուծությունները կարելի է երկար շարունակել: Մի բան պարզ է, որ բոլոր պաշտոնները հոլովների սահմանումներում տեղավորելը գրեթե անհնար է ու անիմաստ, ուրեմն հոլովաձևերը իմաստով որոշելն ու սահմանելը մի որոգայթ է, բավիղ, որից մաքուր դուրս գալ հնարավոր չէ:<sup>13</sup> Այդ բավիղում փակուղի է մտել Գ. Սևակը՝ գրելով. «Բառարանի մեջ այբբենական կամ որևէ այլ կարգով դրված բառերը, կոչական անունները և այլն նույնպես ուղիղ ձևով են լինում, թեև ուղղական հոլով չեն, քանի որ համապատասխան հոլովական իմաստ չունեն»<sup>14</sup>: Այսինքն՝ Գ. Սևակը կոչականը (նաև խոսքից

<sup>10</sup> Մեյթիխանյան Փ. (2023): Հայոց լեզու (դասագիրք 7-րդ դասարանի համար), Եր., «Ասողիկ», էջ 55:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Աղայան Է., Բարսեղյան Հ. (1970): Հայոց լեզու (դասագիրք V-VII դասարանների համար), Եր., «Լույս», էջ 98:

<sup>13</sup> Հոլովները պաշտոններով սահմանելը եղել է խորհրդային գաղափարախոսական պարտադրանք է, որը, կարծրատիպի վերածված, կրկնվում է յոթհոլովական դասագրքից դասագիրք, հեղինակից հեղինակ (Ղարիբյան, Աղայան-Բարսեղյան) ու շարունակվում է նաև այժմ (Խլղաթյան, Մեյթիխանյան):

<sup>14</sup> Սևակ Գ. (1955), նշվ. աշխ., էջ 260:

դուրս գոյականը) համարել է այնպիսի բառաձև, որ ոչ մի հոլովի չի պատկանում:

Գ. Յոթհոլովական հարացույցում կա միավոր (հայցական հոլովը), որն ունի **երկակի ձևավորում** (մերթ նույնանում է ուղղականին, մերթ՝ տրականին և կամ սեռականին): Մա ևս մի հանգամանք է, որ հակասում է ձևաբանական հարացույցի կառուցման սկզբունքին: Երկակի ձևավորումը բնորոշ է ուղիղ խնդրին: Ուղիղ խնդիրը պաշտոն է՝ շարահյուսական միավոր, որն իրավունք չունի տեղ գտնելու ձևաբանական հարացույցում: Դրանով խախտվում է լեզվի կառուցվածքային մակարդակների ու ենթամակարդակների աստիճանակարգությունը. հոլովն ու պաշտոնը նույնանում են՝ ստեղծելով արատավոր շրջան. հոլովը բացատրվում է պաշտոնով, պաշտոնը՝ հոլովով: 5 հոլովի հարացույցը զերծ է այս արատից ևս:

Դ. Պաշտոնի հիման վրա երկակի ձևավորմամբ հոլով ընդունելը ոչ միայն հակասում է ձևաբանական հարացույցի կառուցման սկզբունքին, այլև անհետևողականության ևս մի ճշացող դրսևորում է: Շարահյուսական ուրիշ պաշտոններ էլ կան, որ ունեն երկակի (կամ եռակի, քառակի, հնգակի) ձևավորում, բայց որպես առանձին հոլովներ՝ ընդգրկված չեն յոթհոլովական հարացույցում: Այսինքն՝ սկզբունքը, թեկուզ արատավոր, կիրառված է խիստ ընտրողաբար ու կամայական: Նպատակը՝ արդարացնել սեփական ձև չունեցող հայցական հոլովի առկայությունը հարացույցում: Ի դեպ, արևմտահայերենում նույնիսկ այս հակասական սկզբունքը չի գործում հայցական հոլով առանձնացնելու համար, քանի որ արևմտահայերենում ուղիղ խնդիրը երկակի ձևավորում չունի (միայն ուղղականաձև է): Բայց անգամ դա չի խանգարել, որ արևմտահայերենի ՀԽՍՀ-ում յոթհոլովականների կազմած դպրոցական դասագրքում տեղ գտնի հայցական հոլովը<sup>15</sup>:

Ե. Հայցականը համարվում է ոչ միայն ուղիղ խնդրի, այլև դրա արտահայտած հարաբերության՝ «գործողությունը իր վրա կրողի» հոլովը<sup>16</sup>: Այս պնդումը հանգեցնում է անփարատելի հակասության: Խնդիրն այն է, որ **«գործողությունը իր վրա կրող»** լինում է նաև ենթական կրավորական կառույցում (*Պուշկինը սպանվեց մենամարտում*): Էլ չենք ասում մասնական ուղիղ խնդրի մասին, որ ձևավորվում է բացառականով: Նույն սկզբունքով ուղղականը համարվում է «գործողություն կատարողի» հոլով: Բայց գործողություն կատարողը՝ որպես ներգործող խնդիր, կարող է ձևավորվել թե՛ բացառականով, թե՛ գործիականով, թե՛ կապական կառույցով, թե՛ անգամ սեռական-տրականով:<sup>17</sup> Ուրեմն ոչ թե շարահյուսական պաշտոնով պետք է որոշել հոլովը, այլ հոլովաձևի շարահյուսական կիրառություններով պետք է որոշել նախադասության անդամի

<sup>15</sup> Տե՛ս Աբրահամեան Ս., Վերդեան Բ., Քոսեան Վ. (1968): Հայերեն լեզուի դասագիրք, Եր., «Լոյս», էջ 75-76:

<sup>16</sup> Տե՛ս Մեյթիխանյան Փ. (2023), նշվ. աշխ., էջ 48:

<sup>17</sup> Տե՛ս նաև Աբեղյան Մ. (1974): Երկեր, հ. 2, էջ 677-684:

պաշտոնը: Ընդ որում՝ ամեն հոլով կարող է ձևավորել տարբեր պաշտոններ, և ամեն պաշտոն կարող է ձևավորվել տարբեր հոլովներով: Հոլով որոշելիս առաջնային չափանիշը առանձնահատուկ ձևն է, պաշտոն որոշելիս՝ առանձնահատուկ քերականական իմաստը (գործառույթը): Այս սկզբունքը հետևողականորեն կիրառված է 5 հոլովի համակարգում և բազմիցս խախտված է 7 հոլովի համակարգում:

Զ. Հայցական հոլովի հետ կապված ևս մի անհետևողականություն կա: Հայցականը համարվում է ուղիղ խնդրի հոլով՝ երկակի ձևավորմամբ, բայց կամայականորեն հայցական են համարվում նաև ուղղականաձև ժամանակի, տեղի և չափի պարագաները, որոնց երկակի ձևավորման մասին խոսելն անիմաստ է, քանի որ նույն պաշտոնների սեռական-տրականաձև դրսևորումները համարվում են տրական հոլով<sup>18</sup>: Սա խառնաշփոթի ու հակասությունների հանգեցնող կամայականություն է: Հինգհոլովական համակարգն այդ տեսակետից անթերի է:

Է. Հայերենի հոլովական համակարգում ընդհանրապես հակադրվում են մի կողմից՝ **ուղիղ** (չձևավորված) հոլովը՝ ուղղականը, մյուս կողմից՝ **թեք** (ձևավորված) հոլովները, «որոնք կազմվում են զանազան փոփոխություններով»<sup>19</sup>: Այս հակադրությունը, ինչպես տեսնում ենք, ընդունում են նաև յոթհոլովականները՝ չնկատելով իրենց տեսության մեջ դրա հետևանքով առաջացող անհետևողականությունն ու հակասականությունը: Հայցականը նրանք համարում են թեք հոլով, մինչդեռ իրի առումով հայցականը նույն ձևն ունի, ինչ ուղղականը, այսինքն՝ որևէ կերպ փոփոխված՝ թեքված չէ, ուղիղ ձև է, չունի որևէ հոլովակերտ թեքույթ: Մնում է ենթադրել, որ ըստ նրանց՝ դա իմաստով է «թեք»: Ահա այսպիսի անհեթեթ իրավիճակներ են առաջանում, երբ գիտական հավակնությամբ դասակարգումը կատարվում է ոչ գիտական հիմունքներով: Ի դեպ, այս հակասությունը սկսվել է Գ. Սևակից<sup>20</sup>, մինչդեռ Ստ. Պալասանյանը հայցականը միավորել է մերթ ուղղականին (իրի առման դեպքում), մերթ տրականին (անձի առման դեպքում)<sup>21</sup>: Այս կարգի հակասությունից զերծ է հինգհոլովական համակարգը:

Ը. Յոթհոլովական հարացույցում գոյականի սեռական (հատկացուցիչի) և տրական (հանգման խնդրի) հոլովների տարբերակման հիմքում դրված է ոչ հոլովական հատկանիշ: Դա այն է, որ գոյականի սեռական հոլովը **որոշիչ հող** չի ստանում, իսկ տրականը ստանում է<sup>22</sup>: Հող չառնելու այս հատկանիշն իրականում բնորոշ է ոչ միայն հատկացուցիչին, այլև շարահյուսական մի շարք այլ պաշտոնների (չափ ու քանակի պարագա, գոյական որոշիչ ևն), և դա

<sup>18</sup> Տե՛ս **Մեյթիխանյան Փ.** (2023), նշվ. աշխ., էջ 48-49:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>20</sup> Տե՛ս **Սևակ Գ.** (1955), նշվ. աշխ., էջ 259-265:

<sup>21</sup> Տե՛ս **Պալասանեան Ստ.** (1870), նշվ. աշխ., էջ 22-38:

<sup>22</sup> Տե՛ս **Մեյթիխանյան Փ.** (2023), նշվ. աշխ., էջ 44, 48:

չպետք է դառնար հոլովների տարբերակման հիմք այն էլ անհետևողականորեն ու կամայականորեն: Այլապես եթե այս արատավոր սկզբունքը հետևողականորեն ու սպառիչ կիրառվի, ապա հարկ կլինի ընդունելու նաև առնվազն կոչական հոլով, քանի որ կոչականը, ի տարբերություն ենթակայի ու ստորոգելիի, որոշիչ հոդ չի վերցնում: Ուրեմն այդ հնարավոր կոչական հոլովն ուղղականից (ենթակայի հոլովից) կտարբերակվի ճիշտ այնպես, ինչպես սեռականը՝ տրականից<sup>23</sup>: Այս սկզբունքը, թեկուզ անհետևողականորեն ու հակասականորեն, կիրառվել է միայն ու միայն գոյականի սեռական հոլովի գոյությունն արդարացնելու նպատակով: Ի դեպ, արևմտահայերենում նույնիսկ այս հակասական սկզբունքը չի գործում գոյականի սեռական ու տրական հոլովների տարբերակման համար, քանի որ արևմտահայերենում հատկացուցիչը կարող է որոշիչ հոդ ստանալ: Բայց անգամ դա չի խանգարել, որ արևմտահայերենի՝ ՀԽՍՀ-ում կազմված վերոհիշյալ դասագրքում առանձնացվեն գոյականի սեռական ու տրական հոլովները<sup>24</sup>: Հինգհոլովական համակարգում հոլովաձևերի որոշման ու դասակարգման ձևաբանական սկզբունքի այսպիսի խախտում չկա<sup>25</sup>:

Թ. Յոթհոլովական համակարգում անհետևողականություն կա նաև կապի խնդիրների **հոլովառություն** որոշման հարցում: Առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանունից տրական հոլով պահանջող կապերի մի մասի (*մոտ, վրա, հետ, պես, համար, նման*) անհոդ գոյական խնդիրները համարվում են սեռական հոլով, իսկ մյուս մասինը (*առանց, ըստ, համաձայն, ընդդեմ, հանուն, հոգուտ* են)՝ տրական հոլով<sup>26</sup>: Այս խառնաշփոթ տարբերակումը տրամաբանական բացատրություն չունի:

Ժ. Յոթհոլովական տեսության մեջ ընդունված է ասել՝ իբր **կապի խնդիրն ուղղական և ներգոյական հոլովներով** չի լինում<sup>27</sup>: Սա սխալ ու կամայական պնդում է: Իրողությունն այն է, որ *իբրև, որպես* կապերով ձևավորված մասնական բացահայտիչը իրականում կարող է լինել ցանկացած հոլովով՝ ներառյալ ուղղականն ու ներգոյականը: Ընդ որում՝ մասնական բացահայտիչը հոլովով և թվով համաձայնում է իր լրացյալի հետ՝ փաստորեն դառնալով իր լրացյալի

<sup>23</sup> Գ. Սևակը կոչական հոլովը մերժել է այն ոչ տեղին պատճառաբանությամբ, թե իբր կոչականը «բառահարաբերություն չունի և նախադասության կազմի մեջ չի մտնում» (**Սևակ Գ.** (1955), նշվ. աշխ., էջ 264-265)՝ մոռանալով, որ կոչական գերադաս անդամով հաճախ ձևավորվում են միակազմ նախադասություններ՝ անգամ պարունակելով ստորադասական երկկազմ նախադասություններ:

<sup>24</sup> Տե՛ս **Աբրահամեան Ս., Վերդեան Բ., Քոսեան Վ.** (1968), նշվ. աշխ., էջ 77-79:

<sup>25</sup> Արդի հայերենում սեռական և տրական հոլովների նույնության մասին հանգամանորեն տե՛ս **Աբեղյան Մ.** (1974): Երկեր, հ. 2, էջ 582-638:

<sup>26</sup> Տե՛ս **Մեյթիխանյան Փ.** (2023), նշվ. աշխ., էջ 50-51:

<sup>27</sup> Տե՛ս **Խլդարյան Ֆ.** (2007): Հայոց լեզու (դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար), Եր., «Զանգակ-97», 2007, էջ 91:

կրկնությունը՝ որպես պարզաբանում, այսինքն՝ սովորաբար ունենում է քերականական նույն հատկանիշերը (բացի առկայացումից), ինչ լրացյալը: Հետևաբար երբ գոյականի ուղիղ ձևով դրված մասնական բացահայտիչը հոլովով և թվով համաձայնում է իր լրացյալ ենթակայի հետ (*Դավիթն ու Անին որպես հավատացյալ քրիստոնյաներ, վաղուց կնքված են*), ապա չենք կարող չընդունել, որ ձևավորված է ուղղական հոլովով: Ավելի ակնհայտ է ներգոյական հոլովով մասնական բացահայտիչի հարցը (*Կենդանիների և բույսերի կյանքի պայմանները* Հայաստանում՝ **որպես լեռնային երկրում, կախված են տեղի բարձրությունից**): Նկատենք նաև, որ կապի՝ ուղիղ ձև ունեցող մյուս խնդիրները յոթհոլովականները հախուռն կերպով համարում են հայցական հոլով՝ նույն պատճառաբանությամբ, թե դրանք չեն կարող ուղղական լինել: Փաստորեն դարձյալ գործ ունենք լեզվական իրողությունների հետ, որ համարժեքորեն արտացոլված չեն յոթհոլովական տեսության մեջ: Հինգհոլովական համակարգը միանգամայն համարժեքորեն է արտացոլում նշված իրողությունները ևս:

Ժա. Դերանվանական հոլովման համակարգում սեռականի ու տրականի տարբերակումն արդարացնելու նպատակով որպես սեռական հոլովաձևեր են ներկայացվել **ստացական** դերանունները, որոնց գործառույթը հատկացուցիչ ձևավորելն է: Մինչդեռ հոլովները պաշտոններով չպայմանավորելու դեպքում ստացական դերանունները կմնային իրենց տեղում (ինչպես, օրինակ՝ ռուսերենում, անգլերենում), իսկ դերանվանական հոլովման համակարգն արհեստականորեն չէր ուռճացվի:

Ժբ. Կա ևս մի հակասություն՝ կապված ստացականության հետ: Ունենք ստացական հոդեր, որոնց համարժեք դերանունները, փոխանակ ստացական կոչվելու, համարվում են անձնական կամ ցուցական դերանունների սեռական հոլովաձևեր: Բայց ակնհայտ է, որ ստացական հոդերն ու ստացական դերանուններն ազատորեն փոխարինում են միմյանց: Ուրեմն երկուսն էլ նույնատեսակի լինեն: Հիշենք, որ այլ լեզուներում (ռուսերեն, անգլերեն ևն) ստացական դերանուններն առանձին խումբ են (ռուս. притяжательные местоимения: **мой** (-я, -ѐ, -и), **твой** (-я, -ѐ, -и), **его** (е), **наш** (-а, -е, -и), **ваш** (-а, -е, -и), **их**, **свой** (-я, -ѐ, -и); անգլ. possessive pronouns: **my**, **your**, **his** (her, its), **our**, **your**, **their**, **whose** [փոխանվանաբար՝ **mine**, **yours**, **his** (hers, its), **ours**, **yours**, **theirs**, **whose**]; ֆր. les pronoms possessifs: **mon** (ma), **ton** (ta), **son** (sa), **notre**, **votre**, **leur**):

Ինչպես տեսնում ենք, գիտական կադապարների գնահատման վերոհիշյալ բոլոր չափանիշերով հինգհոլովական համակարգը նախընտրելի է, քանի որ՝

1. միանգամայն համարժեքորեն է ներկայացնում լեզվական իրողությունները,
2. հնարավորինս պարզ է ու համառոտ,
3. միանգամայն հետևողական է ու սպառիչ, անպատասխան հարցեր չի թողնում,

4. լիովին անհակասական է ու հիմնավորված,
5. ունի բացատրական մեծ ներուժ:

Մինչդեռ յոթհոլովական համակարգը նույն չափանիշերով մերժելի է, քանի որ՝

1. անհամարժեք է ներկայացնում լեզվական մի շարք իրողություններ, մասնավորապես 7 հոլովի հարացույցն ընդօրինակված է գրաբարից, լատիներենից ու մասամբ ռուսերենից և բռնի «հարմարեցված» է արդի հայերենին, ինչի պատճառով հոլովների թիվը 5-ից հասցված է 7-ի, խառնված են ձևաբանական ու շարահյուսական իրողությունները, հոլովակերտ մասնիկներն ու հոդերը, կամայական տարանջատումներ ու սահմանափակումներ են մտցված կապերի հոլովառության համակարգում և այլն,

2. արհեստականորեն ուռճացված է, բարդացված, խճճված, պահանջում է երկար-բարակ բացատրություններ, շարահյուսական և այլ գիտելիքների վաղաժամ ներգրավում, խախտված է լեզվի կառուցվածքային մակարդակների ու ենթամակարդակների աստիճանակարգությունը,

3. անհետևողական է ու ոչ սպառիչ, մասնավորապես սահմանված են արատավոր, ոչ գիտական սկզբունքներ (հոլովի երկակի ձևավորման և նույնաձև հոլովների հնարավորություն, հոլովների տարբերակում ոչ հոլովական հատկանիշերով՝ հոդով ու պաշտոնով, բառի ուղիղ/թեք (չփոփոխված/փոփոխված) ձևերի տարբերակում ոչ թե ըստ ձևի, այլ ըստ իմաստի), և այդ սկզբունքները կիրառված են ընտրողաբար, քմահաճորեն ու կամայականորեն, անպատասխան են թողնված մի շարք հարցեր (կոչական հոլովի և ստացական դերանունների խնդիրը, պաշտոնների մի մասի համար հոլով առանձնացնելը, մյուս մասի համար՝ ոչ, կոչականը ոչ թե ինքնուրույն կամ հայցական, այլ ուղղական հոլով համարելը<sup>28</sup>, ուղղականաձև ու սեռական-տրականաձև անուղղակի խնդիրների ու պարագաների հոլովի որոշման պատճառաբանությունը և այլն),

4. բավարար հիմնավորված ու համոզիչ չէ, ունի բազմաթիվ անլուծելի հակասություններ, մասնավորապես հոլովը՝ պաշտոնով, պաշտոնը հոլովով հիմնավորելու արատավոր շրջանը, բառի ուղիղ ձևը մերթ ուղիղ (ուղղական), մերթ թեք (հայցական) համարելը, նույն հոլովակերտով բառաձևերը մերթ սեռական, մերթ տրական, մերթ հայցական համարելը, հոլովման ու հոլովի սահմանման (ըստ ձևի) և դասակարգման (ըստ իմաստի) անհամապատասխանությունը, հոլովների մի մասն՝ ըստ ձևի, մյուս մասն ըստ իմաստի առանձնացնելը և այլն,

<sup>28</sup> Կոչականը նախադասության մեջ կարող է նույնանալ մերթ գործողություն կատարողին (*Տղա՛ ջան, ո՛ր ես գնում*), մերթ կրողին (*Հայրի՛կ, մենք սիրում ենք քեզ*), մերթ նրան, ում հանգում է գործողությունը (Անի՛, քեզ մոտեցողն ո՞վ էր), մերթ հատկացուցիչին (*Արմե՛ն, սա քո՞ գիրքն է*), մերթ պարզապես խոսքի հասցեատիրոջը, որը բուն խոսքի մեջ բացակայում է (*Երեխանե՛ր, այսօր ուրբաթ է*), և այլն:

5. կադում է բացատրական ներուժը, մասնավորապես թույլ չի տալիս ըստ էության հասկանալու՝ ինչ են հոլովաձևը, հոլովն ու հոլովունը, ինչով են դրանք տարբերակվում միմյանցից և սահմանազատվում ձևաբանական ու շարահյուսական այլ կարգերից, չի բացատրում, թե ինչու է, օրինակ, ներգոյական հոլովը համարվում տեղի պարագայի հոլով, երբ դրանով ոչ պակաս հաճախ ձևավորվում է նաև ժամանակի պարագան, և բազում նմանատիպ դեպքեր:

Յոթհոլովական տեսությունն այնքան է խճճված, որ դրանից մինչև վերջ գլուխ չեն հանում նույնիսկ դրա մոլի ջատագով մասնագետները: Մխալներ կարելի է տեսնել դեռ Ա. Ղարիբյանի ու Գ. Սևակի հրապարակումներում, և որոնք ժամանակին բացահայտել է Մ. Աբեղյանը: Նույն թերությունը կարելի է տեսնել, օրինակ, Ֆ. Խլղաթյանի դպրոցական դասագրքում, որտեղ սխալներով է տրված կապերի հոլովառությունը<sup>29</sup>, խառնված են սեռականի ու տրականի սահմանները: Խառնաշփոթ կա նաև Փ. Մեյթիխանյանի դասագրքերում:

Տպավորություն է ստեղծվում, որ 7 հոլովի ջատագովները չեն կարողացել հաշվել, թե քանի հոլովաձև ունի գոյականը: Դրա պատճառն այն չէ, որ նրանք թվաբանությունից թույլ են եղել, այլ այն է, որ նրանք հայերենում ցանկացել են ամեն գնով տեսնել հենց 7 հոլով, քանի որ այդքան հոլով ունի լատիներենը, և այդ 7-ից առնվազն 6-ն ունի նաև գրաբարը: Իսկ ներկայիս ջատագովների համար ավելի վճռական պատճառն այն է, որ նրանք ուզում են տեսնել այն, ինչ իրենք սովորել են դպրոցում, ինչը վերածվել է կարծրատիպի:

Իսկ ում և ինչու է պետք եղել սեռական ու հայցական հոլովների պարտադիր գոյությունը արդի հայերենում: Այս խնդրի արմատների բացահայտումը տանում է դեպի քաղաքական ու անձնական հաշիվներ, «դասակարգային» հակամարտություն, գաղափարախոսական սահբեկչություն:

Արդի արևելահայերենի համար 7 (կամ ավելի) հոլով ընդունել են դեռ Խ. Աբովյանը<sup>30</sup>, Ստ. Պալասանյանը<sup>31</sup>՝ փորձելով պահպանել գրաբարյան ավան-

<sup>29</sup> Տե՛ս Խլղաթյան Ֆ. (2004): Հայոց լեզու (6-րդ դաս.), էջ 123:

<sup>30</sup> Խ. Աբովյանն աշխարհաբարի քերականությունը ներկայացրել է իր «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից» աշխատության երկրորդ մասում, որը հեղինակին չի հաջողվել հրատարակել: Դա առաջին անգամ տպագրվել է ստեղծումից 110 տարի անց (Աբովյան Խ. (1950): Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 113-164): Այս գրքում գրաբարի գոյականի համար տրված է 10 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական, ներգոյական, կոչական: Աշխարհաբարի գուգահեռ համարժեքները հեղինակը թողել է, որ աշակերտն ինքը կազմի: Գրաբարի և աշխարհաբարի (ըստ էության՝ Արարատյան բարբառի) թեքվող դերանունների համար տրված է յոթ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական (էջ 125-137):

<sup>31</sup> Ի դեպ, Ս. Պալասանյանը թեև հայտարարել է, թե աշխարհաբարն ունի յոթ հոլով, սակայն հարացույցներում նույնաձև հոլովները ներկայացրել է միասին՝ մեկ տողով՝ ուղղականը հայցականի հետ, սեռականը տրականի հետ, ինչի արդյունքում գոյականի հարացույցները

դույթը՝ ավելացրած ներգոյականը, բայց փաստորեն ակամա մեղանշելով գիտական այն սկզբունքի դեմ, որ չի կարելի լեզվական որևէ համակարգի նկարագրության կադապարը մեխանիկորեն ընդօրինակել լեզվական մեկ այլ համակարգի համար<sup>32</sup>: Իսկ տվյալ դեպքում գրաբարն ու աշխարհաբարը տարբեր համակարգեր են, և մասնավորապես նրանց հոլովական հարացույցները բնավ նույնական չեն: Ակնհայտ է, որ գրաբարի համեմատ աշխարհաբարում սեփական նախկին ձևը կորցրել է հայցականը, և ձևով նույնացել են սեռականն ու տրականը: Հենց դա նկատի ունենալով՝ դեռ 1711 թ. լույս տեսած իր «Արամեան լեզուին գանձ» գրքում գերմանացի հայագետ Յ. Շրյոդերը, չունենալով կարծրատիպեր ու նախապաշարումներ, կաշկանդված չլինելով սովորույթով, աշխարհաբարի գոյականի համար առարկայորեն (օբյեկտիվորեն) ու համարժեքորեն արձանագրել է 5 հոլով: Եվրոպական բարձրակարգ կրթություն ստացած և խորագետ մտածող Մ. Աբեդյանը՝ արևելահայերենի քերականագիտության ինքնատիպ շրջանի (ի հակադրություն նախորդ՝ գրաբարատիպ շրջանի<sup>33</sup>) հիմնադիրը, 20-րդ դ. առաջին տասնամյակում գիտականորեն մշակեց ու տեսականորեն հիմնավորեց հինգ հոլովի համակարգ-կադապարը, որը նույնպես առարկայորեն ու համարժեքորեն է արտացոլում լեզվական իրողությունները: Այդ համակարգը մտավ նաև դպրոց:

Եվ ահա Խորհրդային Հայաստանում ի սկզբանե (մինչև 1932 թ.) կիրառվում էր Մ. Աբեդյանի՝ դեռևս նախախորհրդային տարիներին մշակված տեսությունը: Հետևաբար խորհրդային տարիներին լեզվաբանության ասպարեզ մտած

ներկայացնում են հինգական հոլովաձևեր (**Պալասանեան Մտ.** (1870): Ընդհանուր տեսությին ..., էջ 22-38): Փաստորեն հեղինակը մեքենաբար վերցրել է գրաբարի հոլովների անունները, սակայն աշխարհաբարի հոլովման իրական պատկերը ներկայացրել է հինգանդամ հարացույցով:

<sup>32</sup> Դեռ 1906-ին Մ. Աբեդյանը «Աշխարհաբարի քերականութեան» առաջաբանում դժգոհել է. «Մեր քերականութիւնները մինչև այժմ մեծ մասամբ օտար քերականութիւնների ընդօրինակութիւն են, որոնց բոլորի համար «լատիներէն լեզուն Պրոկրուստէսի անկողինն է եղել, որի վրայ նոր լեզուները ծայրատել են կամ բռնի կերպով քաշքշելով երկարացրել» (Վաղարշապատ, 1906, էջ Գ): Այդ մասին տե՛ս նաև **Աբեդյան Մ.** (1985): Երկեր, հ. Ը, էջ 576, 579: Մ. Աբեդյանը իր «Մի քանի քերականական խնդիրների մասին» աշխատության մեջ բացահայտել է նաև ռուսերենի քերականության ազդեցությունը յոթհոլովական տեսության վրա (տե՛ս Երկեր, հ. Ը, էջ 578-580): Դա ակնհայտ է մասնավորապես հայցական հոլովի առանձնացումը ուղիղ խնդրի գործոնով հիմնավորելիս: Ռուսերենի դեպքում դա հարկադրական քայլ է, քանի որ ռուսերենի գոյականների մի մասն ունի հայցականի ուրույն ձև, իսկ մյուս մասը չունի ու նույնանում է մերթ ուղղականին, մերթ սեռականին կամ տրականին, և տարբերակել հնարավոր է միայն պաշտոնով: Մինչդեռ արդի հայերենում դա ավելորդ ու անիմաստ քայլ է, քանի որ ոչ մի գոյական չունի հայցականի ուրույն ձև, այսինքն՝ արդի գրական արևելահայերենը չունի հայցական հոլով ընդհանրապես: Սակայն եղել են մասնագետներ (Մ. Մալխասյանց, Գ. Սևակ, Ա. Ղարիբյան ևն), որոնք պնդել են, թե հայերենում հայցականի պահպանումն անհրաժեշտ է հայախոսներին ռուսերենի քերականության ուսուցմանը նախապատրաստելու համար նաև (այդ մասին տե՛ս նաև **Աբեդյան Մ.** (1974): Երկեր, հ. Զ, էջ 580-581):

<sup>33</sup> Արևելահայերենի քերականագիտության այս շրջանաբաժանման (գրաբարատիպ և ինքնատիպ) մասին տե՛ս **Ջահուկյան Գ.** (1969): Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, էջ 69-91:

ջահել մասնագետները (Ս. Ղարիբյան, Գ. Սևակ ևն) իրենց ժամանակների մտածելակերպով լրիվ հիմքեր ունեին իրենց համարելու հեղափոխության առաջամարտիկներ, իսկ Մ. Աբեղյանին՝ բուրժուական վերապրուկ: Եվ իբրև հեղափոխականներ՝ նրանք անցյալ դարի 30-ականներին վարչարարական եղանակներով գործածությունից հանել տվեցին 5 հոլովի հարացույցը (այլև բայակենտրոն տեսությունը և այլն): Նրանք նախ քննադատական հողվածներ, ավելի ճիշտ՝ պարսավագրեր հրապարակեցին Մ. Աբեղյանի տեսության դեմ, այնուհետև պետականորեն հաստատել տվեցին կրթության նոր ծրագիր՝ 7 հոլովով, և գրեցին ու շրջանառության մեջ մտցրին այդ ծրագրով կազմած իրենց դասագրքերը: Ու քանի որ Մ. Աբեղյանը գիտական նոր խոսք ասելու տեղ չէր թողել, ստիպված էին որպես նոր խոսք ներկայացնել գրաբարի հոլովման հարացույցի նորացված (իրականում մի կերպ հարմարեցրած) տարբերակը (Պալասանյանից շատ ավելի գրաբարատիպ ու ծայրահեղացված տեսքով), որտեղ միանգամայն ինքնուրույնացված կան սեռական և հայցական հոլովները: Բայց եթե այդ հոլովները գրաբարում թեկուզ մասնակիորեն ունեն իրենց յուրահատուկ ձևը, ապա աշխարհաբարում բնավ չունեն: Ուստի «հեղափոխականները» հարկադրված էին հակագիտական, անտրամաբանական միջոցներով իբր «հիմնավորելու», արդարացնելու դրանց գոյությունը: Եվ քանի որ այդ կեղծ հարացույցը հիմնված էր առավելապես քերականական իմաստների ու շարահյուսական պաշտոնների վրա, իսկ 5 հոլովական հարացույցը՝ բառաձևերի (հոլովաձևերի) վրա, վերջինիս հեղինակին՝ Մ. Աբեղյանին, փակցրին ձևապաշտության (ֆորմալիզմի)՝ այն ժամանակներում խիստ նորաձև քաղաքական պիտակը: Դրան գումարվեցին նաև այլ քաղաքական մահացու պիտակներ («սուբյեկտիվ իդեալիստական», «մետաֆիզիկական», «հակադիալեկտիկական», «հակամարքսիստական» ևն): Դա թույլ տվեց բռնաճնշումներով ասպարեզից դուրս մղել Մ. Աբեղյանին ու նրա տեսությունը: Այդպես ասպարեզը բռնազավթեցին այսպես կոչված «մարքս-լենինյան» գաղափարաբանությամբ զինված հեղափոխական լեզվաբանները և գիտության ու կրթության ոլորտում պարտադրեցին յոթհոլովական արատավոր համակարգը, որի շոշափուկներից չի հաջողվում ազատագրվել արդեն ավելի քան 90 տարի:

Այդ ընթացքում Մ. Աբեղյանը բառիս բուն իմաստով մեռավ՝ գրավոր ու բանավոր հիմնավորելով ու ապացուցելով իր հինգհոլովական տեսության ճշմարտացիությունն ու առավելությունները և յոթհոլովական տեսության արատավորությունը: Սակայն նա գրեթե զրկված էր հրապարակային խոսքի իրավունքից:

Քաղաքական ձևալից հետո՝ 1966 թ., տեղի ունեցավ 3 շաբաթ տևած հրապարակային «հոլովակոռիվ» բանավեճ-քննարկումը, որի ընթացքում Գ. Ջահուկյանի, Հ. Բարսեղյանի, Ռ. Իշխանյանի նման անվանի լեզվաբաններ հիմնավորապես ապացուցեցին յոթհոլովական տեսության արատավորությունը

և հինգհոլովականի գիտականությունը<sup>34</sup>: Սակայն բանավեճին պետական կամ քաղաքական որևէ որոշում չհաջորդեց: Այնուամենայնիվ ԵՊՀ-ում սկսեցին «Հայոց լեզու» դասավանդել 5 հոլովի տեսությամբ: Հայերենի ակադեմիական քերականություն և բուհական ձեռնարկներ հրատարակվեցին 5 հոլովով: Բայց մյուս բուհերը և դպրոցական համակարգը մնացին 7 հոլովի ճահճում:

1994 թ. հունվարի 25-ին ՀՀ լուսավորության նախարարության ատրնոթեր գիտամեթոդական խորհրդի հայոց լեզվի հանձնաժողովի ընդլայնված նիստում քննարկվեց դպրոցական ծրագիրը փոխելու և 7 հոլովի տեսությունը 5-ով փոխարինելու հարցը: Առաջատար գիտնականները (Գ. Ջահուկյան, Հ. Բարսեղյան, Ռ. Իշխանյան, Մ. Ասատրյան և ուրիշներ) կարողացան հիմնավորել, որ այդ հարցը հրատապ է ու կարևոր: Ընդունվեց որոշում, որով հանձնարարվեց փոխել դպրոցական ծրագիրը և գործող դասագիրքը: Այդ որոշումը քվեարկությամբ վերահաստատվեց նույն հանձնաժողովի հաջորդ 17.02.94-ի նիստում: Սա փաստորեն հոլովներին առնչվող բանավեճի 4-րդ փուլն էր: Ի կատարումն որոշման՝ առաջնահերթ վերանայվեց դպրոցական ուսումնական ծրագիրը, հայոց լեզվի գործող դասագրքերի հեղինակ Հ. Բարսեղյանը հրատարակության ներկայացրեց 5-6-րդ դասարանների հայոց լեզվի (ձևաբանության) դասագրքի վերափոխված տարբերակը, որը տպագրվեց 1994-ի ամռանը, և դպրոցում 5 տարի «Հայոց լեզու» առարկան դասավանդվեց ըստ 5 հոլովի տեսության:

Այնուհետև ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ներդրեց դասագրքերի հաստատման մրցույթային կարգը: 1998-ին հայտարարված մրցույթին «Հայոց լեզու» առարկայի համար դասագրքեր ներկայացրին «Լույս» հրատարակչությունը (Է. Աղայանի ու Հ. Բարսեղյանի գրքերը) և հայ-անգլիական «Փյունիկ Մակմիլան» հրատարակչությունը (Ֆ. Խլղաթյանի գրքերը): 1997-ին ստեղծված «Փյունիկ Մակմիլան»-ը՝ որպես հարուստ կազմակերպություն, գանազան հնարքներով հաղթեց իր մրցակցին: Անհեթեթն այն էր, որ պահանջվում էր մրցույթային հանձնաժողովին ներկայացնել ամեն գրքի մի մասը (20 %-ը) միայն, որով հնարավոր չէր պարզել՝ տվյալ գիրքը լիովին բավարարո՞ւմ է ԿԳ նախարարության հաստատած առարկայական ծրագրին: Իրողությունն այն է, որ «ազնիվ խոսքը» բավարար երաշխիք չէ այդպիսի գործում: Երբ 1999-ին լույս տեսան Ֆ. Խլղաթյանի հեղինակած և մրցույթում «հաղթած» դասագրքերը, պարզվեց, որ դրանք իսկապես հակասում են ծրագրին այն էլ խիստ սկզբունքային հարցերում: Բայց արդեն ուշ էր որևէ շտկում անելու համար: Փաստորեն այս անհեթեթ իրավիճակից օգտվելով՝ Ֆ. Խլղաթյանը մաքսանենգորեն, դավադրաբար հետ բերեց 7 հոլովի արատավոր համակարգը, որին վերաբերող հատվածը մրցույթային հանձնաժողովին ներկայացված չէր և գաղտնի էր պահվում: Կատարված փաստի առջև կանգնած նախարարությունը

<sup>34</sup> Հանգամանորեն տե՛ս **Աբաջյան Ա.** (2006), նշվ. աշխ., էջ 290-360:

հարկադրված վերանայեց ծրագիրը: Իսկ գիտամեթոդական խորհրդի 1994 թ. որոշումը, որով հաստատված էր անցումը 5 հոլովին, առ այսօր չի փոխվել, չի չեղարկվել, սակայն մնում է խախտված ու ոտնահարված: Փաստորեն խարդավանքներով ջուրը թափվեցին Գ. Ջահուկյանի, Հ. Բարսեղյանի, Ռ. Իշխանյանի, Ս. Ասատրյանի, Ա. Պապոյանի և այլոց արդարացի ջանքերն ու ձեռքբերումները, և հետխորհրդային դպրոցը շարունակում է խորհրդային ոգով աղավաղել մատաղ սերունդների տրամաբանական մտածողությունը:

2010-ին «Հայոց լեզու» առարկայի դասագրքերի մրցույթում հաղթեց «Աստղիկ գրատուն» հրատարակչությունը, որի ներկայացրած դասագրքերի վրա (7-8-րդ դասարանների համար) իբրև հեղինակներ նշված են Հ. Բարսեղյանը և Փ. Մեյթիխանյանը, իսկ տիտղոսաթերթի դարձերեսին նշված է. «Մույն դասագրքի **Ձևաբանություն** բաժինը գրված է «Է. Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու V-VI դասարանների համար» դասագրքի նյութերի հիման վրա»: Թեև չի նշված, թե վերջինիս որ տարվա հրատարակչությունն է օգտագործվել, սակայն ակնհայտ է, որ 1994-ինը չէ, այլ թերևս 1990-ինը (կամ ավելի վաղ թվի), որը, հակառակ Հ. Բարսեղյանի և Է. Աղայանի սկզբունքների, ներկայացնում է 7-հոլովական համակարգը: Սա ենթադրել է տալիս, որ Հ. Բարսեղյանը չի մասնակցել նոր գրքի ստեղծմանը (Է. Աղայանն այդ ժամանակ ողջ չէր), այլ պարզապես համաձայնել է, որ իր անունը գրվի գրքի վրա: Իսկ Փ. Մեյթիխանյանը համոզված յոթհոլովական էր:

2023-ին դասագրքերի հերթական մրցույթում հաղթեց «Զանգակ» հրատարակչության ներկայացրած «Հայոց լեզու – 7» դասագիրքը գրված ըստ 5 հոլովի համակարգի: Մրցույթային շեմն անցած այլընտրանքային մյուս դասագիրքը («Աստղիկ գրատուն» հրատարակչություն, հեղինակ՝ Փ. Մեյթիխանյան) ներկայացրել էր 7 հոլովի համակարգը: Գրքերից ոչ մեկը չէր շեղվել առարկայական ծրագրից, որում նշված չեն հոլովների քանակն ու անվանումները: Այնուամենայնիվ ԿԳՄՍ նախարարությունը որոշեց, որ դասագրքերի միջև առաջացած այդ հակասությունը պետք է վերացվի: Կազմակերպվեց փոքր կազմով մի քննարկում, որում ձայները բաժանվեցին 2 հավասար մասի: Բայց նախարարությունը չգիտես ինչու հարցը լուծեց հօգուտ 7 հոլովի՝ «Զանգակ»-ին պարտադրելով մինչև լույս տեսնելը համապատասխան փոփոխություններ կատարելու իր ներկայացրած գրքում:

Ահա այսպիսի վարչարարությամբ շարունակում է ջրի երեսին մնալ 7 հոլովի արատավոր, հակագիտական տեսությունը:

Այս տեսությունը նաև **հակամանկավարժական** է ոչ միայն այն պատճառով, որ բարդ է, հակասական, անհետևողական, անհամարժեք, այլև քանի որ խախտում է մանկավարժության մի քանի հիմնարար սկզբունքներ: Հատկապես խախտված են համակարգվածության, գիտելիքների տարանջատված մատուցման, հայեցակետերի տրամաբանական հաջորդականության, աստիճանականության, մատչելիության, պարզից դեպի բարդը և այլ սկզբունքներ:

Որպես կանոն՝ լեզվի գիտական և կրթական ուսումնասիրությունը կատարվում է ըստ կառուցվածքային մակարդակների՝ հնչյունաբանություն – բառագիտություն – ձևաբանություն – շարահյուսություն – ոճաբանություն հաջորդականությամբ: 7 հոլովի տեսությունը հարկադրում է այս հաջորդականությունը խախտելու և ձևաբանությունից առաջ կամ դրա հետ խառը սովորեցնելու շարահյուսություն, մասնավորապես նախադասության անդամներ ու պաշտոններ, փոխարկումներ, հոլովումից առաջ՝ բայի սեռ: Բայց քանի որ դպրոցական ծրագիրը չի նախատեսում գիտելիքների հաջորդականության նման գլխավայր շրջումներ, սովորողը հայտնվում է անելանելի վիճակում: Այսպես, օրինակ՝ հայտարարվում է, որ հայցականը ուղիղ խնդրի հոլովն է, այսինքն՝ սովորողը պետք է իմանա, ճանաչի ու կարողանա տարբերել ուղիղ խնդիրը, որպեսզի հասկանա հայցական հոլովը, տարբերի կրող խնդիրը հանգման խնդրից, որպեսզի զանազանի հայցական հոլովը ուղղականից ու տրականից: Իսկ դրա համար բավական բարդ գործողություններ ու լուրջ հմտություններ են պահանջվում: Ավելին, պետք է ճանաչել տեղի, ժամանակի, չափ ու քանակի և այլ պարագաներ, որոշիչ, հատկացուցիչ: Յոթհոլովական դասագրքերում նույնիսկ առաջադրանքներ կան դրանց վերաբերյալ<sup>35</sup>: Ձևաբանության դասագրքում բնականաբար այդպիսի գիտելիքներ չկան: Ուսուցիչը հարկադրված է իր կողմից բանավոր բացատրություններ տալու, որոնք չեն կարող իրավիճակը շտկել: Եվ դա այն դեպքում, երբ ներկայիս առարկայական ծրագրից ընդհանրապես հանված են խնդիրների ու պարագաների տեսակները<sup>36</sup>: Ուրեմն ուսուցման հաջորդականության կարգի այսպիսի հատվածական, թռիչքային խախտումները միայն խանգարում են գիտելիքների պատշաճ յուրացմանը, հարկադրում խախտելու ծրագիրը: Դա 7 հոլովի տեսության անտրամաբանականության հետևանքն է:

Յավոք, մանկավարժական հանրությունը, հատկապես ուսուցիչների մեծամասնությունը, առաջնորդվելով սովորույթի ուժով և կարծրատիպերով, գերադասում է կրկնել արդեն սերտածն ու անգիր արածը (թեկուզ աշակերտի համար դժվար, անհեթեթ ու անտրամաբանական)<sup>37</sup>, քան դուրս գալ ճահճից, սովորել իր համար նորը՝ որքան էլ այդ նորը տրամաբանված ու դյուրին լինի: Սա՝ մանկավարժների տեսակետից: Մինչդեռ դպրոցականների տեսակետից

<sup>35</sup> Տե՛ս, օրինակ, **Մեթոժիսանյան Փ.** (2023), նշվ. աշխ., էջ 53, առաջադրանք 66:

<sup>36</sup> Ի դեպ, նախկինում ձևաբանություն մատուցելուց առաջ որոշ գիտելիքներ էին տրվում շարահյուսությունից (տե՛ս, օրինակ, **Ղարիբյան Ա.** (1960), Հայոց լեզու (դասագիրք..., էջ 3-38), ինչը նույնպես լեզվական գիտելիքների ուսուցման աստիճանակարգության խախտում էր, բայց գոնե օգնում էր ինչ-որ չափով գլուխ հանելու յոթհոլովական տեսության խառնաշփոթից:

<sup>37</sup> Մանկավարժների պահպանողականության մասին տե՛ս նաև **Աբելյան Մ.** (1974), Երկեր, հ. 2, էջ 570, 698-703:

7 հոլովի ուսուցումն իրականում մանկավարժական սաղիզմ է՝ մտավոր տանջամոլություն<sup>38</sup>:

Յոթհոլովական տեսությունը ամենակարճ ճանապարհն է աղճատելու տրամաբանությունն ու մտածողությունը դպրոցականների, որ հետագայում պիտի դառնան ուսուցիչ, դասախոս, գիտնական, իրավաբան, նախարար են: Պատճառն այն է, որ 7 հոլովի տեսությունը խառնաշփոթ է ստեղծում ոչ միայն ուսուցման գործընթացում, այլև դպրոցականի մտածողության մեջ, նրան հիասթափեցնում ու վանում հայոց լեզվի ուսուցումից, վարկաբեկում ազգային արժեքները:

Յոթհոլովական խորհրդային տեսությունը խարդավանքով ու բռնությամբ կրթության ոլորտին պարտադրելը գիտական ու մանկավարժական հետընթաց է, բռնաճնշում մատաղ սերնդի մտքի ազատության նկատմամբ, կրթության ոլորտի պատասխանատուների մտքի ու կամքի տկարության արտահայտություն: Գիտության զարգացման արդի փուլում դա վերադարձ է դեպի անդրջրհեղեղյան մակարդակ:

Ուրեմն պետք է գործի լծվել և հասնել այն բանին, որ դպրոցում վերջնականապես ներդրվի 5 հոլովի համակարգը:

### Եզրակացություն

Մույն ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ արդի արևելահայերենի գոյականի հոլովման կադապարներից անվերապահորեն նախընտրելի է հինգհոլովականը, որն անթերի է թե՛ գիտականորեն, թե՛ մանկավարժորեն: Մասնավորապես նա համարժեքորեն է ներկայացնում լեզվական իրողությունները, հնարավորինս պարզ է ու համառոտ, միանգամայն հետևողական է ու սպառիչ, անպատասխան հարցեր չի թողնում, լիովին անհակասական է ու հիմնավորված, ունի բացատրական մեծ ներուժ, անխոցելի է մանկավարժության սկզբունքների ու պահանջների առումով: Մինչդեռ յոթհոլովական համակարգը, նույն չափանիշերի համաձայն, ունի բազմաթիվ անփարատելի թերություններ, անլուծելի հակասություններ: Փաստորեն նա մերժելի է անխտիր բոլոր չափանիշերով: Այդքանով հանդերձ՝ նա այսօր դպրոցական համակարգում կիրառվում է վարչական լծակների, խարդավանքների, ինչպես նաև կարծրատիպերի ու բացասական սովորույթի ուժով:

Հետևաբար անհրաժեշտ է կրթական համակարգում իսպառ հրաժարվել յոթհոլովական կադապարից և վերականգնել հինգհոլովական կադապարը:

**ОГАНЕС ЗАКАРЯН – Типологическое и сопоставительное исследование моделей, описывающих систему склонения существительных армянского языка.** – В данной статье типологически оцениваются и сравниваются пятипадежная и семипадежная модели

<sup>38</sup> Յոթհոլովական համակարգի բարդության ու խճճվածության մասին տե՛ս նաև **Աբեղյան Ս.** (1974): Երկեր, հ. 2, էջ 638, 688-692, 707, **Աբեղյան Ս.** (1985): Երկեր, հ. 2, էջ 580:

научного описания системы склонения существительных современного восточно-армянского литературного языка, и с помощью фактов, аргументов и логического анализа показываются очевидные преимущества первой и многочисленные недостатки второй. Эти модели также сравниваются с семипадежной моделью грабара (староармянского литературного языка) и показывается, что семипадежная модель описания ашхарабара (новоармянского литературного языка) является искусственной, вынужденной адаптацией грабара, а также латинской и отчасти русской моделей, тогда как пятипадежная модель независима от других моделей и адекватно отражает систему склонения существительных современного восточноармянского литературного языка.

Вывод заключается в необходимости полного отказа от семипадежной модели в системе образования и восстановления пятипадежной модели.

Проблема актуальна, поскольку семипадежная модель не только ненаучна, но и вынуждает нарушать ряд педагогических принципов и требований.

Эта проблема не нова в арменоведении. Однако данный анализ проводится по-новому, с использованием метода моделирования и типологического метода научного анализа, с привлечением ряда новых аргументов.

**Ключевые слова:** *система склонения существительных, научная модель, пятипадежная теория, семипадежная теория, винительный падеж, прямое дополнение, родительный падеж, дательный падеж*

**HOVHANNES ZAKARYAN – Typological and Contrastive Study of Models Describing the Noun Declension System of Armenian Language.**

– This article typologically evaluates and compares the five-case and seven-case models of scientific description of the noun declension system of the modern Eastern Armenian literary language. Using facts, arguments, and logical analysis, it demonstrates the obvious advantages of the former and the numerous shortcomings of the latter. These models are also compared with the seven-case model of Grabar (Old Armenian literary language), demonstrating that the seven-case model of Ashkharhabar (New Armenian literary language) is an artificial, forced adaptation of Grabar, as well as Latin and, to some extent, Russian models, whereas the five-case model is independent of other models and adequately reflects the noun declension system of the modern Eastern Armenian literary language.

The conclusion is the need to completely abandon the seven-case model in the education system and restore the five-case model.

The problem is pressing because the seven-case model is not only unscientific but also violates a number of pedagogical principles and requirements.

This problem is not new in Armenian studies. However, this analysis is conducted in a new way, using the modeling method and typological method of scientific analysis, drawing on a number of new arguments.

**Key words:** *noun declension system, scientific model, five-case theory, seven-case theory, accusative case, direct object, genitive case, dative case*

**Գրականության ցանկ**

Աբաջյան Ա. (2006): Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Եր., ԵՊՀ հրատ., - 444 էջ: [Abajyan A. 2006. Hayereni holovakan hamakargi ombnumə yev patmakan zargacumə hay qerakanagithuyan mej. Yerevan: YPH hrat (in Armenian)].

Աբեղեան Մ. (1906): Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, - 168 էջ: [Abeghyan M. 1906. Ashkharhabari qerakanuthyun, Vagharshapat (in Armenian)].

- Աբեղեյան Մ. (1908): Աշխարհաբարի հոլովները, Վաղարշապատ, - 84 էջ: [Abeghyan M. 1908. Ashkharhabari holovnerə, Vagharshapat (in Armenian)].
- Աբեղեյան Մ. (1909): Հայցական հոլովը մեր աշխարհաբարում, Վաղարշապատ, - 80 էջ: [Abeghyan M. 1909. Haycakan holovə mer ashkharhabarum. Vagharshapat (in Armenian)].
- Աբեղեյան Մ. (1974): Երկեր, հ. 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., - 848 էջ: [Abeghyan M. 1974. Yerker. h. 6. Yerevan: HSSH GA hrat. (in Armenian)].
- Աբեղեյան Մ. (1985): Մի քանի քերականական խնդիրների մասին (Պատասխան իր տեսությունը քննադատողներին) // Երկեր, հ. Ը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 578-580: [Abeghyan M. 1985. Mi qani qerakanakan khndirneri masin (Pataskhan ir tesuthyunə qnnadatoghnerin). Yerker. h. 8. Yerevan: HSSH GA hrat. (in Armenian)].
- Աբովյան Խ. (1950): Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից, մասն երկրորդ // Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 113-164: [Abovyan Kh. 1950. Nakhshavigh krthuthean i pets noravarzhic. masn yerkrord // Yerkeri liakatar zhoghovatsu. h. 5. Yerevan: HSSR GA hrat. (in Armenian)].
- Աբրահամյան Ս., Վերդեան Բ., Քոսեան Վ. (1968): Հայերէն լեզուի դասագիրք, Եր., «Լոյս», - 440 էջ: [Abrahamean S., Verdean B., Qosean V. 1968. Hayeren lezui dasagirq. Yerevan: «Loys» (in Armenian)].
- Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ. (1974): Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Չ-կարգություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., - 588 էջ: [Abrahamyan S., Parnasyan N., Ohanyan H. 1974. Zhamanakacic hayoc lezu. h. 2, Dzevabanuthyun. Yerevan: HSSH GA hrat. (in Armenian)].
- Աղայան Բ., Բարսեղյան Հ. (1970): Հայոց լեզու (դասագիրք միջնակարգ դպրոցի V-VII դասարանների համար), Եր., «Լոյս», - 352 էջ: [Aghayan E., Barseghyan H. 1970. Hayoc lezu (dasagirq mijnakarg dproci V-VII dasaranneri hamar). Yerevan: «Luys» (in Armenian)].
- Աղայան Բ., Բարսեղյան Հ. (1994): Հայոց լեզու (դասագիրք V-VI դասարանների համար), Եր., «Լոյս», - 400 էջ: [Aghayan E., Barseghyan H. 1994. Hayoc lezu (dasagirq V-VI dasaranneri hamar). Yerevan: «Luys» (in Armenian)].
- Ասատրյան Մ. (1983): Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Եր., ԵՊՀ հրատ., - 472 էջ: [Asatryan M. 1983. Zhamanakacic hayoc lezu (Dzevabanuthyun). Yerevan: YPH hrat. (in Armenian)].
- Ավետիսյան Յու., Զաքարյան Հ. (2015): Չկարգություն (2-րդ լրամշակված հրատարակություն), Եր., «Զանգակ-97», - 320 էջ: [Avetisyan Yu., Zaqaryan H. 2015. Dzevabanuthyun (2-rd lramshakvats hratarakuthyun). Yerevan: «Zangak-97» (in Armenian)].
- Ավետիսյան Յու. (2024): Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Եր., «Զանգակ-97», - 328 էջ: [Avetisyan Yu. 2024. Zhamanakacic hayoc lezu (Dzevabanuthyun). Yerevan: «Zangak-97» (in Armenian)].
- Բարսեղյան Հ. (1967): Մասուկ Աբեղեյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Եր., «Հայաստան», - 76 էջ: [Barseghyan H. 1967. Manuk Abeghyani hing holovi tesuthyunə yev nra hin u nor qnnadatuthyunarə. «Hayastan» (in Armenian)].
- Իշխանյան Ռ. (1971): Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Եր., ԵՊՀ հրատ., - 168 էջ: [Ishkhanyan R. 1971. Ardi hayereni holovum u khonarhumə. Yerevan: YPH hrat. (In Armenian)].
- Խլիղաթյան Ֆ. (2004): Հայոց լեզու (դասագիրք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար), Եր., «Մակմիլան-Արմենիա», - 168 էջ: [Khlgathyan F. 2004. Hayoc lezu (dasagirq mijnakarg dproci 6-rd dasarani hamar). Yerevan: «Makmilan-Armenia» (in Armenian)].
- Խլիղաթյան Ֆ. (2006): Հայոց լեզու (դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար), Եր., «Զանգակ-97», - 160 էջ: [Khlgathyan F. 2006. Hayoc lezu (dasagirq hanrakrthakan dproci 7-rd dasarani hamar). Yerevan: «Zangak-97» (in Armenian)].

- Խղաթյան Ֆ. (2007): Հայոց լեզու (դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար), Եր., «Ձանգակ-97», - 160 էջ: [Khlgathyan F. 2007. Hayoc lezu (dasagirg hanrakrthakan dproci 8-rd dasarani hamar). Yerevan: «Zangak-97» (in Armenian)].
- Ղարիբյան Ա. (1960): Հայոց լեզու (դասագիրք միջնակարգ դպրոցի V-VII դասարանների համար), Եր., Հայպետուսմանկհրատ, - 284 էջ: [Gharibyan A. 1960. Hayoc lezu (dasagirg mijnakarg dproci V-VII dasaranni hamar). Yerevan: Haypetusmankhrat (in Armenian)].
- Մալխասեանց Ստ. (1908): Հայցական հոլովը աշխարհաբարի մէջ // «Նոր դպրոց», հմ. 1, էջ 44-51, Թիֆլիս: [Malkhaseanc St. 1908. Haycakan holovə ashkharhabari mej // «Nor dproc», hm. 1, 44-51. Thiflis (in Armenian)].
- Մալխասեանց Ստ. (1909): Դարձեալ հայցական հոլովը // «Նոր դպրոց», հմ. 11, էջ 29-38; հմ. 12, էջ 46-62, Թիֆլիս: [Malkhaseanc St. 1909. Dardzeal haycakan holovi masin // «Nor dproc», hm. 11, 29-38, hm. 12, 46-62. Thiflis (In Armenian)].
- Մարգարյան Ալ. (2000): Հայերենի հոլովները, Եր., ԵՊՀ հրատ., - 200 էջ: [Margaryan Al. 2000. Hayereni holovnerə. Yerevan: YPH hrat. (in Armenian)].
- Մեյթիկհանյան Փ. (2023): Հայոց լեզու (դասագիրք 7-րդ դասարանի համար), Եր., «Աստղիկ գրատուն», - 176 էջ: [Meythikhanian Ph. 2023. Hayoc lezu (dasagirg 7-rd dasarani hamar). Yerevan: «Astghik gratun» (in Armenian)].
- Ներսիսյան Բ., Սահակյան Կ. (2017): Յոթ հոլովի տեսությունը հիմնավորելու նոր մեթոդ // «Վեմ համահայկական հանդես», հմ. 3 (59), Եր., «Վեմ», էջ 106-117: [Nersisyan B., Sahakyan K. 2017. Yoth holovi tesuthyunə himnavorelu nor method // «Vem hamahaykakan handes», hm. 3 (59). Yerevan: «Vem», 103-117 (in Armenian)].
- Շարաբխանյան Պ., Պիվազյան Է. (1967): Արդի հայերենի հոլովների մասին // Պատմաբանասիրական հանդես, հմ. 4, էջ 115-134: [Sharabkhanian P., Pivazyan E. 1967. Ardi hayereni holovneri masin // Patmabanasirakan Handes, hm. 4, 115-134 (in Armenian)].
- Շրյոդեր Յ. (1711): Արամեան լեզուին գանձ (Thesaurus linguae Armenicae), Ամստերդամ, - 570 էջ: [Schröder J. 1711. Aramean lezuin gandz. Amsterdam (in Latin)].
- Պալասանեան Ստ. (1870): Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրատր լեզուի հայոց, Թիֆլիս, - 120 էջ: [Palasaneanc St. 1870. Endhanur tesuthiwn arevelean nor grawor lezui hayoc. Thiflis (in Armenian)].
- Պապոյան Ա. (1964): Տեղաշարժեր հայերենի հոլովման հարացույցում // Պատմաբանասիրական հանդես, հմ. 4, էջ 61-80: [Papoyan A. 1964. Teghasharzhher hayereni holovman haracucyum // Patmabanasirakan Handes, hm. 4, 61-81 (in Armenian)].
- Պետրոսյան Հ. (1987): Հայերենագիտական բառարան, Եր., «Հայաստան», էջ 411-418: [Petrosyan H. 1987. Hayerenagitakan bararan. Yerevan: «Hayastan», 411-418 (in Armenian)].
- Ջահուկյան Գ. (1967): Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Եր., ԵՊՀ հրատ., - 92 էջ: [Jahukyan G. 1967. Zhamanakacic hayereni holovman hamakargə. Yerevan: YPH hrat. (in Armenian)].
- Ջահուկյան Գ. (1969): Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Եր., «Միսք», - 292 էջ: [Jahukyan G. 1969. Hayoc lezvi zargacumn u karucvatsqə. «Mitq» (In Armenian)].
- Սևակ Գ. (1955): Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., ԵՊՀ հրատ., - 358 էջ: [Sevak G. 1955. Zhamanakacic hayoc lezvi dasənthac. Yerevan: YPH hrat. (in Armenian)].

## ԻՍՄԻԼԻ ԿԵՐՊԱՐԻ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ «ՄԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

ԱԼԻՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ 

*ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ*

Իսմիլը «Մասնա ծներ» էպոսի միակ կին հերոսուհին է, որը տարբեր գործառնություններով հանդես է գալիս էպոսի ինչպես երկրորդ, այնպես էլ երրորդ ճյուղերում՝ մի դեպքում իբրև Մեծ Մելիքի կին, մյուս դեպքում իբրև Փոքր Մելիքի մայր, ինչով էլ պայմանավորված է կերպարի երկակի բնույթը:

Մոտիվների առումով հարուստ չէ Իսմիլի կերպարը, սակայն Մասնա հերոսների կյանքում իր խաղացած դերով ճակատագրական նշանակություն ունի: Նա ոչ միայն Մասնա հերոսների համար դառնում է կին և մայր, այլ նաև դառնում է այն կարևոր հակակշիռ բևեռը, որի շնորհիվ սյուժեյն զարգանում է զարմանալի հակադրամիասնական ներդաշնակությամբ:

Իսմիլն էլ Դեղձունի, Խանդութի նման ինքն է իր համար ընտրություն կատարում, թե ում հանձնվի, թե ո՛վ պետք է նրան որդի պարգևի: Վեպի երկրորդ ճյուղում Իսմիլ խաթունը պահպանում է թագուհուն, Մեծ մորը բնորոշ հզորությունը: Այս առումով երկրորդ ճյուղի վիպական ուրվագծում Իսմիլը դառնում է Մեծ Միերի կնոջ կամ Արմաղանի կերպարին հավասարագոր և հակակշռող կերպար: Վեպի երրորդ ճյուղում Իսմիլի կերպարը իր բնույթով մոտենում է երկվորյակ եղբայրների մոր հատկանիշներին, ինչը նրան բնորոշ երկրորդ կարևոր հատկանիշն է վեպում:

**Բանալի բառեր** – *Մասնա ծներ, էպոս, Իսմիլ, Մեծ Մելիքի կին, Փոքր Մելիքի մայր, Արմաղան, Սաթենիկ, Ծովինար*

### Ներածություն

Էպոսում Մասնա կանանց հավասարագոր կերպար է Իսմիլ խաթունը կամ Ջոջ Մելիքի կինը, որն ամբողջացնում է Մայր դիցուհիներին բնորոշ առասպել-

\* **Ալինա Ղարիբյան** – ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող, Երևանի պետական բժշկական համալսարանի դասախոս

**Алина Гарибян** – научный сотрудник Института литературы им. М. Абебяна Национальной академии наук Республики Армения, преподаватель Ереванского государственного медицинского университета

**Alina Gharibyan** – Researcher at the M. Abeghyan Institute of Literature of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Lecturer at Yerevan State Medical University

Էլ. փոստ՝ [alinagharibyan@rambler.ru](mailto:alinagharibyan@rambler.ru) ORCID ID: <https://orcid.org/0009-0007-5458-7766>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 09.02.2026

Գրախոսվել է՝ 12.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

լաբանական պատկերացումները վեպում: Վիպական կառույցում այս կերպարը կարևոր և կայուն դերակատարում ունի ինչպես վեպի ներքին ասեկիքի ամբողջացման, այնպես էլ պոեթի երկրենո զարգացման համար: Իսմիլը վեպի միակ կին հերոսուհին է, որը գործում է էպոսի և՛ երկրորդ, և՛ երրորդ ճյուղերում տարբեր գործառնություններով. մի դեպքում՝ Մեծ Մեկիքի կին, մյուս դեպքում՝ Փոքր Մեկիքի մայր, ինչով էլ պայմանավորված է կերպարի երկակի բնույթը:

Պետք է արձանագրել, որ ինչպես վեպի հերոսուհիներից Շովինարի, Արմաղանի անունների փոխարեն պատումներում հիմնականում հանդիպում են համապատասխանաբար Խաչապաշտ թագավորի աղջիկ և Ջոջ Միերի կին անվանաձևերը, այնպես էլ Իսմիլ անվան փոխարեն հիմնականում շրջանառվում են Ջոջ Մեկիքի կին կամ Սարա Մեկիքի մեր ձևերը: Իսմիլ անունը պատումներում հաճախ չի հանդիպում. Ա և Բ հատորներում առկա 47 պատումներից միայն Մոկացի Հովանի պատումում է հանդիպում Իսմիլ խանում<sup>1</sup>, Սարամեկիքի մեր անունը: Արդեն 1960-70-ականներին գրառված պատումներում<sup>2</sup> Իսմիլ անունը հաճախադեպ է գործածվում: Ընդհանրության մեջ էպոսի 94 պատումներից 13 պատումներում է հանդիպում Իսմիլ անունը, որոնցից մեկում էլ՝ Ասմի ձևով, ինչը հավանաբար պայմանավորված է ինչպես համահավաք բնագրի, այնպես էլ Հ. Թումանյանի պոեմի ազդեցություններով. այդ մասին երբեմն վկայում են բանահավաքները:

Իսմիլ անվան ստուգաբանության հետ կապված կա կարծիք, որ «այս անունը, հավանաբար, ունի էթնիկական իմաստ, ծագած միջնադարում հայերի կողմից արաբներին տրվող «իսմայելացի» անունից (իսմայելացի=Իսմիլ)». Իսմիլ խաթուն, իբրև իսմայելացի կամ իսմայիլյան տիկին<sup>3</sup>: Նույն կարծիքին է նաև լեզվաբան Վ. Կատվայանը, համաձայն որի՝ Իսմիլ անունը կարելի է բխեցնել աստվածաշնչյան Իսմայիլից<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Սասնա ծոեր (այսուհետ՝ ՄՕ), հ. Ա (1936): Եր., Պետհրատ, էջ 162-164: Այսուհետ տեքստում էպոսից կատարված մեջբերումներին կից կտրվեն հատորը, մասը, էջը, անհրաժեշտության դեպքում թիվը:

<sup>2</sup> Տե՛ս Սասնա ծոեր, հ. Գ (1979): Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 97, 157: Սասնա ծոեր, հ. Դ (1999): Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 340-342: «Սասունցի Դավիթ», նոր պատումներ (1977): Երևան, «Սովետական գրող» հրատ., էջ 83, 112, 194, 256, 343: Սասնա ծոեր, 7 նորահայտ պատումներ (2000): Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 34, 66, 174, 216:

<sup>3</sup> Սասնա ծոեր, հ. Դ (1999), էջ 406:

<sup>4</sup> Կարելի է ենթադրել նաև, որ Իսմիլ անունը ծագումնաբանորեն ընդհանրություններ կարող է ունենալ եգիպտական Բսիս (Բսիդա, Բզիդա) մայր աստվածուհու անվան հետ, եթե հաշվի առնենք մի քանի հանգամանք. նախ՝ վեպի ձևավորման ժամանակաշրջանը եգիպտական էյուբյան դինաստիայի տիրապետության շրջանի հետ է համընկնում, երկրորդ՝ Բսիդան նույնպես երկվորյակության կրող է, նա Օսիրիսի երկվորյակ քույրն է, նաև հանդես է գալիս նրան որպես կին: Ինչպես Օսիրիսն ու Մեթն են հակադիր էությունների կրողներ՝ բարի և չար, այնպես էլ «Սասնա ծոեր» էպոսում Դավիթն ու Մեկիք են հակադիր բնեռներում գտնվում: Բսիդան հանդես է գալիս Օսիրիսին քույր և կին, Իսմիլը Մեկիքի և՛ կինն է, և՛ մայրը: Նաև բոլոր աստվածուհիների

Մոտիվների առումով հարուստ չէ Իսմիլի կերպարը, սակայն Սասնա հերոսների կյանքում իր խաղացած դերով ճակատագրական նշանակություն ունի: Նա ոչ միայն Սասնա հերոսների համար դառնում է կին և մայր, այլ նաև դառնում է այն կարևոր հակակշիռ բևեռը, որի շնորհիվ պյուժեն զարգանում է զարմանալի հակադրամիասնական ներդաշնակությամբ:

**Իսմիլի կերպարը «Սասնա ծռերի» երկրորդ ճյուղում:** Իսմիլն էլ «Դեղձունի, Խանդութի նման ինքն է իր համար ընտրություն կատարում, թե ում հանձնվի, թե ո՞վ պետք է նրան որդի պարգևի»<sup>5</sup>: Վեպի երկրորդ ճյուղում Իսմիլ խաթունը պահպանում է թագուհուն, Մեծ մորը բնորոշ հզորությունը, խոսքի ու կամքի ուժը: Վեպի երկրորդ ճյուղում Իսմիլ խաթունի հետ կապված կա միայն մեկ մոտիվ, որտեղ նա անթաքույց պահանջատիրությամբ կանչում է Մեծ Մհերին Մսր, որպեսզի իրեն կին առնի և տիրի Մսրին: Այդ նպատակով օգտագործում է մի քանի խորհրդանիշ-իրեր, որոնք կանացիության, իգականության խորհրդանիշներ են ընկալվում՝ գոտիկ «Մեռնը են մարթ, Վոր գոտիկ տա, կուտիկն չառնը» (ՄՕ, Ա, 384), լաչակ «Եթե չիգաս լե, իմ լաչիգ քու գլխու վրեն էղնի» (ՄՕ, Դ, 341), նամակ: Կամ՝ հիշեցնում է Մելիքի և Մհերի պայմանավորվածությունը, ըստ որի՝ պետք է գա և տիրություն անի Մելիքի կնոջը, որպեսզի իրագործվի ճյուղի հիմնական նպատակը՝ հզոր ժառանգի ծնունդը: «Ուրիշ ոչ մէկ ոյժ, ոչ մէկ զօրութիւն չի կարող փոխարինել ժառանգին: Սա հայ ժողովրդի մտածողութեան համակարգն է սերնդաշարունակութեան նկատմամբ: Դիւցազնավէպը իրեն յատուկ գաղափարական խտացմամբ ու խորութեամբ ժառանգի խնդիրը բարձրացնում է ազգային պետական մակարդակ: Մըսրայ թագուհին՝ Իսմիլ Խանումն իրավացի է, որ ուզում է իր տերութիւնը պահել և հզօրացնել հզօր ժառանգով»<sup>6</sup>: Առաջին հայացքից թվում է, թե Իսմիլը տարփական սիրո գործառույթով հերոսուհի է, և նրան պետք է «կիրք հագեցնող սիրեկան», սակայն իրականում վերջնական նպատակը մեկն է՝ ժառանգ, ով Մսրին տիրություն կանի: Ալաշկերտցի Մանուկ Թորոյանի պատումում Մելիքը, Մհերին տեսնելով, ինքն է կնոջը համոզում, որ Մհեր «Յոթն օր քու որթախ բըղի պառկի» (ՄՕ, Բ, I, 269): Իսմիլի այսպես կոչված «ղավաճանությունը» որպես այդպիսին չի ընկալվում, ընդհակառակը, վիպական մակարդակում Մհերի հետ կենակցելը անհրաժեշտ, էպոսի վիպական կառույցից բխող քայլ է, որպեսզի ծնվի «Մսրա օջախ կայնեցուցողը»: Իսկ երբ «բացահայտվում է» նպատակը, այսինքն՝ հայտնի է դառնում, որ ժառանգը ծնվելու է կամ ծնվել է, Մհերի՝ Մսրում

մեջ առաջիններից մեկն է Բսիդան, որը պատկերվում է երեխան գրկած, ինչպես Աստվածամայրը: Վեպում բոլոր հերոսուհիներից միայն Իսմիլն է իր կաթով կերակրում Նորամանուկ Դավթին (տե՛ս **Редер Д. Г.**, (1980). *Исида // Мифы народов мира. М., Издат. «Советская энциклопедия»*, էջ 568-570):

<sup>5</sup> **Օրբելի Հ.**, (1956): Հայկական հերոսական էպոսը, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն, էջ 47:

<sup>6</sup> **Սահակեան Ա., Փախլեանեան Ա.**, (1996): Սանա ծռեր դիւցազնավէպ. Առասպելական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ, Փասատեան, «Դրազարկ» հրատ. , էջ 16:

մնալու անհրաժեշտությունը վերանում է, և Իսմիլը «արձակում է» նրան, այսինքն՝ Մհերը Մասուն է վերադառնում այն ժամանակ միայն, երբ Իսմիլն է այդ ցանկանում, կամ, երբ նրան այլևս չի պահում. «Կերթաս, գնա, ընձի պետք չես, Ես գուզինք քենե մե տղա հելներ, Մկա դու գինաս, Տղեն հեղե, աշխարք մերն ա, Էրգիր կենթարգվի էտր, Դու էլ կհեղիք էտր խառջտու» (ՄԾ, 2000, 35):

Այս առումով երկրորդ ճյուղի վիպական ուրվագծում Իսմիլը դառնում է Մեծ Մհերի կնոջ կամ Արմաղանի կերպարին հավասարագոր և հակակշռող կերպար: Նա նույնպես Մեծ մոր, երկրի տիրուհու հզոր հատկանիշների կրողն է. պատումներից մեկում Մելիքի կինը ամուսնու մահից հետո ինքն է Մասունին հարկատու դարձնում. «Են ժամանակ Մսրա Մելիքի կնիկ ելավ կոիվ վեր Ծենով Ովանին, ախտեց ինոր ու վերկի կապեց, յոթ տարվան վերկին էլ առեց ինորմից» (ՄԾ, Բ, II, 440):

Կարելի է ասել, որ այս երկու թագուհիներով է պայմանավորված երկրորդ ճյուղի սյուժեի երկբևեռ հավասարագոր զարգացումը. նախ՝ երկու հերոսուհիներն էլ իրենց կամքն ու գորությունը պահպանում են նաև ամուսնությունից հետո: Իսկ սովորաբար Մայր դիցուհիներին բնորոշ է ամուսնությունից հետո մինչամուսնական հզորության թուլացումը կամ կորուստը, ինչը տեսնում ենք Դեղձուն Ծամի, Խանդութի կերպարներում: Վեպի երկրորդ ճյուղում, սակայն, երկու հերոսուհիներն էլ ամուսնական առագաստ են մտնում երկրորդ անգամ, և երկուսի դեպքում էլ հերոսը՝ Մհերը, շարժվում է միմիայն նրանց կամքով և թելադրանքով: Այսպիսով՝ Իսմիլը, որպես վիպական կնոջ կերպար, նմանվում է Արմաղանին՝ հակադիր բևեռում և նրա նման, որպես օջախի, երկրի ճակատագրով անհանգստացող հերոսուհի, Մելիքի մահից հետո մտածում է. «Մեկ տղա ընձը հարկավորը ը, ըն միր ազգին տիրութին ընը» (ՄԾ, Ա, 426)՝ այսպես հանդես բերելով Մեծ մորը, երկրի տիրուհուն բնորոշ հզոր հատկանիշներ և մտածողություն՝ գրեթե բացառելով սիրո դիցուհիներին բնորոշ տարփական սիրո գործառույթները: Երկուսի համար էլ հզոր ժառանգի և երկրի շահը գերադասելի է իրենց անձից:

Երկրորդ ճյուղի նման դերակատարմամբ Իսմիլ խաթունը հետաքրքրական գուգահեռներ է հանդես բերում մեր հնագույն վեպի Մաթենիկի հետ<sup>7</sup>: Վիպական կառույցում այս երկու կանայք էլ այլազգի են, օտար են, գեղեցիկ են և խելացի, երկուսն էլ իրենց երկրի տիրուհիներն են, ամուսնանում են վերջին հաշվով իրենց երկրի շահերից ելնելով, ինչը շատ ճիշտ նկատում է Մհերի կինը. «Քի կը տան, մե տղե մ'իլը ուր խամար. Իլը Մըսրա օջախ կայնացըը, Մասնա օջախ փըճըըը» (ՄԾ, Ա, 492): Վիպական այս հատկանիշները իրենց հնագույն առասպելաբանական շերտերով հասնում են մինչև մայրիշխանության ժամանակները, երբ «մայրիշխանության կարգերը մոռացության տված ժողովրդական գիտակցությունը իշխող կնոջ, իր համար ամուսին ընտրող կնոջ

<sup>7</sup> Տե՛ս **Սովյետ Խորենացի**, (1981): Հայոց պատմություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., էջ 211-217:

մասին եղած պատկերացումը պետք է իմաստավորեր նրան թագուհի դարձնելով»<sup>8</sup>: Իսմիլը և Սաթենիկը թագուհիներ են, որոնք տարփանք են տածում իրենց ամուսինների հակառակորդների հանդեպ՝ Սաթենիկը՝ վիշապագուն Արգավանի, Իսմիլը՝ Միերի նկատմամբ, երկուսն էլ նրանց տիրելու համար օգտագործում են գայթակղության տարբեր միջոցներ. Իսմիլը Միերին հարբեցնում է գինով, իսկ Սաթենիկը տենչում է «զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ»<sup>9</sup>: Ընդ որում՝ հակառակորդը կամ տարփածուն հարաբերությունների որոշակի փուլում ամուսնու կողմից երկրորդը ճանաչվելու իրավունքն ունի, որին նախորդում կամ հաջորդում է հակառակորդ լինելու իրողությունը. Միերն ու Մելիքը կովից հետո եղբայրանում են և որոշում՝ ով շուտ մեռնի, մյուսը նրա ընտանիքին տիրություն անի: Իսկ Արգամը Արտաշեսի կենդանության ժամանակ նրա երկրորդը կոչվելու պատվին է արժանանում, հետո համարվում է թշնամի և սպանվում Արտաշեսի որդիների կողմից<sup>10</sup>: Երկու դեպքում էլ տարփածուն անպրոպային, վիշապային հերոսն է, ինչի արդյունքում էլ սովորաբար ծնվում է մեռնող-հառնող կամ ժայռում փակված, ժայռին գամված հերոսը: Երկու հերոսուհիների որդիներն էլ՝ Արտավազդը և Մելիքը, առաջնեկ են, բնորոշվում են չար և նախանձոտ էությամբ: Արտավազդի մասին հներն ասում են. «Վիշապագունք գողացան զմանուկն Արտաւազդ, Եւ դէւ փոխանակ եղին»<sup>11</sup>: Մարա Մելիքին բնորոշում են որպէս հսկա տղա՝ «Ֆերգէ տղայ էր» (ՄՕ, Ա, 60, 362), որի դեմ կանգնող չկա, «Հուրիշի տղեներ տարե կը ջուջանեն, Մարամելիք որե կը ջուջաներ» (ՄՕ, Ա, 60): Վեպում Մելիքի հետ կապված քիչ հանդիպող մի միջադեպ կա. երբ Միերը տեսնում է, թե ինչպէս է Մելիքը եղնիկը որսած տուն գալիս. «Մելիք էղեր է յոթ-ութ տարեկան տղա, Մի ջոջ մարալ զարգել է, քաշ տալով կբերա» (ՄԴ, 1977, 194), «Մի ածղահա տղա, մի ջեյրան դրած փիջին, զիկա: Մոտեցավ, տեսավ իրա տղա Մելիքն ի» (ՄԴ, 1977, 256): Ընդհանրապէս պետք է նկատել, որ եղնիկի որսը այդքան էլ բնորոշ չէ Մասնա հերոսներին<sup>12</sup>, իսկ ահա Մելիքի առումով ասացողը կոնկրետ նշում է, որ որսը եղնիկ է: Ըստ ավանդության՝ հայտնի է, որ վիշապները ծնվում են եղնիկից, և այդ քանդակը կա Հին Բայազետի Բերդի վրա<sup>13</sup>: Առասպելաբանության մեջ արու եղնիկը նաև առնականության խորհրդանիշ է<sup>14</sup>, և պիտի ենթադրել, որ ինչպէս Մեծ Միերն է սպանում առյուծին, որը նրա միհրային, արևային էության խորհրդանիշի կրողն է, այնպէս էլ եղնիկին սպանելը Մելիքի առնականության

<sup>8</sup> Օրբելի Հ., նշվ. աշխ., էջ 47:

<sup>9</sup> Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 101:

<sup>10</sup> Տէ՛ս Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 215-216:

<sup>11</sup> Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 232:

<sup>12</sup> Մեր վեպի հերոսներին բնորոշ է «հավորությունը»: Դավիթը թռչուն, գլխավորապէս լոր է որսում, ինչպէս մեր հին իշխանորդիները բազեով (տե՛ս Արեղյան Մ. (1966): Երկեր, հ. Ա, շՄՍՀ ԳԱ հրատ., էջ 455):

<sup>13</sup> Տէ՛ս Մեր-Մկրտչյան Գ. (1998): Հայագիտական ուսումնասիրություններ, զիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, էջ 599-602:

<sup>14</sup> Տէ՛ս Կупер Дж. (1995). Энциклопедия символов, Книга IV, Москва, Ассоциация Духовного Единения «Золотой век», с. 225.

խորհրդանիշ կարող է լինել, քանի որ այդ պահին Մելիքը շատ հզոր է երևում Մհերի աչքին. «Աշխարհ էնու դեմ կանգնող չկա» (ՄԾ, Ա, 427): Նաև վիշապին կոչում են «երկնային արու եղնիկ»<sup>15</sup>: Ստացվում է, որ եղնիկը կամ եղնիկի որսը, Մելիքի վիշապային էության հնարավոր խորհրդանիշը կարող է լինել: Եվ Մելիքը, և Արտավազը իրենց վախճանը գտնում են ժայռում կամ *հանդունդում*՝ Ստորերկրայքում: Խորենացին Արտավազի մասին հաղորդում է. «...հանկարծ ինչ-որ ցնորքից շփոթվում, խելագարվում է, ձիուց վայր է ընկնում մի խոր փոսի մեջ և այնտեղ խորասուզվում, անհետանում է»<sup>16</sup>: Մելիքն էլ քառասուն գազ հորում, ջաղացքարերի և գոմշի կաշիների տակ երկու կես է լինում կամ Արտավազի նման անհայտանում՝ «կորսըվիր ի, չկա, ցվրվիր հանդուդ-Միվ ջուր գնացիր ի» (ՄԾ, Ա, 436): Կարելի է ասել, որ այս վիպական կանայք իրենց խորքում պահպանել են հնագույն առասպելաբանական շերտեր՝ հանդես բերելով նաև վիշապամոր՝ «մայր վիշապաց» հատկանիշներ:

Ինչպես նկատում է Ս. Հարությունյանը, «Մասնա ծոերում» վիշապամարտի առասպելը իր տարբեր դրսևորումներով ու հայեցակետերով առկա է նաև Իսմիլի հետ առնչվող մոտիվներում, որտեղ նա նույնպես վիշապամոր գործառույթների կրող է հանդես գալիս. «Մսրամելիքին սպանելուց հետո Դավիթը ազատ է արձակում նրա մորն ու քրոջը, իսկ որոշ պատումներում անգամ գնում է մոր մոտ, դառնում Մսրա թագավոր (ՄԾ, Ա, 141-142): Այս մոտիվը հիշեցնում է Աժդահակին սպանելուց հետո Տիգրանի՝ Աժդահակի կնոջ (վիշապամոր) գերեվարումը և Մասսի փեշերին նրան ու իր սերնդին ազատ բնակություն տալը»<sup>17</sup>:

**Իսմիլի կերպարը «Մասնա ծոերի» երրորդ ճյուղում:** Վեպի երրորդ ճյուղում Իսմիլի կերպարը հանդես է բերում երկվորյակ եղբայրների մոր հատկանիշներ, ինչը նրան բնորոշ երկրորդ կարևոր իրողությունն է վեպում: Ինչո՞ւ երկվորյակ, երբ իրականում Դավիթն ու Մելիքը երկվորյակներ չեն, ու թեև նույն հզոր հորից են սերվել, սակայն տարիքային տարբերություններ ունեն: Նախ պիտի փաստել, որ վեպի պատումներում նրանք հիմնականում կաթնեղբայր են, քանի որ նույն մոր կրծքի կաթն են կերել: Իսկ կրծքով կերակրելը կամ՝ «Կրծքի երեխան նոր ծննդի, որդեգրման, գթասրտության խորհրդանիշ է: Մայր աստվածուհին հաճախ պատկերվում է որպես երեխային կրծքով կերակրող կամ շատ ստինքներ ունեցող հզոր ստնտու»<sup>18</sup>: Այն, որ Իսմիլը որպես Մայր աստվածուհի նաև հզոր կերակրող է կամ ստնտու, դարձյալ երևում է վեպից, քանի որ նորածին Դավիթին չէին դիմացել սասունցի ծծմայրերը: Եթե Դավիթը կաթ է կերել, ապա միայն Իսմիլի կաթը, նշանակում է՝ որպես մայր ճանաչում է նրան: Վեպի ամենագեղեցիկ դրվագներից է նաև Դավթի կողմից Իսմիլին

<sup>15</sup> **Կսրք Դձ.**, նշվ. աշխ., էջ 225:

<sup>16</sup> **Սովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 231:

<sup>17</sup> **Հարությունյան Ս.**, (2000): Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային» հրատ., էջ 189:

<sup>18</sup> **Կսրք Դձ.**, նշվ. աշխ., էջ 65:

«մաքե» ասելը, նրան՝ որպես որդի՝ մոր պես վերաբերվելը: Այդ է պատճառը, որ մինչև վերջ «հոգեորդու հետ ունեցած կապն ապրում է Իսմիլի սրտում...»<sup>19</sup>: Մյուս կողմից՝ վեպում կան դրվագներ, երբ Իսմիլը միաժամանակ կերակրում է ն՝ Դավթին, ն՝ Մելիքին՝ իր որդուն. «Սարա Մելիքի կնիկ Դավթին էլ ծիծ իտուր խետ ուր տղին, քանի որ են էլ ուր տղի պես Մհերի սերմն էր» (ՄԾ, Բ, II, 440), կամ երբ Ձենով Օհանը մտածում է Դավթին տանի Մար, հանձնի Իսմիլին. «Լավ է վերում տանին Մարը, Թո Իսմիլ իրա տղու հեղ ծիծ տա, պահի, Թո ըղոր ծրծով գորանա Դավիթ, Չեղնի ախպորս սերունդ կըղրի աշխարքից» (ՄԴ, 1977, 113): «Դավթին կողորկա Արաբստանու Իսմիլ խաթունի կուշտ.-էնի պզդիկ ճծու տեր ա, մեր Դավթին էլ, Մեր Դավթին էլ կպախա, կշախա» (ՄԾ, 2000, 175) կամ, «Տավիթ նըստեր էր Մըսրամելեքի կընգան ծախ ծընգան վերեն, Մըսրամելեքի տղղեն նըստեր աչ ծընգան վերեն» (ՄԾ, Բ, II, 540): Ընդհանրապես, երկվորյակների մորը բնորոշ հատկանիշ է երկվորյակներին աջ և ձախ ուսերին կամ ծնկներին պահելը, կամ աջ և ձախ կրծքերով կերակրելը: Անհայտ պատմողի պատումում մի հետաքրքիր միջադեպ կա. Դավիթն ու Վերգոն գնում են Մելիքին սպանելու, սակայն երբ տեսնում են նրան՝ մոր ծնկին գլուխը դրած և մոր հետ քնած, յուրաքանչյուրը բռնում է մոր մի կուրծքը և սկսում է ծծել, ինչը երկվորյակների մոր հատկանիշ է. «Դավիթն ու Վերգոն ելան խեծան, գացին, տեսան որ՝ Մըսրա Մելիք գլուխ դրե վըր մոր չոքին՝ քներ ա. Մերն էլ թիկն է քնե: Գացին, մոր մեկ ծիծ Դավիթ բռնեց, ծծեց, մեկ լե՛ Վերգոն» (ՄԾ, Բ, I, 243): Այս մոտիվը վեպում հանդիպում է նաև Ծովինարի կերպարում (Սպարկերտի պատումում<sup>20</sup>): Մյուս կողմից՝ այն որդեգրության ծես է հիշեցնում, ինչին հանդիպում ենք վեպի առաջին ճյուղում, երբ Սանասարը ետևից բռնում և սկսում է ծծել մարդակեր պառավի «ծծերից»<sup>21</sup>: Այսպիսով, պիտի փաստել, որ ժողովրդական պատկերացումներում իսկապես Մելիքն ու Դավիթն ընկալվում են որպես երկվորյակ եղբայրներ, ինչը հատկապես պայմանավորված է Իսմիլի՝ որպես հզոր Մայր դիցուհու և ստնտուի կերպարով: Այս հատկանիշներով Իսմիլը ընդհանուր աղերսներ է հանդես բերում Ծովինարի հետ: Իսմիլի որդիները նույնպես գերբնական ծագում ունեն, ինչպես Ծովինարի, սակայն Մհերի՝ «արարող նոյն էութեան մեջ պարփակուած է ե՛ւ խավարն ու ձմեռը (Մելիքը), ե՛ւ լոյսն ու ամառը (Դավիթը): Նրանք հակադիր են, հակոտնեայ: Այս շրջափուլում հայացքը փոխուել է. ձմեռը յղի չէ ամառով, խաւարը յղի չէ լոյսով եւ հակառակը. հակառակ ուժերը ծնում են մէկ միասնական էութիւնից, բայց փոխադարձ

<sup>19</sup> Օրբելի Հ., նշվ. աշխ., էջ 48:

<sup>20</sup> Տե՛ս Կոլլեկցիան Գ., (1964): Մեկնաբանություն «Սանասար և Բաղդասար» դրուցագներգութեան, ի լոյս սյունեթա-հայ բարբառի // Պատմաբանասիրական հանդես, №1, էջ 73-90:

<sup>21</sup> Տե՛ս Դարիբյան Ա. Ա., (2023): Պատավի կերպարը «Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղում // Գավառի պետական համալսարան. Գիտական հոդվածների ժողովածու, 14, էջ 269-287:

միասնությունն չեն կազմում, ընդհակառակը՝ բախվում են»<sup>22</sup>: Այդ բախումը սովորական երկվորյակ եղբայրների հակամարտությունն չէ, որով նրանք տարբերվում են նաև Մանասարից ու Բաղդասարից, «այլ թշնամի զավթիչի, որոնք ունեն այլ էթնիկական ու կրոնական պատկանելություն»<sup>23</sup>: Երկվորյակներին բնորոշ՝ կոնիվ աղջկա համար կամ միմյանց հետ մրցամարտ<sup>24</sup>, կովից հետո երկնային ջրերի արձակում կամ վիշապ հակառակորդի կերպարանափոխումներ չկան այս բախման արդյունքում, որոնք նաև բնորոշ են հնդեվրոպական ամպրոպային առասպելի վերակազմված ուրվագծին<sup>25</sup>: Մակայն այստեղ գործում է երկվորյակ եղբայրների առասպելին բնորոշ մոտիվներից մեկը, ինչը բնորոշ է նաև Ծովինարին. որդիներին հաշտեցնելու, խաղաղեցնելու մոր միջամտությունն Իսմիլի կողմից: Երբ մոր աղերսանքները չեն օգնում, Իսմիլը ամենավտանգավոր պահին բացում է կրծքերը և կասեցնում որդիների վրա իջնող մահաբեր հարվածը: Խորը ողբերգականությամբ է լի այն տեսարանը, երբ կուրծքը մերկացնելով նա Դավթին աղերսում է հանուն այդ կրծքից ծծած կաթի առաջին հարվածը բաշխել և Թուր Կայծակով չսպանել Մսրա Մելիքին. «Իսմիլ խաթուն իրեն ծծեր հանեց, Դավթի առաջ վազեց, ասաց.-Դավիթ, քաղցր ծիծ եմ տվե քեզի, Դու իմ կաթի խաթեր էդ զարկ ինձի բաշխի... Դավիթ իր թուր իջեցուց, տարավ, բերեց, Բարձրացուց էդ թուր, համբուրեց, Դրեց ճակատին, ասաց.-Մա՛րե, էս մե զարկ քո խաթեր»<sup>26</sup>: Մերկ կուրծքը, որը խորհրդանշում է հնազանդություն, վիշտ, գոջում, կարող է նաև պատժել<sup>27</sup>: Այդպես տարիներ առաջ նա պատժի պահանջով ու երկյուղով կասեցրեց Մելիքի զարկը՝ պաշտպանելով Դավթին, երբ նա փորձում էր սպանել Մանուկ Դավթին. «Մելը ք, իմ ծծը կաթ քու վերա խարամ ըլնը, Վոր դու Դավթին գանիս... Իս չում թուրկի, որ դու Դավթին սպանիս» (ՄԾ, Ա, 389), «Մելիքի մեր ծծեր էբաց, կայնեց Մելիքի առջև, Ասաց.-Թե դու Դավիթ սպանես՝ էս ծծերի կաթ քո վրան հարա մ ըլնի»<sup>28</sup>: Վեպում ակնհայտ է Իսմիլի կողմից մայրական գուրգուրանքը, սերը, ջերմությունը Դավթի հանդեպ, նույնիսկ ասացողը նշում է, որ սրբի նման է պահում Իսմիլը Դավիթին. «Մսրա Մելիքի մեր լավ պախից, Շատ լավ կըպախեր, ուշատըրություն կըտարցըներ...» (ՄԾ, Գ, 32), «էն էլ էնբես գըպայե օր՝ սրպի նման գըպայե» (ՄԾ, Գ, 158):

<sup>22</sup> Սահակեան Ա., Փահլեանեան Ա., նշվ. աշխ., էջ 44:

<sup>23</sup> Абрамян Л., (2004). Парные образы «Сасна Прер»: Близнецы, сводные братья, двойственные герои// Հայկական «Մասնա ծներ» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, էջ 61-67:

<sup>24</sup> Տե՛ս Աбрамян Л., նշվ. աշխ.:

<sup>25</sup> Տե՛ս Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 185-186:

<sup>26</sup> Մասունցի Դավիթ (1981): Հայկական ժողովրդական հերոսավեպ, Եր., «Լույս» հրատ, էջ 240:

<sup>27</sup> Տե՛ս Купер Дж., նշվ. աշխ., էջ 65:

<sup>28</sup> Մասունցի Դավիթ, էջ 150:

Իսմիլը, որպես երկվորյակ եղբայրների մայր, ներկայանում է ինչպես որդիներից պաշտպանող, մայրական սիրով ու հոգացողությամբ նրանց պարուրող հերոսուհի, այնպես էլ որպես Մեծ մոր կերպար. նա բնորոշվում է իմաստնությամբ, որդիներին դաստիարակելու, խորհուրդներ տալու բացառապես մայրական հատկանիշներով: Որպես դաստիարակ և խորհրդատու՝ վեպում Իսմիլը նմանվում է Ծովինարին՝ հանդես գալով որդիների և մանկության, և՛ հասունության շրջանում: Որպես խելացի և իմաստուն մայր, որը մեծ հոժարությամբ հանձն առավ Դավթին ինամակալելու սուրբ գործը, Իսմիլը դեռևս իր որդիների մանկությունից հասկացել էր, որ եղբայրները կարող են միմյանց թիկունք լինել և տիրել բոլորին. «Իսմիլ խաթուն գ՛Դավիթ լավ կը տիրեր. Կ՛ասեր. «Դավիթ Մելիքի քումագ կ՛ըլնի՝ ամբողջ էրկիր տի գավթեն, տիրապետեն»»<sup>29</sup>, «Իսմիլ խաթուն գասե.-Լառ, ան քու ախպերն է, Քու աչ թնն է, քու օգնականն է: Մելիք գասե.-Չէ, ես զինք պետզ է սպանըմ: Իսմիլ խաթուն գասե.-Լառ, ան պզդիկ է, Գը սպանիս, գեղնիք խայտառակ» (ՄԴ, 1977, 87), «Չեմ ճամփի Սասուն, Թո մնա Մըսր, իմ մարթի տղեն ի, իմ տղեն ի. Իմ տղեն մենակ ի, ախպեր չունի, Թո էլնեն ախպեր, աբրեն, Մենձանան, Մըսր, Սասուն կտիրապետեն» (ՄԴ, 1977, 260): Այդպես նաև նրանց հասունության շրջանում է Իսմիլը փորձում նախանշված բախումից ետ պահել որդիներին, երբ Մելիքը պատրաստվում է հարձակվել Սասունի վրա: Երկու դեպքում էլ որպես մայր՝ նա իր որդիներին անկեղծորեն սիրում է և Դավթին մրցակից չի տեսնում իր հարազատ որդու համար: Ինչպես նկատում է Օրբելին. «Էպոսում Իսմիլ խանումի կերպարը այնպես է կերտված, որ չնայած նրա բոլոր խորամանկություններին ու փառասիրությանը, արդարացվում է այն կաթը, որով նա սնել է «աննման Դավթին»»<sup>30</sup>: Երբ Մելիքը, Դավթի արարքներից զայրացած, զորահավաք է անում, Իսմիլն այդ անգամ էլ դեմ է դուրս գալիս որդուն, քանի որ կարծում է, որ նրանք կարող են յուրաքանչյուրն իր երկրում խաղաղ ապրել՝ մեկը մյուսին չխանգարելով. «Մե՛րթա. Են տեխ անու, աս տեխ քի. Ախպեր ըմ մեկ տու իս, մեկ են» (ՄՕ, Ա, 512): Մանավանդ որ մայրական բնագողով և կանխատեսությամբ զգում է, որ դա կարող է ողբերգական ավարտ ունենալ Մելիքի համար, ինչը վեպում դրսևորվում է երազատեսությամբ. «Յես գիշեր երազ մ՛եմ տեսեր՝ Սասնա գրետեր ըստակ եր, Մըսրա գրետեր կը գրեր քեմ արուն. Յես կ՛ասեմ տու մ՛ե՛րթա վըր են կտըրճին» (ՄՕ, Ա, 773), «Վորտի յես կես գիշերին երազ մ՛տեսա՝ Մսրա աստղն մութն խավար եր, Մասնա աստղն լույսն պայծառ եր... Մասնա ձին կու գեր, կը զարներ, Մսրա ձիու մեջք կը կոտրեր... Վոր Մասնա խոյ կու գեր, կը զարներ, Մսրա խոյի վիզ կը կոտրեր, Կը տաներ հանտունտ, կը կորսցուցեր» (ՄՕ, Ա, 1055): Այսպիսով, որդիների թե՛ մանկության և թե՛ հասունության շրջանում Իսմիլը չի դադարում խրատել, դաստիարակել նրանց՝ այդ կերպ նաև պաշտպանելով նրանց մեկը մյուսից, նրանց ասում է այն, ինչ ուրիշ որևէ

<sup>29</sup> Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, էջ 132:

<sup>30</sup> Օրբելի Հ., նշվ. աշխ., էջ 49:

մեկը չի կարող ասել. «Մերն եկավ Դավթի մոտ, ասաց. -Դավթ մեկ կ'իտաս Աստրծուն խաթըր, մեկ կ'իտաս իմ ծծի կաթին խաթըր, մեկ կ'ըրբ գարկ» (ՄՕ, Բ, I, 243), «Մըսրա Մելիքի մեր ասաց. -Վորդի՛ք, չե՞ դու երկունսն ել՝ Եսա ծծի կաթն էք կերեր, ջոջացեր, մը՛ կովեք...-Վորդի՛, կոտորված, սպանված, խըլղի տղեներն են. Մըսր Մելիքին, Մասուն քե. կերե՛ք, խմե՛ք, ձի քեֆ երե՛ք» (ՄՕ, Ա, 975-976): Այս հատկանիշները, հատկապես՝ խորհրդատուի, դաստիարակի, բնորոշ են հիմնականում երկվորյակների մորը՝ Ծովինարին:

### Եզրակացություն

Վեպում մոր մասին հայ ժողովրդի պատկերացումները ամփոփվում են նաև Իսմիլի կերպարում: Անկախ ազգությունից, անկախ լավ կամ վատ, անզամ թշնամական հարաբերություններից՝ Իսմիլը մայրական սիրո ու ջերմության բարձրակետում է և այդ առումով որոշակիորեն հակադրվում է Դավթի «խորոխաոր կնկան» կամ Սառեին, ով սասունցի լինելով՝ սրտացավ վերաբերմունք չունի Դավթի հանդեպ, քանի որ մայր չէ:

Մոր նկատմամբ մեր ժողովրդի այս կարգի վերաբերմունքի դրսևորումը խոսում է նախ և առաջ հայ իրականության մեջ և հայ ընտանիքում մոր դերի առանձնակի ընկալման և գնահատման մասին, հատկապես որպես դաստիարակի, ինչով պայմանավորված է նաև հայ հասարակության մեջ ձևավորված կայուն արժեքային համակարգը: Այս որակներով Իսմիլը վեպում մոտենում է Ծովինարի կերպարին:

**АЛИНА ГАРИБЯН – Мифологическая основа образа Исмиль в эпосе «Сасна црер».**– «Сасна Црер» – единственная героиня эпоса, выступающая в разных функциях как во второй, так и в третьей ветви романа: в одном случае – как жена Великого Мелика, в другом – как мать Младшего Мелика, что обусловлено двойственностью её характера.

Образ Исмиль не богат мотивами, но играет роковую роль в жизни героев эпоса. Она не только становится для них женой и матерью, но и важным противовесом, благодаря которому сюжет развивается с удивительной антидраматической гармонией.

Исмиль, подобно Дегдзуну и Хандут, делает для себя выбор: кому отдаться, кто должен родить ей сына. Во второй ветви романа Исмиль-хатун сохраняет власть, свойственную царице, Великой Матери. В связи с этим в романной канве второй ветви Исмиль становится равноправной и уравновешивающей фигурой образу жены Великого Мгера или Армагана. В третьей ветви эпоса образ Исмиль по своей природе приближается к характеристикам матери братьев-близнецов, что является второй важной её характеристикой в романе.

**Ключевые слова:** «Сасна Црер», эпос, Исмиль, жена Великого Мелика, мать Младшего Мелика, Армаган, Сатеник, Цовинар

**ALINA GHARIBYAN – The Mythological Basis of the Character of Ismil in the Epic "Sasna Tsrer".**– "Sasna Tsrer" is the only female heroine of the epic, who acts in different functions in both the second and third branches of the novel: in one case as the wife of the Great Melik, in the other as the mother of the Little Melik, which is due to the dual nature of the character. Ismil's character is not rich in terms of motives, but she has a fateful role in the lives of the Sasna heroes.

She not only becomes a wife and mother for the Sasna heroes, but also becomes an important counterweight, thanks to which the plot develops with amazing anti-drama harmony.

Ismil, like Deghdzun and Khandut, makes a choice for herself as to whom to surrender to, who should give her a son. In the second branch of the novel, Ismil Khatun retains the power characteristic of the queen, the Great Mother. In this regard, in the novel outline of the second branch, Ismil becomes an equal and counterbalancing figure to the image of the wife of the Great Mher or Armaghan. In the third branch of the epic, the image of Ismil in its nature approaches the characteristics of the mother of the twin brothers, which is the second important characteristic of her in the novel.

**Key words:** *Sasna Tsrer, epic, Ismil, the wife of the Great Melik, the mother of the Little Melik, Armaghan, Satenik, Tsovinar*

### Գրականության ցանկ

- Աբեղյան Մ., (1966): Երկեր, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 571 էջ: [Abeghyan M. (1966). *Yerker*, h. A, HSSH GA hrat., 571 ej.]
- Հարությունյան Մ., (2000): Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային» հրատ., 527 էջ: [Harut'yunyan S. (2000). hrat. 527 pp.]
- Ղարիբյան Ա. (2023): Պառավի կերպարը «Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղում // Գավառի պետական համալսարան. Գիտական հոդվածների ժողովածու, 14, Գավառ, էջ 269-287: [Gharibyan, A. (2023). *Pa'avi kerparə «Sasna c'rer» eposi ar'ajin čyutum*. Gava'ri petakan hamalsaran. Gitakan hodvacneri žotovacu, 14. Gava'r, pp. 269–287.]
- Մովսես Խորենացի (1981): Հայոց պատմություն (Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1981, 587 էջ: [Movsēs Xorenac'i. (1981). *Hayoc' patmut' iwn* (K'nnakan bnagirə M. Abeg'yani ew S. Harut'yunyan). Yerevan: Yerevani hamalsarani hrat. 587 pp.]
- Սահակեան Ա., Փահլևանյան Ա. (1996): Սանա ծռեր դիւցազնավէպ, Առասպելական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ, Փասատենա, Դրազարկ հրատարակչութիւն, 125 էջ: [Sahakean, A. (1996). *P'ahlewanean A., Sasna c'rer diwc'aznavep: Araspelakan ənderk', vipakan ka'oyc', vipasanakan yefanak*. Pasatena: Drazark hrat., 125 pp.]
- Սասունցի Դավիթ (1981): Հայ ժողովրդական հերոսավէպ, Երևան, «Լույս» հրատ, 343 էջ: [Sasunc'i Davit'. 1961. *Hay žotovrdakan epos*. Yerevan: hrat., 334 pp.]
- «Սասունցի Դավիթ» նոր պատումներ (1977): Հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Գ. և Վ. Գրիգորյանները, Երևան, «Սովետական գրող» հրատ., 366 էջ: [“Sasunc'i Davit'” nor patumner. (1977). Havak'ec'in ew hrat. patrastec'in G. ew V. Grigoryannerə. Erevan: “Sovetakan groł” hrat., 366 pp.]
- Սասնա ծռեր (1936): Ժողովրդական վէպ, հ.Ա, Երևան, Պետհրատ., 1128 էջ: [Sasna c'rer. Žotovrdakan vep. Vol. A. (1936). Yerevan: Pethrat., 1128 pp.]
- Սասնա ծռեր (1944): Ժողովրդական վէպ, հ. Բ, մաս I, Երևան, Պետհրատ., 405 էջ: [Sasna c'rer. Žotovrdakan vep. Vol. B, Part I. (1944). Yerevan: Pethrat., 405 pp.]
- Սասնա ծռեր (1951): Ժողովրդական վէպ, հ. Բ, մաս II Երևան, Պետհրատ., 1005 էջ: [Sasna c'rer. Žotovrdakan vep. Vol. B, Part II. (1951). Yerevan: Pethrat., 1005 pp.]
- Սասնա ծռեր (1979): Ժողովրդական վէպ, հ. Գ Պատումների գրառումը և բնագրի պատրաստումը՝ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 583 էջ: [Sasna c'rer. Žotovrdakan vep. Vol. G. (1979). Patumneri gra'rumə ew bnagrayin patrastumə S. Harut'yunyani ew A. Sahakyani. Yerevan: HSSH GA hrat., 583 pp.]
- Սասնա ծռեր (1999): հ. Դ Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 582 էջ: [Sasna c'rer. Vol. D. (1999). Yerevan: HH GAA “Gitut'iwn” hrat., 582 pp.]

- «Սասնա ծռեր», 7 նորահայտ պատումներ (2000): Պատումները գրառել և հրատարակության են պատրաստել Ռ. Գրիգորյանը և Ե. Մելիք-Մուրադյանը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 280 էջ: [“*Sasna c’rer*”, 7 norahayt patumner. (2000). Patumnerə grafel ew hrat. patrastel en R. Grigoryanə ew E. Melik-Muradyanə. Yerevan: HH GAA “Gitut‘iwn” hrat., 280 pp.]
- Տեր-Մկրտչյան Գ. (1998): Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, Էջմիածին, 815 էջ: [Ter-Mkrtč‘yan, G. (1998). *Hayagitakan usumnasirut‘yunner*, girk‘ B. E՛jmiacin, 815 pp.]
- Օրբելի Հ. (1956): Հայկական հերոսական էպոսը, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 138 էջ: [Orbeli, H. (1956). *Haykakan herosakan eposə*. HSSR GA hrat., Erevan, 138 pp.]
- Абрамян Л. (2004). Парные образы «Сасна Црер»: Близнецы, сводные братья, двойственные герои // Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժանանգությունը, Երևան, էջ 61-67: [Abramyan, L. (2004). *Parniye obrazi «Sasna C’rer»: Bliznec’i, svodniye bratya, dvoistvenniye geroi*. In: *Haykakan «Sasna c’rer» eposə yev hamashkharhayin epikakan žarāngut‘yunə*. Yerevan, pp. 61–67.]
- Купер Дж. (1995). Энциклопедия символов, Книга IV, Москва, Ассоциация Духовного Единения “Золотой век”, 397 с. [Kuper, Dzh. (1995). *Éntsiklopediya simvolov*, Book IV. Moskva: Assotsiatsiya Dukhovnogo Edineniya “Zolotoy vek”, 397 с..]
- Редер Д. Г. (1980). Исида // Мифы народов мира, М., Издат. «Советская энциклопедия», с. 568-570. [Reder D. G. (1980). *Isida // Mify narodov mira*, Moskva, Izdatel’stvo “Sovetskaya entsiklopediya”, pp. 568–570.]

## Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԳՐԻ ԱՌԱՏ «ԴԱՎԻԹ ԵՎ ՄՇԵՐ» ԷՊՈՍԱՊԱՏՈՒՄԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ՝ 

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՍԱՍՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ՝ 

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հոդվածում ներկայացված են Մ. Աբեղյանի գրի առած «Դավիթ և Միեր» պատումի լեզվական առանձնահատկությունները: Հայկական էպոսի այս տարբերակը անվանի հայագետին պատմել է մոկացի Նահապետը: 19-րդ դարի վերջին քառորդի լեզվական նյութը բնական ճանապարհով, առանց գիտական մշակման ենթարկվելու հասել է մեր օրեր: Մոկսի բարբառի բավականին բարդ հնչյունական, քերականական համակարգը և հարուստ բառապաշարը ամփոփող այս տարբերակը դիտարկված է համակողմանիորեն: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ բարբառն ունի յուրահատուկ դարձվածքներ, բառապաշարային միավորներ, բայական զարտուղի կազմություններ, որոնք տարածքի մյուս խոսվածքներում արձանագրված չեն:

\* **Հայկանուշ Մեսրոպյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հայագիտության ամբիոնի դոցենտ

**Айкануш Месропян** – доктор филологических наук, ведущий научный сотрудник института языка имени Р. Ачаряна НАН РА, доцент кафедры арменоведения ГУ имени В. Брюсова

**Haykanush Mesropyan** – Doktor of Philology, Leading Researcher at the Institute of Language after H. Acharyan, NAS RA. Associate Professor at the Department of Armenian Studies at the State University named after V. Bryusov

Էլ. փոստ՝ mesropyanhaykanush@gmail.com ORCID ID: <https://orcid.org/0009-0008-8038-0168>

\*\* **Սասուն Համբարձումյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս

**Сасун Амбарцумян** – кандидат филологических наук, лектор кафедры арменоведения государственного университета имени В. Брюсова, лектор кафедры арменоведения Национального политехнического университета Армении

**Sasun Hambartcumyan** – Candidate of Philological Sciences, Lecturer at the Department of Armenian Studies at V. Bryusov State University, Lecturer at the Department of Armenian Studies at the National Polytechnic University of Armenia

Էլ. փոստ՝ vetarmenia@gmail.com ORCID ID: <https://orcid.org/0009-0005-9065-0385>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 04.02.2026

Գրախոսվել է՝ 09.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

Կուտակված փաստերի հիման վրա առաջադրվում է, որ հայագիտության 21-րդ դարը դառնա ամբարված էպոսապատումների գիտական վերլուծության, գրարկողների աշխատանքի գնահատման, պատումաբանության գիտական կենտրոնի հաստատման, բանասացների հիշատակման ու մեծարման, անտիպ և տպագրված տարբերակները բարբառային գիտական տառադարձությամբ հրատարակելու ժամանակաշրջան:

Մ. Աբեղյանի գրի առած «Դավիթ և Մհեր» պատումը ուսումնասիրության ծավալուն նյութ է ոչ միայն բանագետների, այլև լեզվի պատմության, բարբառագիտության, ազգային հոգեփոխությունների և այլ գիտակարգերի մասնագետների համար: Այն վստահելի, հիմնավոր լեզվական փաստեր է տրամադրում հատկապես Մոկսի բարբառի հնչյունական, քերականական, բառապաշարային իրողությունները մանրակրկիտ քննելու առումով:

Մոկսեցի Նահապետի փոխանցած պատկերավոր արտահայտությունները, դարձվածային միավորները, հարադրավոր կառույցները, ժամանակակից հայերենի քերականական կանոններին ոչ համահունչ բայական կազմությունները և լեզվական բազմաթիվ վկայություններ փաստում են գրարկողի հմտության, բանահավաք-բարբառակիր հարաբերությունը գիտականորեն ճիշտ հիմքերի վրա դնելու, ասացողից հնարավորինս շատ տեղեկություններ քաղելու և հայոց լեզվի գանձարանը համալրելու մասին:

**Բանալի բառեր** – *էպոս, բանահավաք, բանագետ, պատում, բարբառ, բառապաշար, հնչյունական, տարբերակ, քննանցում*

### Ներածություն

«Մասնա ծոեր» էպոսը՝ որպես հայ ժողովրդի համատեղ պատմողական ստեղծագործություն, հայության կարևորագույն ասքն է, պատմական զարգացման նշանակալից մի խտադրվագը, որում ամփոփված են ինքնահատուկ բարքեր, սովորույթներ, տեղագրություն, բուսական ու կենդանական աշխարհ, լեզվամտածողություն, լեզվաարտահայտչական միջոցներ և այլն: Ազգային էպոսապատումներում հայոց լեզուն և ժողովրդի խոսքը ի հայտ են գալիս բնական ճանապարհով, առանց գիտական մշակման ենթարկվելու<sup>1</sup>: Այս մասին Ավ. Իսահակյանը գրում է. «Մեր էպոսը գրական մշակումի չի ենթարկվել, գրական միջամտություն չի ունեցել, որպիսին ունեցել են հունական էպոսը, «Շահնամեն», «Նիբելունգների երգը»: Մեր վեպը բացառապես ժողովրդական ստեղծագործության արդյունք է»<sup>2</sup>: Մ. Մկրչյանը ևս արժևորում է մեր հերոսավեպի լեզվական բնական հիմք ունենալը. «էպոսի համաշխարհային պատմության մեջ «Մասունցի Դավիթը» այն բացառիկ նմուշներից է, որ մարդկությանը հասել է գրի առնվելով անմիջապես ժողովրդական ասացողների բերանից»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Ջրբաշյան Է., Մախչանյան Հ.** (1980): Գրականագիտական բառարան, Եր., «Լույս» հրատ., էջ 121:

<sup>2</sup> **Իսահակյան Ավ.** (1951): Երկերի ժողովածու, հ. 4-րդ, Եր., «Հայաստան» հրատ., էջ 73:

<sup>3</sup> **Մկրչյան Մ.** (1976): Հայ հին գրականության պատմություն, Եր., Եր. հմլս. հրատ., էջ 336:

«Մասնա ծներ» էպոսի պատումների գրարկման առումով արգասաբեր են եղել 19-20-րդ դարերը: Հարկ է, որ 21-րդ դարը դառնա ամբարված էպոսապատումների գիտական վերլուծության, գրարկողների աշխատանքի գնահատման, պատումաբանության գիտական կենտրոնի հաստատման, բանասացների հիշատակման ու մեծարման, անտիպ և տպագրված տարբերակները բարբառային գիտական տառադարձությամբ հրատարակելու ժամանակաշրջան: Մ. Աբեղյանը կանխատեսում էր, որ ժամանակի ընթացքում մեր էպոսագիտության մեջ կձևավորվի *համեմատական պատումաբանություն*, որի ուսումնասիրության թեման կդառնա տարբեր բարբառներով գրի առնված փոփոխակների լեզվական քննությունը<sup>4</sup>: Պետք է նշել, որ այսօր էպոսագիտությունն անվանի գիտնականի կանխատեսած հանգրվանում է, որը լեզվաբան-բանագետների արմատական խնդիրներ է առաջադրում:

### 1. Մ. Աբեղյանը որպես էպոսագետ

Նշանակալից է Մ. Աբեղյանի ներդրումը հայ էպոսագիտության մեջ՝ որպես բանագետ-բանահավաքի, բանասեր-գրարկողի, բարբառագետ-խմբագրի:

Գրականագետ-բանագետների ուսումնասիրության խնդրից դուրս է էպոսի պատումների լեզվական, բարբառային հատկանիշների բացահայտումը, առանց որի ժողովրդական վեպի մասին ասելիքը կմնա թերի: «Վեպի բանասիրական ուսումնասիրությունը դեռ պակասում է», - կարծում էր Մ. Աբեղյանը: Այսօր էլ կարող ենք ասել, որ լեզվաբանականը, մասնավորաբար բարբառագիտական ուսումնասիրությունը զիջում են բանագիտականին:

Ա. Ղանալանյանը փաստում է, որ «Աբեղյանը եղել է և մնում է «Մասունցի Դավթի» ամենահմուտ ուսումնասիրողը: Ճիշտ է, նրա հետ միասին, նրանից առաջ ու հետո, հայկական հերոսական էպոսի մասին գրել են և ուրիշները, սակայն ոչ մեկը նրա նման ճշմարտացի, բազմակողմանի, հանգամանորեն ու խորը չի հետազոտել այն»<sup>5</sup>: Հայկական էպոսի պատմական զարգացման նախորդ փուլերին քաջածանոթ Մ. Աբեղյանը լայնախոհ գիտնականի համեստությամբ էպոսագետի անդրանիկությունը զիջում է Գ. Սրվանձտյանցին՝ վկայաբերելով նրա «Գրոց ու բրոց» (1874 թ.) բանահյուսական ժողովածուի հավելվածում տպագրված «Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» պատումը՝ բարբառագիտական արժեքավոր դիտարկումներով: 1889 թ. Մ. Աբեղյանը գրում է. «Մեր բանասեր հասարակութեանն արդեն յայտնի է, թե մեր ժողովրդական բանահիւսութեան մեջ ինչ մեծ տեղ է բռնում հայր Գարեգին Սրուանձտեանցի «Գրոց-Բրոցի» մեջ հրատարակուած «Մասունցի Դավիթ» կամ «Մհերի դուռ» կոչուած ժողովրդական պատմական-դիւցազնական վեպը»<sup>6</sup>:

<sup>4</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.** (1966): Երկեր, Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 10:

<sup>5</sup> **Աբեղյան Մ.** (1966): Երկեր, Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ ԺԵ:

<sup>6</sup> **Աբեղյան Մ.** (1889): «Դավիթ եւ Մհեր» ժողովրդական դիւցազնական վեպ, Շուշի, Միքիջան Մահտեսի-Յակովբեանցի տպարան, էջ Գ:

Կարևորելով էպոսի՝ բարբառային նյութի շտեմարան լինելու իրողությունը՝ Մ. Աբեղյանն ընդգծում է մշեցի Կրպոյից գրառած պատումի լեզվական կարևորությունը. «Միրողները յափշտակուեցան այդ գործով, իսկ թերահաւասները, թէպէտ զարմանալով, բայց հաւատացին, որ մեր ազգի մէջ ևս կարող են լինել ժողովրդական վէպեր: Ժողովրդագրական նիւթով զբաղուողի և բարբառներ ուսումնասիրողի համար պարզ պիտի լինէր այդ հրատարակութեան մեծ արժէքը և պիտի օգտուէին նրանից»<sup>7</sup>: Պատումի վերջաբանում Գ. Սրվանձտյանցը բարբառագիտական ուշագրավ դիտարկումներ է կատարել, որոնք համալրվում են Մ. Աբեղյանի կողմից:

Տեսական այս դրույթները կարող ենք համարել էպոսի բարբառագիտական վերլուծության առաջին նմուշներից, որոնք կարող են օգտակար լինել էպոսի պատումները վերահրատարակելիս: Ա. Ղարիբջանը փաստում է, որ «Գրի առնողները, չպահպանելով բարբառագիտության կանոնները, փոխում են բարբառի պատկերը, և եթէ միայն գրի առնվածով առաջնորդվենք, ոչ մի բարբառի լեզվաբանորեն ճշգրիտ վիճակը հանդես բերել չենք կարող»<sup>8</sup>:

## 2. Մ. Աբեղյանի գրարկած «Դաւիթ և Միեր»<sup>9</sup> պատումի մասին

Էպոսի տեսաբան Մ. Աբեղյանը մեծ ավանդ ունի նաև բարբառային բանավոր խոսքը հմտորեն գրարկելու առումով: Կարևորելով բանահավաքների և բանագետների տրամադրած տվյալներն ասացողների և գրառողների, վէպի տարածման սահմանների մասին՝ անվանի հայագետը փաստում է, որ ավանդական վէպի գրարկման կատարելության առաջին նախապայմանը բանահավաքի՝ տվյալ փոփոխակի լեզվական տարածքային տարբերակի հնչյունական, քերականական և բառապաշարային իրողություններին ծանոթ լինելն է: Անդրադառնալով գրառման դժվարությունները հաղթահարելուն՝ Մ. Աբեղյան բանահավաքը կարծում է, որ «վէպը պէտք է գրել հենց իրեն տեղում, մինչդեռ

<sup>7</sup> **Աբեղեան Մ.** (1908): Հայ ժողովրդական վէպը, արտատպուած «Ազգագրական հանդէսից», Թիֆլիս, Ն. Աղանեանի տպարան, էջ 6: Մ. Աբեղյանը նկատի ունի Ք. Պատկանյանի, Մ. Մանդինյանի և Գ. Խալաթյանի ցուցաբերած ուշադրությունը Գ. Սրվանձտյանցի կատարած գործի նկատմամբ: Ք. Պատկանյանն այդ տարբերակը ներառում է իր «Մշոյ բարբառը» գրքում (տե՛ս **Патканов К. П.**, *Материалы для изучения армянских наречий*, выпуск II, *Мушский диалект*, Санкт-Петербург, типография Императорской академии наук, 1875), Մ. Մանդինյանը հարմարեցնում է իբրև դասագիրք «Ազգային դիւցազնական աշխարհ» վերնագրով, Գ. Խալաթյանը թարգմանում է ռուսերեն:

<sup>8</sup> **Ղարիբջան Ա.** (1939): «Սասունցի Դավիթ» ժողովրդական վէպի լեզուն, «Սասունցի Դավիթ», Հոբեյանական ժողովածու նվիրված էպոսի 1000-ամյակին, Յեր., Արմֆան, էջ 83:

<sup>9</sup> Տե՛ս «Դաւիթ և Միեր» (1889): Ժողովրդական դիւցազնական վէպ, գրի առաւ Մ. Աբեղեան, Շուշի, Միրիջան Մահտեսի-Յակովբեանցի տպարան, էջ 3-61: «Սասնա ծոեր» (1936): Ժողովրդական բանահյուսություն, Ա, Ժողովրդական վէպ, Ա հատոր, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մ-Ոհանջանյանի, Յեր., Պետհրատ, էջ 3-1128: «Սասնա ծոեր» (1977): Ժողովրդական վէպ, աշխատությամբ Մ. Հարությունյանի, Եր., «Սովետական գրող» հրատ., 3-700 էջ:

Էջմիածնի մարդիկը մեծ մասամբ Էջմիածնում նստած են գրել՝ լսելով պանդուխտներից, իսկ պանդխտությունը, ինչքան էլ կարճատև լինի, շատ զօրեղ ազդեցություն է անում պանդխտողի հոգեկան վիճակի, հետևաբար և վեպի վրայ»<sup>10</sup>:

Հայկական էպոսի հայրենիք Մոկս-Սասուն լեռնաշխարհից բանահյուսական տարբերակները տարածվել են Հայաստանով մեկ: Մ. Աբեղյանը, հիմնվելով իրեն հայտնի պատումների բարբառային լեզվի վրա, հատկանշում է վեպի տարածման երկու հետագիծ՝ 1) Սասունի գավառներից վեպը անցել է Բաղեշ, Մուշ, Խլաթ, Բուլանըխ, Արճեշ, Կաղզվան, Ալաշկերտ, Այրարատ, Էջմիածին, Արագածոտն, Ապարան, Գավառ և 2) Շատախ, Ռշտունիք, Մոկս, Վան, Արաղայի դաշտով Պարսկահայք, Խոյ, Սալմաստ, Մակու: Այս հարցում նրան համամիտ Մ. Հարությունյանը գրում է. «Արդարև ապացուցված է, որ «Սասնա ծռեր» վեպը արևմտահայ որոշակի հատվածների սեփականություն է, տարածվել է Հայաստանով մեկ և Հայաստանից դուրս միմիայն այդ հատվածների տարբեր բնույթի տեղաշարժերի միջոցով»<sup>11</sup>:

Մ. Աբեղյանի գրի առած «Դաւիթ և Մհեր» պատումը ներկայացնում է երկրորդ՝ Սասունից Շատախ, Ռշտունիք, Մոկս հետագիծը: Ա. Ղարիբյանը փաստում է, որ «գրի առնված վարիանտներից ամենաշատը Մոկսի խոսվածքով է, այդ խոսվածքով կա 15 վարիանտ»<sup>12</sup>: Ապա հավելում է. «Վարիանտների լեզուների մեջ ամենահետաքրքրական և գիտական տեսակետից արժեք ներկայացնողը Մոկսի խոսվածքն է: ... Այդ առանձնահատկություններն այնքան յուրօրինակ են, որ հայ բարբառագիտության համար դրանք կդառնան լեզվական և լեզվաբանական գեղեցիկ արժեքներ»<sup>13</sup>: Հետևաբար Մ. Աբեղյանի գրի առած «Դաւիթ և Մհեր» պատումի միջոցով հայ բարբառագիտությունն ստանում է Մոկսի բարբառով ուսումնասիրության կարևոր նյութ: Մ. Աբեղյանը գրում է. «Մեր պատմողը մի մոկացի հայ էր, Մոկաց Գինեկաց գիւղից՝ Նահապետ անունով, այն հազարաւորներից մէկը, որոնք աղքատութիւնից ստիպուած աշխարհի ծայրերն են շրջում: Նա մի բարի քրիստոնէայ մարդ էր, որ ամենայն սրբութեամբ էր վերաբերում դէպի իւր պատմածը, որին հաւատում էր, թէ ամբողջապէս կատարուել է մի ժամանակ»<sup>14</sup> ջանալով հաղթահարել Մոկսի բարբառի բավականին խրթին արտասանությունը: - «Մոյն վարիանտի լեզուն շատ սահուն, կտրուկ և վիպական-բանաստեղծական է, ոճը՝ կենդանի պատկերաւոր և ներդաշնակ»<sup>15</sup>:

<sup>10</sup> Աբեղյան Մ. (1908), էջ 15:

<sup>11</sup> «Սասնա ծռեր» (1977), էջ 624:

<sup>12</sup> Ղարիբյան Ա. (1939), էջ 81:

<sup>13</sup> Նույն տեղում, 83:

<sup>14</sup> Աբեղյան Մ (1889): «Դաւիթ եւ Մհեր» ժողովրդական դիւցազնական վեպ, Շուշի, Միքիջան Սահտեսի-Յակովբեանցի տպարան, էջ Դ-Ե:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ Ե:

Խնդրո առարկա պատումը հրատարակվել է երեք անգամ՝ 1889, 1936 և 1977 թվականներին՝ տեխնիկական, տպագրական նկատելի տարբերություններով:

1889 թ. տպագրվածի վերնագիրը «Թլօր Դաւիթ եւ Մհեր» է, որի բաժինները տառահամարներով են<sup>16</sup>: Վերջում կա հատված՝ «Թռլան Դաւիթ» ճյուղից (*թռլան* «թռչող, ցատկող»): Այս պատումը Մ. Աբեղյանի գրի առած և հրատարակած իսկատիպն է, բնականաբար դասական ուղղագրությամբ է: Բարբառային գիտական տառադարձում կիրառված չէ, սակայն մաշտոցյան ուղղագրությունը հնարավորություն է ընձեռում որոշակիորեն կռահելու Մոկսի բարբառի հնչյունական առանձնահատկությունները, հատկապես երկբարբառների առկայությունը: Տեքստային տողատակերում ներկայացված են բարբառային բառերի, քերականական ձևերի և լեզվական այլ միավորների արժեքավոր մեկնաբանություններ:

1936 թ. հրատարակությունը «Դավթի կռիվը Մարամելիքի հետ» վերնագրով է<sup>17</sup>. Բաժիններն ունեն ենթավերնագրեր: Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ լույս ընծայված տեքստի առավելությունը քմային ձայնավորների՝ գիտական տառադարձամբ արտահայտված լինելն է: Մակայն այս հրատարակությունն ունի բացասական կողմեր: Խորհրդահայ ուղղագրության թերի տարբերակով հնարավոր չի եղել արտահայտել *է* և *օ* ձայնավորները՝ հայերեն այբուբենում դրանց բացակայության պատճառով: Այս վերահրատարակությունը բավականին հաջողված կարելի էր համարել, եթե ուղղագրության այդ տարբերակով չլիներ:

1977 թ.՝ Մ. Հարությունյանի վերահրատարակությունը<sup>18</sup> տուժել է բարբառային տառադարձության բացակայության պատճառով: Տառադարձման դժվարություններին ավելանում է նաև հնչերանգի և շեշտի նշագրման անհրաժեշտությունը<sup>19</sup>, որը կարևոր էր համարում Մ. Աբեղյանը:

Այս տարբերակների մասին Ա. Ղարիբյանը գրում է. «Մոկսի բարբառը, ըստ առաջին օրինակի, իր հնչյունական սիստեմով նման է Արարատյան, Թբիլիսիի և Ջուղայի բարբառներին, մինչդեռ ըստ երկրորդ օրինակի՝ նա նման է Վանի, Խոյի, Ուրմիայի և արևելյան մյուս բարբառներին: Հետևաբար, չնայած մեր վեպը գրի առնողների խոշոր վաստակին, լեզվական տեսակետից բոլոր վարիանտները գերծ չեն զգալի թերություններից՝ հենց նույն գրի առնողների պատճառով: Բարբառագրության անհաջող կիրառման պատճառով է, որ հաճախ մի որևէ բարբառ դարձնում են մեկ ուրիշ բարբառի ենթաբարբառ կամ,

<sup>16</sup> Տե՛ս «Դաւիթ եւ Մհեր» (1889), 1-61 էջ:

<sup>17</sup> Տե՛ս «Սասնա ծռեր» (1936), էջ 1-54:

<sup>18</sup> Տե՛ս «Սասնա ծռեր» (1977), էջ 3-700:

<sup>19</sup> Շեշտի մասին տե՛ս **Պետերսեն Հովգեր** (1904): Հին հայերենի լեզուի շեշտը // «Հանդես ամսօրեայ», № 5, էջ 131-133:

նույնիսկ, խոսվածք: Հենց դրա պատճառով էլ Մոկսի խոսվածքը համարում են Վանի բարբառի ենթաբարբառը»<sup>20</sup>:

### 3. Մ. Աբեղյանի բարբառագիտական դիտարկումները

Մ. Աբեղյանի՝ 1886 թ. գրառած պատումը բարբառային առումով բավականին ուշագրավ է: Ինչպես հայտնի է, Մ. Աբեղյանը ոչ թե Մոկսում, այլ Էջմիածնի ճեմարանում է գրի է առել 35-ամյա դոնապան Նահապետից: Պատումի գրառման ընթացքը նկարագրելիս Մ. Աբեղյանը արժեքավոր փաստեր է հաղորդում Մոկսի բարբառի մասին: Նա գրում է. «Իսկ ինչ որ վերաբերում է գաւառական արտասանութեանը, պէտք է ասել, որ Մոկսաց բարբառը, որ մի տեսակ քաղցրահնչիւնութիւն ունի, միայն մեր արդի տառերով ճշդութեամբ գրի առնելը մեծ դժուարութիւն է ներկայացնում, որովհետև ձայնաւորներն երբեմն խիստ փափկանում են, երբեմն շատ բութ ու խուլ կերպով արտասանւում, այնպէս որ մարդ լաւ կերպով չէ ըմբռնում, թէ ինչ հնչիւն է դուրս գալիս: Միննոյն ձայնաւորը, մինչև անգամ մի բառի մէջ, երբեմն կարճ է արտաբերւում, երբեմն երկար, օրինակ հէնց «ասաց», «արեց» բառերի մէջ, որ շատ են պատահում, առաջին *ա*-երը սուղ են և բութ: Հնչիւնների ճշդութիւնը, ինչքան մեր այբուբենով կարելի էր արտայայտել, պահեցինք, թողեցինք մի քանի ձայնաւորներով մի հնչիւն արտայայտելը, որ սովորական է մեր գաւառական բարբառներով գրողներին, ի նկատի ունենալով, որ գրութեան այդ եղանակը պիտի դժուարացնէր ընթերցողներին՝ լեզուն հասկանալ, մանաւանդ որ, ճիշդ ասած, այդ ձևերով իսկական հնչիւնը դարձեալ անորոշ է մնում, և մենք իսկ, լաւ տեղեակ չլինելով մոկսաց լեզուին, կարող էինք սխալների մէջ ընկնել»<sup>21</sup>:

Ինչպես նկատում ենք, Մ. Աբեղյանը գիտական բարեխղճությամբ կասկածի տակ է դնում իր գրառած պատումի ստույգ լինելը, ուստի հավելում է. «Կարելի չէ ասել, թէ մեր վարիանտի լեզուն բոլորովին մաքուր մոկսաց բարբառով լինի, ի նկատի առնելով, որ պատմողը երկար տարիներով պանդխտել է շատ տեղեր: Վեպի մէջ շատ են պատահում խոնարհումների կրկնակի ձևեր, օրինակ՝ *առաւ- առեց, տուաւ-տուեց, արաւ- էրաւ-արեց-էրեց, էքից-քցեց* և այլն, որոնք, հարկաւ, զանազան բարբառների ազդեցութեան տակ լինելուց են ծագել»<sup>22</sup>: «*Մարամելիք գտողան առեց տարաւ, Տարաւ եղի գատը տեղ, մընչ դաշտին*» (1,12)<sup>23</sup>:

Երկրորդ հրատարակության «Բարբառային քերականական գիտելիքներ» խորագրի ներքո Մ. Աբեղյանը «Համառոտ լուսաբանությամբ» ներկայացնում է իր գրառած պատումի հնչյունական, քերականական, բառապաշարային մի

<sup>20</sup> Ղարիբյան Ա. (1939), էջ 83:

<sup>21</sup> Աբեղեան Մ. (1889), էջ 18:

<sup>22</sup> Նույն տեղում,

<sup>23</sup> Փակագծերում նշվում են հրատարակությունների հերթականությունը. 1 թվով՝ 1889 թ., 2 թվով՝ 1936 թ., 3՝ 1977, ապա՝ օրինակի էջը:

շարք իրողություններ<sup>24</sup> կցելով նաև բարբառային բառերի բառարան<sup>25</sup>: Գործածված են նաև քմային *սի, ո՛, ո՛ւ* ձայնավորներ, ձայնեղ *հ*, քմային *գ-կ-ք* պայթականները տեխնիկական պատճառներով հնարավոր չի եղել արտահայտել, ուստի նախընտրել են *ցընաց, գինաց* տարբերակները: Ներկայացված են ձայնավորների, երկբարբառների, *յ* կիսաձայնի, բաղաձայնների փոփոխությունները, ձևաբանական մակարդակում գոյականի, դերանվան հոլովական ձևերը, բայի խոնարհումը, նախդիրները, նախադրական բառերը և այլն<sup>26</sup>:

Չայնեղները պահպանված են, իլացած չեն, չնայած Մ. Աբեղյանը «Բարբառային քերականական գիտելիքներ» բաժնում նշում է բաղաձայնների իլացում, առանձին բացատրում է առաջին դեմքի *ձի, ձը, ձիկ, ըզձի* ձևերի ձայնեղի պահպանումը, որովհետև այն ծագում է *ընձի* բառից, ապա հավելում է՝ *ն* ռնգայինից հետո ձայնեղ հնչյունները պահպանվում են<sup>27</sup> (2-ԿԴ-64): Բայց և կա այսպիսի օրինակ, որում իլացում է առկա: Օրինակ՝ «Վով քնիր էք՝ յարթուն կացէք, Վով յարթուն էք՝ ելէք, կայնեցէք, Վով կայնիր էք՝ ձի (<ձեր) ճակեր («զրահներ») կապեցէք, Վով ձի ճակեր կապիր էք՝ ձի ձիանք թամբեցէք, Վով ձի ձիանք թամբիր էք՝ ելէք խեծեցէք, Չասէք՝ Դավիթ գեող էկավ, գեող գնաց» (1-28): // «Վով քնիր էք՝ հարթուն կացէք, վով հարթուն էք՝ ելէք, կայնեցէք, Վով կայնիր էք՝ ծի (<ձեր) ճակեր կապեցէք, Վով ծի ճակեր կապիր էք՝ ծի ձիանք թամբեցէք, Վով ծի ձիանք թամբիր էք՝ ելէք խեծեցէք, Չասէք՝ Դավիթ գոն էկավ, գոն գնաց» (2-24):

Ինչպես նկատում ենք, առաջին հրատարակության մեջ *ձեր* դերանունը տրված է *ձի* ձայնեղով, իսկ երկրորդում առկա է իլացում՝ *ծի*:

Չայնեղի իլացում է առկա նաև Դավթի և Խանդութ խաթունի հետևյալ երկխոսության մեջ. «Խանդութ խաթուն ասաց, -Լավ, յես չես ելնի տուրս, իմ տուն կը շինես» (2-37):

#### 4. Պատումի բարբառային առանձնահատկություններից

**4.1. Հնչյունական իրողություններ:** Տեքստում հանդիպում են հնչյունափոխական տարբեր դրսևորումներ՝ դիրքային, փոխազդեցական, ընդհանրական ձևեր՝ հնչյունների քմայնացում, անկում, հավելում, բառային մաշվածքներ, բառակապակցություն կազմող բաղադրիչների սերտաձումներ և այլն:

1889 թ. հրատարակության մեջ *ու, ո* ձայնավորների քմայնացումը համապատասխանաբար արտահայտված է *իւ, եո* երկհնչյուններով. օրինակ՝ *յան-դիւնք*: «Ես իմ գեորդ որ չարդեցի, Ձեո ետուր, զիմ գեորդ բոնեց» (1-13): «Ձեոնի կ, տիւ կոտուր կեներ» (1-26): «Քանց գարնան *ձիւն* սվտակ է» (1-37):

<sup>24</sup> Տե՛ս «Մասնա ծոեր» (1936), էջ 60-78:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 59:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 3-7:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 1-54:

Ինչպես նշեցինք, ձայնավորների քմայնացում՝ բարբառագիտական համապատասխան տառադարձումով, առկա է միայն 1936 թ. հրատարակության մեջ: Օրինակ՝ «Ասված հրամանք երավ, Ձենիկ մարմնավոր եթալ Վանա քար, Չուր Քրիստոս կա՛նդատաստան» (2-51): «Ել հրամանք չկա՝ մարդ տեսնա, Չուր Քրիստոս կա՛նդատաստան» (2-51): «Յես իմ գո՛րգ վոր չարդեցի, Ձեռ ետուր, զիմ գո՛րգ բունեց» (2-11): «Քանց գարնան ձո՛ւն սվտակ է» (2-32):

4.1.1. Այս հրատարակության մեջ՝ ողջ տեքստում, քմային ձայնավորով է դու>տո՛ւ (նան՝ քո>քո՛) անձնական դերանունը: «Ձեռնի կ, տո՛ւ կոտուր կեներ» (1-23):

4.1.2. Այ երկբարբառը վերածվում է է-ի. «Էնու մատ էրիցաւ, կրակ կպաւ մատին, Ետու լեզուին, լեզուն էլ էրիցաւ» (1-13):

4.1.3. Մոկսի բարբառում ձայնեղ բաղաձայնները հիմնականում պահպանվում են, բայց և երբեմն առկա են նաև իլացման դեպքեր: «Մէկ սէնի կրակ, մէկ սէնի ոսկի Բերին, դրին յեռջն Դաւթին» (1-13): Երբեմն նույն նախադասության մեջ միաժամանակ հանդիպում են ձայնեղ և իլացած ձայնեղ: «Գնաց գոմի գտիւռ երաց» (1-32): «Բոնցքի մ՛ եգար Դաւթի բերան, Արուն-արնձիւր բերնէն եթալ տիւս» (1-41):

4.1.4. «Լաւ, ես չեմ էլնի տիւրս, իմ տիւռ կը շինեմ, Նստեմ էստէիս, քարգեահ քաշեմ» (1-43) նախադասության քարգեահ օտարաբանության մեջ առկա է *q* քմային ձայնեղ բաղաձայն, որի քմայնացումն արտահայտված է եա (>յա) երկհնչյունով: *q* քմային ձայնեղի համապատասխանակ կ խուլը նույնպես քմային է՝ դարձյալ արտահայտված եա (>յա) երկհնչյունով: «Տը կեասս խեց իմ ձեռաց» (1-15): «Խրօղբերներ կըկեան, իրարու կ՛ասեն» (1-11):

Նույն շարքի *p* շնչեղ խուլի քմայնացումն արտահայտված է եռ երկհնչյունով. «Նօրաթ քեռնն ի»: «Դաւիթ,- տիւ, քեռ անուշ ջան սաղ ըլնի,- մեռաւ» (1-52):

4.1.5. Հ հազագի դիմաց՝ յս, պախէ, յետ, յարցնել, հոր>խուր, օխնել, անմախս և այլն: «Խրօ դբէր, էն սիւ ուլեր օխնած ին» (1-14): «Էնու մեր ճամբիեց, էկաւ մօտ յրօղբէր» (1-13): «Դաւիթ էլաւ զպողվըտէ սօլ յազաւ» (1-14): «Թը ժողվի՛մ յազար յինգ յարիւր յամար Սվտակ մօրուս» (1-20): «Համա ի՛նչ անեմ, յօրախուր յրօղբէր, Համա բոգու յաբած իս» (1-17): Կարծում ենք՝ յօրախուր բառը բնագրի ձեռագրից վրիպակով է արտագրվել, պիտի լինի՝ յերախուս:

4.1.6. Հնչյունափոխության տարբեր եղանակների առկայություն: Աստուարածին, սև>սիւ, մեր> միր, վեր> վիր, ձեր>ձիր, քեր>քիգ, գիշեր>գշիր, ազգականի>ազգակնի, ետ>յիտ, նետ>նիտ, խոր> խուր, ծիծ>ծեծ, առաջ>էռջև, ինչո՛ւ>ընչո՛ւ, դոնպան, դոնպանութեն, վախացաւ, Մասմայ շողկմակեր, ուղարկել>յարկել, իր ծառային> իւր ծառին, մէկ շօր<մեկ այլ օր, մյուս օրը, չուր՝ս (չուրի այս) տարի<մինչև այս տարի, այստեղ >յսա տէիս, գրդած գոմշի կաշի, դե արի> դ՛արի, տախս (կարծում ենք՝ դեպի ահյակ) «դեպի» տախս քաղաք, քթէլ

«գդալ», տեղ «դեռ» [«Ես տեղ տղայ եմ, ես յո՞ւր էրթամ» (1-54) «Տեղ ես էստեխն եմ» (1-34)], ինչ> *հընչ / յինչ* և այլն: [«Մսրամելիք *հընչ* զիւր գեորգ եգար, Դաւիթ էլաւ, կայնաւ» (1-12)]: «Կարամ զքե տամ *էրիքական* (արեգակին), *էրիցիս*» (1-25): «Ոտդ *թլես* զանգուն»: «*Տ'ելնէր* կեօլ (վիշտ, դարդ), ընկնէր իմ սիրտ, ձի սպանէր» (1-39):

4.1.7. Հետաքրքրական է *վ'ի նչիս* հարցական դերանունը: Կարծում ենք՝ *վո նց* և *ի նչ ցեղ* (*ի նչըղ / ի նճըղ*) բառերի միացումից է առաջացել հարցական դերանվան այս ձևը:

#### 4. 2. Քերականական իրակություններ:

4.2.1. Հոգնակիակազմություն՝ *փեհլուընքտեր, խրօղբերքեր, ոսկորքար, կնկտեր, մարդեր, նեճիրվանքտեր*, սեռական-տրական հոլովածները՝ *գելէրաց, էրկտերու* (տղամարդկանց), *աղջկտերաց, աղջկտերուն, լյստրակնէրաց, արջերաց* և այլն: «Թրէ *շառաւիրք* եգար մըջ յերդիսին» (1-43): «Մէկ մեծ, փիր, ախտիր խալուր ըմ կէր *մէջքեր*» (2-29): «Դա իիթ, տիւ ընչո՞ւ էսա *մարդեր* կըսպանես» (1-29): // «Դա վիթ, տո՞ւ ընչո՞ւ էսա *մարդեր* կը սպանես» (2-25): «Սածով զինջլի *կտորքեր* երկնուց էկան տակ» (1-33):

4.2.2. Սեռական հոլոված. «*Մէրդնու* միջին կայնաւ»: «Դառնամ զողորմին տը տամ ականջ էրողի *հայրի-մայրին*» (1-11):

4.2.3. Գրաբարածն գործիական՝ Ասծու *հրամանքի*:

#### 4. 3. Հոլովառական բարբառածներ:

4.3.1. Հայցականաձև հանգման անուղղակի խնդիր՝ «Խլիսուն Ձենով Յովան գնաց *մօտ Դաւիթ*» (1-14): // «Խլիսուն Ձենով Հովան գնաց *մոտ Դավիթ*» (2-12): «Յիրկուն էկաւ մօտ Խանդութ *խաթուն*» (1-42): «Հալաբայ թագաւոր հրօղկեցին Սասմայ քաղաք, *Սօտ Ձենով-Յովան*» (1-42):

4.3.2. Ուղղականաձև հայցական՝ ուղիղ խնդիր՝ «*Դաւիթ* խաբեցին, ձիուց բերին վէ» (1-31): «Համա էրկու կաղոզան էկան, *Խանդութ խաթուն* Դաւթի խմար գեովացին» (1-37): *Կաղոզան* բառը Մ. Աբեղյանը այսպես է բացատրում. «կաղոզան-գուսա՞ն, թէ՞ կաղզուանցի, որովհետև, ըստ հայր Սրուանձտեանց վարդապետի, Խանդութ խաթունը Կաղզունում է նստում» (1-37): Ուղիղ ձևով հատկացում՝ «*Վէրգօն* մէկ տղայ կէր» (1-42):

4.3.3. Հայցական հոլովի փոխարեն սեռական հոլով՝ «Կերթամ, զԴաւիթ բերեմ *տան*: Գնաց մօտ Դաւիթ, առեց եբի *տան*» (1-15):

4. 4. *Մեջ/ինի, մոտ, վրա* կապերի առաջադաս (երբեմն՝ ետադաս) կիրառություններ. *վար բերնուն, վար խորուն*, խնդացաւ *վար խնձորին* և այլն: «Տարաւ, եղի գատը տեղ, *մընչ դաշտին*» (1-12): «Թոզ դադրաւ *վար Դաւթին*, էրիքական իրես բոնեց» (1-34): «Մհեր էլաւ, կ'ուզէր որ գնայ, Որ զտոքեր կըթալէր, կ'երթէր *մընչ խողուն*» (1-57):

Ետադաս՝ «Նեճիրուանքտեր զՄհեր բոնեցին, տարան թալեցին *խուր վե*» (157): *Տուն ինի* «տան մեջ»:

«Եբեր, ըլից *մընչ գառներուն*» (1-12): Երրորդ հրատարակության մեջ Ս. Հարությունյանն այս նախադասության անցյալ կատարյալի գրաբարյան *ե-ն* դարձրել է *է՛ էբեր* (3-14):

4. 5. Ջնախդիրի գործածություն: «Դաւթի խեր կըմեռնի, Մեր կըզնայ *զՄարամեղիք* կառնի, Դաւթ կըմնայ հէթըմ» (1-11): «Վերգօ, տի՛ւ կըտանես *զԴաւիթ*, Եօխսա ես կըտանեն» (1-11): «Էկաւ *զիզնի* տիւտ եբաց, *Ջիզիներն* չափեր, տաներ» (1-17):

4.6. *Ի* նախդրիվ կառույցներ: *Յախու // յախուց* «վախից»: Ընկի *յիւր խոզու բառաւանջէն* «ինքնամոռացության մեջ է»: «Դաւիթ չը՛ գարնէ, Համա *ընկի յիւր խոզու բառաւանջէն*, Յիւր ախու կըզարնէ Մհերին» (1-50):

4. 7. Հոդառություն: Հանդիպում են *ն* որոշիչ հոդով դերանուններ: «*Եսն* եմ, էտա մէկ արտ ցորեն, *Տիւն* իմ ապրուստ կտրեցիր» (1-18): «*Էնպէսն* ի լցուի, *Էնպէսն* ի խաստացի» (1-26): *Ջի բառի՛ ն* հոդով կոչական՝ «Սվտակ *ձին*, յե՛ փ ձի կըտանես, Դաւթի կուուն խասցնես» (1-32):

«*Ինչպէ՛ սնը* տիւ իմ խօսք շիւտ մոռացար» (1-25) նախադասության մեջ հարցա-հարաբերական դերանունը *նը* կրկնակի հոդով է:

#### 4. 8. Եղանակաժամանակային ձևերի կազմություն:

4.8.1. Էօժանդակ բայի փոխարեն *ի* ժժանդակ բայ՝ *մաշուիր ի, կտրտուիր ի, Էնպէս ի* զօրութիւն, ոժ առի, Որ *չափալամիշ ի եղի*» (1-26): // «Ենպէսն *ի* զորութուն, վոժ առի, Վոր *չափալամիշ ի եղի*» (2-22): «Իմ խօր անեժք ձի *խասիր ի*, Իմ միջաց երակ *քաշիր ի*, Իմ մօտէն ժառանգ չընկաւ մըչ աշխարքին» (1-58):

4.8.2. Ներկա ժամանակի *կը* եղանակիչն ըստ առաջին հրատարակության՝ շատ սերտ է արտասանվում և գրվում է միասին *է*, երկրորդում՝ առանձին *է*: Օրինակ՝ «Մէ ամիս *կըմնայ*, մօր սիրտ կրար (հանգիստ, դադար) չի՛ տայ, *Կըխրկի*, զիրան տղան տանի մօտ յինք» (1-12): Կը եղանակիչը. «Ինչ մէվլան (հյուր) *կըկեայ*, խաց կըտաս, Կ՛ուտի, ճամբխու կըդնես» (1-15):

4.8.3. Անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի գրաբարյան ձևեր՝ *եբեր, ըլից, էտու, էթող* և այլն: «Մարամեղիք գտալ *եբից* քաղաք, Կանչեց ասքեար ժողվելու» (1-19):

4.8.4. Հրամայական եղանակաձև. *խանէք վի* «արթնացրէ՛ք», *իլի վիր* «արթնացի՛ր» և այլն: «Որ մէ կըմնայ՝ էն *բի*» (1-14): «Իմ ասպաբներ *բի՛*» (1-32): Չի բացառվում, որ Արարատյան բարբառի Լոռու խոսվածքի Ալավերդու ենթախոսվածքին բնորոշ բե՛ր >բի՛ ձևը բանասաց Նախտ քեռին յուրացրած լինի լոռեցիների միջավայրում: Լոռիում ապրած կամ լոռեցիների հետ շփված լինելու վարկածի օգտին են խոսում նաև բերվող նախադասությունների *կշտին* և *կոնդ* բառերը: «Էնոր *կշտին* պառկաւ չուր խլխուն» (1-41): «Մհեր, *կոնդ էս*, խետ քեռ խեր կոնի արիր» (1-52):

4.8.5. Հարկադրական եղանակի *պիտի* եղանակիչը մաշվածքով է. *տը տամ, տ'անես, տ'ելնի* <պիտի ելնի, «Տը կեսս խեց իմ ձեռաց» (1-15): «Խալխը-մարդիկ տ'ասեն՝ մախսուզ զար սպանեց» (1-12):

4.8.6. Վախենալ բայը *ան* սուկածանցով է: «Քաղքցիք որ տեսան, վախացան, Դոներ փակեցին, տիրս չելան» (1-14):

4.8.7. Խոնարհման այլաձև արտահայտություններ. սուկածանցը պահպանվել է անցյալ կատարյալում՝ *զոխի պագնեց, եահլամիշ անելալ* (շոյելով), *խրինջալալ, պախիր եմ, իմալ, ձին փախի, էկի, յիմացիր ենք* և այլն:

«Դոր (այս անգամ) գիւթնի խոփ *կրակացցին*» (1-30): «Խաբար տանք, նուր էլենք կոխ անենք: Դաւիթ *էրաւ ձիուց իջնէր*, ձին *կըփախնէր*» (1-30): «Սասմայ աստղ *մծղակիր էր* (մոայլվել էր) (1-31): «Տիւ ընչո ւ չես *քնայ*: Տիւ էսոր չթողիր ես *քնէր*» (1-31): «Մարայ աստղ էկաւ, Սասմայ աստղ *եստու կուր*» (1-31): «Դէ տիւ *յերդըրցի*» (1-42): «Դէ *ար*'ես տիւ կոխ անենք» (1-47): «Մարդիկ կըդառնան, *գին* (գային), Չարկին, ջրով *ընցնին*» (1-49): «Քացու *մ' եզար* կնկան. Կնիկ էլաւ, ճրագ *կպուց*» (1-32): «Էլաւ, լեռայ սարի գլոխ *կայնաւ*» (1-33): Ատամներ լէ քաշեց, *բլոնեց* ճակատ» (1-19): «Խալխը-մարդիկ *տ'ասեն՝ մախսուզ զար* սպանեց» (1-12): «Մէկ մարդ ձիաւոր *իրի* (եկաւ)» (1-58):

4.8.8. Ժխտական խոնարհում. *չէր յիշացեր, «Չեմ կարայ* զանոնք *էրեցըցի... Չեմ կարայ* զանոնք *կտրեցըցի*» (1-28): «Դաւիթ գեթօն տարուան խարջ *չեստուր*» (1-19): «Մն ձին փոր *չեստու* գետին» (1-32): «Ես Միեր ըլնիմ, ձի *չունի մ'* (չունենամ)» (1-56):

4.9. Արևելյան բարբառախմբում չհանդիպող ուշագրավ ձայնարկություններ (նան եղանակավորող բառեր)՝ *լագո // լգո*, «Թ՛ էնուր ասքեր կըխարցնես, Չէնու կթխէներ (բաժակ, գավաթ)՝ *լգո*, չէնու կթխէներ, Թ՛ էնուր ճակտի լէնութ կըխարցնես, Եօթ ակիւմ է, տել մէկ յաւել է, լա՛ գօ, տել մէկ յաւել է» (1-37): // «Թ՛ էնուր ասքեր կը խարցնես, Չէնու կթխէներ, *լգո՛*, չէնու կթխէներ, Թ՛ էնուր ճակտի լէնութ կը խարցնես, Յոթ ակում է, տել մէկ հավել է, *լա՛ գո*, տել մէկ հավել է» (2-32): Հայերենին ոչ բնորոշ *օ յս* ձայնարկության առկայությունը կարելի է բացատրել *հ* հազագի՝ *յս*-ի վերածվելով: «Կնիկ ասաց.- *Օ յս*, տիւ ընչո ւ չես *քնայ*» (1-32):

*Կեօ* «ահա»: «Կեօ՛ էս էստեխն եմ»:

## 5. Բառապաշարային, հասկացական-բառանվանողական զուգաբանություններ.

5.1. Հարադիր բայեր, դարձվածքներ, դարձվածային կազմություններ.

*Ականջ չեստուր* «չլսել, չհնազանդվել»: «Միեր խօր *ականջ չեստուր*» (1-48):

*Առան յիրուր* «կովեցին»: «Խէր, տղէն առան յիրուր» (1-49):

*Առեց կանչի* «ձայն տվեց»: «Խանդութ խաթուն *առեց կանչի*, ասեց» (1-50):

*Դիա տալ > դիա էտու* «հերթ կամ թույլտվություն տալ» տվեց: «Թ՛ը քե (Դաւթին) *դիա էտու* (Խանդութը), կերթաս» (38):

*Դուռը շինել > տիւռ կը շինես* «դուռը փակել»: «Լաւ, ես չեմ էլնի տիրս, *իմ տիւռ կը շինես*, Նստեմ էստեխ, քարգեահ քաշեմ» (1-43): «Յիրկուն Ձենով-Յովան տիւռ շինեց» (1-16):

*Երկու գլոխ գնալ-գալ*, այսինքն՝ «գնալ մինչև տարածքի վերջը և վերադառնալ»: «Էրկու գլոխ գնաց, էկաւ» (1-28): // «Երկու գլոխ գնաց, էկավ» (2-25):

*Ըոհկ էնել* «զայրանալ, նեղարտել»: *Ձին ըոհկ էրաւ* «ընդդիմացալ»: *Մադդեն կախել* «տխրել»: «(Մարամելիքը) *Ըոհկ էրաւ*, էկաւ տուն, *Մադդեն կախեց*, էլ չխօսաց» (1-12): // «(Մարամելիքը) *Ըոհկ էրավ*, էկավ տուն, *Մադդեն կախեց*, էլ չխոսաց» (2-11):

*Թոզ դադրաւ* «փոշին նստեց»: «*Թոզ դադրաւ* վար Դաւթին, Էրիքական իրես բոնեց» (1-34):

*Լեզու գալ* «խոսել սկսել»: «Ասծու հրամանքիւ ձին *լեզու էկաւ*» (1-26): // «Ասծու հրամանքիւ ձին *լեզու էկավ*» (2-23):

*Կեախն էր* «քիչ էր մնացել, ժամանակն էր»: «Մասմայ աստղ *կեախն էր* անցնէր» (1-31):

*Ձեռ իկյալ* «հնազանդվել»: «Համա ձին *ըռըկէր էր, չէր իկեայ ձեռ*» (1-34):

*Մեղք լինել* «ափսոսանքի արժանի լինել»: «Էլի՛, էսա սուֆրէն վիրո՛ւ, *Մեղք էսա խացեր կոխեն*» (1-40): // «Էլի՛, էսա սուֆրէն վիրո՛ւ, *Մեղք էսա խացեր կոխեն* (ափսոս է՝ այս հացերը տրորեն)» (2-35):

*Մորեն մեկնել* «ծնվել»: «Ինչ *մորեն մեկնիր իմ* (ծնված օրվանից), Մարդու բարն չեմ տուի» (1-38): // «Ինչ *մորեն մեկնիր իմ*, Մարդու բարն չեմ տվի» (2-33):

*Յաշ գնալ* «ուշագնաց լինել»: «Դաւթի *յաշ գնաց*»: Չի բացատվում, որ թուրքերեն *yaş* «տարիք, կյանք» (*yaşamak* «ապրել») բառը հայերենից անցած լինի (ուշ> ուշք> յուշ>յաշ):

*Շուռ չառնել* «չըրջվել»: «*Շուռ չառեց* որ իյնէր գետին» (1-26):

*Չանա տալ* «հակաճառել», *չանայ էտու* «հակաճառեց»: «Տիւ ձի *չանայ տուիր* էն օր» (1-36): // «Տո՛ւ ձի *չանա տվիր* են որ» (2-31):

*Ջուհափ տալ* «լուր տալ». փոխատու լեզվում *ջուղաբ // ջողաբ // ջովաբ // ջուհափ* (թուրքերեն *cevap*) նշանակում է «պատասխան»: «*Ջուհափ տուին* Խանդուր խաթնին» (1-49):

Ընդհանրապես, Նախո քեռու լեզուն շատ պատկերավոր է ու հարուստ հարադրություններով, բառակապակցություններով, նկարագրական արտահայտություններով, խոսքը ոճավորող այլ միջոցներով, որոնք հնարավոր չէ ներկայացնել մեկ հոդվածի սահմաններում: Այսպես, օրինակ, *խլխումն, նետ ու անեղ, ճուչ* «մեծ», *Խաչ-պատարագին, շանք տալ* «ցույց տալ», *թօփ էրաւ, ասքեար կապեց* «գորք հավաքեց», *հերս էկաւ* «զայրացալ», *տիւռ շարիր իմ* «դուռը փակել եմ», *գետնու քէշ* (<քարշ) *կ'երթեր* «գետնաքարշ գնում էր», *գնաց գլխուն* «գլխին հարմար եղավ», *բուլուր* «շուրջբուրբը» «Բուլուր Խանդուր խաթնի խօր դուշման» (1-41):

5.2. Ինչպես «Մասնա ծեռ» վիպերգության մյուս պատումներում, այնպես էլ Մ. Աբեղյանի գրառած այս տարբերակում կան նաև արևելյան լեզուներից՝ արաբերենից, պարսկերենից, թուրքերենից մուտք գործած օտարաբանություններ, որոնք առանձին քննության նյութ են: Այսպես օրինակ՝ *եօխսա* «այլապես», *բօզբալակ* «գորշ», *էլչի* «դեսպան», *չարդեղ*<sup>28</sup> «ձգել, նետել», *չադը ր-խևայթ, ջուհափ* «պատասխան», *բեդդար* «բեղավոր», *դուսաղ* «թակարդ» [«Ձը *դուսաղի* պես ի պախած» (1-23)], *հալղ* «ժողովուրդ», *հարամ, եմ* «կեր» [«*Հարամ* ըլին էնա իմ *եմ*» (1-32)], չուր *սհաթ* ըմ, *մոհլաթ* «ժամանակամիջոց», *նօբաթ* «հերթ», *նօբաթ* վի՛րն ի [«Կոի գօրո վ, թը *նօբթով* ի» (1-34): «Դոր նօբաթ հասաւ ձի» (135)], *սարխօջցան, խզմաթթեար* «ծառա», *քիբրիթ* «լուցկի» [«Ինչ որ մարդ բիւռ ըմ *քիբրիթ* կոտրի» (1-40)], *դամուր* «երկաթ», *նալ-բզմար* «պայտ ու գամ» [«Լաւ պողվատ-*դամուր* ի, Էնենք միւր ձիու նալ-բզմար» (1-40)], *սիլախ* «զենք» [«(Խանդուր խաթուն) Չիւր ձին խեծաւ, զիւր *սիլախներ* կապեց» (1-45)], *զէհիր* «թույն» [«Խանդուր խաթուն լէ մէկ թաս *զէհիր* իմաւ» (1-52)], *փուշտ գարդ, քամակ* «կմախք», որից՝ *քաղքու քամակ* «քաղաքի վերջում, քաղաքից դուրս» [«Դաւիթ լէ գլոխ եղի գետին, Քնաւ Էնտելիս *քաղքու քամակ*՝ մընչ հանդին» (1-14)]:

### Եզրակացություններ

Մ. Աբեղյանի 19-րդ դարի վերջին քառորդին գրի առած «Դավիթ և Մեեր» պատումը ուսումնասիրության ծավալուն նյութ է տրամադրում ոչ միայն բանագետներին, այլև լեզվի պատմության, բարբառագիտության, ազգային հոգեփիլիսոփայության և այլ գիտակարգերի մասնագետներին: Այն վստահելի, հիմնավոր լեզվական փաստերի շտեմարան է հատկապես Մոկսի բարբառի հնչյունական, քերականական, բառապաշարային իրողությունները մանրակրկիտ քննելու առումով: Մոկսեցիներին բնորոշ բարդ ու խրթին հնչյունական իրողությունները մեր ժամանակներին հասու դարձնելը պատմալեզվական կարևոր ձեռքբերում է:

Մոկսեցի Նահապետի փոխանցած պատկերավոր արտահայտությունները, դարձվածային միավորները, հարադրավոր կառույցները, ժամանակակից հայերենի քերականական կանոններին ոչ համահունչ բայական կազմությունները և լեզվական բազմաթիվ վկայություններ փաստում են գրարկողի հմտության, բանահավաք-բարբառակիր հարաբերությունը գիտականորեն ճիշտ հիմքերի վրա դնելու, ասացողից հնարավորինս շատ տեղեկություններ քաղելու և հայոց լեզվի գանձարանը համալրելու մասին:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ բարբառն աչքի է ընկնում յուրահատուկ դարձվածքներով, բառապաշարային միավորներով, բայական զարտուղի կազմություններով, որոնք տարածքի մյուս խոսվածքներում արձանագրված չեն:

<sup>28</sup> Կարծում ենք՝ թուրքերեն *çağırnak, çağırıyor* «կանչել»:

21-րդ դարն ամբարված էպոսապատումների գիտական վերլուծության, գրարկողների աշխատանքի գնահատման, պատումաբանության գիտական կենտրոնի հաստատման, բանասացների հիշատակման ու մեծարման, անտիպ և տպագրված տարբերակները բարբառային գիտական տառադարձությամբ հրատարակելու ժամանակաշրջանն է:

**АЙКАНУШ МЕСРОПЯН, САСУН АМБАРЦУМЯН – *Диалектологическая ценность варианта армянского эпоса «Давид и Мгер», написанной М. Абегином.*** – В статье представлены лингвистические особенности варианта «Давид и Мгер», записанной М. Абегином. Эта версия армянского эпоса была рассказана известному арменологу Наапетом из Мокса. Лингвистический материал последней четверти XIX века дошёл до наших дней естественным путём, без научной обработки. Эта версия, обобщающая довольно сложную фонетическую, грамматическую систему и богатый словарный запас мокского диалекта, была всесторонне изучена. Исследование показало, что диалект обладает уникальными идиомами, лексическими единицами и глагольно-прилагательными образованиями, которые не встречаются в других диалектах региона.

На основе накопленных данных предлагается, чтобы XXI век арменологии стал периодом научного анализа собранных эпических сказаний, оценки труда писцов, создания научного центра изучения вариантов сказаний, увековечивания памяти и чествования рассказчиков, а также публикации неопубликованных и переписанных версий с диалектной научной транскрипцией.

Записанная М. Абегином варианта «Давид и Мгер» представляет собой обширный материал для изучения не только филологами, но и специалистами в области истории языка, диалектологии, национальной психофилософии и других дисциплин. Вариант содержит достоверные и обоснованные лингвистические факты, особенно в части детального изучения фонетических, грамматических и лексических особенностей мокского диалекта.

Образные выражения, фразеологические единицы, наречные структуры, глагольные образования, нетипичные для грамматических правил современного армянского языка, а также многочисленные лингвистические свидетельства, переданные Наапетом из Мокса, свидетельствуют о мастерстве писца, о научно обоснованном установлении связи между специалистом филологом и рассказчиком, о стремлении получить от говорящего как можно больше информации и обогатить сокровищницу армянского языка.

**Ключевые слова:** *эпос, фольклорист, рассказчик, диалект, лексика, фонетика, вариант, палатальный гласный*

**HAYKANUSH MESROPYAN, SASUN HAMBARTSUMYAN – *Dialectological Value of the Version of the Armenian Epic “David and Mher”, Written by M. Abeghyan.*** – This article presents the linguistic features of the version of "David and Mher" recorded by M. Abeghyan. This version of the Armenian epic was narrated to the renowned Armenologist by Nahapet of Moksa. Linguistic material from the last quarter of the 19th century has survived naturally, without scholarly processing. This version, which summarizes the rather complex phonetic and grammatical system and rich vocabulary of the Moksa dialect, has been comprehensively studied. The study revealed that the dialect possesses unique idioms, lexical units, and verb-adjective formations not found in other dialects of the region.

Based on the accumulated data, it is proposed that the 21st century of Armenology will become a period of scientific analysis of the collected epic tales, evaluation of the work of scribes, the creation of a scientific center for the study of variants of tales, perpetuation of the memory and

honoring of storytellers, as well as the publication of unpublished and rewritten versions with dialectal scientific transcription.

M. Abeghyan's recorded version of "David and Mher" offers extensive material for study not only by philologists but also by specialists in the history of language, dialectology, national psychophilosophy, and other disciplines. The Variant contains reliable and substantiated linguistic facts, particularly in its detailed examination of the phonetic, grammatical, and lexical features of the Moks dialect.

Figurative expressions, phraseological units, adverbial structures, verb formations, atypical for the grammatical rules of the modern Armenian language, as well as numerous linguistic testimonies transmitted by Nahapet of Moks, testify to the skill of the scribe, to the scientifically based establishment of a connection between the specialist philologist and the narrator, to the desire to obtain from the speaker as much information as possible and to the desire to enrich the treasury of the Armenian language.

**Key words:** *epic, folklorist, storyteller, dialect, vocabulary, phonetics, variant, palatal vowel*

### Գրականության ցանկ

Աբեղեան Մ. (1889): «Դավիթ եւ Մհեր» ժողովրդական դիւցազնական վէպ, Շուշի, Միրիջան Մահտեսի-Յակովբեանցի տպարան, – 61 էջ: [Abeghyan, M. 1889. «David' ev Mher» zhoghovrdakan dyuczaznakan vep. Shushi: Mirijan Mahtesi-Hakobeanci tparan].

Աբեղեան Մ. (1908): Հայ ժողովրդական վէպը, արտատպուած «Ազգագրական հանդէսից», Թիֆլիս, Ն. Աղանեանի տպարան, –212 էջ: [Abeghyan, M. 1908. Hay zhoghovrdakan vep. Artatpvatc «Azgagrakan handesic». T'iflis: N. Aghanyani tparan].

Աբեղյան Մ. (1966), Երկեր, Ա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., – 572 էջ: [Abeghyan, M. 1966. Erker. A. Yerevan: HSSH GA Hratarakch'ut'yun].

Աբեղյան Մ. (1985): Երկեր, Ը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., –672 էջ: [Abeghyan, M. 1985. Erker. Թ Yerevan: HSSH GA Hratarakch'ut'yun].

«Դավիթ եւ Մհեր» (1889): Ժողովրդական դիւցազնական վէպ, գրի առաւ Մ. Աբեղեան, Շուշի, Միրիջան Մահտեսի-Յակովբեանցի տպարան, – 61 էջ: [David' ev Mher, 1889. Zhoghovrdakan dyuczaznakan vep. Gri arav M. Abeghyan. Shushi: Mirijan Mahtesi-Hakobeanci tparan].

Իսահակյան Ավ. (1951): Երկերի ժողովածու, հ. 4-րդ, Եր., «Հայաստան» հրատ., –240 էջ: [Isahakyan, A. 1951. Erkeri zhoghovratcu. h. 4. Yerevan: «Hayastan» Hratarakch'ut'yun].

Դարիբյան Ա. (1939): «Մասունցի Դավիթ» ժողովրդական վէպի լեզուն (էջ 79-94), «Մասունցի Դավիթ», Հոբելյանական ժողովածու նվիրված եպոսի 1000-ամյակին, Յեր., Արմֆան, –268 էջ: [Gharibyan, A. 1939. «Sasunci David'» zhoghovrdakan vepi lezun. «Sasunci David'» hobelyananka zhoghovratcu nvirvatc eposi 1000-amyakin. Yerevan: Armfan Hratarakch'ut'yun].

Մանդինեան Ս. (1881): Ազգային դիւցազնական աշխարհ (Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ), Երկրորդ տարուայ ուսմունք եւ ընթերցմունք, Թիֆլիս, Տպարան Մովսէս Վարդանեանցի, –72 էջ: [Mandinyan, S. 1881. Azgayin dyuczaznakan ashkharh (Sasunci David' kam Mheri dur. Erkrord taruay usmunk' ev ont'ercmunk'. T'iflis: Tparan Movses Vardaneanci].

Մկրյան Մ. (1957): Էջեր հայ վիպասանության պատմությունից, Եր., Հայպետհրատ., – 240 էջ: [Mkryan, M. 1957. Ejer hay vipasanut'yan patmut'yunic. Yerevan: Haypethrat].

Մկրյան Մ. (1976): Հայ հին գրականության պատմություն, Եր., Եր. հմլս. հրատ., – 336 էջ: [Mkryan, M. 1976. Hay hin grakanut'yan patmut'yun. Yerevan: Yerevani Hamalsarani Hratarakch'ut'yun].

Պետերսեն Հ. (1904): Հին հայերենի լեզուի շեշտը // «Հանդես ամսօրեայ», № 5, էջ 131-133: [Petersen, H. 1904. Hin hayereni lezui shesht>// «Handes amsoreay», № 5, 131-133].

Ջրբաշյան Է., Մախչանյան Հ. (1980): Գրականագիտական բառարան, Եր., «Լույս» հրատ., – 350 էջ: [Jrbashyan, E. Makhch'anyan, H. 1980. Grakanagitakan bararan. Yerevan: «Luys» Hratarakch'ut'yun].

«Սասնա ծռեր» (1936): Ժողովրդական բանահյուսություն, Ա, Ժողովրդական վեպ, Ա հատոր, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մ.-Ոհանջանյանի, Յեր., Պետհրատ, – 1128 էջ: [Sasna tsrer, 1936. Zhoghovrdakan banahyusut'yun. A. Zhoghovrdakan vep. A hator. Khmbagrec M. Abeghyan, ashkhatacut'yamb K. M. Ohanjanyani, Yerevan:Pethrat ].

«Սասնա ծռեր» (1977): Ժողովրդական վեպ, աշխատությամբ՝ Ս. Հարությունյանի, Եր., «Սովետական գրող» հրատ., –700 էջ: [Sasna tsrer, 1936. Zhoghovrdakan vep. Ashkhatut'yamb S. Harut'yunyani. Yerevan: «Sovetakan grogh» Hratarakch'ut'yun].

Սրուանձտեանց Գ. (1874): Գրոց ու բրոց և Սասունցի Դաւիթ կամ Միւրի դուռ, Կ. Պոլիս, Օտուն Գարու ճատտէսի, 465, Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, – 192 էջ: [Sruandzteanc, G. 1874. Groc u broc ev Sasunci Davit' kam Mheri dur. Polis: Otun Gabu chattesi. 465. Tpagrut'yun E. M. Tntesean].

Патканов Г. (1875), Материалы для изучения армянских наречий, выпуск II, Мушский диалект, Санкт-Петербург, типография Императорской академии наук, – 71 ст. [Patkanov, G. 1875. Materiali dlya izucheniya armyanskikh narechiy. Vipusk II, Mushskiy dialect. Sankt Peterburg: tipografiya Imperatorskoy akademii nauk].

## ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԵՎ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՎԱՐՍԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ 

*Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան*

Արդի հայերենի համաժամանակյա բառակազմության տեսության ամբողջացմանը միտված աշխատանքներ կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կարևորվում է տարբեր լեզվաբանների՝ նշված ոլորտում ունեցած տեսակետներին անդրադառնալը: Մույն ուսումնասիրության միջոցով փորձ է արվել լրացնելու այդ կարգի հետազոտությունները՝ նկարագրական-վերլուծական եղանակով քննության առարկա դարձնելով բառակազմության տեսական հարցերի վերաբերյալ երկու ականավոր հայագետների՝ Մանուկ Աբեղյանի և Հրաչյա Աճառյանի տեսակետներն ընդհանուր գծերով, ցույց տալու հիմնական տարբերություններն ու նմանությունները:

Ընդհանուր առմամբ՝ կարելի է ասել, որ Մ. Աբեղյանի խնդիրն էր ոչ միայն հայերենի բառապաշարի պատմական զարգացման ընթացքի քննությունն ու օրինաչափությունների բացահայտումը (որոշ դեպքերում՝ նաև այլ լեզուների՝ հիմնականում ռուսերենի, գերմաներենի նույն կարգի իրողությունների համեմատությամբ), այլև դրանց գիտական պատշաճ մշակումն ու համակարգումը: Նրա աշխատություններում դժվար է Աբեղյան գիտնականից գատ չնկատել նաև Աբեղյան դասավանդողին՝ տեսական վերլուծությունը նաև ուսուցանելուն միտված գործին նվիրելու անսահման եռանդի ու ջանքերի գործադրմամբ: Հր. Աճառյանի դեպքում այլ է մոտեցումը.

**Վարսիկ Ներսիսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատող, Գավառի պետական համալսարանի դասախոս

**Варсик Нерсисян** – кандидат филологических наук, доцент кафедры родного языка и его преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна, старший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Гр. Ачаряна НА ИРА, преподаватель ГГУ

**Varsik Nersisyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at the Chair of *Mother Tongue and Its Teaching Methodology* at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Senior Researcher at the Department of the Modern Armenian Language at the NAS RA Institute of Language after H. Acharyan, GSU lecturer

Էլ. փոստ՝ [nersisyan.varsik75@mail.ru](mailto:nersisyan.varsik75@mail.ru) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-2881-7154>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 03.02.2026

Գրախոսվել է՝ 11.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

նա իր առջև խնդիր չի դրել լեզվական իրողությունների՝ տվյալ դեպքում՝ բառակազմության տեսական հարցերի մշակումը (այդ գործն իրենից առաջ արել էր Աբեղյանը). նրան առավելապես հետաքրքրել են բազմաթիվ լեզուներում և հատկապես հայերենում բառերի կազմության օրինաչափությունների, կառուցվածքային առանձնահատկությունների վերհանումն ու դրանց միջև եղած կապերի բացահայտումը:

**Բանալի բառեր** – *Մանուկ Աբեղյան, Հրայր Աճառյան, Ժաննա Գրիգորյան, Ժաննա Գրիգորյան, Ժաննա, անվանական Ժաննաներ, դերբայական Ժաննաներ, հողակապ, ձայնդարձ, ձևակ*

### Ներածություն

Արդի հայերենի բառակազմության տեսական հարցերի վերաբերյալ կատարվել են մի շարք հետազոտություններ, որոնցից յուրաքանչյուրն այս կամ այն չափով նպաստել է բառակազմության ուսմունքի ձևավորմանը: Այդուհանդերձ, ոլորտում առկա որոշ խնդիրներով, ոչ միանշանակ մոտեցումներով և ընկալումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն կա անդրադառնալու ինչպես հիմնախնդրի առնչությամբ տարբեր լեզվաբանների արտահայտած տեսակետներին, այնպես էլ դրանց նվիրված ուսումնասիրություններին և վերլուծություններին: Մույն աշխատանքը մի փորձ է լրացնելու այդ կարգի հետազոտությունները՝ քննության առարկա դարձնելով բառակազմության հարցերի վերաբերյալ երկու ականավոր հայագետների՝ Մանուկ Աբեղյանի (1865-1944) և Հրայր Աճառյանի (1876-1953) տեսակետներն ընդհանուր գծերով, ցույց տալու հիմնական տարբերություններն ու նմանությունները, ըստ անհրաժեշտության՝ ներկայացնելու դրանց առնչությամբ կատարված որոշ դիտարկումներ:

**Բառակազմության տեսական հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում:** Մ. Աբեղյանի աշխատություններում բառակազմության հարցերին անդրադարձել է Էդուարդ Աղայանը. ըստ նրա՝ «չայ քերականագիտական գրականության մեջ անուշադրության մատնված բնագավառներից մեկն է եղել բառագիտությունը: Մենք ունեցել ենք հիանալի բառարաններ, բայց չենք ունեցել բառագիտություն: Մ. Աբեղյանն իր ուսումնասիրություններով հիմնադրեց բառագիտությունը որպես լեզվի գիտական ուսումնասիրության կարևորագույն ճյուղերից մեկը՝ իր երկու բաժիններով (**հիմաստաբանություն և բառակազմություն**)...»<sup>1</sup> (ընդգծումը՝ Վ. Ն.): Մ. Հարությունյանը, որ խորությամբ ուսումնասիրել է Մ. Աբեղյանի գիտական գործունեությունը, իրավացիորեն նկատում է՝ Ա. Այտընյանն իր ուսումնասիրություններով դառնում է աշխարհաբարի բառակազմական համակարգի առաջին գիտական մշակողը, իսկ Ստ. Պալասանյանը, հետևելով նրան, համառոտակի ուրվագծում է

<sup>1</sup> Աղայան Է. (1962): Չայ լեզվաբանության պատմություն, հ.2, Եր., Եր. հվս. հրատ., էջ 151:

արևելահայերենի բառակազմության մի քանի ձևեր: Չնայած դրան՝ հայոց լեզվի բառակազմության խոր ու համակարգված գիտական ուսումնասիրությունը պատկանում է Մ. Աբեղյանին<sup>2</sup>:

Բառակազմության հարցերին Աբեղյանն անդրադարձել է նախ **«Աշխարհաբարի քերականութիւն»** աշխատության մեջ, որում բարդ բառերը սահմանում է որպես **երկու բառից** (գործածում է **բառ**, ոչ թե **արմատ** եզրույթները, Վ. Ն.) կազմված, իսկ **ածանցականները**՝ մի բառից կամ արմատից և մի ածանցից կազմված բառեր<sup>3</sup>: Ավելի ուշ, **«Հայոց լեզվի տեսության»** մեջ Մ. Աբեղյանն ածանցներն ու ածանցավոր բառերը սահմանում է հետևյալ կերպ. «...այնպիսի ձևական մասերը, որոնցով կազմվում են տարբեր նշանակությամբ նոր բառեր, կոչվում են **բառակազմության ձևական մասեր** (մասնիկներ) կամ **ածանցներ** (ածանցական մասնիկներ), իսկ նրանցով կազմված բառերը կամ ձևերը **բառակազմության ձևեր** կամ **ածանցական բառեր»**<sup>4</sup>: Ըստ Աբեղյանի՝ «Բառերի նյութական նշանակությունը ձևափոխող այսպիսի ընդհանուր հնչյունական մասերի նշանակությունը կոչվում է **ձևական նշանակություն**. ձևական նշանակություն ունեցող բառամասն ինքը կոչվում է **ձևական մաս**, իսկ իրական կամ նյութական նշանակություն ունեցող բառամասը՝ **բառի բուն»**<sup>5</sup>: Բայի խոնարհման վերջավորությունների քննությամբ ցույց է տալիս, որ վերջավորությունների դեպքում բառի նշանակությունը չի փոխվում. «Ուստի և այս երկրորդ տեսակի ձևական մասերը կոչվում են **բառափոխության ձևական մասեր** (մասնիկներ) կամ **վերջավորություններ**, իսկ նրանցով կազմված ձևերը՝ **բառափոխության ձևեր** կամ **բառաձևեր»**<sup>6</sup>: Բառաբները բաժանում է երկու տեսակի՝ «1. **ածանցական բներ**, ... և 2. **նախատիպ կամ արմատական բներ**, որոնք այլևս չեն վերածվում բնի և ձևական մասի: Այս երկրորդ տեսակի բները կոչվում են նաև **բառերի արմատներ**, որոնց մեջ է պարունակում նույն խմբին պատկանող բառերի գլխավոր նյութական նշանակությունը»<sup>7</sup>:

Ինչպես խոսքի մասերի դասակարգման դեպքում է առաջնորդվում շարահյուսական սկզբունքով<sup>8</sup>, այնպես էլ բարդության տեսակները ներկայացնելիս հիմք է ընդունում բաղադրիչների շարահյուսական կապը. «...հայերենի բարդ բառերը, ինչպես ընդհանրապես բոլոր բաղադրված բառերը, ծագում են երկու սկզբնապես ինքնուրույն բառերի այնպիսի շարահյուսական կապակցությունից, որ ըմբռնվում է իբրև մի առանձին բառական միություն, մեկ բառ՝ մեկ

<sup>2</sup> Տե՛ս **Հարությունյան Մ.** (1970): Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., էջ 573:

<sup>3</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.** (1906): Աշխարհաբարի քերականութիւն, Դասագիրք ստորին դասարանների համար, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, էջ 80:

<sup>4</sup> **Աբեղյան Մ.** (1965): Հայոց լեզվի տեսություն, Եր., «Միտք», էջ 6:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>8</sup> Տե՛ս **Բարսեղյան Հ.** (1980): Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., Երևանի համալս. հրատ., էջ 163-205:

նշանակությամբ»<sup>9</sup>: Բարդությունները բաժանում է երեք տեսակի՝ **հարադրություններ, կցական բարդություններ, իսկական բարդություններ**, որոնք ներկայացնում է բազմաթիվ օրինակների մանրամասն վերլուծությամբ: Իրավացի է Ս. Հարությունյանը, որ կարևորում է բառակազմության վերաբերյալ Աբեդյանի «հայացքների տեսական խորությունն ու նրբությունները» հատկապես **իսկական բարդությունները**՝ «բարդ բառերի նկատմամբ հայերենի հին ու նոր վիճակների պատմահամեմատական վերլուծություններով» քննելիս<sup>10</sup>:

Աբեդյանը դրանք ներկայացնում է երեք կետերով. 1. «Բարդության երկու մասերի մեջ մտնում է Ա ձայնավորը, որ կոչվում է հոդակապ. բայց երբ բաղադրիչ մասերից երկրորդը սկսվում է ձայնավորով (ա, օ, ու, է, ի, ը), այն ժամանակ երկու բառի մեջ հոդակապ չի մտնում. ինչպես՝ *գորագունդ*, բայց՝ *թանաքաման*: Բառակազմի «յե» և «վո» կապակցությունների «յ» և «վ» հնչյուններն այս դեպքում դուրս են ընկնում. ինչպես՝ «յեկ», բայց «նորեկ», «վորակ», բայց «վատորակ»: 2. Բարդության առաջին մասի համար առնվում է եզակի ուղղական հոլովը, օրինակ՝ *մարդ-ա-սեր*: 3. Բարդության առաջին անդամի վերջի փակ վանկի ձայնավորները մնալով անշեշտ՝ կրում են ձայնափոխություն, օր.՝ *երկիր- երկրագունդ, թռչուն-թռչնորս, մատյան-մատենավար*»<sup>11</sup>: Նկատենք, որ վերջին կետում ներառում է նաև ածանցավոր բաղադրիչով կազմություններ՝ չառանձնացնելով **բարդածանցավոր** տեսակը, որն ավելի ուշ ներկայացվում է Գ. Սևակի, Ա. Ղարիբյանի, Հ. Աճառյանի և այլոց աշխատություններում՝ ձևակերպումների և դրանցով պայմանավորված՝ **բարդ ածանցավոր** եզրույթի՝ բաղադրիչների միասին կամ անջատ գրությամբ<sup>12</sup>:

Հոդակապը ներկայացնում է որպես բառաբնի «ա» ձայնավոր, որը «... անալոգիայով անցել է և այնպիսի բառերի բարդության, որոնք «ա» ձայնավորով բուն չունին...»<sup>13</sup>: Աբեդյանի դիտարկմամբ՝ սակավաթիվ են համադասական հարաբերությամբ կապակցված բաղադրիչներով բարդությունները (*տեղատարափ՝ տեղ ու տարափ* են): Սովորաբար բարդության բաղադրիչների հարաբերությունը ստորադասական է (*հացատուն, սևահող* են)<sup>14</sup>:

<sup>9</sup> Աբեդյան Մ. (1965), էջ 169:

<sup>10</sup> Տե՛ս **Հարությունյան Մ.** (1970), էջ 578: Ուղղագրությունը և կետադրությունը բոլոր մեջբերումներում բնագրային են:

<sup>11</sup> **Աբեդյան Մ.** (1965), էջ 189 (ուղղագրությունը և կետադրությունը բոլոր մեջբերումներում բնագրային են):

<sup>12</sup> Հմմտ. **Ղարիբյան Ա.** (1961): Հայոց լեզու, դասագիրք V-VII դասարանների համար. 9-րդ վերահրատ., Եր., Հայպետուսմանկիրատ, էջ 61: **Սևակ Գ.** (1955): Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., Եր. համալս. հրատ., էջ 221: **Աճառյան Հ.** (2005): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), Եր., Եր. համալս. հրատ., էջ 63:

<sup>13</sup> **Աբեդյան Մ.** (1965), էջ 190:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 201:

Ածանցման հարցերին նվիրված բաժնում Աբեղյանը նախ քննում է «ածանցական մասնիկների» ծագումը հնչափոխությամբ, երկու մասնիկների միացումով են, ապա նշում է, որ «Ածանցական մասնիկներ առաջ են գալիս նաև առանց հնչյունափոխության: Երբ բաղադրիչ մասերից մեկը իբրև անկախ բառ կորչում է կամ չկա լեզվի մեջ, այլ մնալով բաղադրությունների մեջ՝ ստանում է մի նոր, ձևական նշանակություն, – այն ժամանակ, – այդպիսի մասն զգացվում է իբրև ածանցիկ, և դրա անալոգիայով նոր բառեր են կազմվում, դա դառնում է իսկապես մի առաջադիր կամ վերջադիր մասնիկ»<sup>15</sup> (նկատի ունի արդի ընկալումներով՝ **ածանցակերպ**-ը, որը բացատրում է բազմաթիվ օրինակների մանրակրկիտ քննությամբ, Վ.Ն.):

Վերջաձանցները բաժանում է **անվանական** և **դերբայական** տեսակների, ներկայացնում է դրանց «մի քանի աչքի ընկնող նշանակությունները»: Դերբայական ածանցների մեջ տարբերակում է՝ **բայաբնի ածանցներ, անվանաձանց բայեր և բայաձանց անուններ, բայաձանց բայեր**<sup>16</sup>:

Դեռևս «Աշխարհաբարի քերականության» մեջ խոսելով անորոշ դերբայի կազմության մասին՝ առանձնացնում է «**հիմք, վերջաւորութիւն, լծորդ և միջաձանց**»: Ըստ Աբեղյանի՝ «վերջաւորութիւն է անորոշ դերբայի վերջին լ-ն, լծորդը վերջաւորութիւնից առաջ եղած ձայնաւորն է՝ **ա, ե, ի**, որ վերջաւորութեան հետ միասին հիմքի նշանակութեան» վրա ավելացնում են անելու կամ լինելու իմաստ, իսկ **միջաձանցը** հիմքի (այն կարող է լինել մի արմատ կամ մի բառ, լինի պարզ, բարդ, թե ածանցական) և լծորդի մեջ մտած ածանցն է, ինչպես տեսնել, մօտենալ<sup>17</sup>:

Թեև վերը նշված ձևակերպումներում դերբայական վերջավորությունները հենց այդպես էլ անվանում է, սակայն ինչպես իրավացիորեն նկատում է Հովհաննես Բարսեղյանը, «Մ. Աբեղյանը դերբայական վերջավորությունները դասում է վերջաձանցների շարքը և սրանց մեջ տեսնում է բառակազմական արժեք ու այդպես էլ դերբայական ձևերը քննում է բառակազմության և ոչ թե ձևաբանության կամ թեքման մեջ»<sup>18</sup>:

**2. Բառակազմության տեսական հարցերի քննությունը Հրաչյա Աճառյանի աշխատություններում:** Հր. Աճառյանը խնդրո առարկա հարցի քննությանն անդրադարձել է առաջին հերթին «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության 1-ին հատորում, որում, քննելով ածականի բառակազմական առանձնահատկությունները, այն ըստ կազմության բաժանում է 5 տեսակի՝ 1. **պարզ** (*սև* են), 2. **բարդ** (*մեծատուն...են*), 3. **նախամասնիկով** (*անմիտ, հզոր, ընդարձակ... են*), 4. **հետամասնիկով** (*հոգևոր, կարմրավուն, գեղեցիկ ...են*),

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 226-227:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 282-283:

<sup>17</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.** (1906): Աշխարհաբարի քերականություն, էջ 91:

<sup>18</sup> **Բարսեղյան Հ.** (1980), էջ 202:

5.բայից կազմված (*սիրելի, սիրեցյալ*)<sup>19</sup>: Նկատելի է, որ **ածանցավոր** եզրույթի փոխարեն երբեմն գործածում է **ածանցյալ** տարբերակը՝ անդրադառնալով տարբեր լեզուներում նույն իրողության դրսևորմանը<sup>20</sup>: Նույն սկզբունքով քննում է նաև թվականների բառակազմական առանձնահատկությունները 1-10 թվերը ներկայացնելով 680 լեզուներով<sup>21</sup>:

Աշխատության 3-րդ հատորում (2-րդ հատորում, որ նվիրված է դերանվանը, բառակազմության տեսական հարցերին անդրադարձ չկա (Աճառյան Շ., 1954), ներկայացված են գոյականի խոսքիմասային առանձնահատկությունները, որոնցից էդ. Ադայանը կարևորում է հատկապես «բառակազմությանը, գոյականների սեռի ու թվի կարգերին և հոլովմանը նվիրված բաժինները»<sup>22</sup>: Առաջաբանում Ադայանը նշում է. «Բարդություն տերմինը հեղինակը գործածում է երկու իմաստով. ա) բարդություն բուն իմաստով (բարդ բառ, բարդ բառերի կազմելը). բ) բաղադրություն, այսինքն՝ թե՛ բարդություն և թե՛ ածանցում»<sup>23</sup>: Անդրադառնալով աճականին՝ Աճառյանը գրում է. «...Մասնիկի ավելի թուլացած և ինքնությունը կորցրած ձևն է **աճականը**, որ արմատի իմաստը ձևափոխող մի տարր է. օր. հյ. *լպիրծ* և *լպիրշ*, *հար* և *հարկ*- (*անել*), *տիլ* և *տիղմ* բառերի մեջ *ծ*, *շ*, *կ*, *մ* ձայները, որոնք կցված են արմատին, անբաժանելի կերպով»<sup>24</sup>: Սահմանում է նաև ձևույթը՝ *ձևակ* անվանումով<sup>25</sup>, որը «...կարող է լինել նաև արմատի ներքին փոփոխությամբ՝ առանց որևէ եկամուտ տարր ավելացնելու. ինչպես հայ. *քոյր* և *քեռ*, *հայր* և *հոր*.... նն: .....Այս երևույթը կոչվում է *ձայնդարձ*»<sup>26</sup>: Հանգամանորեն քննում է ձայնդարձը տարբեր լեզուներում՝ նշելով, որ այն «հայերենի մեջ ձևաբանական ոչ մի նշանակություն չունի այլևս...»<sup>27</sup>, և ներկայացնում ցուցակ<sup>28</sup>, որում «հավաքում ենք հայերենի բոլոր այն բառերը, որոնք իրար հետ կապվում են ձայնդարձի աստիճաններով...» «դուրս թողնելով այն հայերեն բառերը, որոնք ուղղակի ներկայացնում են հնդեվրոպական արմատները, առանց ձայնդարձի տարբերության»<sup>29</sup>:

Ըստ Աճառյանի՝ «Հայերենի **ա** հոդակապի մասին երկու կարծիք կա. նախ այն, որ այդ հոդակապը առաջացել է **ա** հոլովման բնի ձայնավորից. օր. փառք, փառաց, փառասեր. երկրորդ. որ **ա** հոդակապը առաջացել է պարսկերենից

<sup>19</sup> Տե՛ս **Աճառյան Շ.** (1952): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. 1, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Եր., էջ 5:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 40:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 131-340:

<sup>22</sup> **Աճառյան Շ.** (1957): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. 3, Եր., ՊՀ հրատ., էջ 5:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 7-8:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 4:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 33-35:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 35:

փոխառյալ բառերի ազդեցությամբ. Հայերենը պարսկերենից առնելով բազմաթիվ բառեր, որոնք կազմված էին պարսկական *a* հոդակապով, նրանց օրինակով կազմեց նաև իր բառերը», նշում է, որ Մեյեն իր աշխատության 1-ին տպագրության մեջ 1-ին տարբերակն է ընդունում, 2-րդ տպագրության մեջ՝ 2-րդը<sup>30</sup>: Աճառյանը հակված չէ հոդակապի փոխառյալ լինելուն, որի առնչությամբ և առհասարակ բարդության՝ որպես տարբեր՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներում բառակազմական գործունեղանակի վերաբերյալ հանգամանալից քննություն է կատարում<sup>31</sup>: Ընդգծում է. «...որ հնագույն հայերենում հոդակապ չկար, սրա ամենալավ ապացույցը կարելի է համարել այն բառերը, որոնք չափազանց հին են և անհնարին է երևակայել, թե երբևիցե նրանք հոդակապ ունեցել են»<sup>32</sup>: Ընդամենը մեկ էջ նվիրում է երեք և ավելի բառերով բարդություններին, որոնք, ըստ նրա, քիչ են հայերենում, և որոնց, իր բառերով ասած, «...մեծագույն մասի «բազմաբարդյուն» հեղինակն է «շատաճոռոմախոսաբան» Թեոդորոս Քրթենավորը և, երկրորդ շարքի վրա, Գրիգոր Մազիստրոսը և Գրիգոր Նարեկացին», մեկ տասնյակից քիչ ավել նմանատիպ բառեր էլ ներկայացնում է նոր լեզվից, որոնք ստեղծվել են «կյանքի պահանջների համաձայն»<sup>33</sup>:

Բայի կազմությանը վերաբերող դիտարկումներն առկա են 4-րդ հատորի Ա մասում, որում հանգամանորեն քննում է հնդեվրոպական նախալեզվի և ցեղակից լեզուների բայական համակարգերը, հայերենի բայական բների տեսակներն ու կազմությունը<sup>34</sup>: Հատորի Բ մասը նվիրված է աշխարհաբարի խոնարհման համակարգի քննությանը: Ըստ կազմության՝ հայերենի բայերը Աճառյանը բաժանում է երեք տեսակի՝ «1. Պարզ բայեր, որոնք ուղղակի ժառանգություն են հնդեվրոպական նախալեզվից և որոնց արմատը պետք չէ որոնել հայերենի մեջ. ինչպես՝ տալ, լալ...ևն: 2. Ածանցյալ կամ ածանցական բայեր կոչվում են այն բայերը, որոնք առաջանում են նույն պարզ բայերից՝ զանազան մասնիկներով. այսպես են՝ անցողական, կրավորական, բացասական, հարցական, կրկնավոր, հաճախական ևն բայերը: 3. Անվանական բայեր, որոնք կազմվում են գոյականից կամ ածականից՝ ստանալով որևէ բայական վերջավորություն»<sup>35</sup>: Այս բաժնում ուշագրավ է հատկապես այն, որ բայաձանցները ներկայացնում է **մասնիկ կամ վերջավորություն** եզրույթներով (*-ուցանել, -ցնել* ևն), թեև խոսում է **ածանցյալ** բայերի մասին<sup>36</sup>: Բայանունների դեպքում

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 131:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 119-146:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 148:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 160-161:

<sup>34</sup> Տե՛ս **Աճառյան Հ.** (1959): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. IV, Ա մաս, Եր., էջ 345-372:

<sup>35</sup> **Աճառյան Հ.** (1961): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. IV, Բ մաս, Եր., էջ 149:

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 249-529:

մասնիկին զուգահեռ՝ գործածում է նաև **հավելված** եզրը, ինչպես՝ «Բայարմատը **p** հավելվածով՝ **հևք, լիցք....**»<sup>37</sup>: Սա թերևս պայմանավորված է նրանով, որ «ի տարբերություն Մ. Աբեղյանի, նրա համար դերբայները բայաձևեր են, և նրանցում գործողության իմաստը, անկախ նրանից, թե տվյալ դերբայը բայական է, թե՛ անվանական կիրառություններ ունի, միշտ զուգորդվում է ժամանակի, բայի կրավորական և ժխտական ձևեր կազմելու ներունակությամբ»<sup>38</sup>: Մյուս կողմից՝ «մինչդեռ Աբեղյանը բայանունը նույնացնում է անորոշ դերբային՝ գործածելով «բայանուն կամ անորոշ դերբայ» անվանումը, իսկ Աճառյանը բայանուն ասելով հասկանում է բայահիմքից ածանցված գոյականները»<sup>39</sup>:

Բառակազմության տեսական հարցերի վերաբերյալ Աճառյանի դիտարկումները տեղ են գտել նաև «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության վերջին՝ 2005 թ. հրատարակության (Աճառյան, 2005) մեջ, որը պատրաստել և խմբագրել են Ս. Գալստյանն ու Խ. Բաղիկյանը: Ինչպես նշվում է առաջաբանում, Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանի նման, ածանցները ներկայացնում էր իբրև «ինքնին վերցրած, աննշանակ՝ իմաստ չունեցող» մասնիկներ, բայց միայն տեսության մեջ: Սույն հատորի համապատասխան բաժիններում նա նշում է բազմիցս, որ «մասնիկները բազմազան նշանակություններ ունեն», ու մանրամասնաբար նկարագրում է դրանց առաջացման հիմնական ուղիներից մեկը՝ նյութական նշանակությամբ բառերի և արմատների վերածումը բառակազմական նշանակություն ունեցող մասնիկների՝ ինչպես հայերենում, այնպես էլ աշխարհի մի շարք լեզուներում<sup>40</sup>:

Արմատը սահմանում է որպես անլուծելի, անվերծանելի, ինչպես քիմիայի մեջ՝ պարզ տարրերը, թեև վկայելով Ռընանին՝ նշում է նաև, որ «արմատների այդ պարզությունն առերևույթ է միայն, և թե նա թաքցնում է մեզանից մի ավելի ներքին բաղադրություն»<sup>41</sup>: Ասվածը հաստատելու համար բերում է մի քանի հայերեն պարզ բառերի օրինակներ, որոնք իրականում բաղադրյալ են, ինչպես՝ անդունդ (որ հայերենից փոխառել է նաև թուրքերենը), հնոց, նիստ, ուրջու, գոտի, հովիւ, Գարեգին<sup>42</sup>:

Ըստ Աճառյանի՝ «.... հայերենն ունի իր բառարանում 7 տեսակի բառ. 1) **Արմատ** բառեր, ինչպես՝ ջուր, ծառ ....ն: 2) **Ածանց** բառեր, որոնք կազմվում են արմատներից՝ որևէ մասնիկի հավելումով, ինչպես՝ ջրոտ, անջուր ....ն: 3) **Բարդ** բառեր, որոնք կազմվում են երկու արմատների կապակցությամբ, ինչպես՝ ջրկիր, ջրշեջ....ն: 4) **Գրկնավոր** բառեր, որոնք կազմվում են միևնույն արմատի

<sup>37</sup> Աճառյան Հ. (1965): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), Կ. Վ., Եր., էջ 58-59:

<sup>38</sup> Բարսեղյան Հ. (1980): Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., Եր. համալս. հրատ., էջ 238:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 239:

<sup>40</sup> Տե՛ս Աճառյան Հ. (2005): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), Եր., էջ 6:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 64-65:

կրկնությամբ, ինչպես՝ մեծամեծ, չարաչար, ծանրածանր (բոլորը միայն հողա-կապով համադրական բառեր, Վ.Ն.): 5) **Հարաբարդ բառեր**, որոնք կազմվում են երեք արմատ բառերի բարդությամբ, ինչպես՝ հեռախոսագիծ, հեռագրալար, գլխարկավաճառ...ևն: 6) **Բազմաբարդ բառեր**, որոնք կազմված են չորս կամ ավելի արմատ բառերի բարդությամբ, ինչպես՝ հեռագրասյունաշարք: 7) **Բարդա-ծանց բառեր**, որոնք կազմված են որևէ բարդ բառի (կրկնավոր, հարաբարդ կամ բազմաբարդ) վրա ավելացնելով որևէ մասնիկ, ինչպես՝ ժամանակագրա-կան, մարդասիրություն, գլխարկավաճառություն ևն: Մակայն ինչ էլ լինի, վե-րոհիշյալ 7 տեսակի բառերը վերջիվերջո վերածվում են 3 մեծ խմբի, այն է՝ **ար-մատ, ածանց** և **բարդ**<sup>43</sup>: Թեև գործածում է **ածանց** կամ **ածանցյալ բառեր** եզ-րույթները, սակայն ածանցի փոխարեն հիմնականում նախընտրում է մասնիկ եզրույթը:

Ածանցման հարցերը քննելիս Աճառյանը դարձյալ դիտարկում է բառերի կազմության գործընթացն ու առանձնահատկությունները՝ առանց սահմա-նումների, տեսական ձևակերպումների: Հատկանշական է, որ գործածում է **արմատ, ածանց, բարդ ածանց** եզրույթները՝ նկատի ունենալով *արմատական, ածանցավոր, բարդ ածանցավոր* բառերը: Նախ ներկայացնում է գոյականից կամ ածականից կազմված ածանցավոր բառերը, ապա՝ մասնիկների (նկատի ունի ածանցները) բնութագիրը հին հայերենում՝ հետևյալ սահմանումով. «Մասնիկ է կոչվում մի ձայն կամ մի քանի ձայներից բաղկացած մի ձայնա-խումբ, որ առանձին նշանակություն և գործածություն չունի, բայց կցվելով մի բառի՝ տալիս է նրան հավելյալ մի իմաստ, այսպես՝ *թագ* բառից *թագավոր*՝ նշանակում է «այն անձը, որ կրում է թագ»<sup>44</sup>:

**Եզրակացություններ:** Ամփոփելով բառակազմության տեսական հարցերի շուրջ Մանուկ Աբեղյանի և Հրաչյա Աճառյանի տեսակետների քննությունը՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

Մ.Աբեղյանը բառերն ըստ կազմության բաժանում է երկու տեսակի՝ **պարզ և բաղադրյալ**, բաղադրյալ բառերը՝ **բարդ** (հարադրական բայերի, բաղիյուսա-կան հարադրությունների, կրկնավորների, կցական և իսկական բարդություն-ների ենթատեսակների հանգամանակից քննությամբ) և **ածանցական** տեսակ-ների: Բարդ է համարում երկու *բառից* (Աճառյանը՝ երկու *արմատից*) կազմ-ված, **ածանցականները**՝ մի բառից կամ արմատից և մի ածանցից կազմվածնե-րը: Առանձնացնում է նաև **առաջադիրներով բաղադրություններ** տեսակը: Մինչդեռ Աճառյանը հայերենի համար ընդունում է 7 տեսակի բառ՝ **արմատ, ածանց, բարդ, կրկնավոր, հարաբարդ, բազմաբարդ, բարդածանց** բառեր, թեև արձանագրում է, որ հիմնական տեսակներն են՝ *արմատ, ածանց* և *բարդ*: Ա-ճառյանը գործածում է **արմատ, ածանց, բարդ ածանց** եզրույթները՝ նկատի ու-

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 63-64:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 168:

եննալով **արմատական, ածանցավոր, բարդ ածանցավոր** տեսակները: Յուրաքանչյուր խոսքի մաս քննելիս բառերի կառուցվածքային տեսակները յուրովի են ներկայացվում՝ ելնելով տվյալ խոսքի մասի առանձնահատկություններից: Նկատենք, որ Աբեղյանը չի առանձնացնում *բարդ ածանցավոր* տեսակը, սակայն բարդությունը քննելիս որպես օրինակ է բերում նաև ածանց պարունակող բարդ բառեր:

Ածանցման երևույթը քննելիս Աբեղյանը նախ ներկայացնում է ածանցների առաջացման ուղիները՝ **«ածանցական մասնիկների»** ծագումը հնչյունափոխությամբ, **«ածանցիկների»** (նկատի ունի ածանցակերպները) ծագումն առանց հնչյունափոխության, **«ածանցական մասնիկների»** ծագումը երկու մասնիկների միացումից, հնացած հոլովական ու բայական ձևերից, ապա դրանք բաժանում է **անվանական** և **դերբայական** տեսակների: Ըստ Աբեղյանի՝ **միջամասնիկները** բայական ներածանցներն (արդի ընկալումներով) են: Մինչդեռ Աճառյանը հնդկական *santali* լեզվի օրինակով բացատրում է, թե ինչ է **միջամասնիկը** (այդ լեզվում, ըստ նրա, բառի առաջին ձայնավորից հետո դրվում է *k* միջամասնիկը և կազմում է սաստկական բայ, որը շատ սովորական երևույթ է սեմական լեզուների մեջ): Ըստ Աճառյանի՝ «արդի հնդեվրոպական լեզուները այսպիսի բառակազմություն չգիտեն. եղածներն էլ երևութական են միայն, ինչպես՝ հայերեն ոսկր–ոսկեր, տարր–տարերային և այլն»<sup>45</sup>:

Աբեղյանը դերբայական վերջավորությունները ներկայացնում է իբրև ածանցներ, մինչդեռ Աճառյանը դրանք անվանում է *վերջավորություն* կամ *մասնիկ*: Աճառյանը հայերենի բայերն ըստ կազմության բաժանում է երեք տեսակի՝ **պարզ, ածանցյալ** կամ **ածանցական** և **անվանական** բայեր: Բայանունների կազմությունը ներկայացնելիս **մասնիկին** զուգահեռ գործածում է նաև **հավելված** եզրը: Աճառյանն անդրադառնում է նաև մորֆեմային՝ այն անվանելով **ձևակ**:

Ընդհանուր առմամբ՝ Աճառյանի աշխատությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նա իր առջև խնդիր չի դնում լեզվական իրողությունների՝ տվյալ դեպքում՝ բառակազմության տեսական հարցերի մշակումը (այդ գործն իրենից առաջ արել էր Աբեղյանը). նրան առավելապես հետաքրքրում է բազմաթիվ լեզուներում և հատկապես հայերենում բառերի կազմության օրինաչափությունների, կառուցվածքային առանձնահատկությունների վերհանումն ու դրանց միջև եղած կապերի բացահայտումը: Այդ առումով ուշագրավ է լեզվաբանի մասին հետևյալ վկայությունը. «Աճառյանի գրադարանը առանձնապես հարուստ էր բառարաններով: Տեսական գրականություն, որպես օրենք, չէր պահում: Կարդացածը նվիրում էր մտերիմներին կամ գիտական գրադարաններին»<sup>46</sup>: Մինչդեռ Աբեղյանի դեպքում այլ է մոտեցումը. նրա

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 161-162:

<sup>46</sup> **Սուրբապյան Ա.**, (2001): Մեծ հայագետն ու հայրենասերը (Հր. Աճառյանի ծննդյան 125-ամյակի առթիվ) // Պատմա-բանասիրական հանդես, հ. 1, Եր., էջ 50, 47-62:

ինդիքն է ոչ միայն հայերենի բառապաշարի պատմական զարգացման ընթացքի քննությունն ու օրինաչափությունների բացահայտումը (որոշ դեպքերում՝ այլ լեզուների՝ հիմնականում ռուսերենի, գերմաներենի նույն կարգի իրողությունների համեմատությամբ), այլև դրանց գիտական պատշաճ մշակումն ու համակարգումը: Նրա աշխատություններում դժվար է Աբեղյան գիտնականից տարանջատել Աբեղյան դասավանդողին՝ տեսական վերլուծությունը նաև ուսուցանելուն միտված գործին անսահման եռանդի ու նվիրման ջանքերի գործադրմամբ:

**ВАРСИК НЕРСИСЯН – *Исследование теоретических вопросов словообразования в трудах Манука Абегамяна и Грачья Ачаряна.*** – В связи с необходимостью проведения работ, направленных на систематизацию теории синхронного словообразования современного армянского языка, особую значимость приобретает обращение к взглядам различных лингвистов, работавших в данной области. В настоящем исследовании предпринята попытка восполнить пробелы в работах данного направления: в описательно-аналитическом ключе рассмотрены взгляды двух выдающихся армянских лингвистов – Манука Абегамяна и Грачья Ачаряна – на проблемы словообразования в общих чертах, а также выявлены основные сходства и различия.

В целом можно сказать, что задача Абегамяна заключается не только в исследовании процесса исторического развития словарного состава армянского языка и выявлении его закономерностей (в отдельных случаях также посредством сопоставления с аналогичными явлениями в других языках, преимущественно в русском и немецком), но и в их научно обоснованной обработке и систематизации. В его трудах сложно провести четкую грань между Абегамяном-ученым и Абегамяном-педагогом, поскольку теоретический анализ органично сочетается с целенаправленной учебно-методической задачей и сопровождается значительными усилиями, направленными на систематическое и последовательное изложение научного материала. В случае с Ачаряном подход иной. Он не ставит перед собой задачу разработки теоретических вопросов словообразования (эту задачу до него решил Абегамян). Его интересует прежде всего выявление закономерностей и структурных особенностей словообразования, а также раскрытие связей между последними в различных языках, в частности, в армянском.

**Ключевые слова:** Манук Абегамян, Грачья Ачарян, аффиксация, аффиксальные слова, аффикс, именные аффиксы, наречные аффиксы, интерфикс (соединительная гласная), чередование, морфема

**VARSIK NERSISYAN – *Research on Theoretical Issues of Word Formation in the Works of Manuk Abeghyan and Hrachya Acharyan.*** – Due to the need to carry out work aimed at systematizing the theory of synchronic word formation in the modern Armenian language, it becomes particularly important to refer to the views of various linguists who have worked in this field. This study attempts to fill research gaps in this field: based on a descriptive-analytical approach, the views of two prominent Armenian linguists, Manuk Abeghyan and Hrachya Acharyan, on issues of word formation are examined in general terms and the main similarities and differences are identified.

Overall, it can be summarized that Abeghyan's objective is not only studying the historical development of the Armenian vocabulary and identifying its patterns (in some cases also through comparison with similar phenomena in other languages, primarily Russian and German), but also their scientifically grounded analysis and systematization. In his works, it is difficult to differentiate between Abeghyan, the scholar and Abeghyan, the educator, since his theoretical

analysis is organically combined with a purposeful teaching-methodological task and is accompanied by considerable efforts aimed at the systematic and coherent presentation of scientific material. In the case of Acharyan, the approach is different. He does not undertake the development of theoretical issues in word formation, a task that had already been comprehensively addressed by Abeghyan. His primary goal is identifying the patterns and structural features of word formation, as well as uncovering the relationships between them in various languages, particularly in the Armenian language.

**Key words:** *Manuk Abeghyan, Hrachya Acharyan, affixation, affixal words, affix, noun-forming affixes, adverb-forming affixes, interfix, alternation, morpheme*

### Գրականության ցանկ

- Աբեղյան Ս. (1906): Աշխարհաբարի քերականություն, Դասագիրք ստորին դասարանների համար, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, - 168 էջ: [Abeghyan M. (1906). Ashxarhabari qerakanowt'iwn, Dasagirq storin dasaranneri hamar, Vagharshapat, տր. Mayr At'or'oy S. E'jmiac'ni].
- Աբեղյան Ս. (1965): Հայոց լեզվի տեսություն, Եր., «Միտք» հրատ., -699 էջ: [Abeghyan M. (1965). Hayoc lezvi tesowt'yown, Er., «Mitq» hrat.].
- Աղայան Է. (1962): Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., ԵՊՀ հրատ., 385 էջ: [Aghayan E'. (1962). Hay lezvabanowt'yan patmowt'yown, h. 2, Er., EPH hrat.].
- Աճառյան Հ. (1952): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. 1, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 500 էջ: [Atwar'yan H. (1952). Liakatar qerakanowt'yown hayoc lezvi (Hamematowt'yamb 562 lezvi), h. 1, Er., Haykakan SSR' GA hrat.].
- Աճառյան Հ. (1954): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. 2, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 655 էջ: [Atwar'yan H. (1954). Liakatar qerakanowt'yownhayoc lezvi (Hamematowt'yamb 562 lezvi), h. 2, Er., Haykakan SSR' GA hrat.].
- Աճառյան Հ. (1957): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. 3, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., - 1011 էջ: [Atwar'yan H. (1957). Liakatar qerakanowt'yown hayoc lezvi (Hamematowt'yamb 562 lezvi), h. 3, Er., Haykakan SSR' GA hrat.].
- Աճառյան Հ. (1959): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. IV, Ա մաս, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., - 593 էջ: [Atwar'yan H. (1959). Liakatar qerakanowt'yown hayoc lezvi (Hamematowt'yamb 562 lezvi), h. IV, A mas, Er., Haykakan SSR' GA hrat.,]
- Աճառյան Հ. (1961): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. IV, Բ մաս, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., - 543 էջ: [Atwar'yan H. (1961). Liakatar qerakanowt'yown hayoc lezvi (Hamematowt'yamb 562 lezvi), h. IV, B mas, Er., Haykakan SSR' GA hrat.].
- Աճառյան Հ. (1965): Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), հ. V, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., - 430 էջ: [Atwar'yan H. (1965). Liakatar qerakanowt'yown hayoc lezvi (Hamematowt'yamb 562 lezvi), h. V, Er., Haykakan SSR' GA hrat.].
- Աճառյան Հ. (2005). Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզվի), Եր., ԵՊՀ հրատ., - 352 էջ: [Atwar'yan H. (2005). Liakatar qerakanowt'yown hayoc lezvi

(Hamematowt'yamb 562 lezvi), Er., EPH hrat.]

[http://publishing.yasu.am/files/Hayots\\_lezvi\\_qerakanutyun.pdf](http://publishing.yasu.am/files/Hayots_lezvi_qerakanutyun.pdf)

Բարսեղյան Հ. (1980): Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., Երևանի համալս. հրատ., - 524 էջ: [Barseghyan H. (1980). Hayereni xosqi maseri owsmownqy', Er., Er&ani hamals. hrat.].

Հարությունյան Ս. . (1970): Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ: [Harowt'yownyan S. . (1970). Manowk Abeghyan. kyanqn ow gorc'y', E., HSSH GA hrat.,].

Ղարիբյան Ա. (1961): Հայոց լեզու, դասագիրք V-VII դասարանների համար. 9-րդ վերահրատ., Եր., Հայպետուսմանկհրատ, 320 էջ: [Gharibyan A. (1961): Hayoc lezow, dasagirq V-VII dasaranneri hamar. 9-rd verahrat., Er., Haypetowsmankhrat].

Սևակ Գ. (1955): Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., ԵՊՀ հրատ., 357 էջ: [Sevak G. (1955): Jhamanakacic hayoc lezvi dasy'nt'ac, Er., EPH hrat.].

Սուքիասյան Ա. (2001): Մեծ հայագետն ու հայրենասերը (Հր. Աճառյանի ծննդյան 125-ամյակի առթիվ) // Պատմա-բանասիրական հանդես, հ. 1, Եր., էջ 47-62: [Sowqiasyan A. (2001). Mec' hayagetn ow hayrenasery' (Hr. Atwar'yani c'nndyan 125-amyaki ar't'iv). Patma-banasirakan handes, h. 1, Er.,]

<https://arar.sci.am/dlibra/publication/192330/edition/174715?language=en>

## ԴԵՐԲԱՅՆԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ «ԳՐԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

ԹԵՐԵԶԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ 

*Վանաձորի պետական համալսարան*

Գրաբարի ենթակայական դերբայն ունի *-աւղ (-օղ, -նղ)* և *-իչ* վերջավորությունները: Այն կազմվում է մերթ ներկայի, մերթ անցյալ կատարյալի հիմքից: Ծագումով կապվում է հնդեվրոպական մայր լեզվի հետ և ունի իր գուգահեռ ձևերը ժամանակակից հնդեվրոպական լեզուներում: Ըստ համեմատական հայագիտության՝ ենթակայականի *-նղ* վերջավորությունը ծագում է հնդեվրոպական *\*atl* մասնիկից: Հնդեվրոպական *t* խուլ պայթյալանը ձայնավորների կամ ձայնավորի և ձայնորդի միջև հայերենում փոխվում է *յ*-ի (*mater* - մայր, *pater* - հայր): Հայերենում *\*atl*-ը դառնում է *այլ, այլ-ն, այղ, իսկ այղ-աւղ*, քանի որ *լ*-ն և *ղ*-ն, *յ*-ն և *լ*-ն ունեն արտասանական հնչակցություններ: Գրաբարում ենթակայականը անվանվում է ներկա դերբայ, որովհետև համապատասխանում է հունարենի այն դերբայական ձևին, որն ունի ներկայի գաղափար: Հայերենում, սակայն, այս բայաձևը ժամանակի գաղափար չի արտահայտում: Այն անվանում է գործողություն կատարողին՝ իր իսկ գործողության անունով (*վազող*): Ենթակայական դերբայը ունի միայն անվանական գործառույթ, ուստի հոլովվում է և ստանձնում է գոյականի պաշտոններ: Նրա *-իչ* վերջավորության ձևերը աշխարհաբարում այլևս բայաձևեր չեն ընկալվում: Այժմ *-իչ*-ը բայարմատներից գոյական կազմող ածանց է: *-Ող* վերջավորությամբ բայաձևերը իրենց ընդհանուր բայական առանձնահատկություններով պահպանվում են միջին հայերենում, բարբառներում և գրական աշխարհաբարում: Այդ վերջավորությամբ բազմաթիվ բառեր խոսքիմասային անցում են կատարել և դարձել գոյական *ծնող, ուսանող, մատուցող, գրող* և այլն: Հայերենի որոշ բարբառներում նկատելի է ենթակայական դերբայի՝ մասնակի իմաստային նոր կիրառություն, այսպես՝ «ում» ճյուղի բարբառներից Նոյեմբերյանի խոսվածքում նկատվում է ենթակայական դերբայի՝ ապառնու իմաստով գործածություն *գնում եմ ծաղիկ քաղող*: Դժվար է ասել, թե այս կիրառությունը որտեղից է գալիս, բայց հայտնի է, որ ենթակայականը կարող է արտահայտել ինչպես կատարված, այնպես էլ կատարելի գործողություն: Այսպիսով՝ գրաբարի չորս դերբայները՝ անորոշ, ապառնի, անցյալ, ներկա կամ ենթակայական,

\* **Թերեզա Շահվերդյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր

**Тереза Шахвердян** – доктор филологических наук, профессор кафедры армянского языка и литературы Ванadzорского государственного университета.

**Tereza Shahverdyan** – Doctor of Philological Sciences, Professor at the Department of Armenian Language and Literature, Vanadzor State University

Էլ. փոստ՝ [tereza.shahverdyan@mail.ru](mailto:tereza.shahverdyan@mail.ru) ORCID ID: <https://orcid.org/0009-0007-6713-8994>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 03.02.2026

Գրախոսվել է՝ 09.02.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

իրենց դերբայական հիմնական նշանակություններով, բառակազմական հիմնական առանձնահատկություններով պահպանվել են նաև հայերենի հետագա հատվածներում. մասնակի փոփոխություններ են տեղի ունեցել ածանցավոր բայերի կազմության և մասամբ էլ դերբայական վերջավորությունների մեջ: Կարելի է ասել, որ գրաբարի համեմատությամբ աշխարհաբարը դերբայների անվանական հատկանիշից անցել է դեպի բայական հատկանիշը. օրինակ՝ եթե գրաբարի ապառնի և անցյալ դերբայները բայական գործածության հետ ունեն անվանական գործածություն, ապա աշխարհաբարում ապառնի դերբայը և գրաբարի անցյալից առաջացած վաղակատար դերբայը ունեն միայն բայական կախյալ գործածություն:

**Քանալի բառեր** – *անորոշ կամ աներևույթ, ընդունելություն, անցյալ, ապառնի, ենթակայական դերբայներ, լծորդ ձայնավորներ, բայաձանցներ՝ պարզ արմատական և բաղադրյալ (ածանցավոր), ներկայի և կատարյալի հիմքեր*

### Ներածություն

Անցյալ դարի 30-ական թվականներին լույս տեսավ Մանուկ Աբեղյանի «Գրաբարի քերականությունը»: Եվ քանի որ մի քանի տարի առաջ՝ 1922 թ., շրջանառության մեջ էր դրվել նրա հեղինակած «Հայերենի ուղղագրական բարեփոխություն» դեկրետը, գիրքը գրված է այդ ուղղագրությամբ՝ որոշ սրբագրական վրիպումներով, ուստի մեջբերումները կատարվում են բնագրից առանց խմբագրման:

Մանուկ Աբեղյանը խոսքի կենտրոնը համարում է բայը, ահա թե ինչու ձևաբանության բաժնին նվիրված նրա ուսումնասիրությունը սկսվում է բայով: Գրաբարի չորս դերբայների քննությանը զուգահեռ՝ ըստ անհրաժեշտության անդրադառնում է նաև ներկայի և կատարյալի բներին, բայաձանցներին, ներկայացնում գրաբարի բայի խոնարհման ընդհանուր պատկերը, կրավորականի կազմությունը, անկանոն և պակասավոր բայերը, պարզ և բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունները՝ ըստ առանձին խոնարհումների: Վերջում քննում է ժամանակաձևերի գործածությունները:

Մեր ուսումնասիրությունը բացառապես վերաբերում է գրաբարի դերբայների աբեղյանական դիտարկումներին<sup>1</sup>: Գերազանցապես քննել ենք դերբայների ձևաբանական հատկանիշները, անհրաժեշտության դեպքում անդրադարձել ենք գրաբարի դերբայների շարահյուսական գործառույթներին, քանզի Աբեղյանը երբեմն ուշադրություն է դարձրել նաև այդ հարցերին:

### Քննարկում

Մանուկ Աբեղյանը գրաբարի քերականությանը անդրադարձել է դեռևս 20-րդ դարի առաջին տասնամյակում: Պարզվում է, որ դարասկզբում գրաբարը ուսուցանվել է նաև դպրոցի բարձր դասարաններում, այդ մասին նա գրում է.

<sup>1</sup> Հոդվածի սահմանափակ ծավալի պատճառով դիմավոր բայերին չենք անդրադառնում:

«Այս «Գրաբարի քերականության» առաջին տպագրությունը 1907 թ. պատրաստված էր մեր միջնակարգ դպրոցների վերին դասարանների համար: Այժմ նույնը վերամշակված և մի փոքր ընդարձակված լույս է ընծայվում մեր բարձրագույն դպրոցների ուսանողների և առհասարակ նրանց համար, վորոնք ցանկանում են մեր հին լեզուն ուսումնասիրել: Քերականությանս մեջ կարևոր է համարված մեջ բերել համեմատաբար շատ որինակներ և դժվար կտորները թարգմանված են աշխարհաբար: Որինակների հեղինակների անունները չեն հիշված՝ գրքի ծավալը չմեծացնելու համար. դրանք առնված են մեր հին հայտնի մատենագիրներից՝ Եզնիկ, Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշե, Մովսես Խորենացի, ինչպես և Ավետարանից և այլն»<sup>2</sup>:

Գրաբարը զանազանում է չորս դերբայ: Մրանք անվանված են ժամանակային եզրույթներով՝ անորոշ, ներկա, անցյալ, ապառնի: Անորոշ դերբայը հունարենի նմանողությամբ դիտվել է իբրև եղանակային ձև, իբր անորոշ եղանակ: Դ. Թրակացու մեկնիչները հունարենի նմանողությամբ նույնիսկ հորինել են այդ անորոշ եղանակի համար առանձին ժամանակային ձևեր: Հետագայում գրաբարի ինքնատիպ քերականները ջնջում են այդ արհեստական ձևերը, բայց մինչև Պալասանյանը անորոշը համարում են եղանակ: Գրաբարի քերականները անորոշը կոչել են աներևույթ: Անորոշը բայի անունն է, նրանով անվանվում է գործողությունը, հետևաբար անորոշը կարող է դիտվել իբրև գործողության անուն, գոյական: Աբեղյանն այդպես էլ դիտարկում էր. նա համարում է գոյական: Քանի որ անորոշը, ինչպես և իբրև անուն գործածվող մյուս դերբայները միաժամանակ ունենում են թե՛ բայի, թե՛ անվան (հոլովվելու) հատկանիշներ, ուստի դեռ Թրակացու մեկնիչների կողմից անվանվել են *ընդունելություն*: Անորոշ դերբայն ունի հնդեվրոպական ծագում և կազմված է բայահիմքից, խոնարհիչից և վերջավորությունից: Խոնարհիչ ձայնավորներն են՝ *ա, է, ի, ու (ո-գոլ)*: Այս խոնարհիչները, ըստ համեմատական հայագիտության, բայական հիմքի ձայնավոր են, որոնք գրաբարում կատարում են թեքման ցուցչի դեր: Այդ ձայնավորները ներկայի հիմքում միանում են դիմորոշ վերջավորություններին և դառնում մի ամբողջություն: Մրանք նույնությամբ չեն համապատասխանում նախահայերենի հիմքի ձայնավորներին, այլ բավականին փոփոխված են: *Լ* վերջավորությունը, ըստ Մեյեի, հնդեվրոպական է և ծագում է *LO* մասնիկից:

Մ. Աբեղյանը սույն գրքում նախ քննել է գրաբարի 4 դերբայները: Անորոշ դերբայը գրաբարի քերականության պատմության մեջ կոչվել է *աներևույթ*: «ՆՀԲ»-ն *աներևույթ* բառի համար իբրև քերականական եզր հղում է *անորիոշ*-ին, որն է անորոշ, և բացատրում է հետևյալ կերպ. «...ըստ հայումս *աներևույթն*

<sup>2</sup> **Աբեղյան, Մ.** (1936): Գրաբարի քերականություն, Երևան, «Պետհրատ», էջ 3 (այսուհետև՝ (Աբեղյան 1936)):

անդէմ եւ անամանակ... Անորիշո, որպէս անունն իսկ յայտ առնէ, անորոշաբար զամենայն ժամանակս նշանակէ»<sup>3</sup>: Բանն այն է՝ գրաբարի անորոշ դերբայով ոչ բոլոր խոնարհումներն է հնարավոր որսալ: Այդ ձևերի որոշման ճշգրիտ տիրույթը սահմանական եղանակի ներկա ժամանակի հարացույցն է՝ նրա եզակի առաջին դեմքի ձևավորվածությամբ, որն էլ հենց լեզվաբանները համարում են ելակետային ձև: Աբեղյանն իրավացիորեն նշել է, որ անորոշն ունի -ալ, -ել, -իլ, -ուլ վերջավորությունները, որոնց ա, է, ի, ու խոնարհիչները անվանում է լծորդ ձայնավորներ, չի մոռացել նաև *n* խոնարհման միակ բայի՝ գոլի մասին: Աբեղյանը հիշատակել է՝ քանի որ *ի* խոնարհման բայերի անորոշը խոնարհիչը փոխում է *ե-ի* (*խօսիլ, ուսանիլ, փախչիլ* > *խօսել, ուսանել, փախչել*), բայերին անվանում են սահմանականի ներկայի եզակի առաջին դեմքով՝ *խաղամ, գրեմ, ուսանիմ, հեղում*: Աբեղյանը գրում է, «-Ուլ լծորդն աշխարհաբարում փոխվել է -ել ձևի, որինակ՝ *արգելուլ-արգելել, կիզուլ-կիզել*»<sup>4</sup>: Կարծում ենք՝ միայն *ա* խոնարհման բայերը չեն փոխել խոնարհիչը, մնացած բոլոր բայերը արևելահայերենում դարձել են *ե* խոնարհման:

Անորոշի հիմքը լինում է պարզ արմատական և բաղադրյալ (ածանցավոր): Ածանցները գրաբարում, ըստ քերականական նշանակության, երեք տիպի են՝ սոսկական, բազմապատկական և պատճառական: Սոսկածանցները հիմնականում կազմված են *ն, չ, նչ* ածանցներից, որոնք հաճախ բաղադրվում են *ա* կամ *ե* ձայնավորներին և առաջացնում են նոր ածանցներ (*ան, են, անչ, նչ, աչ*) գրաբարի համար ամենից գործածական ածանցներն են *ան, են, ն, չ*, որոնցից *չ*-ն այնքան էլ տարածված չէ: Այս ածանցները թեև անվանվում են *սոսկածանցներ*, սակայն նախահայերենում, մասամբ էլ գրաբարում դեռ պահպանում են իրենց որոշ քերականական նշանակությունները: Դրանց առաջին բնորոշ հատկանիշն այն է, որ սրանցով կազմված հիմք ունեցող բայաձևերը ցույց են տալիս կա՛մ կատարելի, կա՛մ կատարվող գործողություն: Այդ իմաստն առավել ևս հաստատվում է, երբ սոսկածանցավոր հիմքերը հակադրում ենք այդ նույն բայերի կատարյալի հիմքին:

Երկրորդ գրաբարում պահպանված են պարզ և սոսկածանցավոր բայերի զուգահեռ ձևեր, որոնց համեմատությունից պարզ երևում է, որ ածանցավոր բայերն արտահայտում են ընդհանուր, ոչ կոնկրետ գործողություն, մինչդեռ պարզ ձևերն արտահայտում են կոնկրետ գործողություն (*վախել-վախենալ, լողալ-լողանալ*):

Երրորդ՝ որոշ հայագետներ տեսնում են ընդհանրություն սոսկածանցների և անվանական ածանցների միջև, ըստ որում՝ այդ ընդհանրությունից հետևում են, թե անվանական ածանցների պես որոշ սոսկածանցներն էլ պահպանում են շատության, երկարատևության, տևականության գաղափար:

<sup>3</sup> Աւետիքեան Գ., Սիւրմէկեան Խ., Աւգերեան Մ. (1836): Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, Ս. Ղազար կղզու տպ., էջ 118:

<sup>4</sup> Աբեղյան (1936), էջ 17:

Չորրորդ՝ սուկական ածանցները, ինչպես երևում է, ունեն նաև քերականական սեռի նշանակություն, սովորաբար դրանք չեզոք սեռի են, մասամբ էլ՝ կրավորական:

Բայի կազմությունը Աբեղյանը ներկայացնում է ներկայի և կատարյալի հիմքերով, պարզապես նա անվանում է *բներ*: Այսպես՝ *-ամ*, *-ել*, *-իմ*, *-ում*՝ ձևերը դրվում են ներկայի հիմքի վրա, և բերում է համապատասխան օրինակներ. «Ներկայի հիմքը կամ բունը լինում է կամ մի արմատ, կամ մի բառ, լինի պարզ, բարդ կամ ածանցական: Որինակ՝ *կարդ-ամ*, *խաղ-ամ*, *կառավար-ել*, *լուսավոր-իմ* բայերի հիմքերն են՝ *կարդ* (բայարմատ), *խաղ* (պարզ բառ), *կառավար* (բարդ բառ), *լուսատր* (ածանցական բառ)», իսկ ածանցավոր *-ան-ամ*, *են-ամ*, *-ան-ել*, *-ան-իմ*, *-չիմ*, *-ն-ում*, *-ուց-ան-ել* ձևերով, օրինակ՝ *գոհ-անամ*, *մերձ-ենամ*, *տես-անել*, *ուս-անիմ*, *փախ-չիմ*, *զարթ-նում*, *փախ-ուց-անել*: Վերջին ձևով կազմվում են պատճառական բայերը՝ *փախուցանել*, *հեռացուցանել*, *մերձեցուցանել*՝ նախ: Վեց բայ *-չ*-ածանցի փոխանակ ունեն՝ *-նչ-*, *-անչ-*, *-աչ-* ձևերը՝ *կոր-նչ-իմ*, *երկ-նչ-իմ*, *մարտ-նչ-իմ*, *յար-նչ-իմ*, *մեղ-անչ-ել*, *ճան-աչ-ել*<sup>5</sup>: Այնուհետև Աբեղյանը հիշեցնում է, որ բազմապատկական բայերը կազմվում են *-ատ-*, *-ոտ-*, *-տ-* ածանցներով. «...*խաժ-ատ-ել*, *յոշ-ոտ-ել*, *կրճ-տ-ել*», սրանք ևս խոնարհվում են *-ե* խոնարհման բայերի նման:

Կատարյալի հիմքը, կամ ինչպես Աբեղյանն է գրում, կատարյալի բունը ներկայացրել է գերազանցապես ժամանակակից հայերենի նման.

«1. Պատճառական բայերի բնի ածանցն է *ոյց*, որինակ՝ *մատոյց*, *ուսոյց*.

2. *Աց* ածանցն ունեն *-ամ*, *-անամ* վերջացած բայերը, որինակ՝ *խաղ-ամ*, *զարմ-անամ* ունեն *խաղաց*, *զարմաց*, որոնցից կազմվում են պատճառական բայեր՝ *խաղաց-ուց-անել*, *զարմաց-ուց-անել*:

3. *Եաց* ածանցն ունեն *-ել*, *-իմ*, *-ենամ* վերջացող բայերը, որինակ՝ *յիշ-ել*, *խոս-իմ*, *մերձ-ենամ* ունեն *յիշեաց*, *խոսեաց*, *մերձեաց*, որոնցից կազմվում են պատճառական բայեր, *յիշեց-ուց-անել*, *խոսեց-ուց-անել*, *մերձեց-ուց-անել*:

4. Արմատն իբրեւ բուն բանում է *-անել*, *-անիմ*, *-չիմ*, *-նում*, *-ում* վերջացած բայերի համար, որինակ՝ *հաս-անել*, *ուս-անիմ*, *թո-չիմ*, *զարթ-նում* պատճառական ունին *հաս-ուց-անել*, *ուս-ուց-անել*, *թո-ուց-անել*, *զարթ-ուց-անել*: *Մարտնչիմ* ունի՝ *մարտ-ուցանել*, *երկնչիմ*՝ *երկուցանել* կամ *երկեցուցանել*, *յանչիմ* կամ *յառնել*՝ *յարուցանել*, *մեղանչել*՝ *մեղուցանել*, *ճանաչել*՝ *ճանուցանել*<sup>6</sup>:

Մ. Աբեղյանը նկատում է, որ գրաբարում պատճառականի իմաստ են ստանում նաև այն բայերը, որոնց անորոշ դերբայի հետ հանդես են գալիս *առնել*, *տամ* բայերը (*առնել մտանել-մտուցանել*, *առնել աշխատել-աշխատեցուցանել*, *տամ ածել-բերել տամ*, *տամ տանել- տանել տամ*, *տամ գրել- գրել տամ*): Միաժամանակ նշում է, որ *առնել* բայի գործածությունը նման պարագայում

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 18:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 19:

սակավադեպ է, *տամ* բայը նման կիրառությամբ հաճախադեպ է նաև աշխարհաբարում<sup>7</sup>: Գրաբարում երբեմն *առնեմ* բայից հետո անորոշ դերբայի փոխարեն հանդես է գալիս *զի* շաղկապով երկրորդական նախադասություն. «Արարից զի յարդարութիւնս իմ գնայցէք (գնացուցից)»<sup>8</sup>:

Այս բաժնում Արեղյանն անդրադարձել է նաև գրաբարի պատճառական բայերից հնչյունափոխությամբ աշխարհաբարի պատճառական բայերի ծագմանը: Այսպես՝ *ու* և *ա* ձայնավորների տղմամբ՝ *թռուցանել*, *հասուցանել* դարձել են *թոցնել*, *հասցնել*, ինչպես նաև *-աց*, *-եաց* բների և *-ոյց* ածանցի երկու *ց* բաղաձայնները ձայնավորների տղվելու պատճառով իրար են մոտեցել և դրանցից մեկը դուրս է ընկել՝ *գարմացուցանել*, *բնակեցուցանել* դարձել են *գարմացնել*, *բնակեցնել*: Իսկ *անցուցանել*, *լցուցանել*, *կացուցանել*, *կեցուցանել*, *դարձուցանել* դառնում են *անցնել*, *լցնել*, *կացնել*, *կեցնել*, *դարձնել*: Առանց հնչյունափոխության գրաբարից աշխարհաբարին են անցել *մատուցանել*, *ուսուցանել*, *զեկուցանել* բայերը, ինչպես նաև *տեսանել*, *ելանել*, *մտանել* դառնում են *տեսնել*, *ելնել*, *մտնել*:

Մ. Արեղյանը իրավացիորեն նկատում է նաև, որ բարբառների ազդեցությամբ հաճախ նույն բայը մի քանի տարբերակով է փոխանցվում, և նա կանգ է առնում մի քանի օրինաչափությունների վրա:

Օրինակ

1. *Եմ-իմ՝ բնակեմ- բնակիմ, ծաղկեմ-ծաղկիմ, որոճեմ-որոճամ:*
2. *Եմ-եամ, ամ-իմ՝ ատեմ-ատեամ, փրփրեմ-փրփրիմ-փրփրամ, ծփամ-ծփիմ:*
3. *Ում-ամ՝ յաւելում-յաւելեմ, կիզում-կիզեմ, կարկառում-կարկառեմ:*
4. *Ամ-անամ՝ անձկամ-անձկանամ, ցանկամ-ցանկանամ, ծուլամ-ծուլանամ:*
5. *Իմ-ենամ, եմ-ենամ՝ արբիմ-արբենամ, մերձիմ-մերձենամ, յամեմ-յամենամ:*
6. *Եմ-անեմ, իմ-անիմ՝ տարածեմ-տարածանեմ, լքեմ-լքանեմ, ծիրիմ-ծիրանիմ:*
7. *Ում-անեմ, ում-անիմ՝ հեղձում-հեղձանեմ, զեղում-զեղանիմ:*
8. *Եմ-ում-անեմ՝ հերձեմ-հերձում-հերձանեմ, դիզեմ-դիզում-դիզանեմ:*
9. *Եմ-նում-անեմ, իմ-նում-անիմ՝ եղծեմ-եղծնում-եղծանեմ, զերծիմ-զերծնում-զերծանիմ:*
10. *Նում-անեմ, նում-անիմ՝ կլնում-կլանեմ, զբոսում-զբոսանիմ:*
11. *Իմ-նում, ում-նում՝ զբաղիմ-զբաղնում, կալում-կալնում:*
12. *Չիմ-նում՝ փախչիմ-փախնում, զարթչիմ-զարթնում, զատչիմ-զատնում<sup>9</sup>:*

Գրաբարի դերբայները հաղորդակցական ակտիվ դեր են կատարում: Գրաբարի անորոշ կամ աներևույթ կոչվող դերբայը ունի բազմաթիվ ու բազմազան կիրառություններ: Այն թեքվում է *-ո* հոլովմամբ և կատարում բոլոր այն պաշտոնները, որոնք հատուկ են գոյականին, սակայն չորս դերբայներից երկուսը

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 19:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 121-123:

անորոշը և անցյալը, բացի իրենց հիմնական կիրառություններից, ինքնուրույնաբար դառնում էին նաև ստորոգյալ թեք հոլովներով դրված ենթակաների հետ: Այսպես՝ անորոշ դերբայը կարող է ստորոգյալ դառնալ՝ հանդես գալով տրական հոլովով դրված կողմնակի ենթակայի հետ: Այդպիսի շարահյուսական կառույցները բնորոշ էին հին հայերենին, և, ինչպես պնդում են հայ քերականները, այդպիսի կառույցը հին հայերենին հարագատ է, քանզի կիրառվել է մեր գրեթե բոլոր մատենագիրների կողմից, օրինակ. «*Բայց միայն մարդոյն անձնիշխան թողան կամքն՝ զինչ էւ կամեսցի. եւ այլ աւելի ինչ ոչ բռնադատեցաւ քան զայս որ ազդեալ ասացաւ - չճաշակել նմա ի ծառոյ անտի*» (Ագաթանգեղոս, 1909, էջ 145): Անորոշ դերբայի մոտ ենթական երբեմն դրվում է հայցական հոլովով. «*Ասէ մարգարեան զգայելս եւ զգառինս արօտակից միմեանց լինել*» («Ոսկեբերան», 1855, էջ 22): Նման կառույցներն ամենայն հավանակալությամբ պատճենում են՝ օտար ազդեցության արդյունք է<sup>10</sup>:

Հետաքրքրական են անորոշ դերբայի կիրառությունները բայական բաղադրյալ և անվանաբայական ստորոգյալների կազմում: Բայական բաղադրյալ ստորոգյալների կազմում հանդես են գալիս կարողական, կարելիական, կամական ձգտման իմաստներ արտահայտող եղանակիչ բայեր. «Դիմավոր եղանակավորիչ բայ + անորոշ դերբայ կառույցները ունեն մի բնորոշ առանձնահատկություն՝ դրանք երկուսն էլ ընկնում են միևնույն ենթակայի ոլորտի մեջ, այսինքն և՛ եղանակավորիչ բայը, և՛ անորոշ դերբայը պատկանում են միևնույն ենթակային, օրինակ՝ *կարեմք յաղթել, մարթեմք իմանալ, ջանայ ճանել, սկսան զմտաւ ածել զանկանայ ուտել* եւ այլն»<sup>11</sup>, իսկ անվանաբայական ստորոգյալի կազմում վերադրի գործառույթով հանդես են գալիս մի շարք բայեր, գոյականներ և ածականներ + անորոշ դերբայ, այսպես՝ *մարթի* (ոչ *մարթի ասել*), *լինիմ* (*լինիցի նոցա ուսանել*), *տամ* (ոչ *տայր խոսել*), *մարթ* (*չէ մարթ լինել*), *կարող* (*կարող եղել զշունչ առնել*), *բավական* (*չեմք բավական մերձենայ*), *պիտոյ* (*ինձ պիտոյ էի քէն մկրտել*), *պարտ է* (*ծախել պարտ էր*), *հարկ է* (*հարկ է ելանել*), *սովոր* (*զի չէն սովոր դժոխք ընդունել*), *ավելորդ* (*ավելորդ էր կարծել*), *վայել* (*վայել էր առնել*), *պատշաճ* (*պատշաճ իցէ իմանայ*) և նման բառեր: Բավական է թվենք անվանական մասերը, կտեսնենք, որ դրանք արտահայտում են և՛ կարելիություններ, և՛ արժևորումներ, և՛ հարկադրություններ<sup>12</sup>:

### 1. Ապառնի դերբայ

Գրաբարի քերականները ապառնի դերբայը կոչել են «ընդունելության» երեք ժամանակներից (ներկա, անցյալ, ապառնի) մեկը: «Ընդունելությունը» բառացի թարգմանություն է հունարեն «*մետոխե*» բառի և իբրև քերականական

<sup>10</sup> Տե՛ս **Շահվերդյան, Թ.** (2007): Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Եր., «Հասարակ» հրատ., էջ 47, 49:

<sup>11</sup> **Շահվերդյան, Թ.** (2001): Գրաբարի դերբայները. Ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, «Վան Արյան» հրատ., էջ 37-38 (այսուհետև՝ Շահվերդյան 2001):

<sup>12</sup> Տե՛ս **Շահվերդյան** (2001), էջ 48-64:

եզր արտահայտում է բայի և անվան հատկություն: Ընդունելությունը երկար ժամանակ դիտվել է որպես առանձին խոսքի մաս: Հետագայում այս դերբային վերագրվում է նաև ապառնի ժամանակի քերականական կարգ<sup>13</sup>: Ինչ խոսք, ապառնի դերբայը ժամանակային իմաստ ունի, բայց առանց մասնավորման, առանց ժամանակի հատված նշելու, այլ ընդհանուր կերպով: Հայ քերականագիտության մեջ ապառնի դերբայի ըմբռնմանը առաջին անգամ հասավ Ա. Բագրատունին իր նշանավոր քերականությամբ<sup>14</sup>: Չնայած դրան՝ երկար ժամանակ Ա. Այտընյանը նորից գործածում էր *ընդունելության ապառնի* տերմինը<sup>15</sup>: Գրաբարի ապառնի դերբայը ունի երկու ձև, որոնք կազմվում են անորոշ դերբայից *-ng* և *-h* մասնիկներով. օրինակ *գրել* - անորոշ, *գրել-ng* (*գրելոց*), *գրել-h* (*գրելի*) - ապառնի: Այս երկու դերբայների վերաբերյալ լատինաբան քերականները, հետագայում նաև Ն. Մառը և Է. Թումանյանը, այն կարծիքին են, թե *-ng* մասնիկով վերջավորվող դերբայը ներգործական սեռի է, *-h* մասնիկովը՝ կրավորական:

«Գրաբարի ապառնին կազմվում է անորոշ դերբայից, *-ng*, *-h* վերջավորություններով: *-Ng* վերջավորությունը վերլուծվում - բացատրվում է գրաբարով, *-ng* վերջավորության *n*-ն անորոշ դերբայի հոլովիչն է, *g*-ն՝ հոգնակի սեռականի հոլովակազմիչը: *h*-ն նույնպես հոլովիչ է, բայց այս դեպքում եզակի սեռականն է: Թե ինչպես կարող էր հոլովական վերջավորությունը, այն էլ սեռականի, դառնալ դերբայական վերջավորություն, այդ մասին հայագիտության մեջ կան բազմաթիվ մեկնություններ, որոնք միանգամայն համոզիչ են: Նախ, որ գրաբարի ապառնի դերբայը (*h*-ով վերջացող) ունի անվանական գործածություն, իրոք սեռական է, որը գործածվում է իբրև հատկանիշ: Եթե ասում ենք՝ *խմելու ջուր* և կամ *ջուրք խմելոց*, իրոք պետք է հասկանայինք ջուր, որ խմելի է: Գրաբարի ապառնին հետագայում պահպանվում է *-h* վերջավորությամբ, իսկ *-ng* վերջավորությամբ ձևերը, որոնք գրաբարում ազատ կերպով գործածվում էին օժանդակ բայի հետ և կազմում էին բաղադրյալ ժամանակային ձևեր, սահմանական և ստորադասական եղանակների բաղադրյալ ապառնիների կազմում՝ *գրելոց ես*, *գրելոց էի* (սահմանականի), *գրելոց իցեմ* (ստորադասականի), որն անցյալի ձևեր չունի: Ապառնու երկու ձևերից *-ng*-ով տարբերակը կախյալ դերբայ է և հանդես է գալիս միայն նշված կիրառությամբ»: Ենթակայականի և ապառնու *-h*-ով տարբերակների վերաբերյալ կան տարակարծություններ և՛ Աբեղյանի կողմից ասված, և՛ ուրիշ լեզվաբանների, որոնց մասին կիսովի ստորև: Քանի որ գրաբարի *h* վերջավորությամբ ապառնին բայական դիմավոր ձևեր չի կազմում, ուստի միջին հայերենում և աշխարհաբարում

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 85-88:

<sup>14</sup> Տե՛ս **Բագրատունի, Ա.** (1852): Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, Ս. Ղազար կղզու տպ., էջ 205-208:

<sup>15</sup> Տե՛ս **Չալըխեան, Վ., Այտընեան, Ա.** (1885): Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, Մխիթարյանների տպ., էջ 186 (այսուհետև՝ Չալըխեան և Այտընեան (1885)):

պահպանվում է անփոփոխ՝ իր անվանական նշանակությամբ: Մինչդեռ *-ng* վերջավորությամբ ապառնին միջին հայերենից հետո վերանում է, և նրա տեղը բարբառներում ու աշխարհաբարում ավելանում են նոր ձևեր, որոնցով կազմվում են բաղադրյալ ապառնի ժամանակներ: Այսպես՝ միջին հայերենում իբրև ապառնու նոր ձև գործածվում է *-nj* վերջավորությամբ ձևը (*վազելոյ ես*), իսկ ավելի ուշ առաջանում է *-ni*-ով ձևերը՝ պատմական հնչյունափոխությամբ (*խաղալու ես*):

Ապառնի դերբայի մասին շարադրանքը բավականին համառոտ է: Աբեղյանը մի քանի խոսքով ներկայացրել է կազմությունը, որ այն ունի *-ng* վերջավորություն, և այն ավելանում է անորոշ դերբայի վրա, որի ժամանակ *h* խոնարհիչը դառնում է *ե*, իսկ *ni* խոնարհիչը սղվում է: Օրինակ՝ *գրել-գրելոց, խօսիլ-խօսել-խոսելոց, հեղուլ-հեղլոց, զենուլ-զենլոց*: Աբեղյանը գրում է, որ սակավ դեպքերում ապառնի դերբայն իբրև ածական է գործածվում, սակայն ոչ մի օրինակ չի բերում: Հավանաբար նկատի ունի *-h*-ով վերջավորվող ապառնի դերբայը, որովհետև *-ng*-ով ապառնին կախյալ դերբայ է, սակայն շարադրանքի շարունակությունը մեզ այլ բան է հուշում: «Յերբեմն անանցողական բայերի ապառնի դերբայը իբրև գոյական էլ է գործածվում, ինչպես՝ *լեալք* և *լինելոցք-եղածները* և *լինելիքները*: *Ջգալոցն պատմեցե՛-գալիքները* կը պատմի»<sup>16</sup>: Կարծում ենք՝ բերված օրինակներում նշվածները ոչ թե ապառնի դերբայներ են, այլ անցյալ դերբայի թեք ձևեր: Իսկ «*Ջգալոցն պատմեցե՛*» նախադասության մեջ «*գալոցն*»-ը պատմական բացառականի ձև է՝ *գալիքներից* կպատմի: Մանուկ Աբեղյանը *-h* վերջավորությամբ ապառնի դերբային ուշադրություն չի դարձրել. դրան անդրադարձել է ենթակայական դերբային վերաբերող շարադրանքում:

## 2. Անցյալ դերբայ

Անցյալ դերբայը գրաբարում կազմվում է *-եալ* վերջավորությամբ, որն ավելանում է ինչպես կատարյալի հիմքին, այնպես էլ՝ ներկայի հիմքին: Անցյալ դերբայն ունի անցյալում կատարված գործողության և ավարտված կերպի իմաստներ: Ավարտված կերպի իմաստը հանդես է գալիս և՛ հետևանքի հարատևմամբ, և՛ առանց հետևանքի հարատևման: Քանի որ անցյալ դերբայը իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի վաղակատար, հարակատար դերբայներին, ավարտված կերպի իմաստը հետագայում երկփեղկվում է այս երկու դերբայների միջև. այսինքն ավարտված կերպի իմաստը ժառանգում է վաղակատար դերբայը, հետևանքի հարատևմամբ իմաստը՝ հարակատար դերբայը: Երբեմն անցյալ դերբայը ունենում է նաև անվանական գործածություն՝ ստանձնելով գոյականի և ածականի հատկանիշներ, որովհետև անցյալ դերբայը գրաբարում կիսանկախ է, հոլովվում է *n* հոլովմամբ և կատարում գոյականական գործառույթներ, այն անկախ՝ առանց օժանդակ

<sup>16</sup> Աբեղյան (1936), էջ 23:

բայի, ստորոգյալ է դառնում սեռականով դրված ենթակայի հետ, ուստի մնա-  
յուն հետևանքը ավելի ցայտուն է արտահայտվում: Վերջավորությունը հասա-  
րակ է, ուստի ընկալվում է ն' ներգործական, ն' կրավորական իմաստներով  
(գրեալ նշանակում է ն' գրել, ն' գրվել, ն' գրած, ն' գրված): Կախյալ կիրառու-  
յամբ օժանդակ բայի հետ կազմվում են գրաբարի վաղակատար-հարակատար  
ներկա (գրեալ էս) և անցյալ (գրեալ էի) և ապառնի (գրեալ իցես) ժամանակա-  
ձևերը: Վերջավորությունը (-եալ) հնդեվրոպական ծագում ունի. լ-ն կազմվում  
է անորոշի վերջավորության նման. ծագում է -lo մասնիկից: Եա երկբարբառը  
համապատասխանում է հնդեվրոպական բայահիմքի ձայնավոր բաղադրիչ-  
ներին: Գրաբարում անցյալ դերբայը հաճախադեպ բայաձև է: Իր հաճախակա-  
նությամբ այն զիջում է միայն անորոշ դերբային: Բայց կան բայեր, որոնք անց-  
յալ դերբայ չունեն. օրինակ՝ գում, պարտիմ, թռչիմ, կորնչիմ, գոգ բայերը: Բոլոր  
դեպքերում անցյալ դերբայը գործածությամբ մի քանի անգամ գերազանցում է  
ապառնի և ենթակայական դերբայներին՝ միասին վերցրած: Գրաբարի անցյալ  
դերբայը աչքի է ընկնում նաև իր ձևաբանական և շարահյուսական առանձնա-  
հատկություններով: Անցյալ դերբայը, ինչպես ասվեց, գրաբարում կազմվում է  
և՛ ներկայի, և՛ կատարյալի հիմքից: Այսպես՝ ա խոնարհման բոլոր բայերը, լի-  
նեն պարզ թե ածանցավոր, անցյալ դերբայը կազմում են կատարյալի հիմքից.  
օրինակ՝ աղամ-աղացեալ, աղքատանամ-աղքատացեալ, իմանամ-իմացեալ,  
ստանամ-ստացեալ, կարօտանամ-կարօտացեալ, բանամ-բացեալ և այլն: Ա-  
ծանցավոր որոշ բայերի անցյալ դերբայը կազմվում է կատարյալի հիմքից. օ-  
րինակ՝ գտանեմ-գտեալ, անկանիմ-անկեալ, դառնամ-դարձեալ, լուցանեմ-  
լուցեալ, առնում-առեալ, ընկենում-ընկեցեալ և այլն: Բոլոր տարահիմք բայերի  
անցյալ դերբայը նույնպես կատարյալի հիմքից է կազմվում: Ուտեմ-կերեալ,  
գամ-եկեալ, ունեմ-կալեալ, առնեմ-արարեալ (տարահիմք չէ, բայց շատ է հե-  
ռացել), ըմպեմ-արբեալ, լսեմ-լուեալ (կա նաև լսեալ): Բացառություն է միայն  
երթամբայը, որի անցյալ դերբայը երթեալ է (փին. չոգեալ-ի): Ու խոնարհման  
պարզ բայերի անցյալ կատարյալի և ներկայի հիմքերը չեն զանազանվում թո-  
ղում-թողի-թողեալ, հեղում-հեղի-հեղեալ: Ուստի պետք է ենթադրել, որ ու խո-  
նարհման պարզ բայերի անցյալ դերբայը կատարյալի հիմքից է կազմվում<sup>17</sup>:

Մ. Աբեղյանը գրում է. «Անցյալ դերբայի վերջավորությունն է -եալ, որ  
դրվում է.

ա. Սոսկ -եմ, -իմ վերջացած բայերի համար բայի հիմքի վրա. օրինակ՝ գրեմ,  
մերձիմ, լուսավորեմ ունին՝ գրեալ, մերձեալ, լուսաւորեալ:

Ծան. 1. Կան սոսկ -եմ, -իմ վերջացած բայեր, որոնք ունին և կատարյալի  
բնից կազմված անցյալ դերբայ -եցեալ ձևով, որ ավելի կրավորական իմաստով  
է գործածվում. օրինակ՝ գրեմ՝ գրեալ, գրեցեալ (գրած, գրված). կոչեմ՝ կոչեալ,  
կոչեցեալ, սիրեմ՝ սիրեալ, սիրեցեալ, կարծեմ՝ կարծեալ, կարծեցեալ, խօսիմ՝

<sup>17</sup> Տե՛ս Ծանկերդյան, Թ. (2021): Պատմական ձևաբանություն. Երևան, «Լուսարաց» հրատ., էջ 194-  
195:

*խօսեալ* (նշանած աղջիկ իմաստով), *խօսեցեալ*. նույնպէս՝ *ատեցեալ*, *այրեցեալ*, *գործեցեալ*, *ննջեցեալ*, *ամաչեցեալ*, *աճեցեալ*, *հայեցեալ*, *նայեցեալ* կ'լն: *Կկամիմ* ունի միայն *կամեցեալ* ձևը:

բ. Սոսկ *-ամ* և ածանցավոր *-անամ*, *-ենամ* վերջացած բայերի համար կատարյալի բնի վրա, օրինակ՝ *գնամ*, *գնաացեալ*, *գարմանամ*, *գարմացեալ*, *մերձենամ*, *մերձեցեալ*:

գ. Պատճառական բայերի համար պատճառական բնի վրա, այսինքն՝ *-ոյց* ածանցից հետո, օրինակ՝ *գարմացուցանեմ*, *գարմացուցեալ*, *թռուցանեմ*, *թռուցեալ*:

դ. Արմատն իբրև կատարյալի բուն ունեցող *-ում*, *-անեմ*, *-անիմ* վերջացած բայերի համար արմատի վրա, օրինակ՝ *հեղում*, *հեղեալ*, *տեսանեմ*, *տեսեալ*, *ուսանիմ*, *ուսեալ*:

ե. *Չիմ*, *նում* վերջացած բայերը չունին առանձին անցյալ դերբայ: Մրա իմաստով գործ ե ածվում կամ կրկին ձևերից մեկի անցյալ դերբայը, օրինակ՝ *թքեալ*, *եղծեալ*, *գործեալ*, *գրադեալ*, կամ եթե ուրիշ կրկին ձև չունին, գործ ե ածվում նույն բայերի հիմքից կազմված պատճառական բայերի անցյալ դերբայը. օրինակ՝ *թռուցեալ*, *ուռուցեալ*, *փախուցեալ* (*թռուցանեմ*, *ուռուցանեմ*, *փախուցանեմ* բայերից) նշանակում են թե՛ թոցրած, ուոցրած, փախցրած և թե՛ թռած, ուռած, փախած, այսինքն՝ *թոչիմ-թոնում*, *ուռչիմ-ուռնում*, *փախչիմ-փախնում* բայերի իմաստով:

Ծան. 2. Գրաբարի անցյալ դերբայը՝ նայելով տեղին, աշխարհաբար թարգմանվում ե կամ վաղակատար (*ել* վերջավորությամբ) կամ հարակատար (*ած* վերջ.) դերբայով... օրինակ՝ *Բմ տուեալ հրամանն կատարեցաւ*՝ իմ տված հրամանը կատարվեց: *Ահաւասիկ թագաւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ*՝ ահա (հրեա) քո թագավորը գալիս ե և իշի վրա նստած: *Նոքա առեալ տանէին գնա*՝ նրանք առել տանում էին նրան: *Նստեալ բարբառին*՝ նստել խոսում էին»<sup>18</sup>:

*Ե* և *ի* խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայը հիմնականում կազմվում է ներկայի հիմքից, ինչպէս՝ *գրեմ-գրեցի-գրեալ* (կա նաև *գրեցեալ*), *կատարեմ-կատարեցի-կատարեալ*, *վկայեմ-վկայեցի-վկայեալ*, *կազմեմ-կազմեցի-կազմեալ* (կա նաև *կազմեցեալ*), *պաշարեմ-պաշարեցի-պաշարեալ* և այլն<sup>19</sup>: Հ. Աճառյանը «*Լիակատար քերականության*» մեջ բերում է Մարիեսի հետևյալ կարծիքը (առանց մեկնաբանման). «*-Եմ*, *-իմ* լծորդության բայերի մի մասի դերբայը կազմվում է *-եցեալ* մասնիկով՝ փոխանակ *եալ*, ուր *-եա* մասը կրկնված է երկու անգամ (*սիրեցեալ սէրեացեալ*): Անշուշտ այն ժամանակ, երբ կազմվում էին այս ձևերը, այս *-եցմասնիկի* մեջ զգալի չէր *իս-ձ*»: Այնուհետև Հ. Աճառյանը գրում է. «Ի՞նչ պատճառով դերբայի մեջ ներմուծվեց սահմանա-

<sup>18</sup> Արեղյան (1936), էջ 24-25:

<sup>19</sup> Տե՛ս Շահվերդյան (2001), էջ 112:

կանի *ց* ձայնը»: «Անշուշտ գլխավորապես տարբերություն դնելու համար ներգործական և կրավորական ձևերի միջև: *-ել* և *-իմ* լծորդության բայերի հրամայականը լինում է ներգ. *Միրեա՛*. կրավ. *Միրեա՛ց*, որոնց մեջ կրավորականի նշանն է *ց*, որից գուրկ է ներգործականը: Լեզուն վերցրեց հենց այս զանազանությունը և կազմեց նրա միջոցով *սիրեալ* իբր «սիրած» և *սիրեցեալ* իբր «սիրված»»<sup>20</sup>:

Մեր կարծիքով՝ անցյալ դերբայը իբրև կանոն պետք է կազմվեր կատարյալի հիմքից: Բայց անհրաժեշտ է բացատրել նաև, թե ինչպե՛ս եղավ, որ *-ել*, *-իմ* վերջավորվող բայերի անցյալ դերբայը կազմվեց ներկայի հիմքից: Նախքան այս հարցին պատասխանելն ասենք, որ «*ց*»-ն միշտ չէ, որ կրավորականի նշան է, այսինքն՝ *սիրեա՛լ* չի նշանակում *սիրի՛ր*, *սիրեա՛ց*՝ *սիրվի՛ր*: Եթե *ց*-ն այդպիսի նշանակություն ունենար, ապա բոլոր պատճառական բայերը *ց*-ով չէին կազմվի (օրինակ՝ *լցուցանեմ*, *կեցուցանեմ*, *կացուցանեմ*): Այնուհետև, քանի որ հազարավոր բայերի անցյալ դերբայը սեռը չի տարբերակում, հետևաբար, այդ մի քանի դերբայի զանազանությունը չէր կարող լուծել գրաբարի բայական սեռի հարցը: Եթե մտովի պատկերացնենք, թե գրաբարը որքան բայական ձևեր ունի, որոնք սեռերը չեն զանազանում, ապա այդ մի քանի տասնյակ բայերի նման բացատրությունը միակողմանի կլինի<sup>21</sup>:

Հինգերորդ դարում այդ երկու ձևերի մեջ ներգործական և կրավորական սեռերն առանձնացնելը դժվար է: Լեզվական փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միևնույն ձևը կարող է ունենալ և՛ ներգործական, և՛ կրավորական նշանակություն, որտեղ կարող է դեր ունենալ իմաստային կողմը: Օրինակ՝ *ննջեալ-ննջեցեալ*, *խօսեալ-խօսեցեալ*: *Ննջել* ձևը մեծ մասամբ արտահայտում է «քնած» իմաստը, իսկ *ննջեցեալ*-ը՝ «մեռած»: Այստեղ գուցե դեր է խաղում նաև իմաստային կողմը: Այդ բանը կարող ենք պնդել երկու բայի համար՝ *ննջեալ-ննջեցեալ*, *խօսեալ-խօսեցեալ*, իսկ *խօսեալ*-ի և *խօսեցեալ*-ի դեպքում Աշոտ Աբրահամյանը գրում է. «*Խօսիմ* բայի անցյալ դերբայը ներկայի հիմքով (*խօսեալ*) նշանակում է «նշանած» (աղջիկ). հմմտ. «Քանզի յորժամ *խօսեալ* լինի կին ան հեռի ի նման է տեսութեամբ...», «Դարձեալ որպէս չէ օտար փեսայն կուսինոր *խօսեալն* իցէ նմա», իսկ կատարյալի հիմքով (*խօսեցեալ*) խոսած, խոսել (Լամբրոնացի, *Խորհրդածութիւնք ի կարգս*)»<sup>22</sup>:

Քերականական սեռի հարցում երկու հիմքերի կազմության զանազանությունը ճիշտ է Մ. Սեբաստացու և մյուս քերականների մոտ, որոնք գտնում են, որ *-է* խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայի կազմությունը կատարյալի

<sup>20</sup> Աճառյան, Հ. (1965): Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 5. Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 23:

<sup>21</sup> Տե՛ս Շահվերդյան (2001), էջ 113-114:

<sup>22</sup> Աբրահամյան, Ա. (1953): Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., էջ 122-123:

հիմքից արտահայտում է կրավորական սեռ. իսկ նույն դերբայի ներկայի հիմքից կազմությունը՝ ներգործական սեռ, ճիշտ է հետագա դարերի համար, որովհետև հետագա դարերի լեզվական փաստերը Մ. Մեբաստացու և մյուսների օգտին են խոսում<sup>23</sup>:

Մ. Աբեղյանը հետաքրքրական դիտարկումներ ունի անցյալ դերբայի շարահյուսական կիրառությունների վերաբերյալ, այսպես, նա գրում է. «Նույն ենթական ու ժամանակն ունեցող երկու, երեք բայերից առաջինը սովորաբար դրվում է անցյալ դերբայով, և ենթական, մանավանդ երբ անցյալ դերբայից հետո է գալիս, գրվում է հաճախ իբրև սեռական խնդիր: Այսպիսի անցյալ դերբայն աշխարհաբար թարգմանվում է կամ դիմավոր բայով, կամ անորոշ դերբայի գործիական հոլովով: Օրինակներ՝

*Եւ յանձն առեալ* (հանձն առնելով) արքային արքայից՝ տայ ի ձեռս Սմբատայ մասն ինչ ի զօրացն Ասորեստանի...զի *տարեալ* զԱրտաշես *հաստատեցեն* (որ տանեն, հաստատեն) ի գահն հայրենի:

Եւ քաջին Սմբատայ զհետ *մտեալ* (հետապնդելով) սաստկագոյնս վարեր զնա:

*Դու յարուցեալ գնասցես* (Դու պիտի վեր կենաս գնաս):

Եւ *մտեալ ի նաւ անց յայն կոյս* և եկն ի քաղաք իւր (Եվ նա մտավ (կամ մտնելով) անցավ այն կողմը և եկավ իր քաղաքը):

*Եկեալ բնակեցաւ ի քաղաքին* (Եկավ, բնակվեց քաղաքում):

*Ահա երթեալ ասիցեն զնոսա* (Ահա կերթամ, կասեմ):

*Նոքա առեալ տանէին զնա* (նրանք առել տանում էին նրան):

Եւ հրաման *առեալ* (առնելով, առած լինելով) չդառնալ անդրէն՝ ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց»<sup>24</sup>:

Ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանը նմանօրինակ դեպքերում հենց այդպես էլ վարվել է. մի դեպքում անցյալ դերբայը թարգմանել է անորոշի գործիականով «...*յանձն առեալ* (հանձն առնելով) արքային արքայից՝ տայ ի ձեռս Սմբատայ», երկրորդ դեպքում՝ զուգադիր բայով՝ *տանեն, հաստատեն*: Այսուհանդերձ գտնում է, որ եթե դրանք զուգաբայեր են, ուստի, մեկ բառի արժեք ունեն: Այսուհանդերձ այսպիսի նախադասությունների համար հանձնարարում է անցյալ դերբայի գործիականով չթարգմանել, այլ արտահայտել հարակատարով կամ վաղակատարով և որևէ դիմավոր ձևով: Օրինակ՝ ...*նստեալ բարբառին* (նստած խոսում են կամ նստել խոսում են), *յարուցեալ զնաց* (ելավ զնաց): *Մտեալ ի նաւ անց յայն կոյս* (մտավ նավը, անցավ այն կողմը)<sup>25</sup>:

Կարծում ենք՝ երբ անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալի ենթական սեռականով է արտահայտված, անցյալ դերբայը անկախ ստորոգյալ է դառնում, իսկ երբ ենթական ուղղականով է արտահայտված, և ստորոգյալը՝

<sup>23</sup> Տե՛ս **Շահվերդյան** (2001), էջ 203:

<sup>24</sup> **Աբեղյան** (1936), էջ 26:

<sup>25</sup> Տե՛ս **Չարլխեան և Այսրնեան** (1885), էջ 213:

դիմավոր բայով, այդ ժամանակ էլ անցյալ դերբայը լրացական դեր է կատարում. օրինակ՝ «*Լուսին, ասեն, քան զարեգակն երեսուն օր անցեալ ընդ ամենայն երկինս հասանէ ի նոյն տեղի*» (այսինքն՝ *անցնելով*)<sup>26</sup>: Երբեմն տարբեր ենթականեր ունեցող բայերից ևս առաջինը դրվում է և անցյալ դերբայով, որն աշխարհաբար կատարված կերպի անորոշ դերբայի գործիական հոլովով է ասվում. օրինակ՝ *Օգնութիւն հասեալ՝ մինչև ցայսօր կացի* (օգնություն հասած լինելով՝ մինչև այսօր մնացի...)<sup>27</sup>: Երբ նույն նախադասության դիմավոր բայի և անցյալ դերբայի ենթակաները տարբեր են, անցյալ դերբայը նման կիրառության մեջ լրիվ ինքնուրույն է. օրինակ. «*Ուստի ասեն Յունաց իմաստունքն զարարածս արարեալ (Սստուածոյ), և ի նմանէ չարեաց յաշխարհ մտեալ: Ասեն ստորոգյալի համար ենթական է իմաստունքն, արարեալ ստորոգյալի համար՝ Սստուածոյ, իսկ մտեալ ստորոգյալի համար՝ չարեաց* (Եզնիկ Կողբացի, 1970, էջ 49)»<sup>28</sup>:

### 3. Ենթակայական դերբայ

Ենթակայական դերբայը լեզվի պատմության բոլոր շրջաններում խոնարհման համակարգի որևէ ժամանակաձևի կազմության մեջ հանդես չի եկել, այն անկախ դերբայ է եղել ի սկզբանե: Մանուկ Աբեղյանը ենթակայական դերբայի մասին սահմանափակ վերլուծություն է կատարել, անդրադարձել է միայն կազմությանը և հիմքերին. այսպես. «Ենթակայական դերբայը, որի վերջավորությունն է *-ող* (հին *աւղ-օղ, ող*), նույն կազմությունն ունի, ինչ որ աշխարհաբարում. օրինակ՝ *բամբասող, լսող, ասող* (այլ և *սասցող*), *զրկող, պատերազմող, դիտող, հնձող, խնդացող, որսացող, բարկացող, մոռացող, լացող, տեսանող, սպանանող, հարկանող, զենող, արգելող, փախչող*:

Ծան. *Անեմ, անիմ* և մի քանի սոսկ *-եմ, -իմ* վերջացած բայերի համար ենթակ. դերբայ կազմվում է և կատարյալի բնից, օրինակ՝ *տեսանող, տեսող, հատանող, հատող, հարկանող, հարող, ուսանող, ուսող, սպանանող, սպանող, ծնանող, ծնող, գտանող, գտող, ստեղծող, օծող, զգեցուցանող, զգեցուցող, դարձուցանող, դարձուցող, կամեցող, պահեցող, իշխեցող, երգեցող, ասեցող*: Իսկ *որսալ, յուսալ, մուրալ, հոգալ* ունին և *որսող, յուսող, մուրող, հեզող*, որոնք սովորաբար իբրև գոյական են գործ ածվում»<sup>29</sup>:

Մ. Աբեղյանը նկատել է նաև, որ ենթակայական դերբայի իմաստն արտահայտվում է նաև *-իչ* մասնիկով և բերում է *տուիչ, առաքիչ, փառավորիչ*: Այնուհետև նույն դերբայի իմաստն է տեսնում նաև «անորոշ դերբայից *-ի*, հոգնակի *-իք* մասնիկով» կազմված բառեր, որոնք դիտում է բայական ածականներ. «օրինակ՝ *սիրելի, առնելի, լսելի, առեղծանելի, գործելի, կրելի, երնելի, ծորելի, ծնանելի, բերելի* ևլն, նշանակում են թե՛ ինչ որ արժանի է սիրելու, սիրվելու,

<sup>26</sup> Շահվերդյան (2001), էջ 122:

<sup>27</sup> Տե՛ս Աբեղյան (1936), էջ 26:

<sup>28</sup> Շահվերդյան (2001), էջ 124:

<sup>29</sup> Աբեղյան (1936), էջ 26-27:

կամ՝ ինչ որ պետք է սիրել ևլն. և թե՛ սիրող, անող, լսող, առեղծանող, գործող, կրող, երևացող, ծորող, ծնող, բերող»<sup>30</sup>:

Քանի որ *-ի* վերջավորությամբ ապառնի դերբայը ներկայացրել է ենթակայականի տակ, փորձեցինք սեփական մոտեցումով որոշ բացատրություն տալ: Եզնիկի լեզուն դասական գրաբարի ամենակատարյալ ուսումնասիրության աղբյուրն է, ուստի մեզ հետաքրքրող հարցը ներկայացնում ենք ըստ «Եղծ առանդոցի»: Եզնիկի երկում հանդես են եկել *-ի*-ով հետևյալ բայերը՝ *ասելի, ատելի, արգահատելի, բաժանելի, գործելի, գովելի, դարձելի, եպերելի, երանելի, երևելի, զարմանալի, ըմպելի, ընդունելի, ըմբռնելի, իմանալի, լսելի, կրելի, հավատալի, ճարելի, մատուցանելի, ուտելի, պատժելի, սպառնալի, փոփոխելի*<sup>31</sup>:

Այժմ տեսնենք, թե որ դերբայով է թարգմանել Աշոտ Աբրահամյանը հիշյալ երկի համապատասխան օրինակները.

**Համեմատական աղյուսակ 1**

**Ա. Աբրահամյանի կողմից Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցից» դերբայական ձևերի թարգմանությունները**

Գրաբար նախադասություն (բնագիր)	Հղում (բնագիր)	Աշխարհաբար թարգմանություն (Ա. Աբրահամյան)	Հղում (թարգմանություն)
«Սա սիրելի լինելոց է յիւրոց բարուց եւ նա ատելի»	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 172)	«Նա իր բարքով սիրելի է լինելու, իսկ սա ատելի»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 114)
«Եւ զի յիւրոց բարուց եղել ատելի Եսաւ, ասէ առաքեալ»	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 172)	«Եվ որ Եսաւն իր բարքով ատելի դարձավ, առաքեալն է ասում»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 114)
«Գովելի եւ առաւել գովելի, զի վասն կարեաց եւ ցանկութեանց յաղթելոյ ի կերակրոցն կրօնաւորեցաւ»	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 221)	«Գովելի և առավել գովելի է, որ կրքերի ու ցանկությունների հաղթահարման համար ուտելիքների հանդեպ սակավապետ գտնվեց»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 141)
«Բայց զի փոփոխմունսն ոգւոց ի մարմնոց ի մարմինս ետ այնու յոյժ եպերելի է»	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 221)	«Բայց երբ ընդունեց հոգիների փոխանցումները մարմնից մարմին, դրանով խիստ լեղաղրելի է»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 141)

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 26-27:

<sup>31</sup> Շահվերդյան (2001), էջ 87:

«Բայց զի ոչ յայտնի քարոզեաց թէ մի Աստուած է եւ ոչ բազումք, այնու կարի <i>դարմարելի</i> »	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 221)	«Բայց որ հայտնապես չքարոզեց, թե մեկ աստված կա և ոչ թե բազում, դրանով խիստ <i>պախարակելի</i> է»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 141)
«Եւ դարձեալ զի աստուածոցն ոչ հրամայեաց գոհել, այնու <i>գովելի</i> է»	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 221)	«Եվ դարձեալ՝ որ առաջարկեց աստվածներին գոհ մատուցել, դրանով <i>գովելի</i> է»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 141)
«Ձի եթէ ինքն հաւատարիմ էր <i>յսելի յինելոք</i> »	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 137)	«Որովհետև ինքը վստահ էր <i>ընդունելի լինելու</i> »	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 96)
«Անճառք բանքն ոչ եթէ նմա <i>ճանելիք</i> էին...»	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 263)	«Անպատմելի բաները ոչ թե նրա համար <i>պատմելի</i> էին»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 162)
«Անդ ասէ. զե՛ն և կե՛ր գամենայն անասուն եւ զթռչունս <i>ուտելիս</i> »	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 279)	«Այնտեղ ասում է՝ «Մորթի՛ր և կե՛ր բոլոր <i>ուտելի</i> անասուններն ու թռչունները»»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 279)
«Նա եւ յօրէնսն <i>գուտելի</i> անասունսն սուրբս կոչէ և <i>գուտելիսն</i> պիղծս»	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 283)	«Նաև Օրենքում <i>ուտելի</i> անասուններին մաքուր է կոչում, իսկ <i>չուտելիները</i> ՝ պիղծ»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 173)
«Ապա թէ <i>այրընտիր լինիցին յառաքինութիւնսն</i> , այն <i>ընդունելի</i> է»	(Եզնիկ - Կողբացի, 1914, էջ 289)	«... և ապա՝ <i>մարդկանց ընտրություն կատարեն առաքինական գործերի համար</i> . Դա է <i>ընդունելի</i> »	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 176)

Համեմատական աղյուսակում բերված օրինակներում Աբրահամյանը ոչ մեկը ենթակայականով չի թարգմանել: Սակայն կան նաև նախադասություններ, որոնցում Աբրահամյանը իրավացիորեն ենթակայականի իմաստ է տեսել:

**Համեմատական աղյուսակ 2**

Գրաբար նախադասություն (բնագիր)	Հղում (բնագիր)	Աշխարհաբար թարգմանություն (Ա. Աբրահամյան)	Հղում (թարգմանություն)
«...որոց կէսքն <i>կրելիք</i> են և կէսքն <i>ուտելիք</i> »	(Եզնիկ Կողբացի, 1914, էջ 148)	«...որոնց մի մասը (բեռ) <i>կրող</i> է, իսկ մի մասը <i>ուտելի</i> »	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 102)
«Եւ արդ չէ առողջ մտաց <i>զարժիչն</i> եւ <i>զփոփոխիչն</i> թեղու, եւ շարժ-	(Եզնիկ Կողբացի, 1914, էջ 11)	«Հետևաբար առողջ մտքին հատկանշական չէ <i>շարժողին</i> ու <i>փոփոխողին</i> թողնել և շարժուններին և <i>փոփոխվողներին</i> պաշտել»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 34)

նոցն և <i>փոփոխելաց</i> պաշտոն տանել»			
«Եւ զաստուածեղէն շունչսն ընդէր եւ նա իբրեւ զառաջինսն <i>փոփոխելիս</i> ի մարմնոց ի մարմինս համարէր»	(Եզնիկ Կողբացի, 1914, էջ 226)	«Եվ ինչո՞ւ նա էլ, առաջինների նման, աստվածային շնչերը համարում էր <i>փոփոխվող</i> մարմնից մարմին»	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 142)
«Քանզի մանուկ կաթնակեր որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ, ոչ <i>պատժելի</i> է այլ <i>արգահատելի</i> »	(Եզնիկ Կողբացի, 1914, էջ 49)	«Որովհետև կաթնակեր մանուկն էլ, որ մի ուրիշ կերակրի է ձգտում, ոչ թե <i>պատժի</i> , այլ <i>խոնարհության է արժանի</i> » <sup>32</sup>	(Եզնիկ Կողբացի, 1970, էջ 52)

*Նկատարում:* Այս օրինակներում Աբրահամյանը դերբայները (*պատժելի, արգահատելի*) թարգմանել է ազատ ոճով՝ դրանց իմաստն արտահայտելով գոյականի թեք հոլովածներով կամ այլ շարահյուսական կառույցներով, այլ ոչ թե ուղղակի դերբայներով:

Ի դեպ՝ Մանվել Ասատրյանը ենթակայականը գրաբարում դերբայ չի համարում, որի համար բերում է հետևյալ փաստարկները. «...ա) *-իչ* և *-ող* ձևերը բոլոր բայերից չէ, որ կարող են կազմվել, այլ հատուկ են միայն սահմանափակ թվով բայերի, բ) կրավորական սեռի իմաստ արտահայտել չեն կարող, գ) ներգործական բայահիմքից կազմվածներն էլ ունենում են ոչ թե հայցական, այլ սեռական խնդրառություն»<sup>33</sup>: Նկատենք, սակայն, որ Հ. Աճառյանը իր ուսումնասիրության մեջ բոլորովին այլ նպատակով բերում է ենթակայական դերբայով օրինակներ, որոնցով հերքվում է այս տեսակետը (*քեզ սիրողն, տուող զինչս*) (Աճառյան, 1965, էջ 33): Հենց միայն այս հանգամանքը վկայում է, որ ենթակայականը գրաբարում ունի խնդրառություն՝ բայի հիմնական հատկանիշներից մեկը, ուստի և դերբայ է<sup>34</sup>:

**Եզրակացություն**

Ամփոփելով Մանուկ Աբեղյանի «*Գրաբարի քերականություն*» դերբայների քննությունը՝ կարող ենք արձանագրել, որ նրա աշխատությունը մնում է հայագիտության կարևորագույն աղբյուրներից մեկը: Աբեղյանի մոտեցումները դերբայների ձևաբանական և շարահյուսական հատկանիշների վերաբերյալ,

<sup>32</sup> Շահվերդյան (2001), էջ 87-88:  
<sup>33</sup> Ասատրյան, Մ. (1973): Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր. հ. Բ. Եր., Եր. հմլս. հրատ., էջ 392:  
<sup>34</sup> Տե՛ս Շահվերդյան Թ. (2001): Հրաչյա Աճառյանը հայերենի դերբայների մասին // Գիտական հոդվածներ, բանասիրություն, Բ պրակ, Վանաձոր, 2011, էջ 3-13:

թեև որոշ մանրամասներում կարիք ունեն ժամանակակից լեզվաբանական տեսությունների լույսի ներքո վերաիմաստավորման, ընդհանուր առմամբ հիմնարար և արժեքավոր են: Արեղյանն իրավացիորեն ընդգծել է բայի՝ որպես խոսքի կենտրոնի կարևորությունը և դերբայների բազմազան գործառույթները գրաբարում: Հատկապես արժեքավոր են նրա դիտարկումները՝ կապված անորոշ դերբայի գոյականական բնույթի, դերբայական ածանցների նշանակության և բայական հիմքերի կազմության հետ:

Միևնույն ժամանակ, մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրաբարի ապառնի դերբայի *-ոց* վերջավորությամբ ձևի կախյալ բնույթը և անցյալ դերբայի կիսանկախ գործածությունը Արեղյանի մոտ երբեմն շփոթվում են, իսկ *-ի* վերջավորությամբ ապառնի դերբայի անկախ կիրառությունը մնում է անստեղծ: Այնուամենայնիվ, Արեղյանի աշխատությունը շարունակում է լինել անփոխարինելի ուղեցույց գրաբարի ուսումնասիրության համար՝ որպես հայ լեզվաբանական մտքի կարևորագույն նվաճումներից մեկը: Այն հիմք է ստեղծել հետագա բազմաթիվ ուսումնասիրությունների համար և այսօր էլ պահպանում է իր բարձր գիտական արժեքը:

**ТЕРЕЗА ШАХВЕРДЯН – Причастия в «Грамматике грабара» Манука Абегиана.**–

Настоящее исследование посвящено исключительно абегиановской интерпретации причастий классического армянского языка (*грабара*). В работе рассматриваются морфологические особенности причастий, а при необходимости затрагиваются и их синтаксические функции, поскольку **Манук Абегиан** в ряде случаев обращался и к этим вопросам. Со времени публикации «Грамматики грабара» **М. Абегиана** прошло более столетия, за которое были созданы многочисленные фундаментальные исследования, основанные на новых научных подходах. В связи с этим в настоящей работе учитываются и современные научные точки зрения, предлагая всесторонний обзор текущего академического дискурса.

Так, причастие будущего времени в *грабаре* с окончанием *-оц* носит зависимый характер и функционирует исключительно в составе составных временных форм изъявительного и сослагательного наклонений, не обладая самостоятельным употреблением. В отличие от него, причастие прошедшего времени является полужависимым. Однако в грамматике **Абегиана** приводятся примеры, где будущее причастие на *-оц* выступает как будто в независимом употреблении; по нашему мнению, в этих случаях имеет место смешение с косвенной падежной формой причастия прошедшего времени, что требует дальнейшего уточнения.

В анализе будущего причастия у **Абегиана** вовсе не рассматривается вариант с окончанием *-и*, поскольку он отнесён к разряду причастий настоящего (сослагательного) значения. Хотя в *грабарских* текстах действительно встречаются употребления этого типа с субъектным значением, в целом данная форма преимущественно является причастием будущего времени с самостоятельным употреблением. Четыре причастия *грабара* — неопределённое, настоящее (или сослагательное), будущее и прошедшее — сохранили свои основные причастные значения и словообразовательные особенности, претерпев лишь частичные морфологические и семантические изменения на протяжении исторических периодов.

В целом «Грамматика грабара» **Манука Абегиана** и сегодня не утратила своей научной актуальности и остаётся одним из важнейших источников по научному описанию грамматики классического армянского языка. Её непреходящая ценность заключается в

детальном анализе и систематическом изложении, которые продолжают служить основой для современных лингвистических исследований.

**Ключевые слова:** причастие, неопределённое или имплицитное значение, прошедшее время, будущее время, причастия настоящего и сослагательного значения, соединительные гласные, глагольные производные, простые корневые и составные (аффиксальные) глагольные образования, основы настоящего и перфектного времени

**TEREZA SHAHVERDYAN – *The Participles in Manuk Abeghyan's "Grammar of Grabar"*.** – The present study is devoted exclusively to Manuk Abeghyan's interpretation of Classical Armenian (*Grabar*) participles. The research examines the morphological characteristics of participles and, where necessary, addresses their syntactic functions, since **Abeghyan** occasionally considered these issues as well. Over a century has passed since the publication of **Abeghyan's Grammar of Grabar**, and numerous extensive studies proposing new approaches have appeared in the meantime. For this reason, the present work also takes into account more recent scholarly opinions, offering a comprehensive review of the current academic discourse.

In particular, the *Grabar* future participle with the suffix *-ots* is dependent in nature and functions exclusively within compound tense forms of the indicative and subjunctive moods, lacking independent usage. This contrasts with the past participle, which is semi-independent. However, **Abeghyan's** grammar provides examples in which the *-ots* future participle appears to function independently; we believe that in such cases it has been confused with the oblique case form of the past participle, requiring further clarification.

In **Abeghyan's** treatment of the future participle, no mention is made of the *-i* variant, which is instead discussed under the present-subjunctive participle. Although *Grabar* texts indeed contain instances where this form is used with a present-subjunctive meaning, it is predominantly a future participle with independent usage. The four *Grabar* participles—the indefinite, the present (or subjunctive), the future, and the past—have largely preserved their core participial meanings and word-formation characteristics, albeit with certain morphological and semantic modifications across historical periods.

Taken as a whole, **Manuk Abeghyan's Grammar of Grabar** has not lost its relevance to this day and remains one of the most important foundational sources for the scientific description of Classical Armenian grammar. Its enduring value lies in its detailed analysis and systematic presentation, which continue to inform contemporary linguistic research.

**Key words:** *participle, indefinite or implicit meaning, past, future, present-subjunctive participles, connective vowels, verbal derivatives, simple root and compound (affixal) verb formations, present and perfect stems*

### Գրականության ցանկ

Աբեղյան, Մ. (1936). *Գրաբարի քերականություն*. Երևան, Պետհրատ, 210 էջ:

[Abegyan, M. (1936). *Grabar'i qerakanutyun*. Yerevan: Pethrat].

Աբրահամյան, Ա. (1953). *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 441 էջ:

[Abrahamyan, A. (1953). *Hayereni derbaynery yev nrants dzevabanakan nshanakutyuny*. Yerevan: Haykakan SSH GA hrak.].

Աճառյան, Հ. (1965). *Լիակատար քերականություն հայոց լեզվի*. հ. 5. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 430 էջ:

[Acharyan, H. (1965). *Liakatar qerakanutyun hayots lezvi*. vol. 5. Yerevan: Haykakan SSH GA hrak.].

Սաստրյան, Մ. (1973). *Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր*. հ. Բ. Երևան, Եր. հիմ. հրատ., 416 էջ:

- [Asatryan, M. (1973). *Zhamanakakits hayereni dzevabanutyun hartser*. vol. B. Yerevan: YPH hrat.].  
 Բագրատունի, Ա. (1852). *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*. Վենետիկ, Ս.  
 Ղազար կղզու տպ., 744 էջ:  
 [Bagratuni, A. (1982). *Hayerēn k'erakanut' iwn i pēts zargats'elots'*. Venetik: S. Łazar kłzvu tp.].  
 Աւետիքեան, Գ., Սիւրմէլեան, Խ., Աւգերեան, Ս. (1836). *Նոր բարձրիք հայկազեան լեզուի*. հ.  
 1. Վենետիկ, Ս. Ղազար կղզու տպ., 1140 էջ:  
 [Avetikyan, G., Syurmelean, Kh., Avgeryan, M. (1836). *Nor bargirk' haykazean lezvi*. vol. 1.  
 Venetik: S. Łazar kłzvu tp.].  
 Շահվերդյան, Թ. (2001). *Գրաբարի դերբայները. Չնաբանություն և շարահյուսություն*.  
 Երևան, Վան Արյան հրատ., 159 էջ:  
 [Shahverdyan, T. (2001). *Grabar'i derbaynery. Dzevabanutyun yev sharahyusutyun*. Yerevan: Van  
 Aryan hrat.].  
 Շահվերդյան, Թ. (2007). *Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն*. Երևան,  
 Հայաստան հրատ., 310 էջ:  
 [Shahverdyan, T. (2007). *Dasakan grabar'i sharahyusakan vochanautyun*. Yerevan: Hayastan  
 hrat.].  
 Շահվերդյան, Թ. (1985). Դիմավոր բայ+անորոշ դերբայ, միադիմի բայ+անորոշ դերբայ  
 կապակցությունները գրաբարում. // *Հայոց լեզու և գրականություն, միջբուհական  
 գիտական աշխատությունների ժողովածու*. Երևան, Եր. հմյս. հրատ., էջ 386:  
 [Shahverdyan, T. (1995). Dimavor bay + anorosh derbay, miadimi bay + anorosh derbay  
 kapaktsutyunnery grabarerum. // *Hayots lezu yev grakanutyun, mijbuhakan gitakan  
 ashkhatutyunneri zhoghovatsu*. Yerevan: YerPH hrat., pp. 386].  
 Շահվերդյան, Թ. (2021). *Պատմական ձևաբանություն*. Երևան, Լուսաբաց հրատ., 389 էջ:  
 [Shahverdyan, T. (2021). *Patmakan dzevabanutyun*. Yerevan: Lusabats hrat.].  
 Շահվերդյան, Թ. (2011). Հրաչյա Աճառյանը հայերենի դերբայների մասին. // *Գիտական  
 հոդվածներ, բանասիրություն*, Բ պրակ. Վանաձոր, էջ 3-13:  
 [Shahverdyan, T. (2011). Hrachya Acharyany hayereni derbayneri masin. // *Gitakan hodvatsner,  
 banasirutyun*. B prak. Vanadzor, pp. 3-13].  
 Չալրիսեան, Վ., Այտրնեան, Ա. (1885). *Քերականութիւն հայկազեան լեզուի*. Վիեննա,  
 Մխիթարյանների տպ., 528 էջ:  
 [Ch'alykhean, V., Ayt'nyean, A. (1885). *K'erakanut' iwn haykazean lezvi*. Vienna: Mkhith'aryaneri tp.].

### Սկզբնաղբյուրներ

- Ազաթանգեղոս. (1909). *Պատմութիւն Հայոց*. Տիֆլիս, Մարտիրոսեանցի տպ., 474 էջ:  
 [Agat'angelos. (1909). *Patmut' iwn Hayots'*. Tiflis: Martiroseants' i tp.].  
 Աստվածաշունչ. (1860). *Գիրք Աստուածաշունչք հին և նոր կտակարանաց*. Վենետիկ, Ս.  
 Ղազար կղզու տպ., 1223 էջ:  
 [Astvatsashunch'. (1860). *Girk' Astuatsashunch'k' hin yev nor ktakaranats'*. Venetik: S. Łazar  
 kłzvu tp.].  
 Եզնիկ Կողբացի. (1914). *Եղծ աղանդոց*. Թիֆլիզ, Տպարան Ն. Աղանեանի, 226 էջ:  
 [Ezник Kołbatsi. (1914). *Ełts' ałandots'*. Tifliz: Tparan N. Ałaneani, 226 pp.].  
 Եզնիկ Կողբացի. (1970). *Եղծ աղանդոց*. Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Ա.  
 Աբրահամյանի. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 254 էջ:  
 [Ezник Kołbatsi. (1970). *Ełts' ałandots*. Translation and notes by A. A. Abrahamyan. Yerevan:  
 Haykakan SSH GA hrat.].  
 Հովհաննես Ոսկերեբան. (1855). *Երբայեցիս թուղթն Պօղոսի*. Վիեննա, Պաշտպան Ս.  
 Աստուածածին վանքի տպ., 22 էջ:  
 [Hovhannes Voskeberan. (1855). *Ebrayets' is t' ułt' n Połosi*. Vienna: Pashtpan S. Astuatsatsin vanqi  
 tp.].

**ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՃՅՈՒՂԵՐԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ.  
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ՏԵՄԱԿԵՏՆ ՈՒ ԱՐԴԻ ՈՐՈՇ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ**

**ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ** 

*ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարան*

Աշխարհաբարի երկու ճյուղերի նորմավորման ընթացքը մշտապես ուղեկցվել է այդ ճյուղերի փոխադարձ կանոնակարգման, հին լեզվի հետ հարաբերությունների սահմանների հստակեցման հարցադրումներով: Մույն հողվածում անդրադարձ է կատարվում գրական հայերենի ճյուղերի կանոնավորման և հնարավոր մերձեցմանն առնչվող՝ մինչև մեր օրերը հասնող հին ու նոր առաջարկներին: Դրանք հատկապես ակտիվ էին 19-րդ դարի կեսերից, հիշատակելի են, օրինակ՝ Նահապետ Ռուսինյանի և Ստեփան Պալասանյանի մոտեցումները: Առավել մանրամասն ներկայացվում է Մանուկ Աբեղյանի ուշագրավ հողվածը և նրանում արտահայտված տեսակետները: Այս ուղղությամբ արված հրապարակումներում բազմիցս արտահայտվել են երկու ճյուղերի մերձեցման, անգամ՝ միավորման գաղափարներ թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ իրականության մեջ: Այս լեզվական-գրական շարժման մեջ իր ներդրումն ունի Մանուկ Աբեղյանը՝ «Մեր երկու գրական լեզուների միության խնդիրը» հողվածով: Մ. Աբեղյանի ծրագրային այս հողվածում հստակ կետերով առաջարկվում են քայլեր՝ մեր լեզվի երկու ճյուղերը հնարավորինս մերձեցնելու համար, քանզի դա ունի լեզվական, ազգային, միաժամանակ նաև՝ տնտեսական ու հասարակական լայն նշանակություն:

Հողվածի երկրորդ մասում ներկայացնում ենք ամերիկահայ միջավայրից քաղած և խմբավորված օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ այն, ինչ առաջարկում էին լեզվաբանները 19-րդ դարի կեսերից, որոշակի գործնական դրսևորում է ստացել մեր օրերում: Նկատի ունենք, որ հայերենի երկու ճյուղերը ամերիկյան միջավայրում որոշ չափով ինքնուրույն ու համեմատաբար մեկտեղված զարգանալով՝ սկսել են ձեռք բերել արևելահայերենից ու արևմտահայերենից տարբերվող քերականական, բառային, հնչյունական առանձնահատկություններ, որը հետևանք է երկու ճյուղերի փոխներթափանցումների և անզլերենից հավասար ազդեցության:

**Բանալի բառեր** – *աշխարհաբար, ճյուղեր, մերձեցում, առաջարկներ, Մանուկ Աբեղյան, արտաշխարհ, արդի լեզվավիճակ*

\* **Նորայր Պողոսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարան

**Норайр Погосян** – кандидат филологических наук, доцент, прелатура Западной епархии США  
**Norayr Poghosyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor, Prelacy of the Western Diocese of the USA

Էլ. փոստ՝ [inorayr@gmail.com](mailto:inorayr@gmail.com) ORCID ID: <https://orcid.org/0009-0002-4154-5907>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 03.02.2026  
Գրախոսվել է՝ 16.02.2026  
Հաստատվել է՝ 16.02.2026  
© The Author(s) 2026

### Ներածություն

Գրականացող աշխարհաբարի երկու ճյուղերի մշակմանը միտված հրապարակումներն ու էլոյթները ի հայտ են գալիս 19-րդ դարի երկրորդ կեսերից: Այդպիսի երկու բնորոշ օրինակ բերենք, որոնք վերաբերում են հատկապես ճյուղերի հավանական մերձեցման խնդրին:

ա) Արևմտահայ գրական շրջանակներում ի հայտ եկած՝ Նահապետ Ռուսինյանի «Ուղղախօսութիւն արդի հայ լեզուի» ծրագրային գրքույկը ճյուղերի մերձեցման հարցն ավելի գործնական հունի մեջ է ներկայացնում՝ հստակ առաջարկներ բերելով, թե որ լեզվական ձևը որ ճյուղից կարելի է պահել և ընդհանրացնել: Ն. Ռուսինյանը փորձում է միօրինակության բերել լեզվական գրեթե բոլոր մակարդակները, հատկապես ուսումնական նպատակներով. «Աս արդի լեզուն կանոնաւորելու և միանգամայն կատարելութեան շաւղին մեջ քայլ մը առաջ մղելու մտքով է, այսինքն՝ անոր աւելի պարզութիւն, ճշտութիւն, անուշութիւն, ուղղագրութեան դիւրութիւն մը բառերուն համառօտութիւն տալու մտքով է, որ ձեռք գարկինք ուսումնական անձերու խորհրդակցութեամբ, ուղղախօսութիւն մը յօրինելու նոյն լեզուին»<sup>1</sup>:

բ) Արևելահայ իրականության մեջ հիշատակելի է Մտ. Պալասանյանի տեսակետը գրական լեզվի նորմավորմանը միջամտելու մասին, որ անուղղակի պատասխան է ավելի ուշ հրապարակված Մանուկ Աբեղյանի փորձերին, որ քիչ հետո կտեսնենք:

Մտ. Պալասանյանը լեզվի զարգացման ընթացքի մասին խոսելիս երեք խումբ է նշում. ա) լեզվի զարգացումը պետք է թողնել ինքնահոսի, բ) լեզվի բնական ընթացքը հետ մղել դեպի գրաբարը, գ) հասնել լեզվի փոփոխություններին՝ արտաքին միջամտություններով: Վերջին այս կետին անհամաձայն է Մտ. Պալասանյանը՝ նույնիսկ այն վտանգավոր համարելով, քանզի, ասում է. «Լեզուի հոգին հիմնական օրէնքների ու ձևերի մեջ է պարունակվում, որոնք անհատի իշխանութիւնից բարձր են: Եթէ ընդունում ենք նոր հայերէնի գոյութիւնը, չենք կարող ժխտել նորա հիմնական օրէնքների գոյութիւնը, որոնք առանձին բնատրութիւն ու կերպարանք են տալիս նորան, հետևաբար և ոչ ոք իրաւունք ունի ձեռնամերձ լինել այդ օրէնքներին»<sup>2</sup>:

Աշխարհաբարի երկու ճյուղերի մերձեցման մասին այլ հրապարակումներ նույնպես եղել են: Ազնիվ նպատակադրումներ պարունակելով հանդերձ՝ ցավոք, դրանք լեզվական ու գրական լայն շարժում չէին ներկայացնում, այլ մնում էին սոսկ իբրև անհատների մտահոգություններ ու հրապարակումներ: Ճյուղերի մերձեցման հարցը, այսպիսով, մինչ Մանուկ Աբեղյանի հայտնի հողված-

<sup>1</sup> Ռուսինեան Ն., Ուղղախօսութիւն արդի հայերէն լեզուին, Կ. Պոլիս, 1853, էջ Ե:

<sup>2</sup> Պալասանեան Մտ., Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 4:

առաջարկը, ունեցել է որոշակի նախապատմություն, սակայն լեզվի զարգացման իրական ընթացքի վրա այն գրեթե ազդեցություն չի ունեցել, այլ մնացել է անհատական առաջարկությունների մակարդակում:

### Մանուկ Աբեղյանի մտտեցումները

Այդ պայմաններում է, որ 19-րդ դարավերջին ի հայտ է գալիս Մանուկ Աբեղյանի հոդվածը՝ հստակ մեթոդական առաջարկներով:

Մանուկ Աբեղյանն իր գիտական համընդգրկուն մտածողությամբ չէր կարող շրջանցել հայերենի նորմավորման ու ճյուղերի մերձեցման թեման: Այդ մասին ունի մասնակի անդրադարձներ, սակայն ամենից հանգամանակից ու ծրագրայինը, որ տպագրել է շարունակաբար Էջմիածնի «Արարատ» հանդեսի 1897 թվականի համարներում, «Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը»<sup>3</sup> վերնագրով ընդարձակ հոդվածն է: Մանրակրկիտ այս հոդվածը ընդգրկված չէ Մ. Աբեղյանի երկերի ութհատորյակի մեջ:

Հոդվածը մանրամասն անդրադարձ է հայերենի ճյուղերի մերձեցման խնդրին՝ լեզվի ձևաբանական, հնչյունական, իմաստային, բառային կողմերը քննելով:

Հոդվածի առաջին մասում Մ. Աբեղյանը բերում է տրամաբանական մի քանի գործոններ, որոնք առիթ են տվել հարցը քննության առնելու և առաջարկներ անելու համար: «Լեզուի միութիւնը մեզ համար նոյնքան կարևոր է, որքան հայ գրականութեան զարգացումը», որն էլ կապված է հայ ժողովրդի զարգացման հետ, նշում է Մ. Աբեղյանը (էջ 425): Մ. Աբեղյանը մերձեցման օգտին բերում է մի քանի՝ մեր գնահատմամբ անառարկելի պատճառներ, թե հատկապես ինչու է կարևոր լեզվի հնարավորինս միասնականացումը հայության համար: Այդ պատճառներից են հետևյալները.

ա) Արևելահայերեն հասկացող միջին ընթերցողը չի հասկանում արևմտահայերեն և հակառակը, օրինակ՝ Էօժէն Սիւի «Թափառական հրեան» գրքի ընթերցանությունը դժվարհաղթահարելի է, «ուրեմն ի՞նչ է լինելու մեր երկու գրական լեզու ունենալու հետևանքը, այն, որ մեր գրականութեան գրեթե կէսը մեռած է մնում ընթերցողների կեսի համար, իսկ գիրքը մեռած մնալու համար չէ» (426):

բ) Դպրոցական դասագրքերը հասանելի չեն պայմանական երկու կողմերի համար, քանի դեռ չեն փոխադրվել մյուս ճյուղի. «Մի՞ թէ մէկը կարող է լինել, որ մանկական ընթերցանութեան համար որոշուած գրքերը կորած չհամարի արևմտահայ մանուկի համար» (425):

<sup>3</sup> Տե՛ս **Աբեղեան Մ.**, Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը, «Արարատ», 1897, № 9-10, էջ 424-431, № 11-12, էջ 494-503 (հոդվածից մեջբերումների էջերը կնշենք շարադրանքի մեջ):  
[https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1897/1897\(9-10\)\\_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1897/1897(9-10)_ocr.pdf)  
[https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1897/1897\(11-12\)\\_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1897/1897(11-12)_ocr.pdf)

գ) Դպրոցներում հաճախ, հատկապես՝ օրիորդաց դպրոցներում արևմտահայերենը համարվում էր գրաբար, այնտեղ երկու գրական լեզու ունենալը կանանց համար շռայլություն է:

դ) Լեզվական ու գրական ջանքերը երկու ճյուղերի պարագայում իզուր են վատնվում, քանզի վերածվում են առանց այն էլ սուղ մտավոր աշխատանքի ու ռեսուրսների վատնումի:

ե) Խնդիրն ունի տնտեսական հետևանք. չլինելին լեզվական տարբերությունները, տպագրված գրքերը ավելի հեշտությամբ և տնտեսական օգտակարությամբ կառաքվեին Պոլսից Թբիլիսի և հակառակ ուղղությամբ՝ նպաստելով գրահրատարակչության և բնականաբար՝ մշակույթի աճին:

զ) Պատճառների մեջ կարևորներից է Ազգային կենտրոնաձիգ ուժերի խրախուսումը՝ նույն և միատեսակ լեզվի ու գրականության հիմքի վրա. «Հոգևոր հաղորդակցութիւնը, որ գլխաւորապէս լեզուի միութեամբ է լինում, եթէ ամենայն բան չէ, ամենամեծ բանն է արդի ազգութիւնների համար» (427):

Վերջինը կարելի է ամենակարևոր փաստարկներից մեկը համարել, քանզի մեր լեզուն գաղափարական, հոգևոր առումովներով միավորող, միաբանության բերող՝ քիչ մնացած գործոններից է մեզ համար թե՛ հնում, թե՛ հիմա:

Ճյուղերի մերձեցման պատճառների թվարկումից հետո Մ. Աբեղյանն անցնում է «լեզվի ընդհանրության» քննությանը, որը պիտի լինի ոչ թե տարերային, այլ ուղղորդված, այդ թվում՝ «գրական լեզուի առջև ամեն մարդ իր մայրենի բարբառից մի որոշ չափով զիջում պիտի անէ, մեկն աւելի, միւսը՝ պակաս» (428): Այս հարցում խիստ կարևորում է գրողների դերը, «ամենայն գրող, որ լեզուի միութեան կարևորութիւնը զգում է, իրատւնք ունի և նոյն իսկ պարտիք ունի երկու գրական լեզուի միութեան մասին հոգալու, նա պետք է աշխատի գոնէ այնպէս գրել, որ երկու կողմի ընթերցողների համար ևս հասկանալի լինի» (429):

Հոդվածի տարբեր էջերից քաղել ենք Մանուկ Աբեղյանի կարևոր դրույթներ, որ առավել հստակ ձևակերպում են լեզվի մերձեցման իր տեսլականը.

«Մենք գրում ենք իրար մօտեցնելու, և ոչ միացնելու լեզուները, քանզի այնքան միամիտ չենք, որ կարծենք, թէ կարելի է այժմ առանց որևէ քաղաքական մեծ փոփոխութեան երկու գրական լեզուն ի մի ձուլել» (431):

«Որքան շուտ լինի այդ միութիւնը, այնքան աւելի լաւ՝ մեր ընդհանուր զարգացման և յառաջադիմութեան համար» (426):

«Որ մենք երկու գրական լեզու ունինք, դա անցեալի յատկապէս արևելահայ գրագէտների անհեռատեսության շնորհիւ է» (431):

Մեր արևելահայ գրական լեզուն այս ձևով չպիտի գոյություն ունենար, եթէ օրինակ՝ Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը և ուրիշներ իրենց լեզվական հայացքներում ու գրվածքներում «աւելի ծանր մտածած լինելին իրենց գործի վրայ և հայութեանը Ռուսիայի սահմաններից դուրս ևս տեսնելին» (431):

Իր հողված-առաջարկն ամփոփելիս Մանուկ Աբեղյանը բերում է ճյուղերի մերձեցման վերաբերյալ 8 կետեր, որոնց սեղմագրված բովանդակությունը հետևյալն է.

1. Մերձեցումը անհրաժեշտ է:

2. Միավորումը պիտի լինի փոխադարձ «զիջումներով»:

3. Լեզվի բազմաթիվ ձևերից պետք է ունենալ գիտակցված ընտրություն, որ էթե «լեզուի զարգացման ընթացքին և ոգուն համեմատ է լինում, խորթությին չէ բերում լեզուի մեջ» (502):

4. Լեզվի միության համար պիտի ջանա ամեն անհատ, ով կարևորում է այդ խնդիրը:

5. Ներկայումս անհնար է միավորում իրագործել, բայց «երկու լեզուն հասկանալի լինելու չափով իրար մոտեցնել հնարաւոր է»:

6. Կը և -ում ձևերը և անձի ուղիղ խնդրի հայցական/տրականը անհնար է փոփոխել, ուստի պիտի խոսել այլ կողմերը մերձեցնելու մասին՝ նշվածները թողնելով անփոփոխ:

7. Պետք է հարժարվել գրաբարի քերականական ձևերը արհեստականորեն արդի լեզվի մեջ մուծելուց, «աշխարհաբարը քերականութեամբ միայն աշխարհաբար պետք է լինի»: Իսկ բառագործածության մեջ պիտի ընտրել ընդհանուրը, գրաբարյան ձևերը՝ խուսափելով միայն այս կամ այն ճյուղին հատուկ բառագործածությունից:

8. Անհրաժեշտ են հիմնավոր գիտական ուսումնասիրություններ՝ հասկանալու համար լեզվի զարգացման այս ընթացքը:

Մ. Աբեղյանի այս հողվածի հրապարակումով կարծես կանգ են առնում ճյուղերի մերձեցման հետագա քայլերը, մանավանդ որ հաջորդող շրջանում սկսեցին աշխարհաքաղաքական վայրիվերումներ, որոնք հայերենի ճյուղերը մերձեցնելու խնդրի մասին խոսելու ժամանակ չէին թողնում: Իսկ 1920-ից հետո հայտարարվեց ազգային լեզվի փուլ՝ նկատի ունենալով պետական կազմավորման մեջ արևելահայերենի զարգացման հնարավորությունը:

**Այսպիսով, պետք է փաստել, որ հայերենի երկու ճյուղերի մերձեցման մասին մտահոգություններ և առաջարկներ հնչել են 19-րդ դարի կեսերից, որոնց մեջ իր համակարգվածությամբ աչքի է ընկնում Մանուկ Աբեղյանի հողվածը, սակայն լեզվի զարգացման իրական ընթացքի կամ հնարավոր մերձեցման վրա դրանք գրեթե ազդեցություն չունեցան:** Մ. Աբեղյանի առաջարկները կյանքի կոչելու իմաստով որոշակիորեն ուշացած էին, թեև լեզվի ճյուղերի մերձեցման մտահոգությունն ու ցանկությունը 19-րդ և 20-րդ դարերում ակնհայտ են:

**Ճյուղերի մերձեցման մտահոգություններ 20-րդ դարի ընթացքում**

Ի՞նչ եղավ հետագա տասնամյակներին: 20-րդ դարի ընթացքում Հայաստանի և արտաշխարհի մտավորականների կողմից մշտապես արտահայտվել են առանձին տեսակետներ, եղել են հրապարակումներ խնդրի շուրջ: Այդպիսիք

հանդիպում են նաև վերջին շրջանում, որոնցից հիշատակելի են, օրինակ՝ Յակոբ Չոլաքեանի «Արևմտահայերեն-արևելահայերեն. մերձեցման հարցեր»<sup>4</sup> հոդվածաշարը: «Մեր գրական լեզուի երկու տարբերակները այս հանգրուանին մեջ տակալին դատապարտուած են առանձին գոյատևելու, բայց ընդմիջտ մերձեցման ու չօտարուելու միջոցներ ստեղծելով և իրագործելով»,– նշում է հեղինակը: Շարքի հոդվածներից մեկում հոչակվում է լեզվական ծրագիրը՝ «Մաքրագտումը՝ մերձեցման ճանապարհ»:

Մեկ այլ հեղինակ՝ Հարություն Քյուրքյանը, «Մերձեցումի կարելին ու անկարելին»<sup>5</sup> հրապարակման մեջ հասկապես բառագործածության համար առաջարկում է «փոխադարձաբար ծանօթացնել այդ գործածությունները՝ թողնելով, որ բնական փոխափանցում տեղի ունենայ: Ինչ փոյթ՝ հաւանօրէն (ու բնականաբար) արևելահայերէնի գերակշռութեամբ» (էջ 5):

Ռոբեր Տեր-Մերկերյանը «Արդի հայերենի երկու տարբերակների փոխհարաբերությունների հարցեր»<sup>6</sup> հոդվածում հստակ առանձնացնում է քերականակական փոխադարձ ազդեցությունները (այդ մասին մեր քաղած օրինակները կարելի է տեսնել ստորև – Ն.Պ.), որոնք ակնհայտորեն նկատելի են արտերկրի հայախոս հատվածներում, որ հեղինակն անվանում է **փոխներգործություններ**. «Գրավոր խոսքում կան այլ փոխներգործություններ քերականական ձևերի մեջ: Նկատելի է, որ հաճախ արևելահայ բացառական հոլովը փոխարինում է արևմտահայ բացառականին. գրում են «Ժամը 3-ից 8-ը» փոխանակ գրելու «Ժամը 3 էն 8-ը» (էջ 95):

### **Փոխներթափանցման դրսևորումներ ներկա փուլում**

Հայերենի երկու ճյուղերի ամենօրյա համատեղ գործածությունը բերում է որոշակի գործնական ազդեցության դրանց մերձեցման ճանապարհին, որի մասին քննարկում և առաջարկում էին մեր նշած հեղինակները: Մասնավորապես Ամերիկայի հայախոս միջավարում երկու ճյուղերի սերտ փոխշփումների արդյունքում սկսել է ի հայտ գալ որոշ առումով նոր լեզվական որակ: Նոր այնքանով, որ այն այլ վայրերում չի գործածվում:

<sup>4</sup> Տե՛ս **Յակոբ Չոլաքեան**, Արևմտահայերեն-Արևելահայերեն. Մերձեցման Հարցեր, Ազդակ, Բեյրութ, 2017, փետրվարի համարներ: Տե՛ս հետևյալ հղումով՝

<https://www.aztagdaily.com/archives/335537>

<https://www.aztagdaily.com/archives/335688>

<https://www.aztagdaily.com/archives/335831>

<sup>5</sup> Տե՛ս **Յարութին Քիրքչեան**, Մերձեցումի կարելին ու անկարելին. արևելահայերեն և արևմտահայերեն լեզուաճիւղեր, «Ազդակ», Բեյրութ, 2015, Սեպտեմբեր 5:

Տե՛ս [https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azduk1927/2015/2015\(150\)\\_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azduk1927/2015/2015(150)_ocr.pdf)

<sup>6</sup> Տե՛ս **Ռոբեր Տեր Մերկերեան**, Արդի հայերենի երկու տարբերակների փոխարաբերությունների հարցեր, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական հոդվածների ժողովածու 2013-2023, Երևան, 2023, էջ 89-100: Տե՛ս [https://language.sci.am/sites/default/files/arewmtahayeren-zhoghovatsow.pdf?utm\\_source=chatgpt.com](https://language.sci.am/sites/default/files/arewmtahayeren-zhoghovatsow.pdf?utm_source=chatgpt.com)

Ամերիկայի հայկական միջավայրն այդ իմաստով մի մոդել է՝ լեզվական տարբեր որակների խաչավորումից նոր լեզվավիճակ ստանալու համար: Կալիֆորնիայի (հատկապես՝ Լոս Անջելեսի) հայկական հոծ միջավայրը այդ հարցը դիտարկելու հնարավորություն տալիս է: Այստեղ թերևս բոլոր ժամանակների ամենից շատ հայերեն լեզվական շերտեր իր մեջ ընդգրկող միջավայր է համեմատելի 17-րդ դարի սկզբի Նոր Զուղայի կամ Կ.Պոլսի հետ:

Մեր արձանագրած լեզվական փաստերը ցույց են տալիս, որ փոխադարձ շփումների արդյունքում արևմտահայերենի և արևելահայերենի մեջ ի հայտ են եկել քերականական և բառային փոխներթափանցումներ, որ կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

**1. Արևմտահայերեն – արևելահայերեն քերականական ձևերի փոխներթափանցումներ:** Օրինակները քաղել ենք առօրյա խոսքից կամ մամուլից ու եթերից, որոնք հստակ ցույց են տալիս, որ արևմտահայերենով կամ արևելահայերենով խոսողները անկաշկանդ գործածում են մյուս ճյուղի լեզվական-քերականական ձևերը: Դրանց մեջ ամենից տարածվածը, մեր նախնական դիտարկմամբ, ներկայացնում են բացառականի -ից վերջավորությունը, ներկայի -ում-ով և կը-ով ձևերը, օժանդակ բայի վերջադիր գործածությունը, վաղակատարի զուգաձև կիրառությունը միևնույն նախադասության մեջ, ներգոյականը -ում կազմությամբ արևմտահայերեն խոսքում, «մի քիչ»՝ փոխ. «քիչ մը» ձևի և այլն: Օրինակ՝

Մինաս ծնած է Բեյրութում: Այս սերունդը ծնած և հասակ է առել ինձ հետ: Գիւղերից Բեյրութ էին եկած: Միջնակարգս աւարտած եմ հայկական դպրոցում: Որքան կորսնցուց իր արժեքներից: Մենք էլ զինուվցած ենք իրենցից: Տեր հայրը չի գալիս, Հայաստան գացած է: Հիւպատոսէն յետոյ Նաճարեան նստեցրէք: Մեկ հատ մը եղած է, չեմ հիշում: Վերից մեկն կը լսէ եղեր, թէն մի քիչ ուշ: Այսօր դուրս կուգան վանքից և այլն: Հայտնի լրագրող՝ արևմտահայախոս Հարութ Սասունյանը հեռուստատեսային հարցազրույցում օգտագործում է՝ «զգում եմ, ես հավատում եմ, ... աշխարհը մնում է նույն ձևով...», մենք մեկնաբանում ենք հայ ժողովրդի շահերից...» և այլ արևելահայ ձևեր:

Արևմտահայի խոսքում արևելահայերենի ձևեր հնչում են, երբ վերջինս բնակված կամ կրթությունը ստացած է լինում Հայաստանում, օրինակ՝ «Կը ելնեն ու խօսում են մեր մասին», ասում է Հայաստանում կրթություն ստացած քահանան: Ծագումով Միրիայից Վիգեն Սարգսյանի խոսքից՝ «Լեզուն հոն լաւ մը սովորացնում են»:

Կրկին նշենք, որ բերված օրինակները քարտազրել ենք կենդանի խոսքից:

**2. Համատեղ փոխառյալ բառեր ամերիկահայերի առօրյա խոսքում**, որոնք հատուկ են այստեղի հայախոսներին և Հայաստանում կամ այլ վայրերում հիմնականում կամ գրեթէ չեն գործածվում, օրինակ՝

apartment – բնակարան բազմաբնակելի շէնքում, backhouse – ետնատուն, car seat – մանկան նստելիք, credit history – վարկային պատմություն, down

payment – կանխավճար, insurance – ապահովագրություն, preschool – նախադպրոց, single – ընդհանուր սենյակով տուն, townhouse – երկհարկ տուն, որի ննջասենյակները երկրորդ հարկում են, և այլն, որոնք ամեն օր ազատ գործածվում են երկու ճյուղերի խոսքում:

Խոսքային միջավայրում դրանք գործածվում են իբրև օտարաբանություններ. «Available ենք այս պահին, ինչ experience ունեք, կիսվեք please, բնակարան, house (առանձնատուն), apt (apartement) է պետք, ես OK եմ, ստուգեք location-ով» և այլն:

Փոխառյալ այս շերտն առանձին կետի մեջ ենք դասակարգում, քանզի այն համագործածական է երկու ճյուղերի համար էլ:

**3. Հարադրություններ / կայուն կապակցություններ:** Ստորև բերվող օրինակները, կրկին, քաղված են առօրյա խոսքից, որ արտացոլումն է լեզվի իրական փոփոխությունների: Սրանք փոխառյալ (անգլերեն) բաղադրիչ պարունակող հարադրություններ են, որոնք ընդհանուր են երկու ճյուղերի և առհասարակ բոլոր հայախոսների համար, ինչպես՝ օրդեր անել, OK տալ (OK տալի՞ս ա դեսպանատունը), citizen դառնալ, փաս (pass) լինել – անցնել՝ փոխադրվել, դրոփ (dropp) լինել – կտրվել՝ չանցնել քննությունը, թիքթե՞ կտրել- տոմս առնել, loan (վարկ) տալ, search անել, book անել (ամրագրել), reply անել և այլն:

**4. Հայերեն - անգլերեն համատեղ գործածությամբ շարահյուսական միավորներ:** Սրանք նախադասություններ կամ շարահյուսական այլ միավորներ են, որոնց գործածությամբ ստացվում են արևտահայերեն-արևելահայերեն-անգլերեն միախառն նախադասություններ, օրինակ՝

Ռիսեփշընում պիտի արքեփթ անես իրանց ագրիմենթեն:

Մեզ մեքենա է պետք, բայց առանց CO signer-ի և deposit-ի, ուղղակի որ lease-ը վճարենք:

Ինչ company կամ office կասեք, որ cruise է ուղարկում:

Ով ունի bluebook, ինձ պետք է essay հանձնելու համար, bookstore-ը փակ է, help please:

Halloween-ի համար angel-ի costumes որտեղից ճարեմ, Ralph parking նայել եմ, չկա:

Ուզում եմ տղայիս դպրոցում լինի after school վճարովի program-ը, և այլն:

Որպես նմուշներ բերում ենք հեռուստատեսությամբ արտաբերված երկու տեքստ, որոնք առատապես պարունակում են անգլերեն բառեր ու արտահայտություններ: Մի կողմից դրանցից շատերի հայերեն համարժեքները դժվար ստեղծելի են ոչ հայախոս միջավայրում, մյուս կողմից՝ ստեղծելիս էլ մնալու են անօգտագործելի, և դրա պահանջարկը ուղղակի չկա:

Անշարժ գույքի ոլորտից. «Եթե փորձում եք վերցնել ձեր առաջին loan-ը և միաժամանակ վերցնում եք առաջին line of credit, մենք կարող ենք այդ հարցում օգնել: First loan-ը կարող է լինել 500, և home equity-ի line of credit-ը կարող

է լինել մինչև 350 հազար: Եթե փորձում եք down payment դնել 20 տոկոս, թեկուզ և jam of program-ը available չլինի, կարող ենք անել first և second-ի տեսքով, որպեսզի այդ տունը կարողանաք առնել full dack-ի տեսքով»:

Ապահովագրության ոլորտից. «Եթե նկատեք, insurance company-ների հետ կապված երկու հատ area եմ դրած էստեղ, սա ցույց ա տալիս, առաջին հինգ ամսվա մեջ եթե մե բան պատահավ, էս insurance plan-ը բոլոր ձեր փողը հետ ա դարձնելու, plus հինգ տոկոս, որ իրան վրա է եկած: Եթե մե բան պատահավ, company-ն հետ ա դարձնելու ձեզի գումարը»:

**5. Հնչյունական առանձնահատկություններ:** Նոր ձևավորվող «ամերիկյան» հայերենի համար հատուկ քննության առարկա է նոր դրսևորում ստացած՝ արտասանական առանձնահատկությունը: Այն պահանջում է առավել ուշադիր գննություն, որ թողնում ենք հետագային՝ այստեղ միայն արձանագրելով, որ «ամերիկահայերենի» արտասանությունը տարբերվում է թե՛ արևմտահայերենից, թե՛ արևելահայերենից, որոշակի ազդեցություն է կրում ամերիկյան անգլերենից ու պարսկահայ խոսվածքներից, հատկապես նկատի ունենալով բաղաձայնների արտասանությունը, հնչերանգը, վերջին վանկի ձայնավորի երկարացումը և այլն:

### Եզրակացություն

Հայերենի երկու ճյուղերի հնարավոր մերձեցման ընթացքը, որի մասին մեր գիտնականներն ու մտահոգ մտավորականները տարբեր հրապարակումներ են ունեցել թե՛ անցյալում, թե՛ մեր օրերում, որոնց մեջ իր ծրագրային բնույթով և գիտական մանրակրկիտությամբ առանձնանում է Մանուկ Աբեղյանի նշված հոդվածը, ներկայումս որոշակի գործնական դրսևորում է ստացել ամերիկյան հայախոս միջավայրում: Մեր քաղած լեզվական նյութի վրա հենվելով՝ պետք է ասել, որ այդ դրսևորվում է՝ 1. նախ և առաջ քերականական ձևերի համատեղ գործածությամբ՝ փոխներթափանցումներով երկու ճյուղերի խոսողների մոտ էլ: 2. Անգլիաբանության հավասար ազդեցությամբ, որը հայախոս այլ համայնքներին ու Հայաստանի հայերի առօրյա խոսքին քիչ է հատուկ: Դրանք փոխառյալ բառեր են, արտահայտություններ, հարադրություններ, շարահյուսական կառույցներ: 3. Արտասանական նոր որակ՝ ազդված ամերիկյան անգլերենից ու մասամբ իրանահայ խոսվածքից:

Երկար ժամանակ այս իրավիճակը շարունակվելու, հայերին հայախոս պահելու հնարավորության պարագայում, որն ամենից բարդն է այս թեմայի մասին խոսելիս, կարող է ստացվել հայերենի համակարգված մի նոր տարածքային տարբերակ (խիստ վաղ է ասել լեզվավիճակ կամ առավել ևս՝ նոր ճյուղ), որն իր մեջ կրում է թե՛ հայերենի երկու ճյուղերի որոշակիորեն փոխներթափանցված և ըստ այդմ միասնականացած ձևեր, թե՛ անգլերենի ընդհանուր ազդեցություն: Այսինքն՝ սա նախկին գիտնականների և այդ թվում Մանուկ Աբեղյանի նշած՝ հայերենի ճյուղերի մերձեցման գործնական և յուրատեսակ

դրսևորում է, որ արտահայտվում է փոխներթափանցումների դրսևորումներով: Կհանգեցնի՞ սա նոր լեզվավիճակի, հեռակա ու դժվար կանխորոշվող հարց է, որի ընթացքին միջամտելը գրեթե անհնար է, ինչպես որ անհնար եղավ միջամտել 19-րդ դարում նոր-նոր նորմավորվող հայերենի երկու ճյուղերը մերձեցնելիս:

**НОРАЙР ПОГОСЯН – Проблема сближения ветвей литературного армянского языка: Подход Манука Абега и некоторые современные проявления.** – В статье рассматриваются ранние и более поздние предложения, касающиеся сближения двух разновидностей новоармянского языка, в исторической перспективе - с XIX века до наших дней. Особое внимание уделяется подходам Наапета Русиняна и Степана Паласаняна, при этом центральное место занимает анализ программной статьи Манука Абега и сформулированных в ней теоретических положений. Процессы нормализации и расширения сферы общеупотребительного функционирования двух разновидностей новоармянского языка на протяжении длительного времени сопровождались дискуссиями о принципах их кодификации, а также о разграничении их отношений с классическим армянским языком.

В публикациях, посвящённых данной проблематике, неоднократно выдвигались идеи сближения, а в ряде случаев и объединения двух литературных разновидностей — как в западноармянском, так и в восточноармянском контекстах. Программная статья Манука Абега занимает в этом отношении особое место, поскольку в ней предлагается комплекс чётко сформулированных мер, направленных на максимальное сближение двух разновидностей языка, при этом подчёркивается не только их лингвистическое и национальное значение, но и более широкий социальный и экономический контекст проблемы. В статье обсуждаются и сопоставляются различные подходы к отбору грамматических форм, лексических единиц и синтаксических конструкций. Существенный вклад Абега в данное лингвистико-литературное движение подтверждается также его работой «Проблема единства наших двух литературных языков».

Во второй части статьи приводятся конкретные примеры из армяно-американской языковой среды, демонстрирующие, что предложения, выдвигавшиеся начиная с середины XIX века, в определённой степени получили практическую реализацию в современном языковом употреблении. В американском контексте две разновидности армянского языка, развиваясь в известной мере автономно, приобретают лексические, синтаксические и фонологические особенности, отличающие их как от восточноармянского, так и от западноармянского языковых стандартов. Эти особенности являются результатом взаимного взаимодействия двух разновидностей, а также их относительно равного контакта с английским языком.

**Ключевые слова:** *новоармянский язык, языковые разновидности, сближение, предложения, Манук Абега, диаспора, современная языковая ситуация*

**NORAYR POGHOSYAN – The Rapprochement of Literary Armenian Varieties: Manuk Abeghian's Approach and Contemporary Manifestations.** – The following article examines both earlier and more recent proposals concerning the rapprochement of the two branches of Modern Armenian, tracing these ideas from the nineteenth century to the present. Particular attention is devoted to the approaches of Nahapet Rusinian and Step'an Palasanian, while special emphasis is placed on the analysis of Manuk Abeghian's influential article and the positions articulated therein. The process of standardization and the expansion of general usage of the two branches of Modern Armenian have consistently been accompanied by debates over their regulation and the clarification of their boundaries in relation to Classical Armenian.

Publications addressing this issue have repeatedly advanced ideas of rapprochement and, in some cases, even unification of the two branches, both within Western and Eastern Armenian contexts. Manuk Abeghian's programmatic article is especially significant in this respect, as it proposes a set of clearly formulated measures aimed at bringing the two branches of the language as close as

possible to one another, emphasizing not only their linguistic and national importance, but also their broader social and economic implications. Various approaches to the selection of grammatical forms, lexical usage, and syntactic structures are proposed and critically discussed. Abeghian's contribution to this linguistic and literary movement is further evidenced in his article "The Problem of the Unity of Our Two Literary Languages."

The second part of the article presents concrete examples drawn from the Armenian-American milieu, demonstrating that proposals advanced since the mid-nineteenth century have, to a certain extent, found practical realization in contemporary usage. In the American context, the two branches of Armenian, developing with a degree of autonomy, acquire lexical, syntactic, and phonological features that differ from both Eastern and Western Armenian. These features emerge as a result of mutual interaction between the two branches as well as their relatively equal exposure to the influence of English.

**Key words:** *Modern Armenian, language branches, rapprochement, proposals, Manuk Abeghian, diaspora, contemporary linguistic situation*

### Գրականության ցանկ

- Աբեղեան Մ., Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը, «Արարատ», 1897, № 9-10, էջ 424-431, № 11-12, էջ 494-503: [Abeġean M., Mer erku grakan lezui miut'yan xndirē, «Ararat», 1897, № 9-10, էջ 424-431, № 11-12, էջ 494-503]:
- Յակոբ Չոլաքեան, Արևմտահայերէն-Արևելահայերէն. Մերձեցման Հարցեր, Ազգակ, Բեյրութ, 2017, փետրվարի համարներ <https://www.aztagdaily.com/archives/335537> [Yakob Ch'olak'ean, Arevmtahayerēn-Arevelahayerēn. Merjec'man Harc'er, Azdak, Beirut, 2017, petruari hamarner]
- Յարութիւն Քիրքոջեան, Մերձեցումի կարելին ու անկարելին. արևելահայերէն և արևմտահայերէն լեզուաճիւղեր, «Ազգակ», Բեյրութ, 2015, Սեպտեմբեր 5 [https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azdak1927/2015/2015\(150\)\\_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azdak1927/2015/2015(150)_ocr.pdf) [Yarut'ian K'iurk'ch'ean, Merjec'umi k'arelin u anġarelin. arevelahayerēn yev armtahayerēn lezvac'iugher, «Azdak», Beirut, 2015, September 5]
- Պալասանեան Սո., Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 4: [Palasanean St., Ĕndhanur tesut'iun arevelyan nor gravōr lezui hayoc', T'iflis, 1870, էջ 4]:
- Ռոբեր Տէր Մերկերեան, Արդի հայերէնի երկու տարբերակների փոխարարբերութիւնների հարցեր, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական հոդվածների ժողովածու 2013-2023, Երևան, 2023, էջ 89-100 [https://language.sci.am/sites/default/files/arewmtahayeren-zhoghovatsow.pdf?utm\\_source=chatgpt.com](https://language.sci.am/sites/default/files/arewmtahayeren-zhoghovatsow.pdf?utm_source=chatgpt.com) [Rober Tēr Merkerean, Ardi hayerēni erku tarberakneri p'oxyaraberut'yunneri harc'er, HH GAA H. Aġaryani anvan lezvi instituti gitakan hodvac'neri zhoghovac'u 2013-2023, Yerevan, 2023, էջ 89-100]
- Ռուսինեան Ն., Ուղղախօսութիւն արդի հայերէն լեզուին, Կ. Պոլիս, 1853, էջ Ե [Rusinēan N., Uġġaxōsut'iun ardi hayerēn lezuin, K. Polis, 1853, էջ E] [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1897/1897\(11-12\)\\_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1897/1897(11-12)_ocr.pdf) [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1897/1897\(9-10\)\\_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1897/1897(9-10)_ocr.pdf) <https://www.aztagdaily.com/archives/335688> <https://www.aztagdaily.com/archives/335831>

## ԱԲԵՂՅԱՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՆՐԻԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 

*Երևանի պետական բժշկական համալսարան*

Մանուկ Աբեղյանը հայ լեզվաբանական մտքի ամենախոշոր ներկայացուցիչներից է, որի բազմաբնույթ գործունեությունը որոշիչ նշանակություն ունեցավ հայ նոր գրական լեզվի տեսական ու գործնական ձևավորման մեջ: Նրա ուսումնասիրությունները հնչյունաբանության, ձևաբանության, իմաստաբանության և շարահյուսության բնագավառներում հիմնադրեցին ժամանակակից հայերենի գիտական ուսումնասիրության նոր որակը: Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն»-ը, «Աշխարհաբարի քերականություն»-ը և «Աշխարհաբարի շարահյուսություն»-ը դարձան հայերենագիտության դասական աշխատություններ՝ ազատագրելով լեզվի նկարագրությունը գրաբարյան սխեմաների կախվածությունից և հաստատելով աշխարհաբարի ինքնուրույնությունը: Բառարանագրության ոլորտում նրա կատարած աշխատանքները, այդ թվում՝ ռազմական և բժշկական բառարանների ստեղծումը, նոր փուլ բացեցին հայ բառարանագրության մեջ: Ուղղագրության բարեփոխման վերաբերյալ Աբեղյանի սկզբունքները, չնայած ժամանակի բանավեճերին, մնացին գիտականորեն հիմնավորված: Նրա լեզվաբանական ժառանգությունը շարունակում է ապագայի ուսումնասիրողների համար մնալ անսպառ գիտական աղբյուր և հայերենագիտության հիմնասյուներից մեկը:

**Բանալի բառեր** – *Մանուկ Աբեղյան, լեզվաբանություն, ժառանգություն, աշխարհաբար, շարահյուսություն, բառարանագրություն, քերականություն, հնչյունաբանություն*

### Ներածություն

Հայ լեզվաբանական միտքը հայտնի է մեծ անուններով. շատերն են հիացրել և իրենցից հետո էլ հիացնում են լեզվի բազմաշերտ ուսումնասիրություններով, նորարարական բացահայտումներով, բայց քչերն են Խորենացու ասած

\* **Հենրիետա Սուքիասյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ

**Генриетта Сукиасян** – кандидат филологических наук, доцент, заведующая кафедрой армянского языка Ереванского государственного медицинского университета

**Henrietta Sukiasyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor, Head of the Department of Armenian Language, Yerevan State Medical University

Էլ. փոստ՝ [henrietasukiasyan26@gmail.com](mailto:henrietasukiasyan26@gmail.com) ORCID ID: <https://orcid.org/0009-0000-1749-4308>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.09.2026

Գրախոսվել է՝ 07.10.2026

Հաստատվել է՝ 16.02.2026

© The Author(s) 2026

«գրոց հիշատակի» արժանանում՝ որպես մի ամբողջ լեզվաբանական ուսմունքի հիմնադիրներ, համակարգաստեղծ մտածողներ: Նրանցից է մեծ հայագետ Մանուկ Աբեղյանը, որի լեզվաբանական ժառանգության գիտական ուսումնասիրության ամփոփ պատկերը ներկայացնելու մի փորձ է այս հոդվածը:

Փիլիսոփայական բարձրակարգ կրթություն ստացած Մանուկ Աբեղյան հայագետն առանձնանում էր լեզվական երևույթներն ավելի լայն համատեքստում դիտարկելու տաղանդով, լեզվի գործառության, խոսքի հոգեբանական խորքային դրոշմապատճառներն ընկալելու ու գնահատելու ձիրքով, ձևի և բովանդակության հարցերի իմաստավորման կարողությամբ: Հենց այս դիտանկյունից էլ հատկապես գնահատելի է ականավոր լեզվաբան Էդուարդ Աղայանի 1965 թվականին հրատարակած «Մանուկ Աբեղյանի լեզվական ժառանգությունը» հոդվածը, որտեղ հատուկ արժևորվում է Աբեղյանի լեզվաբանական ուսումնասիրությունների տեսական արժեքը: Աղայանը մեծ հայագետի գլխավոր ուսումնասիրությունը համարում է նրա «Հայոց լեզվի տեսություն» աշխատությունը, որտեղ ժամանակակից հայերենի հնչյունաբանության, իմաստաբանության, բառակազմության ու ձևաբանության հարցերի մասին իր տեսակետները Աբեղյանը ներկայացնում է իր դավանած ընդհանուր լեզվաբանական-տեսական երիտքերականական գաղափարների ծիրում<sup>1</sup>: Աղայանը հատկապես շեշտում է այն, որ Աբեղյանը ելնում է երիտքերականական դպրոցից եկող այն դրույթից, ըստ որի՝ իրականում գոյություն ունեն միայն անհատական լեզուներ, որ յուրաքանչյուրն ունի իր լեզուն<sup>2</sup>: Հոդվածում Աղայանն անդրադառնում է նաև բարբառների առաջացման արեղյանական ըմբռումներին՝ դրանք համեմատելով անհատական լեզուների հետ՝ այն առանձնահատկությամբ, որ բարբառները ծագում են ոչ թե այդ լեզվով խոսող ամբողջ ժողովրդի, այլ միայն նրա մի հատվածի հանրության շրջանում<sup>3</sup>: Աղայանը առանձնահատուկ քննարկում է Աբեղյանի «Աշխարհաբարի քերականություն» և «Աշխարհաբարի հոլովները» գրքերը, որոնցում նա պնդում է, որ հայերենում չկան սեռական և հայցական հոլովներ՝ այն հիմնավորմամբ, որ աշխարհաբարում այս հոլովները չունեն իրենց առանձին, սեփական ձևերը<sup>4</sup>: Էդուարդ Աղայանն այսպես է ձևակերպում Մանուկ Աբեղյան լեզվաբանի հատուկ առաքելությունը հայ լեզվաբանական գիտության մեջ. «Աբեղյանի քերականական ուսումնասիրությունների առաջին և մեծագույն արժեքն այն է, որ դրանց շնորհիվ մեր գրական լեզվի քերականական կառուցվածքի նկարագրությունը լիովին ու վերջնականապես ազատագրվեց գրաբարյան լեզվական սխեմաներից և ունեցավ իր ուրույն սխեմաները»<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Աղայան Է.**, Մանուկ Աբեղյանի լեզվական ժառանգությունը, ՀԳԱ տեղեկագիր, Երևան, 1965, էջ 4:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 9:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 12:

<sup>5</sup> **Աղայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1958, էջ 150:

Աբեղյանի լեզվաբանական ժառանգության մասին ուշագրավ խոսք են ասել ոչ միայն լեզվաբանները: Հայտնի բանագետ Արամ Ղանալանյանը Մանուկ Աբեղյանին նվիրված իր «Հայագիտության վիթխարի կադնին» հոդվածում նշում է, որ նրա «Աշխարհաբարի շարահյուսությունը» երկար ժամանակ եղել է մի անփոխարինելի ձեռնարկ և ուղեցույց միջնակարգ ու բարձրագույն դպրոցների աշակերտության, ուսուցչության և դասախոսների համար: Նրանից մեծապես օգտվել են և այժմ էլ շարունակում են օգտվել հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվող մեր լեզվաբան-քերականագետները: Եվ որպես հավելում այս իրողությանը՝ Ղանալանյանը բերում է ֆրանսիացի աշխարհահռչակ գիտնական Անտուան Մեյեի կարծիքը, ըստ որի՝ Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունը», անտարակույս, լավագույնն է, որ երբևէ գրվել է հայերենի քերականության վերաբերյալ<sup>6</sup>:

Անհնար է չհիշատակել մյուս խոշոր բանագետի՝ երջանկահիշատակ ակադեմիկոս Սարգիս Հարությունյանի «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը»<sup>7</sup> փայլուն մենագրությունը, որն առհասարակ աբեղյանագիտության համար հիմնաքարային արժեք ունի<sup>8</sup>: Ոչ միայն այս աշխատության, այլև Աբեղյանին նվիրված իր այլ հոդվածներում հարգարժան գիտնականը անդրադարձել է նաև մեծ հայագետի լեզվաբանական հայացքներին՝ ցույց տալով նրա բացառիկ տեղը հայ լեզվաբանության ամենավիճահարույց ու բարդագույն հարցերի պարզաբանման և լեզվաբանական մտքի նոր արահետներ բացելու գործում:

Աշխարհաբարի հոլովների աբեղյանական ըմբռնումների մասին հետաքրքրիչ բնորոշումներով արտահայտվել է բազմավաստակ լեզվաբան Ռաֆայել Իշխանյանն իր «Մեծ հայագետի հոյակապ աշխատության նոր հրատարակությունը»<sup>9</sup> հոդվածում: Անդրադառնալով Աբեղյանի «Աշխարհաբարի քերականություն», «Աշխարհաբարի հոլովները», «Հայցական հոլովը» և այլ աշխատանքներին՝ Իշխանյանը նշում է, որ նա հայ նոր գրական լեզվի՝ աշխարհաբարի ուսումնասիրության բնագավառում մնում է իբրև դեռևս չգերազանցված մի գագաթ: Լեզվաբանի կարծիքով՝ Աբեղյանը առավելագույն չափով հավատարիմ մնաց կենդանի խոսքին, շարահյուսությանը, քերականական երևույթները շարահյուսական ելակետից գնահատելու իր ուժեղ հակումին<sup>10</sup>: Իշխանյանն իրավացիորեն նշում է նաև, որ ոչ բոլոր լեզվաբաններն ընդունեցին Աբեղյանի տեսակետները՝ այդ մասին գրելով. «Շատերը լրջորեն վիճաբանեցին նրա հետ, այդ թվում՝ խոշոր լեզվաբաներ: Սակայն ոչ ոք երբեք չի վի-

<sup>6</sup> Տե՛ս **Ղանալանյան Ա.**, Հայագիտության վիթխարի կադնին, «Գրական թերթ», № 39, 1964:

<sup>7</sup> Տե՛ս **Հարությունյան Ս.**, Մ. Աբեղյան. կյանքը և գործը, Եր., 1970:

<sup>8</sup> Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Մեծ հայագետի հոյակապ աշխատության նոր հրատարակությունը, «Գրական թերթ», № 22, 1965:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

ճարկել և չի վիճարկում այն, որ որևէ լեզվաբան իր որևէ աշխատությամբ այն-քան լրիվ ու այնքան բազմակողմանի չի վերլուծել ու ներկայացրել հայ նոր գրական լեզուն, որքան Աբեղյանը»<sup>11</sup>:

Մեր մյուս նշանավոր լեզվաբանը՝ Մանվել Ասատրյանը, իր «Հայ լեզվաբանության անգուգական կոթողը» հոդվածում անդրադառնում է Աբեղյանի մեկ այլ նվաճմանն արդեն հնչյունաբանության բնագավառում<sup>12</sup>: Նա այն կարծիքն է հայտնում, որ. «հենց ինքը՝ Մանուկ Աբեղյանն է հիմք դրել ժամանակակից հայերենի հնչյունաբանության՝ որպես լեզվաբանական հետազոտության առանձին ճյուղի ուսմունքին»<sup>13</sup>: Հոդվածի մեկ այլ հատվածում Ասատրյանը համարում է, որ մինչև Աբեղյանը մենք աշխարհաբարի շարահյուսություն չենք ունեցել: Նա էր, որ ստեղծեց աշխարհաբարի շարահյուսության մի կուռ ու տրամաբանական համակարգ<sup>14</sup>:

Բառարանագրության բնագավառում արեղյանական նորարարություններին մանրակրկիտ անդրադարձել է լեզվաբան Աննա Աբաջյանն իր «Մանուկ Աբեղյանը՝ բառարանագիր»<sup>15</sup> հոդվածում: Հեղինակը սկսում է մեծ լեզվաբանի դեռևս 1882 թվականին կատարած առաջին բառարանագրական փորձից, որը կոչվում էր «Աշխարհաբար առանձին բառերի համար բացատրական բառարան», և իր վերլուծությունը հասցնում մինչև 1925 թվականին հրատարակված հանրահայտ «Ռուս-հայերեն ռազմական բառարանը», որը, ինչպես նշում է Աբաջյանը, հայ բառարանագրության պատմության մեջ առաջինն էր իր տեսակի մեջ<sup>16</sup>:

Հեղինակը մեջբերում է Աբեղյանի մասին անվանի լեզվաբան, բառարանագետ Աշոտ Սուքիասյանի հետևյալ բնութագրական խոսքը. «Դեռ 20-ական թվականներին պրոֆեսոր Աբեղյանը հիմնովին հերքեց ժամանակակից հայերենի մասին տարածված այն առասպելը, ըստ որի հայոց լեզուն անընդունակ է իր սեփական միջոցներով ստեղծելու հասարակական-քաղաքական, գիտական և տեխնիկական տերմինաբանություն»<sup>17</sup>:

Հատուկ ուշադրության է արժանի 1930-ականներին ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանի և Ավետիք Տեր-Պողոսյանի հետ Աբեղյանի, և, ինչպես նշում է Ա. Աբաջյանը, հենց նրա ջանքերով կազմված «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը», որն իր ծավալով գերազանցում էր նախորդ բոլոր բժշկական բառարանները<sup>18</sup>:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> **Ասատրյան Ա.**, Հայ լեզվաբանության անգուգական կոթողը, «Երեկոյան Երևան», № 120, 1965:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>15</sup> Տե՛ս **Աբաջյան Ա.**, Մանուկ Աբեղյանը՝ բառարանագիր, Հուշարձան Մանուկ Աբեղյանին (հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Եր., 2023:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 188:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը:

Ուշագրավ է նաև Աննա Աբաջյանի մեկ այլ հոդվածը, որը վերաբերում է մեզանում ժամանակին մեծ աղմուկ հանած արեղյանական ուղղագրության անհիմն քննադատություններին<sup>19</sup>: Հեղինակը անդրադառնում է բազմաթիվ թյուրըմբռումների տեղիք տվող այն հարցին, թե հայ մշակույթի և գրականության մեծերը կտրականապես մերժել են Աբեղյանի ուղղագրական բարեփոխումը: Օրինակ, բերելով Պողոս Մակինցյանին թումանյանի գրած մի նամակը, հեղինակը հերքում է այն տարածված մտայնությունը, թե թումանյանը ամբողջովին դեմ էր ուղղագրության փոփոխությանը<sup>20</sup>: Միայն թումանյանի այն կարծիքը, որ ուղղագրությունը ոչ թե պետք է դժարացնել, այլ պետք է հեշտացնել, հաստատում է այդ թեզը: Այս առումով ուշագրավ է այդ նամակի շուրջ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի հայտնած կարծիքը. «Ինչքան էլ զարմանալի թվա, 12 էջից բաղկացած և շատ հստակ ձեռագրով շարադրված այդ նամակը չի գրված ոչ թումանյանի համար այնքան սովոր գրաբարյան ուղղագրությամբ և ոչ էլ 1922 թվականի ռեֆորմի սկզբունքներով, որոնք արդեն սկսել էին գործադրվել մամուլում: Նամակը գրված է մի ուղղագրությամբ, որը բացարձակորեն համընկնում է 1940 թվականին սահմանված սկզբունքներին<sup>21</sup>»: Հոդվածի վերջում Աբաջյանը, ամփոփելով իր առաջադրած թեզը, հավելում է, որ Եղիշե Չարենցի ու Ակսել Բակունցի պես մեծեր արեղյանական ուղղագրությունը համարել են մեր ազգային նվաճումներից մեկը: Աբեղյանական ուղղագրության թեմայի շուրջ ճշգրիտ եզրահանգումներ է անում հայտնի լեզվաբան Լավրենտի Հովհաննիսյանն իր «Մանուկ Աբեղյանը և ուղղագրության հարցը»<sup>22</sup> հոդվածում: Հեղինակը գիտական անաչառ քննության է ենթարկում արեղյանական ուղղագրության բարեփոխման 1922 և 1940 թվականների երկու փուլերը՝ դրականի հետ մանրամասն նշելով նաև առաջին փուլի տարբերակի բոլոր թերությունները, որոնց մի մասը թելադրված էր ժամանակի իշխանության ցանկությամբ և ամփոփելով իր ուսումնասիրությունը՝ Հովհաննիսյանը նշում է, որ ուղղագրության բարեփոխման ծրագիրը գիտականորեն հիմնավորված էր, իսկ որոշ մերժելի դրույթներ՝ պարտադրված<sup>23</sup>:

Մեկ հոդվածի սահմաններում, իհարկե, անհնար է անդրադառնալ մեծ լեզվաբանի գիտական ժառանգության բոլոր ուսումնասիրություններին: Աբեղյանի լեզվաբանական ժառանգության մասին գրվել է և գրվելու է, որովհետև բացառիկ խորն են և կենսունակ նրա ընդհանուր լեզվաբանական գաղափարներն ու պատգամները լեզվաբանների հաջորդ սերունդներին:

<sup>19</sup> Տե՛ս **Աբաջյան Ա.**, Աբեղյանական գործող ուղղագրության անհիմն քննադատությունները, Հուշարձան Մանուկ Աբեղյանին (հոդվածների ժովածու), ԵՊՀ, Եր., 2023:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 168:

<sup>21</sup> **Ջրբաշյան Է.**, Աբեղյանը և հայկական տաղաչափության ուսումնասիրության հարցերը, Հուշարձան Մանուկ Աբեղյանին (հոդվածների ժովածու), ԵՊՀ, Եր., 2023:

<sup>22</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Մանուկ Աբեղյանը և ուղղագրության հարցը, Հուշարձան Մանուկ Աբեղյանին (հոդվածների ժովածու), ԵՊՀ, Եր., 2023:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը:

### Եզրակացություն

Մանուկ Աբեղյանը հայ լեզվաբանական մտքի պատմության մեջ մնաց որպես գիտնական, որին հաջողվեց վերախմաստավորել հայոց լեզվի ուսումնասիրության հիմնական սկզբունքները՝ տալով նոր բացահայտումներ, նոր մեթոդաբանական մոտեցումներ և նոր տեսական ընդհանրացումներ: Նրա գիտական ժառանգությունը ծավալային է, բայց առավել կարևոր՝ համակարգային, քանի որ ընդգրկում է լեզվաբանական տեսության ամբողջ դաշտը՝ հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն, բառարանագրությունից մինչև ուղղագրություն:

Լեզվաբանների ու բանագետների գնահատականները ցույց են տալիս, որ Աբեղյանի աշխատանքները ոչ միայն ժամանակին ունեցան մեթոդաբանական հեղափոխական նշանակություն, այլև այսօր էլ շարունակում են մնալ որպես չափանիշներ՝ հայոց լեզվի գիտական ուսումնասիրության համար: Այնպիսի մեծություններ, ինչպիսիք են Էդուարդ Ադայանը, Արամ Ղանալանյանը, Սարգիս Հարությունյանը, Ռաֆայել Իշխանյանը, Մանվել Ասատրյանը և ուրիշներ, իրենց վերլուծություններով հիմնավորապես հաստատել են Աբեղյանի ներդրումների բացառիկ արժեքը՝ այն դիտելով որպես հայ նոր լեզվագիտության անկյունաքար:

Աբեղյանի լեզվաբանական ժառանգությունը կարևոր է ոչ միայն գիտության պատմության տեսանկյունից, այլև որպես կենդանի ուժ՝ ազդելով մեր օրերի լեզվաբանական հետազոտությունների վրա: Նրա տեսական դիտարկումները, լեզվի կառուցվածքային վերլուծությունը, առարկայական-գործառական մոտեցումները և բառարանագրական նորարարությունները շարունակում են պահպանել իրենց արդիականությունը: Իսկ ուղղագրության բարեփոխման շուրջ նրա մտքերը, չնայած ժամանակի տարբեր ընկալումներին ու բանավեճերին, գիտականորեն ամուր և հեռանկարային էին:

**ГЕНРИЕТТА СУКИАСЯН – *Научное исследование лингвистического наследия Абега́на.*** – Манук Абега́н является одним из крупнейших представителей армянской лингвистической мысли, чья многогранная деятельность сыграла решающую роль в формировании теоретических и практических основ современного литературного армянского языка. Его исследования в области фонетики, морфологии, семантики и синтаксиса заложили основы нового этапа научного изучения армянского языка. Труды Абега́на — «Теория армянского языка», «Грамматика ашхарабара» и «Синтаксис ашхарабара» — стали классикой арменоведения, освободив описание языка от зависимостей от древнеармянских схем и утвердив самостоятельность нового литературного языка. Его работа в сфере лексикографии, включая создание военного и медицинского словарей, открыла новую страницу в истории армянского словарного дела. Принципы Абега́на в реформировании орфографии, несмотря на споры эпохи, остались научно обоснованными. Его лингвистическое наследие продолжает служить неиссякаемым источником для будущих исследователей и одним из краеугольных камней арменоведения.

**Ключевые слова:** Манук Абега́н, языкознание, наследие, мировой диалект, синтаксис, лексикография, грамматика, фонология

**HENRIETTA SUKIASYAN – *The Scholarly Study of Abeghyan’s Linguistic Legacy.***— Manuk Abeghyan is one of the most prominent figures in Armenian linguistic scholarship, whose multifaceted work played a decisive role in shaping the theoretical and practical foundations of the modern Eastern Armenian literary language. His studies in phonetics, morphology, semantics, and syntax laid the groundwork for a new stage in the scientific examination of Armenian. Abeghyan’s major works—*The Theory of the Armenian Language*, *Grammar of Ashkharhabar*, and *Syntax of Ashkharhabar*—became classics of Armenology, freeing the linguistic description of Eastern Armenian from Classical Armenian models and affirming its structural independence. His contributions to lexicography, including the creation of military and medical dictionaries, opened a new chapter in Armenian dictionary-making. Abeghyan’s principles of orthographic reform, despite the controversies of the time, remained scientifically justified. His linguistic legacy continues to serve as an inexhaustible source for future scholars and stands as one of the foundational pillars of Armenian linguistic studies.

**Key words:** *Manuk Abeghyan, linguistics, heritage, world dialect, syntax, lexicography, grammar, phonology*

### Գրականության ցանկ

- Աբաջյան Ա., Աբեղյանական գործող ուղղագրության անհիմն քննադատությունները, Հուշարձան Մանուկ Աբեղյանին (հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Եր. 2023: [Abajyan A., Abeġyanakan gorcox ugġagrut‘yan anhimn k‘nnadatut‘yunnerē, Hushardzan Manuk Abeġyeni (hodvac‘neri zhoghovac‘u), EPH, Er. 2023]:
- Աբաջյան Ա., Մանուկ Աբեղյանը՝ բարարանագիր, Հուշարձան Մանուկ Աբեղյանին (հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Եր. 2023: [Abajyan A., Manuk Abeġyanē bařaranagir, Hushardzan Manuk Abeġyeni (hodvac‘neri zhoghovac‘u), EPH, Er. 2023]:
- Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1958, էջ 150: [Aġayan Ē., Hay lezvabanut‘yan patmut‘yun, h. 2, Er., 1958, ēj 150]:
- Աղայան Է., Մանուկ Աբեղյանի լեզվական ժառանգությունը, ՀԳԱ տեղեկագիր, Երևան, 1965, էջ 4: [Aġayan Ē., Manuk Abeġyani lezvakan zhařangut‘yunē, HGA teġekagir, Yerevan, 1965, ēj 4]:
- Ասատրյան Մ., Հայ լեզվաբանության անգուգական կործողը, «Երեկոյան Երևան», № 120, 1965: [Asatryan M., Hay lezvabanut‘yan anzugakan kot‘ogē, «Yerekoian Yerevan», № 120, 1965]:
- Իշխանյան Ռ., Մեծ հայագետի հոյակապ աշխատության նոր հրատարակությունը, «Գրական թերթ», № 22, 1965: [Ishkhanyan R., Mec‘ hayaget i hoyakap ashkhatut‘yan nor hratarakut‘yunē, «Grakan t‘ert‘», № 22, 1965]:
- Հարությունյան Ս., Մ. Աբեղյան. կյանքը և գործը, Եր., 1970: [Harut‘yunyan S., M. Abeġyan. kyank‘ē yev gorcē, Er., 1970]:
- Հովհաննիսյան Լ., Մանուկ Աբեղյանը և ուղղագրության հարցը, Հուշարձան Մանուկ Աբեղյանին (հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Եր. 2023: [Hovhannisyan L., Manuk Abeġyanē yev ugġagrut‘yan harc‘ē, Hushardzan Manuk Abeġyeni (hodvac‘neri zhoghovac‘u), EPH, Er. 2023]:
- Ղանալանյան Ա., Հայագիտության վիթխարի կաղնին, «Գրական թերթ», № 39, 1964: [Galanian A., Hayagitut‘yan vit‘xari kaġnin, «Grakan t‘ert‘», № 39, 1964]:
- Ջրբաշյան Է., Աբեղյանը և հայկական տաղաչափության ուսումնասիրության հարցերը, Հուշարձան Մանուկ Աբեղյանին (հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Եր. 2023: [Jrbashyan Ē., Abeġyanē yev haykakan taġach‘aput‘yan usumnasirut‘yan harc‘erē, Hushardzan Manuk Abeġyeni (hodvac‘neri zhoghovac‘u), EPH, Er. 2023]:

Խմբագրության հասցեն՝ Երևան, Խ. Աբովյան փող., 52ա  
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52а  
Address: 52a, Kh. Abovyanstr., Yerevan

Վայր՝ [journals.y-su.am](http://journals.y-su.am)  
Էլ. փոստ՝ [ephbanber@ysu.am](mailto:ephbanber@ysu.am)

Հրատարակչական խմբագիր և  
թողարկման պատասխանատու՝  
Издательский редактор и  
ответственный выпуска  
Publishing Editor and Issued by

**Արմեն Հովակիմյան**

**Армен Овакимян**  
**Armen Novakimyan**

Վերստուգող սրբագրիչ՝  
Контрольный корректор  
Proofreader

**Գայանե Գրիգորյան**  
**Гаяне Григорян**  
**Gayane Grigoryan**

Հատուկ թողարկման  
պատասխանատու  
Ответственная специального  
выпуск  
Responsible for the Special Issue

**Աննա Աբաջյան**

**Анна Абаджян**  
**Anna Abajyan**

Ստորագրված է տպագրության՝ 17. 02. 2026: